Իրանի ցեղերի կյանքին և կենցաղին, ինչպես նաև նրանց մոտ իշխող ագրարային հարաբերությունների ուսումնասիրմանը նվիրված արժեքավոր նյութերի կարելի է հանդիպել ուսուհանուպուր-հոդը՝ ուսական աշխարհագրական ընկերության անդամ՝ Բոզնի աշխատության մեջ<sup>20</sup>։ Նա առաջիններից էր, որ ներթափանցեց (1835 թ.) Արևմտյան Իրանի անանցանելի լեռնաշխարհում բնակվող լորերի շրջանը: Նրան հաջողվեց լինել նաև բախտիարիների բնակավայրերում և մոտիկից ծանոթանալ նրանց հետ: Նա եղել է նաև Հյուսիսային շրջաններում, հատկապես Քուրգմենտանում և ուսումնասիրել տեղի ցեղերին: Բոզնի իր հետազոտությունների արդյունքը հրատարակեց մի շարք ակնարկներում, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում լորերի և բախտիարների մոտ իշխող ցեղային, հողային և այլ հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից:

Ի թիվս այլ խնդիրների Իրանի առանձին, հատկապես Հյուսիսարևելյան նահանգների և աշխարհ բնակվող տարբեր քոչվոր ցեղերի ագրարային հարաբերությունների վերաբերյալ հարուստ տեղեկություններ է հաղորդում աշխարհագրագետ Թիտերը<sup>21</sup>։ Թիտերի աշխատանքը հեղինակի մահվան պատճառով մնացել էր անավարտ. ուսական աշխարհագրական ընկերության հանձնարարությամբ Խանիկովը լրացնում է այն և հրատարակում: Ծարուհակիով Թիտերի գործը, Խանիկովը ավելացնում է նաև Սիստանի նահանգը, որի հողօգտագործման, սոռգման, հարկային սխեման, նրա շափերի և այլ հարցերի մասին բավականին հետաքրքիր փաստեր է բերում: Խանիկովը ուսումնասիրել է նաև առանձին ցեղերի կյանքն ու կենցաղը: Հատկապես ուշագրավ են նրա նյութերը Քուրգատանի մասին, որտեղ նա Համփոթղել է 1852 թ.:

Իրանի տարբեր ցեղերի ներքին կառուցվածքի, ընդհանրապես հողատիրության վիճակի և նրանց զարգացման ուղիների հարցերը

<sup>20</sup> Бодэ, Очерки Туркменской земли и юго-восточного побережья Каспийского моря, 1890; see also, Путевые заметки, СПб., 1854.

<sup>21</sup> К. Риттер, Иран, т. I, СПб., 1874.

ուսումնասիրելիս ցարական պաշտոնյաների ուշադրության կենտրոնից չէր կարող զուրս մնալ նաև համայնքի, նրա վիճակի և քայքայման կարևոր հարցը: Այս առումով, հասկապես պետք է նշել Նզդիազարովի աշխատությունը<sup>24</sup>, եզիրված Անդրկովկասի նրկրների գյուղական համայնքի ուսումնասիրմանը, մասնավորապես պարսկական տիրապետության տակ եղած ժամանակաշրջանում: Միանգամայն հասկանալի է, որ հյուսիսարևմտյան Իրանում գտնվող տերիտորիաների համայնքի ներքին կյանքը վերլուծելու համար հեղինակը պետք է շոշափեր նաև հողատիրության մեկը և հողօգտագործման եղանակները, քանի որ միայն այդ եղանակով նա կարող էր ցույց տալ համայնքի անդամ գյուղացիների վիճակը: Գյուղական համայնքի քրեկոտիվ նկարագրությունը նպաստում է հեղինակին նշգրտորեն տեսնելու նրա քայքայման պրոցեսը: Համայնքի առանձին անդամները աստիճանաբար դառնում էին իրենց սրամազրության տակ եղած հողերի մասնավոր սեփականատերերը: Նա բազմակողմանի ուսումնասիրել է համայնքի մեջ տեղի ունեցած շերտավորումը, սարքեր խափերի առաջացումը, համայնքների ներքին կառավարումը, բնտանիքները և նրանց իրավական վիճակը, արվելիք տուրքերի և հարկերի քանակն ու չափերը, մասնավոր հողատիրության առաջացումը համայնքի ներսում և այլն:

Գյուղական համայնքների տնտեսական վիճակից բացի, հեղինակը անդրադառնում է նաև մասնավոր հողատիրության մեկը, ինչպես նաև Իրանի տիրապետության տակ գտնվող կիսանկախ խանություններում գործող հողօգտագործման եղանակներին և այլն: Ըստ Նզդիազարովի խոշոր հողատիրությունը Իրանում առաջանում էր ինչպես համայնքի քայքայումից, այնպես էլ առանձին անձանց իրենց ծառայության դիմաց պետության կողմից արված հողերի յուրացումից:

Իրանի առանձին նահանգներում և զավաններում տեղի ունեցող այդ պրոցեսին անդրադարձել է նաև Ավերյանովը, որը շրջագայել է Ասորպատականում 1899 թ.<sup>25</sup>: Իր հաշվետվություններում Ավերյանովը նշում է, որ այդ նահանգի առանձին մահալների կառավարիչները փաստորեն ամենախոշոր հողատիրերն էին, իսկ հողատիր գյուղացիները գրեթե չկային: Նա մտախիչ ծանոթացել է

<sup>24</sup> С. Егизаров, Исследования по истории учреждений Закавказья, т. I.

<sup>25</sup> П. Аверьянов, Отчет о поездке по Северному Азербайджану... в конце 1899 года, Тифлис, 1900.



ևոյի, Ղարազադի, Մարանդի, Արդաբիլի, Ղազվինի և այլ մահաւնեի տեղանական վիճակին և դրանցից յարաքանչյուրում զանձվող ունեալի, տուրքերի և Հարկերի շափերի մասին ավել է ճշգրտիւ տեղեկութիւններ:

Ավերյանոզը կարողացել է դիտել նաև մուսուլման խոշոր հոգևորական ներկայացուցիչների դերը ֆեոդալական հողատիրութեան պայմաններում, երբ նրանք հանդես էին գալիս որդես հարկահաւաքման մեծագնորդներու նա միաժամանակ ցույց է ավել, որ կրօնական մոլեռանդութեանը ավելի բնորոշ էր Ասորպատականի քաղաքային բնակչութեանը, քան գյուղի քայքայված ու ընչազուրկ մասսաներին:

Ավերյանոզի հաղորդումները Ասորպատականի մասին փաստորին յրացվում են Յոզրանոզիլի և Արդաբիլի և Մարաբի պարսկական գազապները<sup>26</sup> և Արտամոնոզի սէլուխիսային Ասորպատական<sup>27</sup> գրքերում բերված ավյալներով:

Տարրեր նահանգների Հարկերի և տուրքերի Հարցին անգրագարհի է և Բերաբը, որի բերած փաստերը ցույց են տալիս, որ երկրի աշխատավորութեան շահագործման շափերը դարազինչին ավելի ևս մեծացել էին<sup>28</sup>, Հողատերերը և պետութեանը, XIX դ. վերջերին առաջվա պես շարունակում էին ունեւա և Հարկեր գանձել գյուղացիներից, քայց արդէն դրանք ոչ թե բերքի ավանդութեային տասնորդն էին կազմում, այլ քսանհինգ և մինչև իսկ երեսուն տոկոսը: Կարևոր է հեղինակի նաև այն դիտողութեանը, որ այն ժամանակ ևս Հարկերի և ունեւայի բնագավառում միատեսակ կարգ գոյութեան չուներ երկրում. տարրեր նահանգներում, գազապներում և մարզերում այն տարրեր բնույթ ունեւ: Եւհա այդ պայմաններում, նշում է հեղինակը, կարելի է պատկերացնել զրգրախա գյուղացիների դրութեանը, որոնք ենթարկվում էին այդպիսի դիշատի կողոպուտի և դատապարտված էին պայքարելու այնպիսի լիազորված մարդկանց դեմ, որոնք իրավունք էին ստացել նրանց հաշվին ապրելու:

Նախահեղափոխական հեղինակների շարքում իր ուրույն տեղն ունի Ասրպատը, որը մի քանի գրքեր է հրատարակել Ալեքսան-

<sup>26</sup> О. Оврамош, Провинция Персия Ардебильская и Серветская, 1875.

<sup>27</sup> Л. Артамонов, Северный Азербайджан, Тифлис, 1890.

<sup>28</sup> В. Барарь, Персия и персидская смута, СПб., 1912.

գրապուշում<sup>99</sup>։ Ասրպետի փոքրածավալ աշխատություններում հետաքրքիր փաստերով նկարագրված է XIX դ. երկրորդ կեսի Իրանի սոցիալ-տնտեսական վիճակը։ Նրա «Մուհամմեդ Ալի շահ» գրքի վերջում հետաքրքիր մանրամասնություններ կան Պարսկաստանի պետական ազարատի կառուցվածքի վերաբերյալ, իսկ գրքի հավելվածում հարուստ փաստերով ներկայացված է գյուղացիության վիճակը։ Բացի հիշյալ աշխատություններից հիշատակության արժանի են նաև Կաֆտիրենի, Փոզանկյատերի, Քերիտզինի, Բարոն Կորֆի, Մասալսկու, Փենչերի, Մաքսիմովիչ-Վասիլկովսկու, Բաումգարտենի, Տեր-Ղուկասովի և ուրիշների աշխատությունները<sup>100</sup>, որոնց մեջ շոշափված են Իրանի աշխարհագրության, բնակչության կազմի, նրա տեղաբաշխման, Իրանի վաչկատուն ցեղերի տնտեսական կյանքի, նրկրի ընդհանուր առևտրի, պետական նկատուանների, հարկերի, տուրքերի, հողային սենսայի, հողատիրության մեղերի, հողօգտագործման եղանակների, գյուղացիության ֆրոգալական շահագործման և ընդհանրապես ազրարային հարաբերությունների հետ կապված շատ հարցեր։

Այսպիսով, XIX դ. ուսական իրանագրություն մեջ աչքի էին ընկնում վիճակագրական տեսությունները կամ առևտրական տվյալների ամփոփումները, նաև ազարհոգների գրառումները կամ թե պաշտոնական անմանց, դիվանագիտական ներկայացուցիչների ու ռազմական գործիչների հուշերը, որոնք արժեքավոր ազրյուրներ են երկրի ներքին և արտաքին հարաբերությունների բազմաթիվ հարցերի ուսումնասիրման համար։ XIX դ. երկրորդ կեսի ուսական արևելագրություն մեջ կիրառվում էին գիտական մեթոդներ և որոշակիորեն մեղգորվում էին դրական տվանգույթ-

<sup>99</sup> *Атрлет, Рахим хан Сардар, Александрополь, 1910; Мажед Али шах, Народное движение в стране льва и солнца, Александрополь, 1909, Откупная система в Персии, Александрополь, 1901.*

<sup>100</sup> *Д. Кафтырев, Исторические, географические и статистические сведения о Персии, СПб., 1829; Ю. Гагемейстер, О европейской торговле в Турция и Персия, «Журнал мануфактур и торговли», 1838, № 2; Н. Березин, Путешествие по Северою Персии, Казань, 1852; Ф. Корф, Воспоминания о Персии, 1834—1835, СПб., 1838; Н. Масальский, Письма русского из Персии, т. 1—2, СПб., 1844; Гельс, Специальная статистика Персии, «Известия КО ИРГО», 1876, вып. IV; Максимоу-Васильевский, Отчет о поездке по губерниям Западною Персии (Азербайджан и Персидского Курдистана), 1900—1901 год, ч. 1—2, Тифлис, 1903; К. А. Бармагтен, Поездка по Восточной Персии... в 1894 г., СПб., 1896; Г. Н. Тер-Гукасов, Экономические интересы России в Персии, М., 1915.*

ներս Լենց այդ պատճառով էլ այդ գրքերի մեծ մասը մինչ այժմ էլ պահուած է իր թուրմութիւնը և բազմակողմանի հետազոտութիւնների համար հսկայական նյութ է ծառայում: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ այդ աշխատութիւնները զօրեղ չեն մեթոդաւորական թերութիւններից, որոնք հետևանք էին հնամենի մտաւարկական պատմագրութեան և ընդհանրապես ժամանակի դիտութեան զարգացման մակարդակի:

\* \* \*

Սին Իրանի մասին Ռուսաստանում հրատարակված աշխատութիւնները ընդգրկում են գլխավորապես հյուսիսային շրջանների տնտեսական վիճակը և միայն առանձին դեպքերում են շոշափում Հարավային Իրանի սոցիալ-տնտեսական ընդհանուր կացութիւնը, ապա արևմտակարգական, հատկապես անգլիական և ֆրանսիական հեղինակները լայն տեղեկութիւններ են տալիս Իրանի հարավային, հարավարևելյան և հարավարևմտյան շրջանների սոցիալ-տնտեսական վիճակի և հոգային հարաբերութիւնների մասին:

Արևմտակարգական պաշտօնական ներկայացուցիչները, զինվորականները, տարբեր միսիոների անդամները, ճանապարհորդները և մինչևիսկ միսիոներները եղել են Իրանի տարբեր և միանգամայն լուսամասերված շրջաններում և հարուստ նյութ են հավաքել այդ վայրերի վերաբերյալ ու հետագայում հրատարակել առանձին գրքերով: Այդ գործիչներից մի մասը եղել է նաև Հյուսիսային Իրանում, և նրանց հաղորդած տվյալները հնարավորութեամբ են տալիս, ուստի անկասկած աղբյուրների տվյալների բազմապատմով, ալ գրութեան ավելի իրական պատկերը:

Հասկանալի է, որ արևմտակարգական պետութիւնները ունենին իրենց որոշակի շահերը Իրանում և այդ ամենը այս կամ այն ձևով իրենց արտացոլումն են դրել նշված հեղինակների գործերում: Սակայն, այնուամենայնիվ, նրանք տալիս են հսկայական փաստական նյութ:

Պետք է նշել, որ արևմտակարգական ուսումնասիրողներին մասնավորապես հետաքրքրել է իրանական գյուղացու, ալիքներ՝ հիմնական արտադրողի, իրավական վիճակը, Այս հարցին անզրգարան են բազմաթիվ հեղինակներ, սակայն միշտ չէ, որ նրանք կարողացել են ալ սպառել պատասխան: Անգլիացի միսիոներ Ջեյմս Բասկթը, որը 1887 թ. հրատարակեց «Պարսկաստանը

իմամների երկիրը<sup>41</sup> սիմվոլիկ վերնագրով իր գիրքը, նկարագրելով հսկայական հարստությունների, այդ թվում և հողային հարստությունների կենտրոնացումը առանձին արքայազների, պաշտոնյաների և խաների ձեռքում՝ մի կողմում, և մասսայական ազդեցությունը՝ մյուս կողմում, հատուկ ուշադրություն է դարձնում գյուղացու իրավունքների վրա և շեշտում, որ իրանական գյուղացին կարող էր ցանկացած պահին հնուանալ կալվածատիրոջ հողից: Այդ հարցին անզրադարձել է նաև Գասպար Գրուվիլը՝ բնանապարհորդություն Պարսկաստանում 1812—1813 թթ. և երկհասորյակում<sup>42</sup>: Ուշադրության արժանի է Գրուվիլի այն դիտողությունը, որ Պարսկաստանում գյուղատեր լինելը դեռ չէր նշանակում գյուղացիների վրա որևէ իրավունք ունենալ: Սա, իհարկե, շատ կարևոր հանգամանք է: Սակայն որոշ հեղինակներ այդ հարցը ճիշտ չըմբռնելով, փորձել են հանդես գալ իրանում գոյություն ունեցող հողային հարաբերությունների պաշտպանի դերում: Այսպես, անգլիացի վաթսուներ<sup>43</sup>, նկարագրելով գյուղացիների դրությունը հատկապես Քեհրանի շրջակայքում, հանդում է այն սխալ եզրակացություն, որ երանց գրությունը վատ չէր, և որ ճնշումների մասին եղած խոսակցությունները չափազանցված են:

Որոշ հեղինակներ նաև շփոթում են պետական հողատիրության և պետության գերագույն հողատեր լինելու հասկացողությունները:

Անգլիացի էդվարդ Սթենլոր 1882 թ. հրատարակեց իր օրագիրը՝ Էվեց ամիս Պարսկաստանում<sup>44</sup> վերնագրով, որի երկրորդ հատորում անզրադարձելով հողատիրության տարբեր ձևերի հարցին, կասկածի տակ է առնում պետական խալիսե հողերը մասնավոր մարդկանց վանառելու վերաբերյալ փաստերը: Նա գտնում է, որ ընդհանուր տեղեկեցր արբաբի հողերի՝ տարբեր եզանակներով պետական սեփականություն վերածվելն էր: Սա, իհարկե, զուտ թյուրիմացություն է, քանի որ եթե իսկապես մասնավոր հողերի բնագրավման և պետական հողերի ֆոնդի մեջ մտնելու փաստեր միշտ էլ կային, ապա դա բնագրանուր տեղեկեց չէր: Մյուս կողմից՝ հայանի է, որ պետական հողերը վաճառվում էին մեծ մասշտաբներով: Անկախ վերոհիշյալ հանգամանքներից, Սթենլոր ու-

<sup>41</sup> J. Bassett, Persia, The Land of the Imams, London, 1887.

<sup>42</sup> G. Drouville. voyage en Perse, pendant les années 1812 et 1813.

<sup>43</sup> R. Watson. A History of Persia from the beginning of the nineteenth century to the year 1858, London, 1886.

<sup>44</sup> E. Stack. Six months in Persia, London, 1882.

շագրութիան արժանի գիտողութիւններ ունի գլուղացու և կալվա-  
ժառոտիւրոշ, ինչպես նաև կալվաժառոտիւրոշ ու պետութիւն փոխարա-  
բերութիւնների մասին:

Բացի արևմտանկրողական նախապարհորդներից, միսիոներ-  
ներից և այլ ներկայացուցիչներից, Իրանի սոցիալ-տնտեսական  
վիճակի կամ նրա ազդարային հարաբերութիւնների մասին նյու-  
թեր են հազարիչ նաև պաշտօնական տնօնիք՝ գիտակաները, հյու-  
պատասները, գններայները և այլ բարձրաստիճան պաշտանյաներու  
Հայաստի է, որ XIX դ. սկզբներին հատուկ միսիայով Իրան էր նկնչ  
Ջոն Մայրոյմբու նա հրատարակեց նրկհատորանոց մի աշխատու-  
թիւն «Պարսկաստանի պատմութիւնը» (1815) խորագրով, որի  
երկրորդ հատորում կանց է տնում պետական և առանձին կալվա-  
ժառոտների հոգերի վարձակալման եղանակների և արվելիք բեր-  
քարածնիչ լափի վրա: Ուշագրով է նրա նրկու գիտողութիւնը.  
նախ այն, որ գլուղատնտեսութիւն զարգացման նպատակներով,  
որը, ի գնոյ, ընդգծված քաղաքականութիւն շէր, կառավարու-  
թիւնը ամայի հողեր էր արամագրում հողագործներին. մանա-  
վանց, կիև նրանք ցանկանում էին այդի տնկել կամ շննք կառու-  
ցել: Եվ նրկրորդ այն, որ կառավարութիւնը սահմանամերձ վայ-  
րերում քոլովոր ցնդերին, նրանց նստակյաց դարձնելու նպատակով,  
ամենանպատագոր պայմաններով մշակելի հողեր էր հասկաց-  
նում, բայց հողվաղնոյ էր պատահում, որ այդ ցնդերը հողը մշա-  
կնին իրենց սպառման պահանջներից արվելին: XIX դ. սկզբի Իրա-  
նի ազդարային հարաբերութիւնների մասին Մայրոյմբի բերած  
արվայները հետագայում ոգտագործվել են անգլիացի և բազմաթիւ  
օտարազգի այլ հեղինակների կողմից:

Կարելի է հիշատակել նաև անգլիական գեսպան Հարթորդ  
Ջոնս Բրիչլիին, որը հետաքրքիր հիշատակումներ ունի Իրանի XIX դ.  
սկզբների ազդարային հարաբերութիւնների վերաբերյալ<sup>15</sup>:  
Ճիշտ է, նրա գիրքը մեծ մասամբ վելարերում է Իրանի քաղաքա-  
կան կյանքին, սակայն քանի որ նա երկար շրջագայութիւններ է  
կտաարել նրկրում, ապա մտտիկից կարողացել է ուսումնասիրել  
նրա սոցիալ-տնտեսական կյանքի հետ կապված մտերամասներու

Իրանի վարչական կառուցվածքի, հարկային սխտանի և հոգ-  
օգտագործման եղանակների մասին նյութեր կան նաև մի ուրիշ

<sup>15</sup> J. Malcolm, The History of Persia, London, 1816.

<sup>16</sup> H. Brydges, An account of the transactions of His Majesty's mis-  
sion to the court of Persia in the years 1807—1811, vol. I.

անգլիական հյուպատոս Յեյթի «Խորասան և Միսթան»<sup>47</sup> աշխատության մեջ, Միսթանի նահանգը շատ բանով էր տարբերվում Իրանի մյուս նահանգներից, ուստի և հետաքրքիր են հեղինակի հաղորդումները:

XIX դ. երկրորդ կեսի Իրանի սոցիալ-տնտեսական վիճակի, այդ թվում և պարսալիքն հարաբերությունների մասին հզած աղբյուրներից ամենահարուստ աղբյուրություններ պարունակում է Քերզանի հայտնի աշխատությունը՝ «Պարսկաստանը և պարսկական հարցը»<sup>48</sup>, որը լույս է տեսել 1892 թ.<sup>49</sup> երկու հատորով: Հեղինակը հսկայական նյութ է հավաքել Իրանի տնտեսական վիճակի և նրա արտաքին առևտրի վերաբերյալ: Նա չի թաքցնում, որ նրան այդ բանը հետաքրքրում էր, քանի որ Իրանը ընդարձակ և շահավետ շուկա էր անգլիական առևտրի համար: Քերզանը վիճակագրական տվյալներ է մեջ բերում պետական ընդհանուր եկամուտների մասին և տալիս է յուրաքանչյուր նահանգից ստացվող եկամտի զուամարը: Նա անդրադառնում է վարչական ապարատի ամբողջ հիերարխիայի հարցին և ցույց տալիս նրա գիշատիչ բնույթը գյուղացիական մասսաների նկատմամբ: Նա մանրամասն վերլուծում է հարկային սխառնմը, ցույց տալիս հարկերի տարբեր ձևերը, նրանց զանձման եղանակները: Հատկապես հետաքրքիր են հեղինակի այն տվյալները, որ որոշ շրջաններ հարկազրկում էին ընդունված շափից ազնիին, իսկ մյուսները շափից պակաս: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ իրանական գյուղացին հեղ է, ենթարկվող և եթե նա կարողանա արգարացիորեն կցգցոհի պետական զանձումներից:

Արևմտահայրուպական հեղինակները Իրանի ընդհանուր վիճակի ուսումնասիրություն ժամանակ մասնավոր ուշադրություն են դարձրել նաև ազգային փոքրամասնություններին, նրանց սոցիալ-քաղաքական վիճակին՝ դրանով իսկ բացահայտելով երկրում իշխող կարգերի ինքնատիպ ու առանձնահատուկ բազմաթիվ նրբություններ:

Հայտնի է, որ Քուրդստանը այդ ժամանակ բաժանված էր երկու մասի: Արևմտյան Իրանի սահմանամերձ շրջաններում բնակվող քուրդ, ինչպես և լոր ու այլ ցեղերը մեծապես հետաքրքրում էին արևմտյան պետություններին՝ քաղաքական նպատակներով: Արևմտահայրուպական բազմաթիվ ներկայացուցիչներ այցելել են այդ վայրերը և անհրաժեշտ նյութեր հավաքել ցեղերի կյանքի ու

<sup>47</sup> C. Yale, *Khurasan and Sistan*, London, 1900.

<sup>48</sup> G. Carzon, *Perak and the Perak Question*, vol. I-II, London, 1892.

կենցաղի, արտադրանքանակի և այլ հարցերի մասին: Թրինակ, անգլիացի Բրանտը հասուկ մի էքսպոզիցիայով եղել է Քուրդաստանում, մոտիկից ուսումնասիրել այդ երկրամասը և իր Հետազոտությունների արդյունքը հրատարակել 1841 թ.<sup>43</sup> Բրանտի աշխատության մեջ արժեքավոր մանրամասնություններով տրված են քուրդ խաների հողային սեփականության ձևերը, այդ հողերի վրա աշխատող գյուղացիների տնտեսական կախվածությունը կալվածատիրոջից, երանց կյանքի անտանելի ծանր պայմանները, տեղեկություններ սոսնձին քուրդ ընտանիքների տրամադրության տակ եղած հողամասերի, տնտեսների զխաքանակի և այլևայլ հարցերի վերաբերյալ: Քուրդտանի մասին ուսումնասիրություն է կատարել նաև անգլիացի Ծրեյզերը, որը Կոստանդնուպոլսից մինչև Քեհրան կատարած իր համփորդության ընթացքում, ի թիվս բազում այլ երկրամասերի՝ հետազոտել է նաև Քուրդաստանը, ըստ որում ոչ միայն բուն Քուրդաստանում, այլև հյուսիսարևելյան Իրանում գտնվող Բուքուրզում, Գերեզեզում, և Քելաթում բնակվող քրդերի գրությունը<sup>44</sup>, Հենց այդ պատճառով էլ նրա բերած ավյալները ամբողջական են և վերաբերում են ինչպես Արևմտյան, այնպես էլ արևելյան Իրանի տնտեսական վիճակին: Ծրեյզերը նշում է նաև, թե ինչպես իրանական իշխանությունները քուրդ գյուղացիությունը նորասանի շրջանում հնազանդ պահելու համար ենթարկում էին հարևան թուրքմեն ցեղերի ասպատակություններին և այդպիսով հակայական կորուստներ և վնասներ պատճառում քրդերին:

Վերոհիշյալ հեղինակների հավաքած նյութերը շատ մեծ արժեք են ներկայացնում XIX դ. առաջին կեսին Քուրդաստանում, ինչպես նաև ամբողջ Արևմտյան Իրանում իշխող ազդարային հարաբերությունների ուսումնասիրման տեսակետից, հատկապես եթե նկատի ունենանք, որ ուրիշ գրավոր փաստաթղթեր համարյա չեն մնացել:

Գնաք է նշել, որ շատ քիչրին է հաջողվել ներթափանցել Արևմտյան և մասամբ Կենտրոնական Իրան և ուսումնասիրել այնտեղ բնակվող բախտարիների ու լարերի կյանքն ու կենցաղը: Այդ իսկ տեսակետից էլ արժեքավոր են Թաուլինսոնի ուսումնասիրությունը

<sup>43</sup> Brant, Notes on a Journey through a part of Kurdistan, London, 1841

<sup>44</sup> J. Fraser, A Winters Journey (Tatar) from Constantinople to Teheran with travels through various parts of Persia, London, 1838.

Ներքե՞ն, նա Իրանում եղել է 1835, 1839, 1841 թթ., իսկ 1859—  
60 թթ. անգլիական զինուորն էր Քեհերանում: Նա ոչ միայն Հայտնի  
Հանապարհորդ էր, այլև ականավոր արևելագետ: Ռուսլինսոնը  
Նկարագրել է բախտիարիների և լորերի ցեղային կառուցվածքը,  
քնակչության անդադրվածը, անդրադարձել Արևմտյան Իրանի  
ազգաբային Հարաբերությունների Հարցին և այլն:

Արևմտահայկական պետություններին հետաքրքրել է նաև  
Հյուսիսարևմտյան Իրանում բնակվող քրիստոնյա ասորիների  
վիճակը: Հայտնի է, որ իրենց եվանդոզական քաղաքականությունը  
իրականացնելու համար արևմտահայկական տնրությունները  
կանգ չէին առնում ոչ մի միջոցի առաջ: Այդ թվում նրանք լայնո-  
րեն սգաագործում էին կրոնական հակասությունները: Ուրմիայի  
չրջանում ապրող ասորիների կյանքն ու կենցաղը, ինչպես նաև  
նրանց մոտ իշխող ազգաբային Հարաբերությունները մանրամասն  
ուսումնասիրել է ամերիկացի միսիոներ Պերկինսը, որը ութ տարի  
ապրել է այդ վայրերում<sup>15</sup>: Պերկինսը ցույց է տվել խաների ան-  
սահման իշխանությունը իրենց ենթակա գյուղացիների նկատ-  
մամբ. ըստ նրա, ասորի գյուղացին ատում էր իր տերերին և միա-  
ժամանակ սարսափում նրանցից: Ուսումնասիրելով Իրանի աշխա-  
տավորության վիճակը, գործող հարկային սխառման ու տուրքերի  
չափը, Պերկինսը գալիս է այն եզրակացություն, որ մահադանական  
և քրիստոնյա գյուղացիները համարյա միատեսակ շահագործման  
էին ենթարկվում կալվածատերերի և խոտերի կողմից: Պերկինսը  
միաժամանակ հիշատակում է, որ քրիստոնյաները պարտավոր  
էին որպես ոչ մուսուլման տալ հավելյալ մի հարկ ևս: Պերկինսը,  
իհարկե, իր եզրակացություններին հանգում է միայն օրինական  
գանձումներից ելնելով, բայց չպիտի մոռանալ, որ վարչական մար-  
միները անհամեմատ ավելի ծանր շահագործման էին ենթարկում  
քրիստոնյա ուսյաթներին:

Նա երկրի քայքայված տնտեսության պատճառները նույնպես  
բացատրում է ճիշտ, եղելով, որ դա եեխված հասարակարգի, շա-  
հագործման և թալանի արդյունք էր:

Հյուսիսարևմտյան Իրանում բնակվող ասորիների դրություն  
ուսումնասիրումը արևմտահայկական տնրությունները շարունա-  
կեցին նաև XIX դ. վերջերին: Ուշագրավ է հատկապես անգլիացի

<sup>15</sup> Rawlinson, Notes on a Journey from Tabriz through Persian Kur-  
distan, to the Ruins of Takhti-Soleiman, 1914.

<sup>16</sup> J. Perkins, A residence of eight years in Persia..., New-York, 1843.



Բիշոփի երկու հասարանոց աշխատութիւնը, որ լույս տեսավ 1891 թ.<sup>53</sup> Բիշոփը Իրանում է եղել 1890 թ.։ Եւ իր գրքում որոշ տեղ է տալիս բախտիարի ցեղերին և եկարագրում նրանց շարքաշ գրութիւնը, փաստեր հազարգում Հարավային Իրանի արարական շրջանների հողային հարաբերութիւնների մասին, ընայած որ ոչ միշտ է, որ նա կարողանում է տալ իրերի իսկական զիջակը։ Սակայն ավելի արժեքավոր են ասորի գյուղացիների և նրանց մուսուլման կալվածատերերի փոխհարաբերութիւնները բացահայտող Բիշոփի մանրամասն հազարգումները։ Բազմաթիվ փաստերի հիման վրա նա հանգում է այն եզրակացութիւն, որ երկրում իշխող հասարակարգի պայմաններում գյուղացիական մասսաները, անկախ նրանց ազգային ու կրօնական պատկանելիութիւնից, տառապում էին հովասարայեւ։

Բիշոփը այն փոքրաթիվ հեղինակներից է, որ ավյալներ է հազարգում նաև գյուղատնտեսութիւն մեջ վարձու աշխատանքի կիրառման, գյուղատնտեսական քանվորների սրովարձի շահերի մասին և այլն։

Արեւմտեւկրօպական տնտեսագարհորդներին հետաքրքրել է նաև դեռևս XIX դ. սկզբներին իրանական տերիտորիայում գտնուվող անդրկովկասյան ժողովուրդների գրութիւնը։ Հայտնի է այն նվաճողական մտադրութիւնները, որ արեւմտեւկրօպական պետութիւնները ունեին Անդրկովկասի եկամտամբ և այն դերը, որ նրանք կատարում էին ուսուցարական երկու պատերազմների ժամանակ։ Միանգամայն հասկանալի է, որ արեւմտեւկրօպական տերիտորիաների ներկայացուցիչներին հետաքրքրում էր Անդրկովկասյան երկրներում տիրող գրութիւնը՝ պարսկական տիրապետութիւն տակ և գրա հետ կապված բազմաթիվ այլ հարցեր։

Այդ տարիներին Անդրկովկասյան երկրներում եղած և այդ վայրերի քաղաքական, տնտեսական զիջակը մտտիկից ուսումնասիրած հեղինակներից կարելի է թվարկել մի քանիսին։

Անգլիացի Քեր Պորթերը շրջել է Հայաստանում, Վրաստանում ու Պարսկաստանում և 1821 թ. հրատարակել իր սրագիրը<sup>54</sup>։ Ազգութիւնով ճանապարհի վրա գտնվող գյուղերում նա հետաքրքրվել է հողի վարձակալման եղանակների, տարրեր հարկերի և տարրերի շահերի մասին և այդ ամենը գրի առել։ Սակայն հեղինակին հատկապէս հետաքրքրել է այն, որ սահմանամերձ այդ նահանգ-

<sup>53</sup> J. Bishop, Journeys in Persia and Kurdistan, London, 1891.

<sup>54</sup> R. Ker Porter, Travels in Georgia, Persia, Armenia, Ancient Babylon, in two volumes, London, 1821.

ների սարգարներն ու խաները սահմանները պաշտպանելու ուղ-  
մական ծախսերը հոգալու համար ոչ միայն ազատված էին իրենց  
նահանգի հարկը պետական գանձարան մուծելուց, այլև բուն Իրա-  
նում ունեին ընդարձակ հողեր, որոնց եկամուտները նույնպես  
յուրացնում էին:

Արևմտանվտազական ուսումնասիրողների հետապնդած եզա-  
տակները ավելի ցայտուն երևում են Մարգոնալզ Քիլենյրի գրք-  
քում<sup>25</sup>։ Հեղինակը նկարագրելով գլուղացու շարքաչ վիճակը, հաս-  
կապես հյուսիսարևմտյան շրջաններում, որոնց շարքում նա գա-  
տում է Երևանի, Ղարաբաղի, Ղարազաղի և այլ նահանգները, հան-  
գում է այն եզրակացություն, որ բնակչության մեծ մասը բազու-  
կանին ազատ էր և իր կյանքի բարելավման հուսով էր, որ ող-  
ջունում էր սուլանների մոտեցումը:

Հայաստանի, Փոքր Ասիայի և Պարսկաստանի մասին հետա-  
քրքիր փաստեր է բերում նաև անգլիական դեսպան Գոր Օզլիի  
քարտուղար Ժակ Մորիեն՝ իր «Երկրորդ Էսեպարհարություն  
Պարսկաստանում, Հայաստանում և Փոքր Ասիայում 1810 թ. մին-  
չև 1816 թ.»<sup>26</sup> երկհատորյակում: Պարսկական տիրապետության  
տակ գտնվող երկրամասերի գլուղացիության դաժան շահագործ-  
ման մասին խոսելով, Մորիեն անգրադառնում է «Սուրաթա կոչվող  
հարկավճելու նա նշում է, որ երբ իրենք հրաժարվեցին գլուղա-  
ցիներին սուրաթի անվան տակ ձրի մթերք պահանջել և տաշար-  
կեցին մթերքը գնել գրամով, ապա գլուղացիները դրան էլ չհա-  
մաձայնվեցին, որովհետև եթե խանը տեղեկանա նրանց մոտ գրա-  
նելով գրամի մասին, ավելի մեծ հարկեր կպահանջի:

Մենք թվարկեցինք XIX դարի արևմտագիտական հեղի-  
նակների մի քանի կարևոր աշխատությունները միայն: Սակայն  
մեզ հետաքրքրող թեմայի նյութերի ազդյունները դրանցով չեն  
սպառվում: Առանձին հարցերի մասին հետաքրքիր նյութերի կա-  
րելի է հանդիպել նաև անգլիացի Իսթվիկի, Վիլզի, Հուլթում Երնգ-  
լերի և ֆրանսիացի Բիլզերի ու ուրիշների գրքերում<sup>27</sup>:

<sup>25</sup> M. Kinnelr, A Geographical memoir of the Persian Empire, London, 1813.

<sup>26</sup> J. Morrier, Second voyage en Perse, en Armenie et dans l'Asie Mineure fait de 1810 a 1816, Paris, 1818.

<sup>27</sup> E. Eastwick, Journal of a diplomat's three years residence in Persia London, 1864. C. Wilts, Persia as it is, London, 1886. A. Houtum Schindler, Eastern Persian Irak, 1896. Binder, Au Kurdistan, Paris, 1887.

Արևմտանդրոպական ժամանակակից հեղինակները նույնպես այս կամ այն չափով անդրազարնել են XIX դ. Իրանի ագրարային հարաբերություններին, զրանցից պետք է հիշել Աննա Լամբստոնին<sup>96</sup>։

Նրկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նա եղել է Իրանում, պաշտոնավարել Քեհրանի անդլիական զեսպանատանը։ Նա մտախից ուսումնասիրել է Իրանի ագրարային հարաբերությունները, շրշագայել է բազմաթիվ գյուղերում և տեղում հավաքել անհրաժեշտ նյութեր։ Աշխատությունը գլխավորապես վերաբերում է ժամանակակից Իրանի ագրարային հարաբերություններին, բայց զբքի տուպին մասում նա անդրազարնել է նաև նախորդ ժամանակաշրշաններին, այդ թվում և XIX դ. պատմությունը, որին նա հատկացրել է հատուկ գլուխ։ Այստեղ արժեքավորը այն է, որ հեղինակը իրանական արխիվներից, հատկապես Ֆինանսների նիստերումյան արխիվներից և մեչլիսի գրազարանից զգազործել է զեռես շհրապարակված փաստաթղթեր, որոնք նպաստել են հոգաաիրություն հեա կապված մի շարք հարցերի լուսարանմանը։ Այդ փաստաթղթերը զեկուցումների մեով են կազմված, որոնք վերաբերում են առանէին նահանգների հողատիրություն և հողօգտազործման վիճակին, հողատիրության մեերին, նրանց տեկոսային հարաբերություններին, հողի վարձակալման եղանակներին և այլն։

\* \* \*

Սովետական պատմարանները, հենվելով մարքոիզմի կլասիկների ցուցումների վրա, իրենց աշխատություններում նշում են XIX դ. Իրանի սոցիալ-տեսեսական կառուցվածքի երեք կարևոր տարրերը, զիտելով զրանք փոխազարն կապի ու կախման մեչ։ Իրանը են՝ հողի և շրի նկատմամբ ֆեոդալական իրավունքը արտահայտող պետական սեփականությունը, մասնավոր ֆեոդալական տիրույթը՝ պետական զերազույն սեփականություն եերքո, և հողատիրական համայնքը, նրան հատուկ գյուղացիական ժառանգական հողատիրությամբ և հողօգտազործմամբ, որպես ֆեոդալական արևելյան բուսապետության հիմք։

Անդրկովկասի երկրների ֆեոդալական հարաբերությունների լուսարանման է նվիրված սովետական ականավոր գիտնական Պետրուշևսկու աշխատությունը<sup>97</sup>։ Եիշտ է ուսումնասիրությունը

<sup>96</sup> A. Lambton, Landlord and Peasant in Persia, London, 1953.

<sup>97</sup> Н. Петрушевский, Очерк изучения феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Л., 1948.

վերաբերում է XVI և հետագա դարերի հողային հարաբերություններին, սակայն հեղինակը այդ հարաբերությունների պատմությունը հասցնում է մինչև XIX դ. սկզբները: Աշխատության մեջ ուսումնասիրված են Իրանի Հյուսիսարևմտյան ժայռամասերի, մասնավորապես Ատրպատականի և Հայաստանի հողատիրության ձևերը, հարկային սխեմներ և բազմաթիվ այլ հարցեր, որոնք շատ ղեպքերում ընդհանուր էին ամբողջ Իրանի համար: Պետրուշևսկին սովետական պատմագրության մեջ առաջիններից էր, որ ճշգրտեց և մեկնեց հողային հարաբերություններին վերաբերող բազմաթիվ տեղեկանքներ, ինչպիսիք էին՝ օրինակ, թրուլը կամ մուլը և այլն: Հատկապես մուլը հասկացությունը հեղինակը քննում է իր դարգացման ամբողջ պատմության ընթացքում և այդպիսով փաստորեն ապացուցում է մասնավոր սեփականության պատմությունը, նրա սաղմնավորումը, առաջացումը և հետագա զարգացումը Իրանի ֆեոդալական տնտեսության պայմաններում: Հատկապես անհրաժեշտ է շեշտել, որ այդ դարերի Իրանի Հյուսիսարևմտյան ժայռամասերում գոյություն ունեցող ֆեոդալական հողատիրության տարրեր կառուցողիկաների, հարկերի ձևերի և ընդհանրապես հողագտադործման եղանակների բնութագրերը տալիս, հեղինակը այնպիսի եզրակացությունների է հանգում, որոնք մեծապես նշանակալից են այդ երկրամասերի սոցիալ-տնտեսական ընդհանուր վիճակի պարզաբանմանը: Պետրուշևսկին միաժամանակ բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ արդեն XIX դ. առաջին կեսին տեղի էր ունեցել իրանական գյուղացիության մեծամասնության ամբողջումը հողին և նրա այսպես ասած սազատությանը հանգամանքը արդեն կորցրել էր իր բովանդակությունը: Ճիշտ է գիտնալ այդ ժամանակ չէր ավարտվել գյուղացիական համայնքների քայքայումը, սակայն նրանց մեծ մասը բազմականին ծանր վիճակում էր գտնվում, քանի որ նրանք արդեն ֆեոդալական կախման մեջ էին պետությունից, ռազմական վերևախավից և ֆեոդալական այլ ինստիտուտներից: Պետրուշևսկու աշխատությունը Իրանի Հյուսիսարևմտյան ժայռամասերի հետևաբար և որոշ ղեպքերում ամբողջ Իրանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի առանձին հարցերի լուսաբանման տեսակետից շատ արժեքավոր մի ուսումնասիրություն է:

XIX դ. վերջին և XX դ. սկզբներին Իրանում գոյություն ունեցող հողատիրության և հողագտադործման ձևերին է նվիրված ազգրիչանական լեզվով 1964 թ. Բարձում հրատարակված Ե. Քա-

դիմադրի աշխատությունը<sup>10</sup>։ Հեղինակը իր ուսումնասիրությունը կատարել է հարուստ փաստական նյութի հիման վրա, սզտագործել բազմաթիվ ազդյուններ ու արխիվային նյութեր և հանգել է նիշտ եզրակացությունների։ Առանձին զույգներ են հասկացվել XIX դ. վերջի և XX դ. սկզբների հողային սեփականության ձևերին և հող-սզտագործման եղանակներին։ Գնայած որ իր բովանդակությամբ սույն աշխատությունը Իրանի պատմության XIX դ. վերջին և XX դ. սկզբներին է վերաբերում, սակայն սյարունակում է հարուստ նյութ ազրարային այն հարաբերությունների մասին, որոնք ձևավորվում էին XIX դ. սկզբներից սկսած։ Հասկապես արժեքավոր են Քաղինայի բնրած փաստերը Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցման կամ, ինչպես հեղինակն է ասում, սկապիտալիզմի էլեմենտներու մասին։ Այդ արքի հետ կապված, հեղինակը անդրադառնում է նաև գյուղատնտեսության մեջ վարձու աշխատանքի սզտագործման հարցին, նշելով, որ եթե վիճակագրական տվյալների պակասի պատճառով ենարավոր չէ պարզել զրա արբածումը XIX դ. վերջին, սակայն արզեն XX դ. սկզբների մասին փաստեր կան, որոնք ցույց են տալիս, որ որոշ կալվածատիրական տնտեսություններում սզտագործվում էին վարձու աշխատանքը։ Հեղինակը ցույց է տալիս, որ XX դ. սկզբներին արբարի հողատիրությունը արզեն դարձել էր հողատիրության հիմնական ձև և արզին հանգես էին գալիս կապիտալիստական տիպի տնտեսություններ։ Այդ բուրդից էլ բխում էր՝ գյուղացիության շահագործման ուժեղացման փաստը, գյուղացիության մասսայական հեռացումը գյուղից, նրա շերտավորումը, գյուղացիության դասակարգային զարթոնքը հատկապես 1905—11 թթ. հեղափոխության տարիներին և այլն։

Սովետահայ հեղինակները Իրանի XIX դ. սոցիալ-տնտեսական դրությունը կամ նրա ազրարային հարաբերությունները առանձին ուսումնասիրման հարց չեն դարձել, սակայն նրանք ուսումնասիրել են Հայաստանում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական բնդհանուր դրությունը։ Ծվ ջանի որ XIX դ. առաջին տասնամյակներին Անգրկովկասի մի մասը դեռևս զանվում էր պարսկական տիրապետության տակ և այնտեղ իշխող հողային հարաբերությունները Ռուսաստանին միանալուց հետո էլ զին որոշ

<sup>10</sup> Ս. Тагм/ева, XIX эсрин соку ва XX эсрин аввалларинда Иранда торнар муаллак]оти формалары ва торрагдан истифадэ галлалары, Баку, 1954.

ժամանակ շարունակում էին դաշտի մասնակցություն ունենալ, ուստի այդ աշխատանքները որոշակի նյութ կարող են առաջ կան իրաներ ուսումնասիրողներին, Անհրաժեշտ է, սակայն, անել հետևյալ գծերապահությունը: Անդրհամալսարանի կողմից ժամանակաշրջանի ազդեցության հարաբերությունների այս կամ այն կողմից լուսարևոտող գիտությունը ոչ բոլոր դեպքերում կարող են օգտակար լինել իրանում իշխող ազդեցության հարաբերությունների ուսումնասիրման համար: Ինչպես իրավաբաններն ենում է ի. Ազգային կոնգրեսները և... Արևելյան Հայաստանում կայանալիս Ռուսաստանի հետ ընդհանուր ժողովուրդները միաստորը չի կողմ: Այստեղ իրենց բաժինը և ազդեցությունն են ունեցել Վրացական, պարսկական և թուրքական պետությունները: Մրանցից ամեն մեկը հողատիրության ու հողօգտագործման ուղղությամբ կարգեր են ունեցել: Պատմական կարևորագույն այս գիտությունը առաջ ունենալով՝ Արևելյան Հայաստանի միջնադարյան ժամանակաշրջանը, հատկապես XIX դ. սկիզբը, լուրջ է պատկերացվի որպես պարսկական ազդեցության միջնադար, իսկ Արևելյան Հայաստանում մնացած ամեն ինչը՝ որպես պարսկական կարգերից անցած ժամանակություն:

Իրականում ..... հողատիրության ու հողօգտագործման քննադատում մենք նույնություն ու նմանություն չենք տեսնում Պարսկաստանից, Վրաց թագավորությունից և թուրքիայից միացված հայկական անբխորիաներում...»<sup>11</sup>:

Հայ հեղինակների ուսումնասիրություններից կարելի է նշել Ա. Ծսալանի «Մուսուլմանական իրավունքը Հայաստանում»<sup>12</sup>, Մ. Աղոնցի «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը XIX դարում»<sup>13</sup>, Հ. Քումանյանի «Հայաստանի տնտեսական զարգացումը»<sup>14</sup>, Ս. Մարկոսյանի «Ազդեցության հարաբերությունները Արարատյան երկրում»<sup>15</sup>, և ի. Ազգային կոնգրեսների հարցը Արևելյան Հայաստանում 1801—1917 թթ.»<sup>16</sup>:

Վերահիշյալ ուսումնասիրությունները, հատկապես վերջին երկուսը, կատարվել են Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական

<sup>11</sup> ի. Ազգային կոնգրեսների հարցը Արևելյան Հայաստանում, Երևան, 1955, էջ 6:

<sup>12</sup> А. Цсаян, Мусликарское право в Армении, Ереван, 1948.

<sup>13</sup> М. Агонц, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957.

<sup>14</sup> О. Туманян, Экономическое развитие Армении, Ереван, 1954.

<sup>15</sup> Ս. Մարկոսյան, Ազդեցության հարաբերությունները Արարատյան երկրում, Երևան, 1955:

արեւիկի տարրեր ֆոնդերում պահպանված Հարուստ փաստաթղթերի հիման վրա, փաստաթղթեր, որոնք աշդտիսով գրվել են դիտական շրջանառության մեջ և անշուշտ արժանահավատ աղբյուր կարող են հանդիսանալ ոչ միայն Արենիյան Հայաստանի, այլև որոշ դեպքերում ամբողջ Իրանի ազգաբային Հարաբերությունները ուսումնասիրելու համար:

Ազդեաւոյ ուսումնասիրողներին հետաքրքրել են հատկապէս, թէ Անգրկազկաւոր Ռուսաստանին ժխտելուց հետո հողատիրութեան նախկին կառնգործաներից և հողագաղաթման եւերից որո՞նք շարունակեցին գոյութիւն ունենալ, ի՞նչ փոփոխութիւններով և ի՞նչ նպաստակով եւ Ավգալրեկիւմը գրում է. ...Արենիյան Հայաստանում ցարական կառավարութիւնը ոչ միայն պահպանեց, այլև, ի վնաս ժողովրդական զանգվածներին և հողատիրանայի դասի՝ հիմնականում խորացրեց և ծավալեց նշած հողատիրական հին կարգերը (էջ 29): Այս հանգամանքը շեշտելուց հետո հեղինակը հանգում է նաև երկրորդ եզրակացութեան, որ քցարական շրջաններն ու պաշտոնյաները տեսականորեն ժխտել են հողի սեփականութեան իրավունքի գոյութիւնը մահմեդական պետութիւններից (Պարսկաստան և Քուրդիստան) նվաճած այս երկրամասերում: Իրականում այդ իրավունքը հանաւել և օրինականացվել է ցարիզմի կողմից (էջ 29): Այնուհետև, հեղինակը նշում է, որ մինչև այժմ էլ դեռ պարզված չէ, թէ պարսկական տիրապետութեան վերջին շրջանում գոյութիւն ունեցե՞լ է արդյոք հողի ֆեոդալական սեփականութիւն, և եթէ եղել է, ապա այն զարգացման ինչ աստիճանի վրա է գտնվել:

Հենց այս հարցը պարզելու նպատակով է, որ Ս. Մարկոսյանը, ինչպէս ինքն է նշում, իր ուսումնասիրությունները կատարել է երեք ուղղութեամբ՝ հողային Հարաբերությունների, գյուղացիութեան իրավական դրութեան և գյուղացիութեան տնտեսական դրութեան՝ կապված շահագործման աստիճանի հետ: Թումանյանը Երևանի խանութեան մեջ երեք տիպի հողատիրութեան է նկատել և մանրամասն պարզաբանել Սարգսրի կողմից բաժանված խանութեան գյուղերի շորս կատնգործաները, բահրեքարային, յարիքարային, ոսնչրարային և կապալով տված գյուղերը:

Մեր ուսումնասիրողները մանրամասն վերլուծել են ֆեոդալական հողատիրութեան Արենիյան Հայաստանում, փաստական Հարուստ նյութերի հիման վրա բացահայտել թիւրքային հողատիրութեան նւթիւնը, մուքագարութեան բովանդակութիւնը, ազգայական իրավունքը և յուրաքանչյուրին տվել ապառիչ պատասխան:

Հատկապես ուսումնասիրման առարկա է դարձել մուլքադարությունը: Ա. Սալյանը իր աշխատությունը՝ «Մուլքադարային իրավունքը Հայաստանում Ռուսաստանին միանալու նախորդակիճ գլխում մանրամասն վերլուծել է մասնավոր հողատիրության իրավունքի հարցը ընդհանրապես մուսուլմանական Արևելքում, մասնավորապես Իրանի տիրապետության տակ գանձող Երևանի խոնովայունում: Ուշադրության արժանի է հեղինակի այն բացատրությունը, որ մուլքադարային և ֆիուլային հողատիրությունը շնայած հանդիսանում էին խոշոր ֆեոդալական հողատիրության մեկը և գյուղացիության ֆեոդալական շահագործման եղանակներ, սակայն ունեին տարբերություններ, ինչպես հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքի բովանդակության, այնպես էլ սեփականատիրական այդ մեկերի տարաբնույթի տեսակետից: Կարևոր է նաև հեղինակի այն եզրակացությունը, որ մուլքադարությունը որպես ֆեոդալական խոշոր հողատիրության մե Արևելքում ուներ մի շարք ընդհանուր և միաժամանակ տարբերիչ գծեր Արևմուտքում, ինչպես նաև Ռուսաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հողատիրությունից:

Հայ հեղինակներին այն եզրակացությունը, որ Ռուսաստանին միացվելուց տուշ ֆեոդալական հողատիրության բուն ինստիտուտը Արևելյան Հայաստանում մուլքադարությունն էր, շնայած գիրքով, հասույթների մեծությամբ, արտոնություններով ֆիուլատիր մուլքադարներն առաջին տեղն էին զբաղում, գալիս է ապացուցելու, որ Իրանի հյուսիսարևմտյան շրջանների ազրարային հարբերությունները, շնորհիվ մի շարք հանգամանքների, ավելի զարգացած են եղել, քան բուն Իրանում, քանի որ, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունները, մուլքադարությունը, որպես մասնավոր հողատիրության գերիշխող մե, Իրանում լայն տարածում գտավ միայն XIX դ. երկրորդ կեսին:

Г. М. ЕГАНЫН

## ИСТОРИОГРАФИЯ АГРАРНЫХ ОТНОШЕНИЙ В ИРАНЕ В XIX в.

### Резюме

Труды иранских историков XIX в. содержат незначительный фактический материал для изучения социально-экономического положения Ирана в XIX веке. Сохранились лишь официальные сообщения, содержащие описания поли-



тических событий и весьма скудные сведения о социальном положении в стране. Только в XX в., и особенно после второй мировой войны, ряд иранских авторов исследовали различные вопросы внутренней жизни страны и опубликовали большой фактический материал, освещающий социально-экономическое положение Ирана в XIX в. и, в частности, аграрные отношения.

Дореволюционная русская историография дает богатый материал об аграрных отношениях в Иране в XIX в. После завершения присоединения Закавказья к России в 1828 г. унаследованные со времен персидского владычества в Закавказье земельные и другие отношения не могли измениться сразу. Для решения целого ряда экономических и политических проблем в присоединившихся к России странах надо было изучить существующее там социально-экономическое положение. Этим и объясняется тот факт, что появление ряда статистических обзоров и экономических работ обобщающего характера относится главным образом к 30—40 гг. Несмотря на то, что опубликованные в XIX в. работы были написаны, в основном, с позиций защиты интересов царского самодержавия, они содержат огромный фактический материал, хотя и отличаются определенными методологическими недостатками, типичными для сформировавшейся буржуазной историографии и уровня развития исторических наук того времени.

Обширные сведения о социально-экономическом положении и земельных отношениях в южных, юго-восточных и юго-западных провинциях Ирана приведены в трудах и западноевропейских авторов, особенно английских и французских. Многие западноевропейские официальные представители, военные и дипломатические деятели, члены различных миссий, миссионеры и путешественники, побывавшие в различных провинциях и малозвученных округах Ирана, собрали богатейший материал и опубликовали ряд работ, в которых нашли отражение и колониальные цели западноевропейских государств.

Ценные сведения об аграрных отношениях в Иране и феодальных отношениях в Закавказье в XIX в. содержатся в работах советских историков. В этих трудах исследованы формы землевладения, налоговая система и многие другие вопросы, связанные с аграрными отношениями в северо-западных районах тогдашнего Ирана, характерные, в основном, и для всего Ирана.

Հ. Լ. ՊԱՆՈՎԱՆՅԱՆ

ՄեԱԽՈՑԻ ԿՈՆՏԵՍԻԱՑԻ ԴԻՄ ՇԱՐԺՈՒՄԸ  
ԻՐԱՆՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ

80-ական թվականներին Իրանում ծագւածու է հակազազուսարարական և հակաֆեոդալական մի շարժում, որը պաշտպանելով ժողովրդի տնտեսական և քաղաքական շահերը, հետևողականորեն պայքարում էր ֆեոդալական իշխանութիւն և նրա գազուսարար հովանավորողների դեմ:

Պեհաբ է նշել, որ այդ մեծածախ շարժումը նասր-էզ-Դին շահի քաղաքականութիւն ժամանակաշրջանում բարիներն շարժումից հետո ամենանշանակաւ էր, որի շնթացքում Իրանի ժողովուրդը գիտակցեց համախմբւածութիւն ուժը:

Նասր-էզ-Դին շահը 1889 թ. երկրորդ անգամ համադրութիւն և կատարում դեպի հիվանդաւ:

Անգլիական մոնոպոլիտները ձգտում էին՝ օգտագործելով շահի այս ուղեորութիւնը, տնտեսական տարրեր կոնցեսիաներ ձեռք բերել Իրանում:

\* \* \*

XIX դ. կեսերից Իրանը օտարերկրացիներին մի շարք կոնցեսիաներ է տալիս: Գազուսարար պետութիւններին ձեռք բերած կոնցեսիաները, ստորագրած պայմանագրերը, տված փոխառութիւնները, մասնավոր կապիտալի ներդրումները և առևարի մոնոպոլիան սկիզբ են դնում Իրանի տնտեսական և քաղաքական ստրկացմանը:

Քաղմաթիվ կոնցեսիաներից մեկն էր ժխախտի կոնցեսիան, որ 1890 թ. տրվեց անգլիական գազուսարարներին:

Միախտի կոնցեսիայի ձեռք բերման շուրջը բանակցութիւններ վարելու գործը Անգլիայում հանձնարարվեց Ջերալդ Քայրո-

թին, որք Անդրեայի միեմարների նախագահ Լորդ Սուլզբերիի խորհրդատուներին էր: Տեղյակ լինելով Ամին էս-Սուլթանի կաշառակերությունը, նա բանակցությունների ընթացքում Մեծ վեզիրին առաջարկություններ արեց և խոստումներ տվեց: Ամին էս-Սուլթանը իր հերթին այդ հարցի շուրջ զեկուցեց շահին, պարզարանեց այդ գոտարքի շահագնացությունն ու առավելությունները և այն ներկայացրեց արպես թզանված գանձո՝

«Այսպիսի սխալալ, կամուլ, շվայտ և ապիկար թագավորների և տեսրման պալատականների օրոք պարզ է, թե երկրի վիճակը ուր կարող էր հասնել»<sup>1</sup>,—գրում է Հասան Հալաջը:

Չնայած ծխախոտի կոնցեսիոները մեկ անձնավորություն էր, բայց Լեզգոնում կազմվեց մի ընկերություն՝ 650,000 Ֆունտ սահունյինգ կապիտալով: Կոնցեսիոն իրավունքներով հիմնադրված այդ ընկերությունը պետք է կաշվեր Էրզանի կայսերական ծխախոտի կորպորացիան:

Քայրոսի 1890 թ. գարնան սկզբներին գայիս է Քեհրան Եաշը նախապետ գիտեր, որ պայմանագրի ստորագրության համար կոնցեսիոները նրան 25,000 լիրա է նվիրելու՝ «Եաշը»,—գրում է Մալեքզադեն,<sup>2</sup>—որն իր էսթիլամը այնքան գծուծ էր, որ մեկ թումանից էլ չէր հրաժարվի, 25,000 լիրայի տնունը լսելուն պես զլուխը պտավեց և անմիջապես ստորագրեց պայմանագիրը՝

Փաշայանվել է մի փաստաթուղթ, որը հաստատում է Էրանի կառավարող շրջանների կաշառակերությունը և զաւաճանությունը՝. այդ Քայրոսի նամակն է Ամին էս-Սուլթանին, որ գրել է մինչև Էրան ժամանելը: Ահա այն. «Ես՝ մայր Քայրոսս, պարտավորվում եմ մեծապատիվ ազնվական Ամին էս-Սուլթանին և նորին վեհափառություն Էրանի շահին առ 40.000 սահուլինգ: Այս գումարից 10.000 սահուլինգը կվճարվի «Էլեմիս կոնցեսիոն պայմանագրի փոխանակման օրը, 10.000 սահուլինգը կոնցեսիայի գործունեության

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>2</sup> حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران، تهران ۱۳۸۷ - قمری، ص ۱۳:

<sup>3</sup> احمد نسروی، تاریخ مشروطه ایران، تهران ۱۳۴۰، ص ۱۵:

<sup>4</sup> ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، ص ۴۷:

<sup>5</sup> مهدی منگرتاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ص ۱۲۷:

<sup>6</sup> Էրբուհիմ Քեյմաթիի հաղորդմամբ ծխախոտի ընկերությունը մաս շարժարյուր հաղար թուման կաշառք էր տվել Ամին էս-Սուլթանին, փոխարքա Քամուս Միրզային և այլ ազնվիկ պալատականներին:

ծափալելու առաջին քրք, իսկ 20.000 սահույինդ մնացորդ զումարը պայմանագրի իրագործումից երկու ամիս անց:

Փարիզ, 1883 թ.՝

1890 թ. մարտի 20-ին Քեհրանում վաճեցացվում է Քալբոթ անգլիական ընկերության և Իրանի միջև հիսուն տարի մամկնատվ կնքված պայմանագրերը: Այն բազկուցած էր սասնհինգ զլուխենրից: Միախոտի ընկերությունը պարտավորվում էր Իրանի կառավարությանը վեարիւլ տարեկան 15.000 ֆունտ-ստեռլինգ, նկատառանքի մէկ քառորդը և կապիտալի հինգ տոկոսի գիվդղենար: Պայմանագրի երկրորդ կետի համաձայն ամբողջ Իրանի ծխախոտի մշակման, թէ՛ ներքին և թէ՛ արտաքին վաճառքի, ծխախոտի ցանքերի վրա հսկողություն, ինչպես նաև ծխախոտի արժեքի որոշման իրավունքը վերադասվում էր ընկերությանը:

Սին իրանական հողագործը մինչ այդ իրավունք ուներ իր բերքը վաճառել ցանկացած մարդուն, իր ցանկացած զևսվ, նույնիսկ նախքան բերքը հանձնելը: Նրա արժեքը գնորդից ստանալու պայմանով, այժմ նա իր բերքը կարող էր վաճառել միայն ընկերությանը, այն էլ վերջինիս սահմանած գնով:

Իմպերիալիզմի հարցերը ուսումնասիրելիս, Տ. Եգնոի շՊարսկաստանը և Պարսկաստանի հարցը աշխատության մեջ տրված գնահատականը ծխախոտի առյն պայմանագրի անհավասար գրոփողական բնույթի մասին գրավում է Վ. Ի. Լենինի ուշադրությունը: Ըննվիլով Եգնոի այն վկայության վրա, որ 13 միլիոն մարկ ունեցող ընկերությունը այդ կոնցեսիայի շնորհիվ 7½ միլիոն զուտ շահ գետք է ստանար, Վ. Ի. Լենինը յուսանցքում, որպես գաղութատիրական գեղատիչ բնույթի պայմանագրի նմուշ, նշել է՝ «Լավ օրինակ և գիմացը դրել է երկու բացականշական նշան»:

Ծխախոտի ընկերությունը անմիջապես գործի անցնելով, իր էլուզիորը տարածեց ամբողջ Իրանով մեկ:

Միախոտի ընկերությունը, երկրի իշխանությունների տեղեկություններ, մի հրաման է հրատարակում, որով պետւհետև ոչ ոք իրավունք չունի ծխախոտի բերքը ընկերությունից բացի մեկ ուրիշին վաճառել, իսկ անձնական օգտագործման համար կես մա-

եղի\* ավելի ծխախոտ գնել չէր թույլատրվում՝ եսխառզներին խիստ պատիժ էր սահմանվում:

Երբ հասնում է բերքի գնման ժամանակը, ծխախոտի ընկերության ներկայացուցիչները կողմից վարձված պարտիկ պաշտոնյաների և գյուղացիների միջև ծխախոտի գնի շուրջը կատաղի բախումներ և վեճարանություններ են ծագում:

Պայմանագրի վնցերորդ կետի համահայն բերքը պետք է զընվեր կանխիկ գրամով Կոնցեսիայի գործակալները դիմում են աշխատի պարտավելի քայլերի. բերքը տիրոջ մոտ արգելքի տակ էին պահում և հողագործին կամ առևտրականին անելանելի գրության մեջ գնելով, վերջ ի վերջո, իրենց թիւադրած գնով վերցնում էին նրանից:

Բնակչության մեջ չափազանց պազտնի և աննշան ծավալով կատարվող ծխախոտի առևտուրը լրիվ վերացնելու նպատակով, 1891 թ. գնկաների 9-ին ընկերությունը մի այլ հրաման է արձակում, ըստ որի Իրանում ծխախոտի առևտուրը բացառապես ծխախոտի ընկերությանն էր վերապահվում: Միախոտի գործով զբաղվել ցանկացողները պետք է այդ ընկերությունից գրավոր թույլտվություն ունենային և պահպանեին նրա կանոնադրությունը: Այդ նպատակով ընկերության կողմից պարտադրվում են քառասուն հազար արտնագրեր, որոնք մեկ տարի ժամկետով և մեկ թուման արժեքով վաճառվում էին ցանկացողներին:

Ընկերությունը Իրանի տարբեր ծայրամասերից հավաքած ծխախոտը, հատուկ նշաններով կնքված, մեկ շարք\* և կես ման քաշ ունեցող քաակներով վաճառքի է հանում:

Ընկերության այս և մյուս նշանարկումները ժողովրդի մեջ ահա սարսափ են առաջացնում և ամենուրեք քննարկման առարկա դառնում:

Ուշագրության է արժանի մի անվանի իսֆահանցու համակը ուղղված իր մտերիմներից մեկին, որտեղ հանգամանորեն նկարագրված է Իրանի հողագործի ընչազուրկ, ուղբայի կյանքը, դիմակազերծ է անում քրարխիզն եվրոպացուն և բացահայտում նրա հարստահարիչ քաղաքականության էությունը<sup>15</sup>:

\* Ման—կշտ չափ, որը Իրանի առանձին վայրերում տարբեր է. այսպես, Քաղբիզի ման՝ մոտ 3 կգ, շահի ման՝ մոտ 6 կգ, Յեյի ման՝ մոտ 12 կգ, Տվայ գեղջում Կեղենակը նկատի ունի Քաղբիզի մանը:

15 *ابراهيم تيموري* 'قرارداد' 1890, ژی 11

\* Զարաջ—կշտ չափ, հավասար է մոտավորապես 750 գրամին:

16 *ابراهيم تيموري* 'قرارداد' 1890, ژی 11

Իրանի գլուխադասիության ծանր վիճակը չէր կարող իրեն զգացնել շատ: Միախոտի կենցեղական ավելի քան կրկնում տիրող ֆեոդալական հակասությունները և հասցրեց մեծամասնալ շարժման:

Իրանում ժխախոտի կոնցեսիայի պայմանագրի գեմ պայքարի են դուրս գալիս հասարակության լայն շրջանները՝ ազգային բուրժուազիայի մի մասը, գլուխադասությունը, որը կազմում էր Իրանի ամբողջ բնակչության մեծամասնությունը և առաջում էր ինչպես ներքին՝ ֆեոդալական բռնապետական կարգերի, այնպես էլ օտարերկրյա գաղութարարների շահագործման ծանր լծի տակ, մանր առևտրականները և քաղաքային թեակչության մի մասը, ստորին հոգևորականությունը, ինչպես նաև քարձրաստիճան հոգևորականության այն մասը, որը տուժում էր ստեղծված դրությունից:

Նուսրբերի է կանգ առնել պանիսլամիզմի հիմնադիր Մեյիզ Ջամալ-էդ-Դին Աֆղանիի ելված պայմանագրի գեմ ծավալած գործունեության վրա:

Նոր Իրանում սկսվում է ժխախոտի կոնցեսիայի գեմ համաժողովրդական շարժումը, Մեյիզ Ջամալ-էդ-Դինը Բասրա քաղաքից Հաջի Մեյիզ Ալի Աքբար Ֆալ Ասիրիի միջոցով, որը նույնպես Եիրազ քաղաքում ժխախոտի կոնցեսիայի գեմ պայքարիցու համար իշխանությունների կողմից արտոգետ էր, մի նամակ է ուղարկում Սամարայի\* մոլթիհիզ Հաջի Միրզա Հասան Եիրազիին, որտեղ նկարագրում է պարսիկ ժողովրդի ծանր վիճակը, պարզաբանում է ժխախոտի կոնցեսիայի քայքայիչ հետևանքները, սաստիկ քննադատության է ենթարկում Իրանի պետական ղեկավարման մեթոդները, խոսում է եմրուպացիների կողմից կատարվող կոզուպուտի և ժողովրդի սեանեկացման պատճառների մասին: Նա այդ նամակով համոզում և անգամ պարտադրում է Միրզա Եիրազիին, որպեսզի այդպիսի պատասխանատու պահին, կոր կրկնորը վաճառվում է օտարերկրացիներին, նա տիրություն անի Իրանի թշվառ ժողովրդին և որպես շիաների մեծ առաջնորդ բանագրանցի ենթարկի այդ կոնցեսիան:

«...Այս ամբողջ գորախոտությունը,— գրում է նամակում,— որ պատել է պարսից ժողովրդին, այն լարիքները, որոնք առիթ են հանդիսացել, որպեսզի օտարերկրացիները տիրանան իսլամական Էրկրին և ստեճություններ կատարեն մուսուլմանների իրավունք-

\* Սամարա—շիաների ուրբ քաղաքը, որը գտնվում է Իրանում:

ների վրա, այդ բուրբ ինչպե՞ս կարող է լազրի թեզ վրա... Գու  
մեծ պատասխանատվություն ես կրում ժողովրդի նահատակների հա-  
մար... Գու ես հանգիստնում շիաների առաջնորդը, բացի թեզներից  
ու որ չի կարողանա ժողովրդին փրկել: Ըթե արգարություն համար  
բնութաանաս, բուրբ համախմբված թեզ կողաշտպանեն...

Իրանի թալափորը անսկզբունք և ազգադավ է, տկարացել է  
նրա միտքը, նա դարձել է դաժան, ինքն ալլես անկարող է երկիրը  
զնկավարել և ժողովրդի շահերը պաշտպանել: Այդ պատճառով  
երկրի ղեկը հանձնել է մի պիղծ մարդու (Նկատի ունի Ամին էս-  
Մոյթանին — Հ. Փ.), նա բարեկիրթ մարդկանց հետ դաժանություններ  
է վարվում և ամբողջ երկիրը վաճառում է եվրոպացիներին:—  
Ալեուհասկ Սելիգ Զամալ-էյ Գինը թվարկում է ասորիներացիներ-  
ին արված բազմաթիվ կոնցեսիաները, դատապարտելով դրանք,  
և նամակը ավարտում է հետևյալ բառերով. «...Ինչպե՞ս կարելի  
է հանդուրժել, որ մի պիղծ ավազակ իսլամի երկիրը այդպիսի էժան  
զեռվ վաճառքի հանի...»<sup>11</sup>:

Կարևոր գեր էին խաղում այդ ժամանակ լայն տարածում  
գտած թույլիկները, որոնց նշանակության վերաբերյալ 1896 թ.  
Եմբանկֆուրտեր ցայտունքս թերթը այսպես է գրել. «Երեք տարի  
առաջ նասեր էյ-Գին շահի և արքայազների սենյակներում թղթեր  
գտան, որոնց մեջ պահանջվում էր Իրանում նոր բարեփոխումներ  
անցկացնել: Միաժամանակ դրանց մեջ գրված էր. «Եթե այս թույլ-  
քը զուր մեր սենյակում եք գտնում, ապա համազված եղեք, որ  
երանց հեղինակները մուտք ունեն պալատ: Ըթե նոր բարեփոխում-  
ներ լանցկացնեք, ապա մեր ունեացումը մեզ համար շատ դյուրին  
է: Եահը կարգադրեց հարցաքննություն կատարել: Պարզվեց, որ  
հանցավորները՝ աասը հոգի, Զամալ էյ-Գինի հետևորդներին էին,  
այդ թվում Միրզա Թեզա Փերմանին»<sup>12</sup>:

Վերջինս ծխախոտի կոնցեսիայի զեմ ժամայած իր գործու-  
նեություն պատճառով մերթափալվեց և քսոսրվեց Ղազվին, որտեղ  
չորս տարի ու չորս ամիս բանտարկված մնաց:

Նասեր էյ-Գին շահը սպանվեց Եահ Արզու Ազիմում 1896 թ.  
մայիսի 1-ին: ԵԱյդ սպանությունը, — գրում է Բրաունը, — նույնպես  
անուղղակիորեն այդ շարաքաստիկ կոնցեսիայի արդյունքն էր.

<sup>11</sup> ابراهيم تيممري، قرار داد ۱۸۹۰ رژی، ص ۵۰۳

<sup>12</sup> خان ملك ساسانی، سیاستگران دوره قاجار، تهران، ۱۹۲۰، ص ۲۱۲

որի դեմ պայքարելու համար Միրզա Մահմադ Ռեզա Փերմանին որոշեց վրիժառու լինել<sup>13</sup>։

Միրզա Ռեզա Փերմանին օգոստոսի 10-ի խառնակ հարցաքննությունից ժամանակ խոստովանեց, որ ժխտաբար կոնցեսիայի դեմ շարժման ժամանակաշրջանում ինքն է եղել հեռանալի Թուրքիկի հեղինակը։

Ըստ էության ֆարուսյի այս շրջանակով հեղինակը սեղմախոս հնարավորություն ուներ և սպասիչ կերպով արտահայտել է ստեղծագործության սյուժեակն հնարավորությունները։ Այստեղ էր անհրաժեշտ գանել վերջակեա զնել Քումանյանը (հայ գրողի ստեղծագործության հետ այս շփման կետը, որ միակը չէ Ջեմալ Միր Սազեղի ստեղծագործության մեջ<sup>12</sup>, խորհրդածության նյութ է տալիս, խորհրդածություն, որ պարսկի գրողի՝ Քումանյանի ստեղծագործությունը ծանոթ լինելու հանգամանքից ավելի շատ, իհարկե, ավելի նիշտ կլինենր ուղղել կյանքի թելադրանքի ընդհանրության կողմը)։

Բայց Միր Սազեղին վերջակեա չի գնում։ Փատմվածքը շարունակվում է ծերուկի զիճակին կարեկցող, նրան ապաստան աված հարևանների որոնումները, թերթում հայտարարություն ապելու, գտնված համազույգացիների միջոցով նրան ապարդյուն գյուղ վերադառնալ համոզելու երկար ու միգ, բայց ըստ էության ստեղծագործությանը ոչինչ չավելացնող նկարագրություններով։ Ընդհակառակը, դրանք խախտում են ստեղծագործության կուռ, գինամիկ հնչողութունը։ Բայց, այդուհանդերձ, դրանք նպատակ ունեն բացահայտելու հեղինակի մի միտումը ևս, որ շատ նշանակալից է Միր Սազեղիի ողջ ստեղծագործության առումով։ Նրա ինչպես

<sup>12</sup> Այս աթիվ հետաքրքրական են Լ. Մովսիսյանի դիտարկումները, Ջեմալ Միր Սազեղիի մասին «Գրական թերթի» 1905 թ. № 47-ում։

քննված նախորդ, այնպես էլ այս և մյուս մի քանի պատմվածք-ներում առկա են, կան ու գործում են զգայուն, միմյանց ցածր սրտա-մտ ընդունող, միմյանց կարեկցող ու միմյանց կյանքի բեռը թե-թեանցնել նշանող հարևանները, գրկիցները, մարդիկ, որոնք անձնա-վորում են իրանցի հասարակ մարդկանց լավագույն գծերը:

Հասարակ մարդկանց, ժողովրդի հոգու այս լուսավոր, մարդ-կային գծի հետևողական բացահայտումը ոչ միայն նրա ամենա-գրամատիկ, մասյլ, իրադրություն սյատկերող պատմվածքներին հազորգում է որոշակի լուսավոր, պայծառ շեշտեր, այլև ժողովրդ-դային շաղախ, որ իսկական հումանիտատական արվեստի ամենա-ցայտուն գծերից մեկն է:

Թայց այդ գծի ու դրա դրսևորման մասին ավելի հանգամա-ներեն փոքր-ինչ հնտո:

Ընթերցողին առինքնում է մենքի կոմպոզիցիոն, հնչերանգա-լին այն բազմազանությունը, որով Զամալ Միր Սադեղին պատ-կերում է, ներկայացնում մարդկային լուս ցավերի աշխարհը: Ամենից առաջ այդ դրսևորվում է ժանրային բազմազանությամբ (պատմվածք-դիմանկար, տրամադրության պատմվածք, սոցիալ-հոգեբանական պատմվածք և այլն):

Այդ բազմազանությունն, որ առավել ընդգծուն է ի հայտ գա-լիս Միր Սադեղիի ստեղծագործությունների ներքին կառուցված-քում, պատահական չէ և թելադրված է նրա ընտրած թեմատիկա-լի պահանջներով:

Մի դեպքում, ինչպես, օրինակ, «Գերդոխաք» (շոգ ու փոշի) պատմվածքում, նա դիմում է դրամատիկ պարադոքսի (հակադրու-թյան տրամաբանությամբ՝ իրոնիկ պարադոքսի հետ ունեցած անալոգիայով է, որ այդ միջոցն կարծում ենք ճիշտ կլինի այդպես կոչել), մի այլ դեպքում («Մարսիե»—«Ողբ») հակադրվող համա-դրություն, ինչպես նաև զառը հեղանքի միջոցին:

Հիշատակված գործերից առաջին՝ «Գերդոխաք» պատմված-քում հեղինակը միահյուսել է նշված միջոցներից մի քանիսը, որի շնորհիվ արտահայտչականությամբ ու կատարման վարպետու-թյամբ այն կարող է պարսից այսօրվա նովելի լավագույն ստեղ-ծագործություններից մեկը համարվել:

Ինչո՞ւ «Գերդոխաք» Զամալ Սադեղիի համար, որ մեծ մա-սամբ լեյտմոտիվային վերնագրեր քնտրելու հակում ունի, այս վերնագիրը ևս բացառություն չէ: Շոգ ու փոշու մեջ կորած են գա-վառական այն քաղաքի փողոցները, ուր տեղի է ունենում գործո-ղությունը. փողոցներ, տներ, նպարավանատի խանութի գուանը

կուտակված բանջարեղենի կույտեր: Իհարկե, այդ հող ու փոշուց  
երաժի՛ն է հասնում և մարդկանց: Բայց դա միայն նրանց հոգնա-  
տանը մարմնին նստած փոշին չէ: Այդ փոշին այն շարունակական  
տառապանքների նյութավորումն է, որ տարիներ շարունակ անը-  
կատ, բույլ առ բույլ նստել է նրանց հոգուն, սրտին, խամրեցրել,  
բթացրել թե՛ նրանց զգացմունքները, և թե՛ շրջապատի նկատ-  
մամբ նրանց զիրարհիմունքը:

Ճիշտ այդպիսին է պատմվածքի հերոսը՝ Ասազ աղան: Հոգն-  
բանական խոր ու նուրբ վերլուծումների պահանջ ու հնարավորու-  
թյուն ընձեռող այլո՞ւմնալիս այս հատիկը Զամալ Միր Սաղեղին  
օգտագործել է լեխովյան նովնազրույթյան (որի հետ շատ զժերով  
այնքան շփման կետեր ունի Միր Սաղեղիի գրելաոճը) առանցքա-  
յին, ամենից ավելի հաճախ ու խոր արժարժված թեման՝ կյանքի  
հոգսից, կարիքից ու թշվառությունից մանրացող, աշխարհի լավի  
ու վատի նկատմամբ անտարբեր ու բուժ դարձող մարդու թեման  
արժարժելու համար:

Այստեղ հեղինակը մեծ վարպետությամբ կարողացել է օգտվել  
փոփոխուն տոնալնություն հնարանքից, հնարանք, որ լեխովյան  
պոետիկայի ամենանորին ու ճկունորեն կիրառվող կետերից մեկն  
էր: Տատանումներն այդ հիշեցնում են պիանիսիմոնից կրեչլինգո  
հակադարձ անցումներ, որ մեկ աստիճանական են, մեկ էլ կտրուկ,  
հակադրական: Այսպես, ամասային տոթ ցերեկի ծուլ ու թմրի-  
րազդու յուրյան պատկերի վրա երևում է գլխավոր գործող անձը՝  
ծերունի Ասազ Աղան:

Եզրամեջք ծերունին բռնակիր գրաստի պեռ կոտցած, գա-  
վազանին հենվելով, բաղրիչունի կույտերի՝ միջով առաջանալով  
արագ-արագ խանութի կողմն էր գալիս... գունատված ու հուզված  
նա հասավ խանութին, քրտնամխած մի պահ կանգ առավ շեմին,  
ու արտանունքներից զուրկ իր աչքերը շորս բուրբը պտտեցրեց:  
Ապա լսվեց նրա խզված, կատաղությունից խեղզված ձայնը.

— Այդ աղբիկը... էդ անամոթը... ինքս, իմ երկու աչքով տե-  
սա, ինքս, ինքս տեսա...<sup>11</sup>:

Իսկ նույն ծերունու հեռանալը խանութից պատկերված է այս-  
պես.

«Տեղից վեր ելավ ու սկսեց իր գավազանը փնտրել: Մի ձեռքով  
մտի փաթեթը սեղմեց կրծքին իր, մյուս ձեռքով՝՝ վերջրեց գավա-

<sup>11</sup> Զաչմեայն ման խաթն, էջ 13:

զանն ու կազմկազմ գործս եկա՛վ խանութից: Տրամադրութիւնն իր լավ էր, ուրախ, շուրթերը՝ ժպիտից կիսաբացա՞ն:

Հակադրական այսպիսի համադրութիւնք ու մի քանի հեղինակային դիտարկումով պատմվածքը կարող էր ավարտվել: Հայրը կասկածում է իր աղջկա ու խանութպանի ինտիմ կապի մասին, նա եկել էր վերջ դնելու այդ անազնիվ (իբ կարծիքով) կապին, ամոթահարելու ու ետ պահելու աղջկան:

Բայց մարդը թաղցած է, թշվառ, կարիքավոր: Խանութպանի աշկերտի տված միսը, մի տուն երեխաներին մի օր կուշտ տեսելու հեռանկարը ի լիք են դարձնում նրա զայրույթը: Բայց այսպիսի կարուկ անցումը, որ ըստ էութեան չի խաթարում փոքր ժանրի կառուցվածքային կանոնները, անհարիւր է Ջամալ Միր Սաղեղի պոետիկային: Վերջինիս անհարիւր են նաև սուր անկյունների, շեշտակի հակադրութիւնք համադրութիւնները: Ջամալ Միր Սաղեղի գրելաձևին ավելի բնորոշ են պլաստիկ, ճկուն անցումները, պլաստիկա, որ երևան է զայիս ինչպես պատմվածքների կառուցվածքում, այնպես էլ հերոսների դիմանկարային բնորոշումների մեջ: Այդ ճկունութիւնը, որին ձգտում է հավասարիմ մեալ հեղինակը (սկզբունք, որ Տոլստոյից սկսած բոլոր մեծ պոետների նախասիրութիւնն է եղել), հարավորութիւն է տալիս երևութիւնները պատկերել իրենց բոլոր նորր ու բարդ հակասութեան մեջ, բացահայտել դրանց գիեմտիկան:

Ճիշտ այդպես է վարվել հեղինակը այս դեպքում: Սերունին զգուշավոր կասկածամտութիւնք դիտում է շուրջ բոլորը, ականջ սրում՝ խանութի նստասենյակից տարրերակելի որոշակիութիւնք իրեն հասնող աղջկա խոսքերը հասկանալու համար: Բայց ճիշտ ժամանակին հրամցված այնքան քաղձալի թաղցր թելը, վազուց ճաշակված ձխախոտը իրենց սպասված ազդեցութիւնն են ունենում: Ընթանաժողաց հանույքով իրեն ճաշակման վայելքին ուղած Ասաղ աղան միայն ըմպելազաղարին է հիշում աղջկան, փորձում հաճույքից մշուշված իր ուշադրութիւնը կենտրոնացնել աղջկա ձայնը նորից որսալու համար: Այս տեսարան անցումը ամենաներբորին բացահայտում է նաև պատմվածքի հեղինակային միտումը՝ կյանքի կարիքը, դժվարութիւնները այսպես աստիճանաբար, աննկատելի են կլանում, դուրս կորզում մարդուց մարդկայինը, այդպես կաթիլ-կաթիլ, բաժակ առ բաժակ մարդուց վերանում, հեռանում է մարդը:

Զամալ Միր Սաղեղիի գրելառենի պլաստիկան իր ամբողջական ու հաշոյղ արտահայտութիւնն է գտել նրա «եռալիւն» (սՄորաքույրը) պատմվածք-դիմանկարում:

Կարծւոք, ստեղծագործութիւնն այս եշանակայից է ու միայն Զամալ Միր Սաղեղի-նովելիստի վարպետութիւնն գրանորման, այլն (և առավելապէս) նրա աշխարհընկալման, մարդընկալման քաջահայտման տեսակետից:

Այդ մասին խոսվեց և վերը՝ այդ գրողի ստեղծագործութիւնն ժողովրդային ոգին է, ոգի, որ գրանորովել է ու միայն հասարակ մարդկանց, ամբոխի կերպավորմամբ, այլև ժողովրդի, ամենապարզ մարդկանց լուսավոր, բխորութիւնութիւնն լափ կենդանի է կերպարներին ստեղծումով:

Պլաստիկ, խարուսիկութիւնն լափ կենդանի այդպիսի կերպարներ ստեղծելու վարպետութիւնն մասին Գորկին գրել է.

«Երբ կարգում ես նրանց գրքերը, թվում է, թե խոսքի հրաշագործ ուժով շունչ առած քույր հերոսները շրջապատում են քեզ, ֆիզիկապէս հուզվում, գուցե՞ զգալու լափ սուր զգում ես նրանց տառապանքները, նրանց հետ լալիս ես, ծիծաղում, աւտում ես նրանց ու սիրում, քեզ լսելի են նրանց ձայները, տեսանելի նրանց աչքերի ուրախութիւնն փայլն ու վշտի խոնավ մշուշը, նրանց հետ ապրում ես բարեկամի կարեկցանքով ու թշնամարար վտնում քեզնից, և այդ ամենը նույնպէս տառապալի լինելու լափ լավ է, որպէս իսկական կյանքը, միայն ավելի հասկանալի ու զեղեցիկ»<sup>15</sup>, ճիշտ այդպէս շոշափելիութիւնն լափ կենդանի, հուզող ու ապրեցնող ուժով են կերտված Զամալ Միր Սաղեղիի մի քանի հերոսները: Այդպիսի հաշոյղված կերպարներից է նաև «եռալիւն» (սՄորաքույրը) պատմվածքի հերոսուհին: Պլաստիկ կերպավորման սկզբունքներում, ինչպէս հայտնի է, մեծ գրողները մեծ տեղ էին տալիս դիմանկարին, որ կերտած էր լինում կամ իմպրեսիայի և կամ թե էքրապրեսիայի ու հեղինակային բնորոշման միջոցներով (ավելի շատ այս միջոցից օգտվում էր Տոլստոյը): Գորկին առավելապէս այս միջոցն զուգակցում էր երկխոսութիւնն հետ: Պարսիկ գրողներից Ս. Հեգայաթին, ինչպէս ցույց են տալիս ուսումնասիրութիւնները, ավելի հոգեհարազատ էին պոետիկայի շխոյժման սկզբունքները:

Ընդհանուր գրական խառնվածքով մոտ լինելով իր ավագ զբրւակցին, Միր Սաղեղին ունի պլաստիկ կերպավորման իր սկզբունքները: Նա գրեթե երբեք չի օգտվում դիմանկարային քննութա-

<sup>15</sup> М. Горький, Собр. соч. в 30 томах, т. 24, стр. 325—326.

խղճուկ, զգայական հաճույքներով ապրելու, դրանք երազելու, լվացքի կեղտաշրիքի մեջ մաշելու իր կյանքը (այդպիսին է նրա «Զհարմիւս պատմվածքի հերոսուհին»), եւ իրավունք ունի լուսավոր երազների ու լուսավոր իրականութեան, եւ պիտի ունենա այդ լուսավորը, գեղեցիկը իր կյանքում, նվ ըստ էութեան այդ լուսավորի դատն են պաշտպանում նրա պատմվածքները: Այդ մասին մեկ անգամ եւ վկայում է նրա «Շար խամուշ քուզ (ճիշիչը լուս էր») պատմվածքը:

Նոր չէ այդ պատմվածքի թեման պարսից ժամանակակից գրականութեան համար: Նրան Ս. Հեղայաթից սկսած անգրագար-  
նի են գրեթէ բոլոր առաջագնի պարսից գրողները, անգրագարնի մարզու մեջ մարզկալինը սպանող, նրան կենդանի դիակ դարձնող կրոնական մոլեռանդութեան դեմ պայքարելու, այն մարդկանց միջից արմատախիլ անելու հումանիտարական ազնիվ գոյացումով: Այդ միտումն ունի նաև հեղինակը: Բայց փոխվել են ժամանակ-  
ները, փոխվել է նաև թեմայի սյուժետային լուծումը: Միւր Սաղե-  
զիի հերոսը արգեն կուրորին, անետադարձ լի տրվում այդ զո-  
ցումին: Նրա հավատը բախվում է իրականութեան, ցնծացող, իր-  
նը պահանջող կյանքին, ու կյանքը, կյանքայինը հաղթում է: Կա-  
տաղած շնորհից ձմռան ուզ գիշերին փրկել ու իր սննյակն է բերել  
ստավածարանութեան ուսանողը՝ (ախունդը) վերավոր, գեղեցիկ  
մի կնոջ: Նրա վերքերը կապելիս ախունդը երկար կռիվ տալով  
ինքն իր հետ, ի վերջո հաղթվում է. գեղեցիկը, կյանքայինը ավելի  
ուժեղ են գտնվում ու հաղթում են մտքին, տարիներ շարունակ  
ներծծված քարոզներին: Բայց դա սոսկ մարմնական հաղթանակ  
չէ (որ հարկադրական նատուրալիստական որոշ պատկերների առ-  
կայութեամբ կարող է վերագրվել հեղինակային միտումին), դա  
մարզու հաղթանակն է, որ (հոգեբանական բարդ ու նուրբ պատ-  
կերումով) ձեռք է բերված զոգմայի, դաստիարակութեան դեմ: Նվ  
դա ըստ էութեան, հին թեմայի նոր լուծումն է, լուծում, որ թելա-  
գրում է կյանքը, ժամանակը:

Նվ բոլոր այն դեպքերում, երբ հեղինակը ունկնդիր է ժամա-  
նակի ձայնին, նրա ստեղծագործութունները ստանում են հասա-  
րակական մեծ հնչողութուն: Բայց, լնայած անուրանալի վարպե-  
տութեանն ու կենսաճանաչողութեանը, Միւր Սաղեզին միշտ չէ, որ  
կարողանում է ունկնդիր լինել այդ ձայնին: Այժմ այն մասին, թե  
ինչպես է հեղինակը կարողանում իր պատկերած շուրջ ցավերի  
աշխարհին հաղորդակից անել ընթերցողին, հաղորդակցութուն,  
որ նման չէ օձիքը բռնած ու միալար ու ձանձրալի իր գլխից ան-



ցածր պատմող ծանոթի ասածներին ունկնդրելուն: Այս պատմըվածքի հերոսների հետ ապրելու, նրանց վիճակում քեզ մի պահ զգալով հաղորդակցվելն է, որը ինչպես Վ. Սարգսյանն է նշում, պատմվածքի հաղորդիչի կարևոր նախապայմաններից մեկն է: Դրան հեղինակը հասնում է տարբեր միջոցներով:

Պայմանական հերոսի շարժերով հենց առաջին նախադասությունից ստեղծված անմիջական-հուզական տրամադրությունը (սինթարֆ, ինքարֆն լասնաթիւ.—եկն ձյունը, ախ այն անիծյալ ձյունը) հեղինակը խրոնոլոգիական վերընթաց գծով զարգացող պատմվածքում պահպանում է տոնայնության անող լարվածություններ, որ ի վերջո անակնկալ, նովելիստիկ ավարտով փշրվում է, ընթերցողին մի անգամ նս հակադրելով վերապրել առաջին անգամ Ֆարույայով տարված լինելու պատճառով ենթագիտակցական մնացած զգացմունքների գամման: Այս պատմվածքում Միր Սաղեղին դրսևորել է մարդկային ներաշխարհի նուրբ, անտեսանելի ծախքերը բացահայտելու ու այն փոքրիկ, աննշան մանրամասների միջոցով ցուցադրելու կարողությունը:

Տարիներ առաջ մարդը ակամա լարիք է գործել: Իր արածի համար արստանքը, վիշտը նրան ասնելում են մինչև հիմա: Նա զառնացած է, բայց մի փոքրիկ արստանք ունի. ուրիշների թելադրանքով, նրանց խրախուսանքով է եղել պատահարը: Ու արստանքը դառնում է դառնություն, ահաճության սկիզբը արգարտը խորհրդանշան: Ու նա կուզեր որ լիներ այ այդ սկիզբը, այդ խրախուսանքը, այդ դառը արստանքը: Եվ այս ամենը հեղինակը հաղորդում է կրկնության, միևնույն նախադասության գրեթե լմիշարկված կրկնության միջոցով:

Եկեղստա գործ էր, հիմա, որ մտածում էմ, վատ եմ զգում: Բայց միակ գործն էր, որի գաղտնիքը լավ գլխի էի ընկել ու կերպր լավ գիտեի: Էդ պատճառով էր, որ ուստա ինձ շատ սիրում էր ու սրա նրա մտ գովքա էր անում: Ե՛մ արպիկ տղա է՛ս, հա զովում էր ու գովում, դովում<sup>11</sup>: Ի՛ր տուսայիւ, մսավաճառ խանութպանի գովասանքից խրախուսված աղան գարձել էր թաղի պարտապան-զնորդների հոգեառ հրեշտակը. նրա ձեռքից ոչ մի Ե՛մ արպիկն էր ազատում լուծի: Բայց մի հերթական Ե՛հաղթանակը դառնում է հիշողության վերք, անիծյալ գարձնում, դառնացնում նրա ամբողջ Ե՛գործունեությունը: Հերթական պարտքատերից, մանկամարդ, գեղեցիկ մի կնաչից պարտքը խլելու ժամանակ տղան տեղյակ է դառնում բոլոր Ե՛մ արպիկներների Ե՛տաներեսությանն Ե՛զաղտնիքին:

<sup>11</sup> Գեղեցիկ ման խոսքն, էջ 25:

Փաշքշուկի ժամանակ գետին է ընկնում ու քայքայում կնոջ նեղքի ծրարը, մեղք—սակորներ, այն սակորները, որ աղան սովորաբար թաղի շնորհն էր պցում, բայց այս անգամ ցրտից այսպեսով թափել էր խանութի դռանը: Ափսոսում է մարդը, տանջվում իր ավելորդ շանասիրության համար, տանջվում ու փորձում իր խղճին ապաստան գտնել:

«Ուրքերս... ականչներս... նեղքերս... մեղավորը այն ձյունն էր, որ նորից սկսել էր տեղալ, շուն էի կտրել, մի կատաղած շուն...»<sup>18</sup>,

Սա արդեն արդարացում չէ, այլ ինքնաքննադատում, խղճի դատաստան: Ըստ էության այս է Միր Սաղեղի ոչ մեծ պատմվածքի ֆարսուլիկ հենքը. պատմվածք, որ ընայած քնարական տարրի գերակշռությանը, էպիկական, սոցիալական խոր շունչ, հնչողություն ունի: Տանջալից հուզմունքով ներկայացված պատանեկան մի բուռ այս հուշերը տխուր լույսով լուսավորում են այն թաղի բնակիչների սոցիալական կյանքն ու թշվառությունը, ուր անց է կացրել հերոսը իր մանկությունը: Ըստ էության այս պատմվածքն շրջանակավորում, սուսմտիկ իմաստով միմյանց է կապում Միր Սաղեղի մնացած բոլոր այն պատմվածքները, որոնց հերոսները մի թաղի բնակիչներ են, թաղ, որ իր թշվառությամբ ու լուռ ցավերով այնքան հիշեցնում է և շատ ընդհանուր գծեր ունի հայ մեծ սեփական նար-Գոսի «Մեր թաղի» հետ:

Էլեգիկ այն շունչը, որով գրված է, և որը վարակիչ է դարձնում այս պատմվածքը, ավելի է խորանում, երբ Միր Սաղեղին գիտում է մարդու միայնության, մոռացվածության թեմային: Այս տիպի պատմվածքները առերևույթ կամերային բնույթ ունեն, բայց կամերայնությամբ հանդերձ, միայնակ մարդկանց լուռ ցավերը պատկերելիս անգամ հեղինակը աշխարհ չի անում ու գտնում է առերևույթ անհատական, ներանձնական թվացող մոտիվների սոցիալական համամարդկային շեշտերը: Այստեղ հարկ է նորից նշել թշվառի, մոռացված պատկերման մեջ անգամ լուսավոր շեշտեր գրտնելու, ու այդ շեշտերով ողբերգականը, դրամատիկականը ընդգրծելու հեղինակի կարողությունը:

Այդ լուսավոր շեշտերը հեղինակը գտնում է հասարակ, պարզ մարդկանց ներքնաշխարհում, մարդիկ, որ ընայած իրենց ողջ թշվառությունը ետևը ներսն արած, սպիտակը՝ դուրս, աշխարհին են պարզում իրենց լավի, գեղեցկի նրազը, իրենց նրկացող, բայց շունչեցած ծպիտը:

<sup>18</sup> Եսլի տեղում, էջ 24:

Այդպիսին է նրա «Մարտին» (սկզբ) պատմվածքի հերոսը՝ Ղուին:

Հայող, դիպուկ ընտրված մի նախադասություն-պարբերություն մեր Միր Սաղեղին ոչ միայն ընթերցողին անմիշտ պահ գրավում է նյութով, կապով, հետաքրքրում, այլև զանում է նյութի սյուժեին համահունչ, գրամատիկ հակադրությամբ ձեռնող արամադրություն:

«Ճեռքերը փորին սեղմելով, ազան կծկվում էր ծիծաղից: Աեսն կյանքում ծիծաղելի ավելի ուլինչ չէր տեսել: Ծիծաղի հետ նրա կոկորդից կտորկատր դուրս էին թռչում բառերը:

— Ղուին, վա՛յ, աստված իմ, վա՛յ, չգիտեք, է՛, չգիտեք, նա ինչպես է...»

Նա կուչ ու ձեղ էր լինում, նորից կծկվում,— եկեք, տեսեք, Ղուին լալիս է ... հա, հա, հա, աստված իմ, եկեք, եկնք տեսեք...»

Այսպես, առաջին իսկ նախադասությունով, ըստ էության, իրար են խառնվում ծիծաղն ու լացը: Այդպես խառնված են նաև դրանք հերոսի՝ Ղուինի կյանքում: Ավելի շատ նա ծիծաղով, հազար ու մի հնարամիտ կատակներով ու օլիերազություններով շրջապատից, հիվանդանոցի իր պալատակիցներին թաքցրել է իր լացը, խորը, հոգեմաշ վիշտը՝ կեող դավաճանությունը, իրենից խլված միակ աղչկա կարոտն ու ցավը: Մահացել է անտեր մնացած, ուրիշներին ծառայության տրված աղչիկը: Ու կուտակված, պահված, զսպված սրտին լեռնացած լացը փլվել է:

Ամբողջության մեջ այս է փոքրիկ պատմվածքի սեղմախոս հենքը: Սակայն դրա սյուժետիկ հենքը շատ ավելի խորն է, բղջային դարձած: Ըստ էության այն ողբաշեշտ մի երգ է կորսված, լաց դարձած մարդկային ժպիտների մասին: Պարսից դրականությունը ի սկզբանե շատ է հարուստ ողբի դասական նկարագրություններով, բայց իր գեղարվեստական ուժով Միր Սաղեղի պատմվածքը՝ Եվիշտը զերասանությամբ վարպետորեն կատարված կտավ կարող է համարվել: Ահա մի փոքրիկ հատված դրանից:

«Մենք կանգնած էինք լուռ, շվարած ժպիտը գեմքներիս ու նրան էինք նայում: Հանկարծ հիվանդներից մեկը քահ-քահ ծիծաղեց: Ղուին սարսափած շրջվեց ու երբ մեզ իր շուրջը տեսավ, շուրթերն ակամա նրա ծամածռության-ժպիտի սովորական ձևն առան ու... ծիծաղեց: Իսկ արցունքները գլորվում էին նրա դալուկ այտերն ի վարձ<sup>18</sup>»:

<sup>18</sup> Չալմուշե ման խաթե, էջ 71:

Միայնակ մարդու հնչողությունը թերևս ավելի խոր քնարական հնչողության մի ողորկություն է փորձել պատկերել Ջամալ Միր Սադեղին իր բժազգեստին սանգարա պատմվածքում:

Այստեղ լքված, անտեր, որդինորի կողմից մտացված ձերուսին հիվանդանոցի իր ընկերներին փորձում է ներկայանալ որպես ունևոր, բարեկեցիկ ու երջանիկ հայր, որի որդիներն աշխատում են մինիստրությունում, գիրքի ու անվան տեր մարդիկ են: Մարդկային հասկանալի հպարտության, ինքնասիրության հասկանալի ցույցն հեղինակին հնարավորություն կտար սցեյալական խոր ընդգրկումներ, ընդհանրացումներ կատարելու: Մակայն տարվելով մանրամասնություններով (որ հաճախ նատուրալիստական են և ոչնչով չեն օգնում նյութի խոսուն դասնալու), հեղինակը չի օգտագործել այդ հնարավորությունը, ստացվել է սովորական մի պատմություն լքված ժերուսու մասին, ավելին՝ որոշակի գիղակտիկ, բարոյախոսական երանգավորումով:

Մակայն, բարեբախտաբար, այսօրինակ վրիպումները եզակի են ու որակ չեն կազմում Ջամալ Միր Սադեղիի ստեղծագործության մեջ:

Որակ չեն կազմում նաև նատուրալիզմին արված նրա այլ տուրքերը. դրանք այդպես կոչելուց առաջ ավելի ճիշտ կլիներ մեկ անգամ ևս զննել, թե որտեղ և ինչ հանգամանքներում են հանդես գալիս (տե՛ս նրա «Զհարմի», «Շար խամուշ բուղա պատմվածքները»). ավելի շուտ, կարծո՞ք այն հեղինակի մոտ պայմանավորված է իր հերոսների աշխարհը, հետաքրքրությունների շրջանակը ավելի հարազատորեն վերաբաղակալու, նրանց գոյի առատաաղբ պատկերելու ձգտումով, քան օրյակաթվացված եղանակով:

1969 թ. Թեհրանում լույս տեսավ Ջամալ Միր Սադեղիի «Շարհայն թամաշա վա գուլն գարգա գիրքը»<sup>17</sup>: Բովանդակությունը այս ժողովածուի պատմվածքները ևս անդրադասում են նրա ստեղծագործությանը բնորոշ վերահիշյալ խնդիրներին:

Արդ, ո՞րն է Ջամալ Միր Սադեղիի էսթետիկական իզեալը, ո՞րն է մարդու կոնցեպտուալ պատկերման բնասանկությունը: Մարդու մեջ պահպանել մարդը, օգնել նրան բարդ լինելու՝ այս էսթետիկական իզեալի գիրքերից Ջամալ Միր Սադեղին վեր է հանում, ընդգծում է հասարակ ժողովրդի մարդու հոգու գեղեցկությունը,

<sup>17</sup> Ժողովածուն պատմվածքներից բացի ընդգրկում է «Գոյն զարգ» («Գնդին գարգ») վիպակը:

Երա լուսավոր, պաշտառ գծերը՝ դրա մեջ տեսնելով իր իգնալի հենարանը: Իր այս տեսանկյունից հեղինակը կարողանում է կյանքը պատկերել հասարակ մարդու աչքերով, հասարակ մարդու բնկալմամբ, կարողություն, որն Երա ստեղծագործությանը հաղորդելով ժողովրդականության շնչեր, միաժամանակ վկայում է նրա՝ ժողովրդային ոգու խոր և նուրբ զգացողության մասին:

Այս առանձնահատկության շնորհիվ Զամալ Միր Սադեզին խորացնում և շարունակում է առողջ, զգաստ հումանիզմի այն տեղեկները, որ ստեղծվելով Իրանի առաջատար գրողներ Ս. Հեղալաթի, Ս. Նաֆիսի, Բեհ-Ազիզի և մյուսների ստեղծագործությամբ, այսօր ժառանգվել են և զարգացվում են պարսիկ պատմելիական գրողների նոր սերնդի կողմից:

Л. Г. ШЕХОЯН

НОВОЕ ПОКОЛЕНИЕ ПЕРСИДСКИХ ПРОЗАИКОВ  
60-х гг. XX в. И ТВОРЧЕСТВО ДЖАМАЛА МИР САДЕКИ

### Резюме

В статье на фоне развития персидской новеллы 60-х гг. анализируется творчество одного из ведущих новеллистов Ирана—Джамала Мир Садеки.

Герои произведений писателя—простые люди Ирана, люди, живущие в тяжелых тисках нужд и лишений. Их мир—это мир молчаливых ран—таково видение автора, и именно этому видению подчинен весь художественно-образный строй творчества Мир Садеки.

Жизненные конфликты раскрываются автором не путем столкновений, а в отражении на судьбах героев. Большинство их—люди искаженных судеб. Тем не менее автор стремится находить и выявлять в них глубокие, светлые черты человечности. Более того, стремление это вырастает в концепцию воспеваания красоты души народной.

Именно благодаря этой отличительной черте творчество Мир Садеки занимает ведущее место в персидской новеллистике наших дней, лучшие представители которой продолжают традицию благородной борьбы за человека.

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՀԱՅ ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Հայ և պարսիկ ժողովուրդների պատմական, մշակութային, տնտեսական և քաղաքական կապերը իրենց արմատներով զնում են դարերի խորքը: Այդ կապերը առաջին հերթին պայմանավորված են այս երկու ժողովուրդների պատմական տերիտորիաների հարևանությամբ, որը անշուշտ չէր կարող հազարամյակների ընթացքում չնպաստել զրացի ազգերի տնտեսական և հոգևոր-մշակութային շփումներին և փոխազդեցություններին:

Հայերի և պարսիկների միջև այս փոխհարաբերությունների մասին առաջին հավաստի տեղեկությունները մենք քաղում ենք Աքեմենյան շահ՝ Դարեհ I-ի թագած Բեսիթունի սեպագիր արձանագրությունից, որն, ի զեպ, առաջին գրավոր հիշատակարանն է, որտեղ խոսվում է Արմենիա երկրի մասին՝ որպես քաղաքական առանձին միավորի:

Հետագա հարյուրամյակների ընթացքում, գտնվելով Արևելքի և Արևմուտքի շահերի քախման կենտրոնում, Հայաստանը, հատկապես Պարթևների տիրապետության շրջանում զերազանցապես ապրում էր Իրանի քաղաքական, կուլտուրական շահերով: Հետևաբար, այդ ժամանակաշրջանում ևս նույնպիսի հետևողականությունը շարունակվում էր հայերի ու պարսիկների փոխհարաբերությունն ու շփումը, որն առանձնակի սերտ բնույթ ընդունեց Հայաստանում պարթևական ժազում ունեցող Արշակունիների դինաստիայի տիրապետության շրջանում (մ. թ. 63—428 թթ.): Հայ-իրանական այդ շփումների և փոխազդեցությունների մասին ականավոր պատմաբան Նիկողայոս Աղաքցի գրում է. «Հայաստանը, որը հին ժամանակներից ի վեր ներգրավված էր պարսկական պետությունների համաշխարհային քաղաքական ոլորտի մեջ, հարյուրամյակներ շփվում էր պարսիկների հետ միևնույն կուլտուրա-

կան աշխարհում, Այն ժամանակվանից, երբ Արշակունիները գրավեցին Պարսկաստանը և նրանց կրտսեր շառավիղը հաստատվեց Հայաստանում, երկու երկրների հասարակական-կենցաղային կապը ավելի սերտ դարձավ<sup>1</sup>:

Գիտությանը հայանի մի շարք փաստեր վկայում են, որ V դ. հայկական գրերի ստեղծումից առաջ Հայաստանի պետական ու հասարակական կյանքում որպես գրավոր հաղորդակցման միջոց հունական գրին զուգահեռ օգտագործվել է պարսից գիրը, թեև նաև պարսկերեն լեզուն: Պարսկերենը հունարենի հետ միասին եղել է հայ դպրոցի ու եկեղեցու գրական լեզուն, այն նույնիսկ պաշտոնական գործառնության մեջ է եղել հայոց արքունիքում և անշուշտ տիրապետող բարձր խավերի շրջանում<sup>2</sup>, Այդ մասին մասնավորապես վկայում է Մ. Խորենացին իր «Պատմության հայոց» աշխատության մեջ<sup>3</sup>:

Հայ-իրանական կապերը և փոխազդեցությունները նոր ընդանդակություն ընդունեցին Իրանում Սասանյանների տիրապետության շրջանում: Եղված ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայի երկու հզոր պետությունների՝ Սասանյան Իրանի և Բյուզանդական կայսրության միջև սկսվում է երկարատև, համառ ու արյունոտ զինված պայքար, որի հիմնական առանցքն էր Հայաստանը: Այսանդ թրիստոնենությունը պաշտոնական կրոն հռչակվելուց հետո Բյուզանդական կայսրության հետ հոգևոր միասնության հիմքի վրա անխուսափելիորեն ամրապնդվելու էր նաև Հայաստանի քաղաքական կապը Բյուզանդիայի հետ: Սասանյան Իրանը գրավեց տեսնելով մեծագույն ապստամբիք իր քաղաքական շահերին, աշխատում էր զինու զորություններ և գաղափարական պայքարի միջոցներով (զրադաշտականության ընդ տարածում) կասեցնել Բյուզանդական ազդեցության ծավալումը ինչպես Հայաստանում և Իրանի սահմանակից մյուս երկրներում, այնպես էլ հենց թուն Իրանում, որտեղ թրիստոնենության տարածումը ձեռք էր բերել լուրջ հաջողություններ: Այն, որ թրիստոնենության այս հայաժանգները սասանյան թագավորների կողմից զուտ կրոնական մոլուխանդության և մոզերի սադրանքների արդյունք չէին, այլ իրենց հիմքում ունեին քաղաքական լուրջ խնդիրներ, ապացուցվում է նրա-

<sup>1</sup> H. Адонц, Армения в эпоху Юстиниана, СГ36, 1908, стр. 211.

<sup>2</sup> P. L. Զուլպույան, Հայ-իրանական գրական անընթացներ (5—18 դդ.), Օրհան, 1962, էջ 12:

<sup>3</sup> «Մովսիսի Խորենացու Պատմության հայոց», Տփղիս, 1913, էջ 11:

ևով, որ երբ այսպես կոչված Եկատորականները 431 թ. Եփեսոսի տինդերական ժողովից հետո խզեցին իրենց կապերը բյուզանդական (ուղղափառ) եկեղեցուց, որի հետևանքով արտաքովեցին Բյուզանդական կայսրության սահմաններից (հռչակվելով հերձվածուներ) և հաստատվեցին Իրանում, Սասանյան կառավարող շրջանները համոզվեցին, որ Եկատորական և մոնոֆիզիթ եկեղեցու հետևորդները բուրդովին էլ համակրանքով չեն վերաբերում բյուզանդացիներին, հետևաբար, և վերանում էին քրիստոնյաների հայածանքների քաղաքական մոտիվները: Եվ V դ. 80-ական թվականներից հետո երկու քրիստոնեական դավանանքները՝ Եկատորականը և մոնոֆիզիթականը (բայց ոչ ուղղափառը) ստացան լեզուի դոյուքիան իրավունք ինչպես Իրանում, այնպես էլ նրա սահմանակից երկրներում<sup>4</sup>:

Այսպիսով, Սասանյանների տիրապետության շրջանում թեև Իրանի կառավարող շրջանների վերահիշյալ քաղաքականության հետևանքով հայ և իրանական ժողովուրդների միջև հոգևոր-մշակութային կապերը որոշ չափով թուլանում են, սակայն երբեք չեն խզվում, ապրելով միայն ժամանակավոր նահանջ:

V դ. Մեսրոպ Մաշտոցի հայ գրերի ստեղծումից հետո Հայաստանում սկսվում է կրթական, մշակութային մեծ վերելք: Բացվում են բազմաթիվ դպրոցներ և մենաստաններ, բուռն թափով զարգանում է թարգմանական գրականությունը: Լեոն արտահայտությանը այդ մի ժամանակ էր, երբ «...թարգմանչությունը զանում էր հայ կյանքի մի նոր և լուսավառլ երևույթի՝ ազգային հարուստ գրականության ծնողը»<sup>5</sup>: Այդ թարգմանչությունների շնորհիվ հազարամյակների արհամիրքներից փրկվել և մեր օրերն են հասել այնպիսի գործեր, որոնք եղակի են Առաջավոր Ասիայի կենդանի կամ անհետացած ժողովուրդների պատմության հարցերը լուսարանելու տեսակետից:

Թարգմանական գրականության աննախընթաց զարգացման հետ միաժամանակ V դ. հիմք դրվեց նաև հայ ինքնուրույն պատմական գիտությունը: Մեր առաջին պատմիչները սկսեցին սկստուն հետաքրքրություն գրանորել հարևան ժողովուրդների նկատմամբ: Առաջին հերթին այդ հետաքրքրությունների կիզակետում էր գրա-

<sup>4</sup> Տե՛ս E. Ter-Minassian, Das Christentum im alten Persien (Die Religion in Geschichte und Gegenwart, Vierter Band, ss. 1383—1384, b. Տեր-Մինասյան, Ընդհանուր եկեղեցական պատմություն, հ. 1, էջմիածին, 1908, էջ 289—291:

<sup>5</sup> Առ, Երկրի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 16:



նրովմ Սասանեան Իրանը, ժանազանդ, որ վերջինիս քաղաքական գերիշխանութիւնը տարածվում էր Հայաստանի վրա: V դ. և հետագա դարերի հայ պատմիչների երկերում ուղղակի կամ անուղղակի մեով բնութիւն են առնվում Իրանի պատմութեան, փիլիսոփայութեան, կրօնական հայեցողութեանների ու գաղափարախոսութեան, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի վերաբերյալ ամենարգումապիսի հարցեր: Հայկական այդ աղբյուրների հաղորդած տեղեկութեանները առաջնակարգ նշանակութեան ունեն ոչ միայն հայ-իրանական դարավոր կապերի և հոգեվոր-մշակութային փոխազդեցութեանների պատմութեանը հյուսելու, այլ և Իրանի հին և միջնադարյան շրջանների պատմութեան հարցերի մեջ խորամուխ լինելու տեսակետից:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ իրանագիտութեան ակունքները սկիզբ են առնում դարերի խորքից, նոր ժամանակների արեւելագիտութեանը մատուցելով փաստական և քննական այնպիսի հարուստ նյութ, որը մեծ ավանդ է Արևելքի վերաբերյալ մարդկութեան կուսակած գիտելիքների գանձարանում:

Այժմ համառոտակի կանգ առնենք հայ հին և միջնադարյան այն պատմիչների ստեղծագործութեանների վրա, որոնք խիստ շահեկան ու արժեքավոր են Իրանի պատմութեան տարրեր դրվագները ուսումնասիրելու տեսակետից:

Ժամանակագրական կարգով ամենահին հայ պատմիչը Ագաթանգեղոսն է, որից մեզ է հասել «Պատմութեան հայոց» աշխատութեանը\*։ Այս գործը շագանակեց կարևոր սկզբնաղբյուր է վաղ քրիստոնէութեան պատմութեան, ինչպես նաև Հայաստանում և հարևան երկրներում հեթանոսութեան մատին: Ագաթանգեղոսի աշխատութեանը գեղեցիկ միջնադարում իր վրա է բեռնել այլազգի պատմիչների ուշադրութեանը: Պատահական չէ, որ այն առաջին հայերեն գիրքն էր, որ թարգմանվել էր օտար լեզուներով: Մասնավորապես մեզ են հասել Ագաթանգեղոսի հունարեն և արաբերեն թարգմանութեանները, որոնք խմբագրվել են VII և հետագա դարերում: Ագաթանգեղոսի պատմութեան հունարեն թարգմանութեան լավրենտյան տարբերակում (XII դ.) պահպանվել է Իրանում

\* Ագաթանգեղոս, Պատմութեան հայոց: Աշխատութեանը Ք. Տեր-Մկրտչան և Ստ. Կանանց, Տիֆլիս, 1909:

† «Agathangelus und die Akten Gregors von Armenten», aus dem fünfenddreissigsten Bande der Abhandlungen der königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen, Göttingen, 1887, ss. 3—88.

Արշակունյան հարստության անկման և Սասանյանների հաղթանակի զիջական զրույցը<sup>8</sup>, որը որոշակի լույս է սփռում Իրանի պատմության այդ կարևոր իրադարձությունների վրա:

Ազաթանգեղոսին ժամանակակից է Փաժատոս Բյուզանդը կամ Բյուզանդացին, որից մեզ է հասել «Պատմություն հայոց» վերնագրով աշխատությունը: Այն ընդգրկում է 330—387 թթ. միջև ընկած ժամանակաշրջանը, հայկական խոսքով թագավորի գահակալությունից մինչև Հայաստանի բաժանումը Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև: Այն կարևոր սկզբնաղբյուր է ինչպես Արշակունյաց Հայաստանի հասարակական, քաղաքական և սոցիալատեսական պատմության, այնպես էլ իր ժամանակի Մերձավոր և Միջին Արևելքի, հատկապես Իրանի պատմության համար: Փաժատոսի աշխատության արժեքը նրանում է, որ նա իբրև ժամանակակից և ակտիվացած վկա միանգամայն հավաստի տեղեկություններ է հաղորդում Հայաստանում և հարևան երկրներում տեղի ունեցող պատմական իրադարձությունների մասին: Նրա աշխատությունը հատկապես անզուգական աղբյուր է IV դ. Իրանի պատմության ուսումնասիրության համար<sup>9</sup>, նրանում կարևոր տեղեկություններ կան նաև IV դ. հայ-պարսկական և պարսկա-բյուզանդական հարաբերությունների մասին: Փաժատոսի աշխատության նկատմամբ մեծ հետաքրքրության ապացույց է այն, որ դեռևս VI դ. նրանից սգավել է հույն պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին և որոշ հատվածներ թարգմանել է հունարեն<sup>10</sup>, նոր ժամանակներում Փաժատոսի պատմությունը թարգմանվել է եվրոպական մի շարք լեզուներով. ֆրանսերեն (1867 թ.), գերմաներեն (1879 թ.), ռուսերեն (1953 թ.) և այլն:

V դ. հայ պատմիչ է նաև Ղազար Փարպեցին, որի «Պատմութիւն հայոց» և «Թուղթ առ Վահան Մամիկոնեան» աշխատությունները նվիրված են հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությանն ընդգնմ Սասանյան Իսլամի: Փարպեցու սկզբնաղբյուրն ընդգրկում է 387—486 թթ. միջև ընկած ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների նկարագրությունը, որտեղ արտացոլում են գտել նաև Իրանում, Բյուզանդական կայսրություն

<sup>8</sup> Ք. Լ. Զուլալյան, Հայ-իրանական զրոյան տեղություններ, էջ 16—17:

<sup>9</sup> Н. В. Пугачевская, А. Ю. Якубовский, Н. П. Петрушевский, Л. В. Строева, Л. М. Беленцкая, История Ирана с древнейших времен до конца XVIII века, Л., 1958, стр. 38.

<sup>10</sup> Ա. Կ. Արուհամյան, Մատենագրանի մեկագիր գանձերը, Երևան, 1869, էջ 35:

նում, Վրաստանում, Ազգանցում և Հայաստանի հարևան մի շարք երկրներում տեղի ունեցած պատմական անցուղարձերը: Փարպեցու «Պատմությունը» համընդհանուր հանալում է գտել որպես Իրանի պատմության լավագույն և հաճախ սկզբնաղբյուրներից մեկը: Այն հատկապես արժեքավոր է հայ-իրանական հարաբերությունները լուսարանելու տեսակետից:

V դ. կեսերին հայ-իրանական հարաբերությունների պատմությանը նվիրված ամենալավագույն սկզբնաղբյուրներից է Աղիշի աշխատությունը<sup>11</sup>, Իրանի քաղաքական կյանքի մասին բազմապիսի տեղեկությունների հետ մեկտեղ այստեղ մենք գտնում ենք խիստ արժեքավոր նյութեր իրանական ժողովուրդների կրոնական հայեցողությունների, մաշնավորապես զբաղաշտական կրոնի գաղափարախոսության, հին իրանցիների կենցաղի, Իրանի աշխարհագրության և այլ երկրին ու նրա ժողովուրդներին վերաբերող բազմաթիվ այլ հարցերի մասին: Աղիշի աշխատությունը տարբեր լեզուներով թարգմանվել է ավելի քան 40 անգամ, որը անշուշտ, վկայում է նրա նկատմամբ համաշխարհային արևելագիտության տաժած մեծ հետաքրքրությունը:

Հայ ժողովրդի առաջին գիտական պատմությունը հնագույն ժամանակներից սկսած մինչև Արշակունյաց հարստության անկումը և Հայաստանի քաղաքական անկախության վերացումը գրել է V դ. պատմիչ Մովսես Խորենացին, որը սերունդների կողմից ստացել է պատմահայր և քերթողահայր անունը: Իր «Պատմութիւն հայոց»<sup>12</sup> աշխատությունը շարադրելիս Խորենացին ձեռքի տակ է ունեցել մի շարք հունական և ասորական հեղինակների աղբյուրներ, որոնցից մի քանիսը գիտական աշխարհին հայտնի են դարձել միայն Խորենացու գրքի միջոցով: Խորենացին մտանավորապես օգտվել է Հերոդոտից, Հովսեփ Փլավիոսից, Սվետերիոս Կեսարացուց, Բարդամանից, Պորֆյուրից, Փիլիմոնից, Պլինիոսից, Մանեթոնից և այլ հեղինակներից: Նրա պատմության համար աղբյուր են հանդիսացել նաև հայկական բանահյուսությունը, հարե՛վան ժողովուրդների ավանդական զրույցները, գանազան պաշտոնական փաստաթղթեր, վիժական արձանագրություններ և այլն: Այլ կերպ ասած, լինելով իր ժամանակի կրթված և բազմակող-

<sup>11</sup> Աղիշ, Պատմութիւն Վաս Վարդանայ և Հայոց պատերազմին, Վենետիկ, 1893:

<sup>12</sup> Մ. Խորենացի, Պատմութիւն հայոց թարգմանությունը, ներածությունը և թեմաթարգմանությունները ակադ. Սա. Մալխասյանցի, Երևան, 1955:

Ճանիորեն զարգացած անձնավորութիւններէր մեկը, Խորենացի լայնորեն օգտագործել է Նյութական, գրավոր և բանավոր մշակույթի նվաճումները:

Մովսես Խորենացու աշխատութիւնը միաժամանակ անփոխարինելի սկզբնաղբյուր է Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմութեան համար: Նրա արժեքը ոչ միայն փաստերի հարստութեան մեջ է, այլ նրանց հազաստիութեան մեջ: Խորենացին այն հզակի պատմիչներից է, որը քննադատական մտայնում է ցուցաբերում իր օգտագործած բազմաթիվ սկզբնաղբյուրների նկատմամբ: Այս իսկ տեսակետից նրան համարում են պատմաբան Բառնա ժամանակակից իմաստով:

Մովսես Խորենացու աշխատութիւնը հասկնալիս արժեքավոր է Իրանի պատմութեան համար: Նրանում պարունակվում են հարուստ տեղեկութիւններ, մասնավորապէս իրանական վիպական գրույցների մասին: Այսպէս, իրանական «Մահ-Նամե» էպոսի հերոս Ռուստամի ամենավաղ գրանցումը պատկանում է Խորենացուն: Այդ առթիվ անգլիացի գիտնական էդուարդ Բրաունը գրում է, որ «Ռուստամի անունը գտնվել է միայն ուշ շրջանի պահլավական գրութիւնների մեջ մեկ կամ երկու տեղ. մինչդեռ նրա հուժկու գործերը հայտնի են եղել հայազգի Մովսես Խորենացուն»<sup>12</sup>:

Ֆիրդուսուց դեռ շատ առաջ Խորենացին իր պատմութեան մեջ գրանցել է նաև Բյուրասպի Աժգահակի առասպելը, որին հասկացրել է մի առանձին գլուխով պարսից առասպելաց յազագս Բիւրասպի Աժգահակայս վերնագրով:

Համաշխարհային Նշանակութիւն ունեցող այս երկն արդեն ավելի քան երկու դար ուսումնասիրում են նաև ցտար պատմաբանները և բանասերները: Այդ ժամանակամիջոցում Խորենացու «Պատմութիւն»-ը թարգմանվել է բազմաթիվ եվրոպական և արևելեյան լեզուներով՝ յատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, շվեդերեն, ռուսերեն, հունգարերեն, պարսկերեն և այլն:

Հատկապէս վերջին տարիներին իրանական պատմադրութիւններ մեծազույն ուշադրութեամբ ուսումնասիրում է Խորենացու պատմութիւնը, նրա մեջ գտնելով հզակի տեղեկութիւններ Իրանի պատմութեան բազմաթիվ լուսաբանված հարցերը բարձրացնելու և պարզելու համար:

Հարկ է նշել, որ զբաղաշատականութեան կրօնա-փիլիսոփայական զաղափարախոսութեան և նրա մեջ սասանյանների շրջանում

<sup>12</sup> E. G. Browne, A Literary history of Persia. From the earliest times until Firdawsi, London, 1902, p. 117.

Հանդես եկած ազանդավորական ուղղութիւնների էութեան ու բնույթի մասին գիտութեանը հասել են շատ քիչ ազլայներ: Այդ բացը Հիմնականում լրացնում է Մ. Գ. Հայ պատմիչ Եզնիկ Կողբացու «Եղծ ազանդոց» աշխատութիւնը<sup>14</sup>, Կողբացին այս աշխատութիւնը գրել է հերքելու համար զանազան ազանդներ և կրօնական գաղափարախոսութիւններ, նա հատկապես կանգ է առել իր ժամանակի ազանդներից շորսի վրա, այդ իսկ պատճառով նրա աշխատութիւնը բաժանված է շորս մասի. ա) «Եղծ ազանդոց հեթանոսացն, բ) «Եղծ քէշին Պարսից», գ) «Եղծ կրօնից Հունաց իմաստնոցն» և դ) «Եղծ ազանդոյն Մարկիոնիս»:

«Այսպիսի մի գործ հարողութեամբ կատարելու համար,— գրում է Լեոն,— հարկավոր էր ունենալ քննադատական-վերլուծական ուժեղ կարողութեան, զինված գիտութեան հայթայթած միջոցներով, լավատեղյակ փիլիսոփայական և աստվածաբանական տեսութիւններին և գրականութեան: Եվ Եզնիկը հենց այդպիսի մի երեսույթ է ներկայացնում մեզ, եզակի և անհամեմատելի՝ մեր ամբողջ գրականութեան մեջ»<sup>15</sup>:

«Եղծ ազանդոցի» կարևորագույն և այստեղ մեզ հետաքրքրող մասը նրկորդ գլուխն է, որտեղ Եզնիկը քննադատում ու հերքում է պարսից «քէշը»՝ զրադաշտականութեանը, այսինքն Սասանյան պետութեան պաշտոնական կրօնական գաղափարախոսութեանը<sup>16</sup>:

Եզնիկի աշխատութեանը իր ժամանակի համար ունեւ որ միայն զօտ փիլիսոփայական տրակտատի բնույթ, այլև այն հետապնդում էր որոշակի քաղաքական նպատակներ: Եզնիկ Կողբացին հայ այն գործիչներից էր, որոնք այդ տալեապալից ժամանակներում առաջի մեծ եռանդով և կրքով հանդես էին գալիս իրենց ժողովրդի պաշտպանի գերում: Եզնիկն վկայում է, որ Բագրևանդի Եպիսկոպոս Եզնիկը մասնակցել է 449 թ. տեղի ունեցած Արաաշաի կրօնական ժողովին: Այդ ժողովից հետո կազմվում է Հազկերտ II թագավորին ուղղված հայտնի պատասխանը, որի հիմքում դրվում է Եզնիկի աշխատութեանը: Կողբացին իր աշխատութեան մեջ հանդես է գալիս շարին հնազանդելու բռնութեանը դեմ և տեսականորեն հիմնավորում է պայքարի անհրաժեշտութեանը շարի դեմ<sup>17</sup>:

<sup>14</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ Ազանդոց, Քիֆլիս, 1914:

<sup>15</sup> Լեո, Երկերի ժողովածու, Լ. 2, էջ 29:

<sup>16</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ Քէշին պարսից, Քիֆլիս, 1915:

<sup>17</sup> В. К. Чалоян, К вопросу об изучении Езника Кожбаца, армянского философа, Ереван, 1940.

Պետք է նշել, որ Օզնիկի Կողբացու «Նզժ ազանգոցք» գիտության համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այսօր: Զրազաշտական կրոնի և նրա ազանգների ուսումնասիրության համար նա ունի բացառիկ կարևոր արժեք: Կողբացին շափազանց հարուստ փաստեր է արձանագրել նաև V դ. պարսից հավատալիքների ու գիցարանական հասկացողությունների մասին: Պատահական չէ, որ եվրոպական գիտնականները այդ գործի վերաբերյալ գրել են մի շարք քննադատական ուսումնասիրություններ<sup>18</sup>, և լույս բնծայել «Նզժ Ազանգոցք»-ի բնագրի գիտական հրատարակությունը մի շարք լեզուներով<sup>19</sup>:

Այսպիսով, և՛ ընդհանուր առմամբ զնահատելու լինենք V դ. հայկական աղբյուրների նշանակությունը Իրանի պատմության վերաբերյալ, ապա պետք է նշել, որ համաշխարհային գիտության համար գրանք ունեն իսկապես անզուգական արժեք: Եվ դա բացատրվում է ոչ միայն այդ աղբյուրների պարունակած հարուստ և հավաստի փաստերով, այլև նրանով, որ Սասանյան Իրանի պատմության վերաբերյալ ժամանակակից իրանագիտությունը հասած փաստերը թայրահողորհն սուղ են:

Իրանի պատմության համար առաջնակարգ նշանակություն ունեն նաև VII դ. հայկական աղբյուրները: Այդ գորաշրջանը առհասարակ այժի է ընկնում համաշխարհային պատմական նշանակություն ունեցող իրադարձություններով, որոնց թվին են պատկանում պարսկա-բյուզանդական պատերազմները, արաբների քաղաքական սուպրեզ ինտիլը և նրանց առաջին արշավանքները, Սասանյան Իրանի անկումը, բյուզանդական տիրապետությունների նվաճումը արաբների կողմից և այլն:

Սակայն յնևայած սրան, ո՛չ պարսկական, ո՛չ էլ հունական, լատինական, ասորական, արաբական կամ այլ գրականություններ VII դ. չեն ստեղծել զուտ պատմագրական որևէ երկ, ուր ամփոփված լինեք նշված զեպքերի նկարագրությունը: Վերջիններիս մասին արձագանքներ մնացել են ավելի ուշ ժամանակներում ապրած հեղինակների երկերում<sup>20</sup>:

<sup>18</sup> 86\* H. Gelzer, Eznik und die Entwicklung des persischen Religions systems (Zeitschrift für armenische philologie), 1902.

<sup>19</sup> 84\* «Eznik de Kolb, De "deo", Edition critique du texte armenien-tome XXVIII, fasc. 3, Paris, 1959» «Eznik de Kolb, De "Deo", Traduction française, notes et tables par L. Mariés et Ch. Merlier. Patrologia t. XXVIII, fasc. 4, Paris, 1959.

<sup>20</sup> 9. Աղաթան, Սերեոս պատմությունը և Անանոսի առեղծվածը. ԳԱ հրատ., Երևան, 1965, էջ 7:

Այս իսկ տեսակետից միջազգային պատմագրության մեջ միակ բացառությունը կազմում է VII դ. հայ պատմիչ Սերեոսի «Պատմութիւնը»<sup>21</sup>, որի շնորհիվ հայ մատենագրությունը գրավում է առաջնակարգ դեր VII դ. համընդհանուր պատմության առարկայում<sup>22</sup>։ Սերեոսի մոտ, VI—VII դարերի Հայաստանի պատմության հետ կապակցված, մանրամասն նկարագրված են պատմական այն իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել Մերձավոր և Միջին Արևելքում։ Հեղինակը մանրակրկիտ նկարագրում է բյուզանդական կայսր Հերակլի պարսկական արշավանքները, առաջին արարական արշավանքները Հայաստան, Իրան, Միջազգային և բյուզանդական շրջաններ։

Հասկանալի է Իրանին վերաբերող բաժինները աչքի են ընկնում գառառների աննկարագրելի հարստությամբ։ Մասնավորապես հանգամանորեն խոսվում է պարթևների հզորանալու և նրանց անկման, առաջնյանների շրջանի քաղաքական պատմության և նրանց պետության ներքին իրավիճակի, վարչակարգի, ռազմական կազմակերպության և այլ բազմաթիվ հարցերի մասին։ Սերեոսի պատմությունը սակայն առավել կարևոր է Սասանյան Իրանի պատմության վերջին շրջանի և արարական արշավանքների սկզբնավորման պատմության համար<sup>23</sup>, որոնց ժամանակակիցն է էղզի ինքը՝ հեղինակը։ Խիստ արժեքավոր են նաև Սերեոսի հազորգած անգղևությունները քուշանների մասին, որոնց հնազանդվում էին Արևելքի և Հյուսիսի բոլոր ժողովուրդները։

Սերեոսի պատմության մեջ խոսվում է նաև Արևելքում մեծ աարածում ունեցած խոսրոզ և Շիրին առասպելի, և արժեքավոր հիշատակություն բերվում իրանական էպոսի հերոսներից Սպանդհատի (Սպանդհարի) մասին։

Պատմական-արևելագիտական որոշակի արժեք է ներկայացնում նաև VII դ. մի այլ հեղինակի՝ Հովհան Մամիկոնյանի «Պատմութիւն Տարսիս երկր, որը գրված է առավելապես ժողովրդական գրույցների հիման վրա։ Այս սկզբնաղբյուրը հազորում է արժանահիշատակ Ելուսիք մասնավորապես վաղ քրիստոնեության պատմության վերաբերյալ, ինչպես նաև VI—VII դարերում Սա-

<sup>21</sup> Սերեոս, Պատմութիւն Բազառութեամբ Անազդաց, Հակոբն առաջաբանի և ծանօթութեամբ ի նկն Սո. Մալխոսեանց, Երևան, 1939։

<sup>22</sup> Գ. Աբգարյան, Եզդ. աշխ., էջ 7։

<sup>23</sup> Н. В. Пушглевская, А. Ю. Якубовский и др. История Ирана..., стр. 38.

սանյան Իրանի դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի ծախքն:

XI—XIV դարերի հայ հեղինակները Իրանի պատմության վերաբերյալ իրենց աշխատություններով լրացնում են պատմական տեղեկությունների այն քանքը, որը հետևանք էր նշված դարաշրջաններում Իրանի քաղաքական կյանքի հեղհեղուկ և տեկաշուն վիճակի:

Այդ հեղինակներից հիշատակության արժանի են Ստեփանոս Տարսեղի կոտղիկը (XI դ.), որի «Պատմութիւն տիեզերականը»: կարևոր սկզբնաղբյուր է ընդհանուր պատմության համար: Նա իր սանդղագործության մեջ գլխավորապես կանգ է առել Կովկասի, Իրանի, Փոքր Ասիայի և Մերձավոր ու Միջին Արևելքի մի շարք այլ երկրների պատմության վրա:

XI դ. հեղինակ Գրիգոր Մազիսարոսի «Քղթերում» իրանական վիպական գրություններից պահպանվել են հետաքրքիր բնկորներ, որոնք արժեքավոր նյութ են իրանական մշակույթի մի շարք հարցերի ուսումնասիրության համար:

XII դ. հայ ահանավոր ժամանակադիր է Սամվել Անեցին: Նրա «Քրտնիկոն» աշխատությունում առանձին աղյուսակներով արված են պարսկական, բյուզանդական և հայկական թագավորների ժամանակագրությունը, որը հետքավորություն է առելու համանմատական ուսումնասիրության հիման վրա ստուգել կապածելի թվականները:

XIII դ. հայ նշանավոր պատմագիրներից է Կիրակոս Փանծակեցին, որի «Հայոց պատմությունը»<sup>28</sup> կարևոր նշանակություն ունի Մերձավոր և Միջին Արևելքում մոնղոլների նվաճումների և մոնղոլական Շուվաղուիզների պետության պատմությունը ուսումնասիրելու համար: Ընչպես հայտնի է, թաթար-մոնղոլները առանյակ տարիներ, հատկապես էլիսանության շրջանում, տիրել են Իրանին: Այնուհետև Զամալ-էդ-դինի տիրապետությունը խորտակելուց հետո նրանք ավելի քան մեկուկես հարյուրամյակ իրենց տիրապետությունն են հաստատում Առաջավոր Ասիայում, ժամանավորապես Իրանում, Հայաստանում, Աղվանքում և այլն:

<sup>28</sup> Գրիգոր Մազիսարոսի «Քղթերում» հնագին առաջաբանով ու ծանոթագրություններով առաջին անգամ յուր ընծայեց Կ. Ստամբուլյոց, Արևմտահայաստան, 1910.

<sup>29</sup> Կիրակոս Փանծակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Միլիք-Օհանյանի, Երևան, 1981:



Կիրակոս Փանեակեցիին ուշադրաւ փաստելու է Հաղորդում ժողովների պետական-գաղափարական կառուցվածքի, նրանց կառավարման շրջանում քաղաքական իրադարձութուններին մասին և այլն:

XIII դ. վերջի և XIV դ. սկզբի Հայ Հեղինակ Գրիգոր Ակնեցոս «Պատմութիւն ազգին և եկեղեցւոց»<sup>26</sup> թովանդակալից աշխատութիւնում բերվում են բազմաթիւ արժեքավոր տեղեկութիւններ ժողովների լեզվի ու կենցաղի, ինչպես նաև նրանց կառավարման սրտանմի և Հարկային քաղաքականութիւն մասին:

XII—XIV դարերի Հայ պատմիչներից, որոնց գործերում ուշադրաւ նշուի կան Իրանի և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական պատմութիւն և մշակութային կյանքի մասին կարելի է հիշատակել Արիստակես Լաստիվերացուն (XII դ.), Մատթեոս Ուռհայեցուն (XII դ.), Վարդան Արևելցուն (XIII դ.), Ստեփանոս Օրբելյանին (1258—1304 թթ.) և այլն:

Հաշտնի է, որ XIV—XV դարերում Հայ իրականութիւն մեծ ալիւն չկային պատմութիւն աշխարհի կարկառուն դեմքեր, որոնք այնքան շատ էին V—XIII դարերում: Այդ պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ եղած գաղափարները Հայ ժողովրդի պատմութիւն ամենամոռալ ժամանակներն էին: Եւ ահա պատմիչներին ինչ-որ չափով դալիս են լրացնելու ժամանակագիրներն ու տարեգիրները:

Միջնադարյան Հայաստանի մտավոր կուլտուրայի բազմաթիւ մեծ ու գոյր ուղիներում ստեղծված կամ ընդորինակված բազում եկեղեցիք հիշատակարանները<sup>27</sup>, ժամանակագրութիւնները<sup>28</sup> և այլն չափազանց կարեւոր աղբյուրներ են ոչ միայն Հայաստանի քաղաքական, տնտեսական, կուլտուր-հասարակական հարցերի լուսարանման ու ստուգման, այլև մերձավոր-արևելյան երկրների, և առաջին հերթին Իրանի, Միջագետքի և Փոքր Ասիայի ժողովուրդ-

<sup>26</sup> XIII դ. այդ աշխատութիւն Հեղինակ էր համարվում Մաղաթան Երանուով Հրատարակված է Հայկական տեքստը (Ս. Քանդրուրգ, 1870) և Գ. Փափանսի արտերն թարգմանութիւնը: Տե՛ս Գրիգոր Արարի (Магакян инок). История монголов инокъ Мѣгакни, пер. с арм. К. П. Петкенова, СПб., 1871.

<sup>27</sup> Տե՛ս «ԺԳ դարի Հայերն Լեռնազորի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան 1950. «ԺԳ դարի Հայերն Լեռնազորի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955. մասն Բ., Երևան, 1958, կազմեց Լ. Ս. Խաչիկյան:

<sup>28</sup> «Մանր ժամանակագրութիւններ 12—18 դդ.» (կազմեց Վ. Ա. Հակոբյան), Է. 1, Երևան, 1951. Է. 2, Երևան, 1956:



Հարեան երկրների՝ Իրանի, Վրաստանի, Աղվանքի, Հյուսիսային Կովկասի քաղաքների, շրջանների, նրանց վարչական բաժանման, կարևոր գետերի, լեռների, նանապարհների մասին։ Խիստ արժեքավոր են Երբակացու հազորդած տեղեկությունները Մասսեյանների շրջանում Իրանի վարչա-տերիտորիալ բաժանման, գյուղատնտեսության, մշակվող կուլտուրաների մասին և այլն։ Եկեղիարհացոյց-իս հեղինակը տալիս է նաև պարսկական միապետության նկարագիրը, պատմական արժեքավոր տեղեկություններ է հազորդում իրանական ժողովուրդների, նրանց տեղաբաշխման վայրերի, զբաղմունքների, կենցաղի, կրոնական հավատալիքների մասին և այլն։ Այսպիսով, Ա. Երբակացու այս գործը կարևոր աղբյուր է ինչպես Իրանի պատմական աշխարհագրության, այնպես էլ այդ երկրի պատմության համար։

Մեզ հասել է նաև Անանիա Երբակացու աշխարհագրական բովանդակությամբ մի այլ աշխատություն ևս, որը գեոնա անտիպ է և պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան մասնակազարտում<sup>20</sup>։ Այդ աշխատությունը կրում է ռեզոնանսային խորագիրը։ Այստեղ հեղինակը ծանոթացնում է քարավանային նանապարհների և տևատրրաշատ քաղաքների հետ։ Նա հատկապես արժեքավոր տեղեկություններ է հազորդում Հայաստանից մինչև Պարսից ծոց մզվող առևտրական ճանապարհի, այդ նանապարհի վրա գտնվող առևտրական կարևոր կենտրոնների, նրանց մինչև եղած հեռավորությունների մասին և այլն։

Մ. Մաշտոցի անվան Մասնակազարտի ձեռագրերի ֆոնդում պահվում է նաև մի այլ ուշագրավ աշխարհագրական աշխատություն՝ Էմնուանթ քաղաքացի Հեղկաց և Պարսից զերնագրով, որի հեղինակը հայտնի չէ, բայց հեթադրվում է, որ այն գրել է (1106—1110 թթ.) Հեղկաստանի և Իրանի հետ քաջածանոթ մի հայ առևտրական<sup>21</sup>։

Ուշ միջնագրում և պատմության նոր դարաշրջանի նախորդին Իրանի պատմության, հոգևոր և նյութական մշակույթի նկատմամբ հայ պատմիչների և գիտնականների ասած ճիշտագրությունը ոչ միայն չի թուլանում, այլ, ընդհակառակը, ձեռք է բերում ավելի սևևուռ բնույթ։

Ինչպես հայտնի է, XVI դ. Իրանի պատմության մեջ տեղի են ունենում կարևորագույն իրադարձություններ։ Հարյուրամյակներ

<sup>20</sup> Ա. Գ. Աբրահամյան, Մասնակազարտի ձեռագրի գտնվելը, Երևան, էջ 88։

<sup>21</sup> Նույն տեղում։

շարունակ տեսած արտհումից հետո վերջապես այդ դարաշրջանում ավարտվում է Լրկրի քաղաքական միավորումը Սեֆևյան պետության շրջանակներում: Զգալիորեն աշխուժանում է այդ նոր պետության տնտեսական կյանքը, առևտուրը ապրում է զգալի վերելք, ուժեղանում են Իրանի գիզանազիտական հարաբերությունները արտաքին աշխարհի՝ մասնավորապես եվրոպական պետությունների հետ և այլն:

Հիշյալ նրույթները նպաստում են իրանական մշակույթի և գլխավորապես պատմագրության զարգացմանը: Երևան են գալիս մի շարք պատմական ստեղծագործություններ առավելապես պարսկերեն լեզվով: Սակայն դրանց մեծ մասը աչքի էին ընկնում իրենց միակողմանիությամբ և միտումնավորությամբ: Բացի այդ, պարսիկ պատմագիրները բնավ կանգ չեն առել, կամ համարյա կանգ չեն առել սոցիալ-տնտեսական բնույթի տեղեկությունների վրա: Հետևաբար XVI դ. Իրանի պատմության ուսումնասիրության, մասնավորապես Սեֆևյան պետության քաղաքական զարգացման, պետական կարգի, վարչա-տնտեսական հարաբերությունների, ֆինանսների, սոցիալ-տնտեսական դրության, հարկային քաղաքականության, մշակութային կյանքի, ինչպես նաև արտաքին քաղաքական հարաբերությունների հետազոտման համար առաջնակարգ նշանակություն ունեն օտար աղբյուրները Իրանի մասին: Գրանց մեջ իրենց կարևոր տեղն ունեն հայկական քաղմարտական և հարուստ աղբյուրները:

Բնե XVI դ. հայկական իրականության մեջ, ի տարբերություն նախորդ և հետագա դարերի, խիստ ամուլ է պատմագիտական աշխատություններով և այդ հարյուրամյակի հայկական աղբյուրները սահմանափակվում են լոկ մի շարք մանր ժամանակագրություններով և ձեռագրերի հիշատակարաններով, սակայն, այնուամենայնիվ այդ աղբյուրները ինչ-որ լսվով լրացնում են այն բացը, որ նկատվում է իրանական աղբյուրների մեջ:

Հայկական սկզբնաղբյուրների արժեքը իրանական պատմագրության համար առաջին հերթին նրանում է, որ այդ աղբյուրները առավելապես ականատեսների վկայություններ են և միանգամայն վստահելի:

Բացի մանր ժամանակագրություններից, հիշատակություններից և այլն, որոնք իսկապես աչքի են ընկնում տեղեկությունների առատությամբ, հիշատակության արժանի է Սիմեոն Ապարանցու շիրքի վերայ տոմանն Քավրիզու գործը<sup>25</sup>, որը հասկա-

<sup>25</sup> Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 6548:

պէս արժեքավոր սկզբնադրուր է XVI դ. իրանա-թուրքական հարաբերութիւնների պատմութիւնը ուսումնասիրելու տեսակետից: Սիմեոն Աղաբանցիի վկա է եղել 1585 թ. թուրքերի կողմից Քազրիդի գրավմանը և սատույզ տեղեկութիւններ է հաղորդում պատմական այդ իրադարձութիւն մասին:

Հարկ է նշել, որ XVII դ. իրանական աղբյուրները աչքի են ընկնում իրենց առատութեամբ: Հայտնի են 25-ից ավելի աշխատութիւններ, չհաշված առանձին նահանգների պատմութեան վերաբերյալ գործերը և ժամընդհանուր պատմութեան տիպի ստեղծագործութիւնները, որոնցում իրանի պատմութեանը հատկացվում է մյուս մահմեդական երկրների հետ համատեղ որոշակի տեղ: Սակայն այդ աշխատութիւնների մեծ մասը առ այսօր չի հրատարակված, չի թարգմանված և քիչ է ուսումնասիրված<sup>25</sup>: Բացի այդ, այդ աշխատութիւնների մեծ մասը տառապում է այդ շրջանի իրանական պատմութեանը քնորոշ թերութիւններով: Հետևաբար եվրոպական աղբյուրների հետ համատեղ հայ պատմիչների գործերը մեծ նպաստ կարող են բերել XVII դ. իրանի պատմութեան ամենարազմապիսի հարցերի ուսումնասիրութեան համար:

Այստեղ ավելորդ չէ նշել, որ առհասարակ XVII դ. հայկական իրականութեան մեջ կարուկ կերպով տարբերվում է իր նախորդից աղբյուրների հարստութեամբ և առատութեամբ: Այդ հարյուրամյակի 40-ական թվականներից, Հայաստանում սկսված նոր տնտեսական վերելքի և ուսումնալուսավորչական շարժման պայմաններում ստեղծվեցին մի շարք պատմագիտական աշխատութիւններ, որոնցում համարյա առանց բացառութեան հեղինակները կանգ են առնում նաև իրանի պատմութեան տարբեր հարցերի վրա: Այդ պատահական չէր, որովհետև նշված դարաշրջանում Հայաստանի արևելյան հատվածի պատմութիւնը սերտորեն կապված էր Սեֆեյան պետութեան պատմութեան հետ և հայ պատմիչները, բնականաբար, չէին կարող չանդրադառնալ հարևան երկրում ծավալվող իրադարձութիւններին:

XVII դ. հայ պատմագրութեան ամենակարկառուն դեմքը անշուշտ Առաքել Դավրիժեցին է (1595—1669), որն իր «Պատմութեան»<sup>26</sup> մեջ շարադրում է 1601—1662 թթ. ընդգրկող ժամանակաշրջանը: Իր երկը գրելիս Դավրիժեցին օգտվել է XVI—XVII դա-

<sup>25</sup> Н. В. Пусыловская, А. Ю. Яковлевский и др., История Ирана..., стр. 266.

<sup>26</sup> «Պատմութիւն Առաքել Կարգապետի Դավրիժեցույն, Վազարչապետ, 1896»:

բերի բազմաթիվ ձեռագրերի հիշատակարաններից և մանր ժամանակագրութուններից, որոնք հարազատորեն մեջ է բերել: Աշխատության զգալի մասում հեղինակը հանդես է գալիս որպես զեպքերին ակնատես անձնագրութուն կամ հենվում է ականատեսների վկայութունների վրա: Սակայն այս վերջին զեպքում եացուցարձրում է քննադատական մտածելով և զրևսրում է խիստ զգուշութուն: Այս կամ այն փաստը հազորգելիս Գալրիժեցին անպայման աշխատում է ստուգել նրա հավաստութունը և նշտութունը, հատկապես նշգրտել տվյալ իրադրության թվականը:

Քնն Գալրիժեցու աշխատութունը նվիրված է Հայաստանի պատմությանը, սակայն նա պատմական լայն էջակուրսներ է կատարում նաև հարևան երկրների՝ Իրանի, Քուրդիստանի և այլ պատմության վերաբերյալ, հատկապես մանրամասն տեղեկութուններ հազորգելով Ասրպատականի և Պարսկական Իրաքի վերաբերյալ:

Առաքել Գալրիժեցու «Պատմութունը», սակայն, զեպքերի սուկ նկարագրութուն կամ զինաստիական պատմութուն չէ, նա լափազանց հետաքրքիր և հավաստի փաստերի հետ միտմամանակ ալիս է վերլուծութուններ, որոնցում զգացվում է հեղինակի լայն մտահորիզոնը, զարաշրջանի խորը ըմբռնումը և պատմագրի փայլուն պատրաստութունը:

Գալրիժեցու վերահիշյալ արժանիքները, ինչպես նաև այն, որ նա իրադարձութունները նկարագրելիս միշտ ազատ է մնում Մեֆեյան պաշտոնական պատմագրության տեսակետներից<sup>35</sup>, նրա «Պատմութունը» զարձնում է լավագույն աղբյուր Իրանի XVII դ. պատմության համար: Պատահական չէ, որ իրանական պատմագրությունը և նվրուպական գիտութունը<sup>36</sup> մշտական հետաքրքրութուն են զրևսրել Առաքել Գալրիժեցու նկատմամբ: Այսպես, իրանական պատմարան նասրուլլա Ֆուլադին իր «Եահ Արբաս I-ի կյանքը» քառահատոր մենագրութունում լայնորեն օգտվում է Գալրիժեցուց, նրա երկը համարելով XVII դ. Իրանի պատմության համար հարուստ և հավաստի աղբյուր:

<sup>35</sup> Н. В. Пугачевская, А. Ю. Якубовский и др., История Ирана..., стр. 270.

<sup>36</sup> Գալրիժեցու «Պատմութունը» XII դ. քրեներին է թարգմանել և հայ պատմիչների թարգմանութունների ժողովածուում հրատարակել ակադեմիկոս Մ. Բրուսսեն (*M. Brosset, Collections d'histoires Arméniens, t. I, St. Petersburg, 1874.*)

Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի, աշխարհագրութեան, ազգագրութեան, կենցաղի, իրանա-թուրքական պատերազմների, իրանահայ վաճառականների միջազգային առևտրական կապերի՝ հետևաբար նաև Իրանի արտաքին տնտեսական հարաբերությունների, իրանահայ գաղութի և մի շարք այլ հարցերի մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակվում նաև XVII դ. պատմիչներ Գրիգոր Գարանազցու «Ժամանակագրությունում»<sup>37</sup>, Զարարիա սարկավազի «Պատմագրությունում»<sup>38</sup>, Զարարիա Ազուլեցու «Թրագրությունում»<sup>39</sup>, Ավգուստինոս Բաշեցու «Ճանապարհորդությունում»<sup>40</sup>։

Մեր օրերի մասնագետներին XVII դ. Իրանի վերաբերյալ պատմական և տնտեսական ուսումնասիրությունների համար խիստ արժեքավոր նյութ է մատակարարում նաև Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհածոյով» կոչվող անտիպ աշխատությունը, որը պահվում է Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում<sup>41</sup>։ Այս աղբյուրը հատկապես բազմապիսի նյութեր է պարունակում Իրանի հայ առևտրական կապիտալի և նրա դերի մասին Սեֆևյան պետություն անտեսական և քաղաքական կյանքում։

Ինչ վերաբերում է XVII դ. հայերեն ձեռագրերի հիշատակաբաններին, ապա նրանցում մասնավորապես հարուստ նյութ է պարունակվում համարյա անընդմեջ մղվող թուրք-իրանական պատերազմների և դրանց հետևանքով այդ երկու պետությունների և նրանց քաղաքական գերիշխանության տակ զանվող երկրների

<sup>37</sup> «Ժամանակագրութիւն Գրիգոր Վարդապետ Գամսիեցու կողմ Գարանազցույց, Նրուսազմ, 1915։

<sup>38</sup> «Զարարիայ Սարկավազի պատմագրութիւն», Հտ. 1—2, Վազարյազատ, 1876։

<sup>39</sup> Զարարիա Ազուլեցի, Թրագրութիւն, Նրևան, 1828։

<sup>40</sup> «Ճանապարհորդութիւն շեփուպու, գրուպի Ի Փարսիս (Ենջուսոյց մատենագրութեան հարցոց, Ս. Գետեբրուրց, 1884, էջ 2—26)։

Բաշեցի ձեռնի է Երնդակում։ Հետագայում եղել է Եսֆիհանի հայ կաթոլիկ համայնքի նպահուցուը։ Հայտնի է, որ XVII դ. սկզբին Բաշեցին ուղևորվել է Եվրոպա, ուղևորվելով Եվրոպական ինչ-որ գեոգրիկ Այդ հանապարհորդության ժամանակ նա այցելում է Մոսկովյան պետություն, Ահաստան, Դերմանիս, Իսպանիա, Իտալիա։ Այս փոստը հիմք է առնելու ինքնագրի, որ Ավգուստինոս Բաշեցին ավելան հավանականությունները կապարում էր Սեֆևյան կառավարության գիշտագիտական հանձնարարությունները։ Իսկ այդ, անուշտ, վկայում է այն մասին, որ եւ ժամ էր կանգնած Իրանի քաղաքական շրջաններին։ Ավգուստինոս Բաշեցու տեղեկությունները Սեֆևյան Իրանի քաղաքական կյանքի մասին միանգամայն արժանի են ուշագրություն։

<sup>41</sup> Մ. Մաշտոցի անվան մատենադարան, ձև. Ն. Ն 5294, 8443։

ընդհանուր ավերման, տնտեսության անկման, ֆեոդալական կա-  
մայականությունների ուժեղացման մասին: Սակայն անհրաժեշտ  
է նշել, որ նշված դարաշրջանի ձեռագրերի հիշատակարանները  
իրենց դրական կողմերից բացի (փաստերի հավաստություն և  
ալլն) ունեն նաև բացասական կողմեր: Նրանց հիմնական թերու-  
թյունը, անշուշտ, նրանում է, որ գրիչներից շատերը (որոնց մեծ  
մասը հոգևորականության ներկայացուցիչներ են) զեպտերի ու  
իրազարձությունների նկարագրության մեջ ցուցաբերում են միա-  
կողմանիություն, միասնականություն, ֆանատիկ կուրություն  
զեպի մահմեդական աշխարհը և ալլն, մի հանգամանք, որը, ան-  
շուշտ, պայմանավորված էր նրանց դասակարգային պատկանելու-  
թյամբ, հասարակական վիճակով և հասկապես քրիստոնեական  
տիրող զաղափարախոսության սահմանափակությամբ: Սակայն  
միանգամայն հասկանալի է, որ քննադատական վերաբերմունք  
ցուցաբերելու զեպտում կարելի է հիշատակարաններից վերցնել  
ալլ, ինչ որ իսկուպես արժեքավոր է, հավաստի ու հետաքրքիր:

XVII դ. Իրանում սկսված տնտեսական վերելքը զարգերչին  
և XVIII դ. սկզբին փոխարինվեց տնտեսական, քաղաքական և  
մշակութային կյանքի անկումով: Երկրում ծայր առան համարյա  
լզաղաքող ֆեոդալական երկպառակություններ, շեշտակի անկում  
ապրեցին առևտուրը, արհեստները, մշակութային կյանքում սկսվեց  
երկարատև լճացում: XVIII դ. Իրանի ընդհանուր անկումը բացա-  
սարտը անգրազորմով նաև պատմագրության վրա: Թիև այդ հար-  
յուրամյակում իրանական պատմագրությունը ավելի մեծ քանակու-  
թյամբ գործեր, սակայն նրանց զգալի մասը նվիրված էր իրազար-  
ձությունների մակերեսային նկարագրությանը<sup>42</sup>: Միանգամայն  
հասկանալի է, որ նման պայմաններում Իրանի պատմության  
հարցերի գիտական լուսարանման համար պետք է դիմել այլ ժո-  
ղովուրդների պատմական գրավոր աղբյուրների օգնությանը,  
որոնց մեջ իրենց արժանավոր տեղն ունեն հայկական աղբյուր-  
ները: Հատկանշական է, որ այս դարաշրջանում հայ իրականու-  
թյան մեջ երևան են գալիս այնպիսի պատմական ստեղծագործու-  
թյուններ, որոնք ուղղակի նվիրված են Իրանի պատմության հար-  
ցերին: Այդպիսի աղբյուրներից առաջին հերթին պետք է հիշատա-  
կել Խաչատուր Զուղայիցու «Պատմություն պարսից» գործը<sup>43</sup>:

<sup>42</sup> Н. В. Пузыревская, А. Ю. Якубовская и др., История Ирана...  
стр. 300.

<sup>43</sup> Խաչատուր այնպես լուսվելիք, Պատմութիւն Պարսից: Աշխատութեամբ  
Բարզան վարդ. Աղսուկեանց, Հաղարշապատ, 1905:



Այստեղ Հեղինակը ապիս է պարսից թաղամասերի ժամանակագրությունը Կյուրսուից սկսած և հասցնում է մինչև իր ժամանակը՝ Քերիմ-եան Զենզի մահը (1779 թ.): իր գործը շարագրելիս նա օգտվել է հայ մատենագիրներից, զանազան քրոնիկոսներից, գավազանագրներից և պարսկական աղբյուրներից, որի մասին հիշատակում է. «Կամեիով նս ըզմակերտ տեևյանօք զհատել և հմտեանալ նակ իսկ ի գրոց և ի մատենից պարսից զորոշեալ ցեղօ թագաւորաց նոցա: Ուստի շոգայ առ զհատեսա Պարսից՝ ... բերին առաջի իմ զմեծ մատենակ մի կարի թուարեի, որ իբրև ըստ զհտման եւ ըստ կարծեաց նոցա՝ էր Սոփեր Ճշմարտանառ վիպագրութեան որոց նախնեաց, եւ ստույգ զրուցաարութիւն յառաջնոց»<sup>44</sup>,

եռաշատուր Զուղայեցիին իր այս պատմությունը համարում է Ա հատոր, ի նկատի առնելով, որ պետք է զրի նակ թ հատորը, որի մասին իր գրքի առաջարանում ասում է. «Իսկ հատորն երկրորդ ունի չիերեան պարունակեալ զվէպս Պարսից եւ եկրատանցւոց աշխարհի, այսինքն Փարսբստանալ և Արաղստանալ, զոր ի մահու Քեարիմ իշխանի Պարսից սկսոց ուրոյն վիպել մի ըստ միօշէ շնորհի Տեանն՝ զմահայն տեցս, զորս անցեալ փոթորկարար պատակեցիին ի կալուածս սահմանաց Պարսից աշխարհի, մինչև ուր ուրեք կամեցեալ հանեցի Տէր յամբոկ արարեալ եզերեցից զկիր առնութիւնս իմա: Բայց զժրախառարար Զուղայեցիին չի հասցընում զրել իր գրքի երկրորդ հատորը: Ամենայն հավանականությամբ զրա պատճառը անծամանակ մահն է, որը վրա է հասնում անհայտ է թե որ թվականին:

Իրանագիտություն համար առանձնապես կարևոր արժեք է ներկայացնում եռաշատուր Զուղայեցու գրքի երկրորդ մասը, որը եզիրված է Քերիմ-եան Զենզի տիտաղիտություն պատմությանը (1758—1779): Հեղինակը, իբրև ժամանակակից անձ, Հյզդիտ անգնկություններ է տալիս Իրանի այդ խառնակ շրջանի պատմության մասին:

Սեֆելյան զինատիրալի կործանման և Իրանում արքայական զավթիչների հաստատվելու պատմության փայլուն նկարագրությունը մենք գտնում ենք XVIII դ. նոր Զուղայեցի հայ հեղինակ Պևրոս զի Սարգիս Գիլանենցի օրագրում<sup>45</sup>: Նրա այս մեծարժեք

<sup>44</sup> Կ. Զուղայեցի, Եջվ. ուշի., էջ 21—22.

<sup>45</sup> «Ժամանակագրութիւն Պարսա զի Սարգիս Գիլանենցի», (Կոտակ հայոց աշխարհիւ, 1882, թիվ Ա) «Дневник оцзы Испгани Афганиани, веденный Петросом дя Саркис Гиланец в 1722 ж 1723 гг., Материалы для истории Персия», пер. и объяснении К. Патканова, СПб., 1870.

զորքը ընդհանուր նաեւաշում է գտել որպէս վերահիշյալ իրագործութիւնների վերաբերյալ փաստերի հարստութիւմը և հազատիութիւմը փայլող մի աշխատութիւն:

XVIII դ. Իրանի պատմութիւն համար որոշակի արժեք է ներկայացնում նաև Աղվանքի կաթողիկոս Եսայի Լասան Զալալյանի Աղվանից պատմութիւնը եզիրված աշխատութիւնը<sup>46</sup>, որը հատկապէս կարևոր նշանակութիւն ունի Իրանի տնտեսութիւն և Սև-Ֆեյսան պետութիւն քայքայման պատճառների լուսարտնման համար:

XVIII դ. իրանական պատմագրութիւն մեջ թե իրենց արժեքով և թե քանակով առավել հարուստ ու մեծաթիվ են այն աղբյուրները, որոնք եզիրված են Նազիր շահի կառավարման և նրա արշավանքների պատմութիւնը: Դրանցից առավել արժեքավորներն են Միրզա Մուհամմեդ Մեհդի-խան Ասթրաբադիի «Քարիթ-ի Նազիրի», «Դուրր-ի Նազիր» և Մուհամմեդ Քազիմի «Ալեմ-ժարայ-ի Նազիր» զործերը: Սակայն զրանց կողքին չափազանց կարևոր արժեք են ներկայացնում նաև հայկական աղբյուրները, որոնց հաղորդած փաստերը իրենց հավաստիութիւմը և բազմազանութիւմը ոչ միայն համարժեք կարող են լինել իրանական աղբյուրներին, այլև որոշ դեպքերում նույնիսկ գերազանցել նրանց: Այդ աղբյուրներից առաջին հերթին հարկ է նշել Արքաշահ Կրեատցու «Պատմագրութիւնը»<sup>47</sup>, Այս աշխատութիւնում կան մեծ քանակութիւմը տվյալներ, որոնք բերողում են Հայաստանի և Իրանի XVIII դ. 30-ական թվականների իրադրութիւնը: Կրեատցին մեկ առ մեկ թվարկում և նկարագրում է Իրանի այն շրջանները, որոնք քայքայվել էին տնտեսական Էզնամաժի, թուրքական բռնազրաման և 30-ական թվականների սկզբի իրանա-թուրքական պատերազմի հետևանքով, զարմանալի թմախնդրութիւմը նշում է որոշ գյուղատնտեսական միջոցների գնները, բազմաթիվ փաստեր է

<sup>46</sup> Եսայի Լասան Զալալյանց, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցեց զիզվոց յաշխարհն Ազուանից, Ա տպագր., Եւրեք, 1839, Բ տպագր., Երուսաղէմ, 1858. աշխատութիւն ֆրանսերէն թարգմանութիւնը, տե՛ս «Collections d'histoire» Arméniens., t. II, St. Petersburg, 1876.

<sup>47</sup> Արքաշահ Կրատցիկաթ Կրեատցոյ, Պատմագրութիւն անցեցն իրոց և նաոր-չաճն պարից: Ա հրատ., Չալկաթա, 1796, Բ հրատ., Վաղարշապատ, 1876, ֆրանսերէն թարգմանութիւնը տե՛ս M. Brosset, Abraham de Crete catholicox, histoire et celle de Nadir chah de Perse, «Collection d'histoire ens arméniens», t. II, S. P., 1876, pp. 259—483.

բերում կապված սովի, համաճարակների, տեղական իշխանությունների կամայականությունների և գյուղացիություն ծանր վիճակի հետ: Սոցիալ-տնտեսական բնույթի այս կարգի տեղեկություններից բացի մենք գտնում ենք հարուստ ավյալներ նազիրի ֆեոդալական զորքերի կազմակերպման, թուրքերի և պարսիկների կողմից օգտագործվող զենքերի տեսակների մասին և այլն:

Ինչպես հայտնի է, նազիր Ղուլի խանը, որը ձգտում էր ձեռք բերել հայ բարձր հոգևորականության և հարուստ վաճառականության աշտնցությունը, հայ կաթողիկոսի նկատմամբ գրեկորում էր ուշադրության տարրեր նշաններ: Այդ պատճառով Աբրահամ Կրե-տացին հրավիրվում է Մուղանի դաշտում գումարված համաժողովին (կուրուլթայ), որի մանրամասն նկարագրությունը տրվում է նրա աշխատության մեջ: Կրետացու հաղորդած փաստերը պատմագրությունը հնարավորություն են տալիս լուստարանելու այն կարևոր հարցը, թե իրանի նոր տիրակալը տիրապետող դասակարգի նկատմամբ զեպի որ խազներն էր առավելապես կողմնորոշվում և եա ինչպիսի փոփոխություններ մտցրեց պետության մեջ բարձրագույն պաշտոններ բաշխելու բնագավառում: Բացի այդ, մենք գտնում ենք բացառիկ արժեքավոր տեղեկություններ պարսից արքունական ծիսակատարությունների, պարսկական վարչական ապարատում նշան բազմաթիվ պաշտոնների մասին և այլն:

Կրետացու հաղորդումը նազիր շահի ընտրվելու մասին լրացնում և ճշտում է այն վարկածները, որոնք առաջ են քաշվում պարսիկ և արևմտահայկական հեղինակների կողմից:

Նազիր շահի տիրապետությունը շրջանին նվիրված հայ պատմիչների գործերից հիշատակության արժանի են նաև Աբրահամ Երևանցու «Պատմություն պատերազմացն»<sup>65</sup>, Հակոբ Շամախեցու «Քահանազ-Ղուլի խանի արշավանքները և նրա շահ ընտրվելը»<sup>66</sup> աշխատությունները:

Որոշակի արժեք է ներկայացնում նաև պրոֆեսոր Ս. Տեր-Ավետիսյանի Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում

<sup>65</sup> Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն 1721—1736 թթ., Երևան, 1936:

<sup>66</sup> Այս աղբյուրը Երևանի Մատենադարանում հայտնաբերել է պրոֆ. Ս. Տեր-Ավետիսյանը, որը և ուսումնասիրությամբ հանգրծեց առաջին տեղում հրատարակել է արև. Տեր-Ավետիսյան, Նազիր-շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940: Թուրքերի թուրքականությունը լուր և տեղի հետևյալ խորագրով. С. Тер-Аветисян, Походы Тэмэс Кули хана (Надир-шаха) и избрание его шахом в описании Ахмета Шамахеви, Тбилиси, 1932:

հայտնաբերած Աբրահամ Կրեաացու ծոցի տեղաբնակ-հիշատակարանը, որտեղ գտնում ենք Կրեաացու տեսակցությունների նկարագրությունները Նազիր շահի հետ էջմիածնում:

Նազիր շահի տիրապետության պատմությունը վերահիշյալ գործերի հետ ամրադրացնում է հայաստան քուրդերին մի աղբյուր, ուր նկարագրված է Իրանի տիրակալի արշավանքները Աֆղանստան, Հնդկաստան և նրա մահը: Այդ աղբյուրի հեղինակը իր ասելով «Փամանյիդի հայաստակ հայերից է Քամպուրի գյուլյուն Հարությունը անունով, որը Նազիր շահի մոտ զնացող Քուրդական զնայանություն կազմում լինելով՝ ակնատես է եղել իր նկարագրած զնայների: Քամպուրի Հարությունի այս պատմությունը 1800 թ. առաջին անգամ լույս է տեսել Վենետիկում՝ հայաստան-քուրդերենում<sup>10</sup>:

XVIII դ. Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի և բազմաթիվ իրադարձությունների օւսումնասիրության համար կարևոր աղբյուրներ են նաև Միմեոն Երևանցու «Ջամբար»<sup>11</sup>, Եղիա Կարևեցի Մուշեղյանի «Գիվանք»<sup>12</sup>, Վարդան Օմեկցու աշխատությունը պարսիկների 1795—1797 թթ. Անգրիզիկոս կատարած արշավանքների մասին<sup>13</sup> և այլն:

XVIII դ. Իրանի սոցիալ-տնտեսական, մասամբ նաև քաղաքական պատմության մասին առատ նյութ կա նաև հայկական

<sup>10</sup> «Երևմտա Գույու կանքի Քլիմորիթի: Եսալլիմի Հասամպուրի Քամպուրի Արսիբեզի Եսմանը էլլիսի իլ է Եսլուրուղեղա անեմբասան Քարամպուրեու Երա Քրանեթիև Քարզանությունը լույս է տեսել, «Bulletin de l'Institut Egyptien», tome III, Le Caire, année 1914, pp. 168—232.

<sup>11</sup> Քարզանությունը կոտորել է Լակար Արթին փառան, որն իր աշխատությանը կցել է «Ի Երևանում» հետևյալ վերնագրով. «Journal de Tambouri Aroutine sur le conguête de l'inde par Nadir Schah (Tahmas Kouly Schah), 1735—1740. Մույն աշխատությանը հրատարակել է Կան Երևանի պետ. համալսարանի գրատկան նյութերի ժողովածուում, Երևան, 1941, էջ 100—123: Երևանի Մասնակազմակերպչական կոմիտեի հրատարակել է Քուրդ Հարությունի աշխատության մի հատկություն, որը կազմում է «Երևանյան Գույու խանի պատմությունը (Մ. Մաշադի անվան Մասնակազմակերպչական կոմիտեի հրատարակում, Վն. Ն 6646):

<sup>12</sup> Միմեոն կարողնելու Երևանցի, Եսման, Վարդապետ, 1872: Երևանի Քարզանությունը տե՛ս Ե. Կառլոս Երևանցու, Երևան, Մ., 1958.

<sup>13</sup> Եղիա Կարևեցու Գիվանքը: Նյութեր Երևանցու Արևելքի և Անգրիզիկոսի պատմությանը Առաջարկել է Երևանյան քուրդերի կոմիտեի կողմից, Երևան, 1968:

<sup>14</sup> Տե՛ս Ե. Տ. Տրտույան, Վարդան Օմեկցի պարսիկների 1795—1797 թթ. Անգրիզիկոս կատարած արշավանքի մասին, «Փատմա-առնագրական հանդես», 1965, 2, էջ 211—222:

բազմաթիվ արևելագլին փաստաթղթերում, որոնց մի մասը արգեն  
հրատարակվել է ու մասն գիտական շրջանառության մեջ<sup>54</sup>,

Հարևան ալգ երկրի քաղաքական իրադարձությունների նկատ-  
մամբ հայ գիտական շրջանների ակնառու հետաքրքրության վկա-  
յություն է նաև այն, որ դեռևս XVIII դ. մի շարք օտար լիզուներից  
հայերեն էին թարգմանվում եվրոպական արևելագիտական ուսում-  
նասիրությունները նազիր շահի և նրա պետության, ինչպես նաև  
առհասարակ իրանի պատմության վերաբերյալ<sup>55</sup>,

XVII—XVIII դարերում, երբ հայ առևտրական կապիտալը  
լայն դործանություններ ուներ աշխարհի տարբեր երկրների  
հետ և հայ վաճառականները հանդես էին գալիս Արևելքի և Արև-  
մուտքի միջև միջնորդ առևտրականների գերում, եվրոպական պե-  
տությունները աշխատում էին օգտվել նրանց հաղորդած տեղեկու-  
թյուններից՝ արևելյան երկրների մասին ճշգրիտ պատկերացում-  
ներ կազմելու համար։ Հայտնի է, օրինակ, որ Ռուսաստանի հետ  
աշխույժ առևտրական կապերի մեջ զանվող իրանահայ վաճառա-  
կանները ռուսական Եփեսոսյան պրեկագինս, որը կատարում էր  
արտաքին գործերի գործառնությունները, հարուստ տեղեկություն-  
ներ էին հաղորդում իրանի, Հնդկաստանի, Հարավ-Արևելյան  
Ասիայի, Քուրդիստանի, Ասևաի երկրների տնտեսության, առևտրի,  
քաղաքական իրավիճակի, տեղական բարքերի ու սովորույթուն-  
ների մասին և այլն<sup>56</sup>։ Վ. Բարտոլոմեյը բերում է ուշագրավ տեղեկու-  
թյուններ, որ դեպի Ասիա կատարած ռուսական հանուպարհոր-  
դությունների մեջ ալքի ընկնող տեղ են գրավել հայազգի առևտրա-  
կանները, որոնց սուլտանությունները գրի էին առնվում ռուսական  
իշխանությունների կողմից և հրատարակվում տարբեր ամսագրե-  
րում<sup>57</sup>,

Իրանի և առհասարակ Արևելքի երկրների մասին հայ ժողո-  
վրդի գիտական պատկերացումների ձևավորմանը զգալիորեն  
նպաստել է նաև եվրոպական մի շարք կենտրոններում հայերեն  
գրքերի տպագրությունը։ Հայ իրանագիտության զարգացման բնա-

<sup>54</sup> Տե՛ս «Վալանդարք և տնտեսական ալլ գարեաբների վերաբերյալ ար-  
խիվային վավերագրեր», Ծրան, 1941:

<sup>55</sup> Տե՛ս Անտոլ, Պատմագրություն վարուց և գործեց նազիր Շահ թագաւո-  
րին պարսից, Մազրու, 1780:

<sup>56</sup> Տե՛ս «Армяно-русские отношения в XVII веке», сборник докумен-  
тов, Ереван, 1953; «Русско-индийские отношения в XVII в.», сборник  
документов, М., 1958.

<sup>57</sup> В. В. Бартольд, История изучения Востока в Европе и России,  
СПб., 1911, стр. 227—228.

գաղափարում որոշակի դեր են խաղացել նաև Իրանի Հայկական մեծ ու փոքր գաղթությանները, որտեղ դարերի ընթացքում կուտակվել է մեծ քանակությամբ փաստական նյութ:

Այսպիսով, արժեքավորելով Հայկական աղքատիների գերն ու նշանակությունը Իրանի պատմության տարրեր շրջանների Հարցերը լուսարանելու տեսանկյունից, պետք է նշել, որ դրանք իսկապես ունեն բացառիկ կարևոր նշանակություն: Այդ բանը խոստովանում են ինչպես եվրոպացի, այնպես էլ պարսիկ գիտնականները, որոնք XIX դ. սկսած ոչ միայն սնկուն հետաքրքրություն են դրսևորել այդ աղքատիների նկատմամբ, այլև սկսել են ուսումնասիրել դրանք: Ժամանակակից ակնհայտոր պարսիկ քանասիր և պատմաբան Սալիզ Նաֆիսի կարծիքով, առանց Հայկական աղքատիների դժգոհ է ամբողջապես վերականգնել Իրանի հնագույն և միջնադարյան պատմությունը: Նա նույնիսկ հանգում է այն եզրակացություն, որ առանց Հայկական աղքատիների հնարավոր չէ գրել Իրանի ամբողջական պատմությունը:

Օտարազգի գիտնականների այդչափ մեծ հետաքրքրությունը Հայկական աղքատիների նկատմամբ պայմանավորված չէր լույս նրանցում եղած հարուստ տվյալներով: Ամբողջ հարցը նրանումն է, որ Հայկական աղքատիների արժեքը ոչ միայն Արևելքի երկրների պատմության առանձին հարցերի մասին եզակիության մեջ է, այլև, թերևս, առաջին հերթին փաստերի հավաստիության: Գիտա-համեմատական փորձաքննակով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները գիտնականներին բերեցին այն համոզման, որ Հայկական աղքատիների ճշգրիտ մեծամասնությունը արժանահավատ է և միանգամայն վստահելի:

\* \* \*

Հայ գիտական արևելագիտության, մասնավորապես իրանագիտության հիմնադիր կարելի է համարել Գևորգ Տեր-Հովհաննիսյանին (Գևորգ Դպիր Պալատեցի, 1737—1812 թթ.): Նա թողել է գրական մի հարուստ ժառանգություն, որը եզակի տեղ ունի Հայ արևելագիտության պատմության մեջ: Գևորգ Դպիրի աշխատություններից գիտական առաջին մեծ արժեք է ներկայացնում նրա պարսկերեն-հայերեն բառարանը<sup>10</sup>, որը առաջին այդօրինակ բա-

<sup>10</sup> Բառարան պարսկերեն ըստ կարգի հայկական այբուբենից: Ցարս Լուխարք անկղվին իմաստք բողոքն՝ Լույերին և Տավերին բացատրութեամբ և ուրիշ արարական նշանակութեամբ: Ցաւելեալ և զլատուկ տեսաւ նշանաւոր

Յյուներ նրանումն է, որ այնտեղ բազմապիսի տեղեկություններ են արվում իրանական զիցարանություն, առասպելների, ժողովրդական աստղագիտության ու առածների, վիզայական հերոսների մասին և այլն: Բառարանի արժեքը մեծանում է նաև նրանով, որ յուրաքանչյուր բառահոգով համար արված են մի քանի իմաստներ: Բացի այդ, հայատառ պարսկերենով բերվում են բազմաթիվ արևելակեր իրանական դասական բանաստեղծներից, որով բառարանը էլ ազնի է հարստանում և արժեքավորվում որպես պարսից բանաստեղծների ստեղծագործությունների առանձին նմուշների, հաճախ առաջին, հայերեն թարգմանությունների հավաքածու, մի բան, որ իր նմանը և նախատիպը չի ունեցել մեր գրականության մեջ<sup>50</sup>: Այսպես, բառարանում մենք հանդիպում ենք Սաադիի ստեղծագործությունների ամենազվազ թարգմանությունը<sup>51</sup>:

Գևորգ Գպիրը կազմել է նաև պարսկերեն և արաբերեն լեզուներով դասագրքեր, որն էլ պարսկերեն լեզվի քերականություն, մի շարք պատմական ուսումնասիրություններ և այլն: Նա ծավալել է նաև թարգմանչական բուռն գործունեություն: Պարսկերենից թարգմանել է Հուսեյն Քուսիի որդու Էմկանց գիրքն անունով մի աշխատություն<sup>52</sup>, որը զազափար է տալիս իրանում հեռագույն շափերի, կշիռների, թանկագին քարերի, գրամների մասին և այլն: Նա թարգմանել է նաև XV դ. պարսիկ աստղագետ ու տոմարագետ Արդ-ուլ-Ազիզ իբն Արդուլաահման Քարրիզիի Բրանայի աստղացա գործը<sup>53</sup>:

Քալաուրաց և զերենի տեղեաց և հոխացուցեայ որինակոց ի բանաստեղծից Պարթու: Ի Գլորգեայ զարլ Յեր-Հովհաննիսյան Պալատացու, աշխատութեամբ և ուղղադրելով և համաստ քերականութեամբ ի Յակոբայ Տիգրեան: Բ. Գ. Պոլս, 1826:

<sup>50</sup> Բ. Լ. Չուպուզյան, Հայ-իրանական գրական անշուքներ, էջ 53:

<sup>51</sup> Ա. Մ. Մինեսյան, Սաադիի Երվանթանը և նրա թարգմանությունները հայերեն: Առանձնատիպ, 2002 ԳԱ ԵՏԻՊԻՊԵՐԻ ՀՈՍ. ԳԻՄ. (1963, № 1, էջ 38):

<sup>52</sup> Գիրք Տեմազի և պատուական ականց, և այլոց պեղալե հանքական և ինքանական քարաց նաև երկանց հրահանգեաց և զտեղան աշխուզար իրաց: Ետրագրեայ ի պարսից լեզուն, և թարգմանեայ ի Հայ բարբառ, աշխատութեամբ Գլորգու, ուրում Տրականուն զարր...: Առասպելապոլս, 1775:

<sup>53</sup> Գևորգ Պալատեցու այս անտիպ գործը պատկանում է էջիմանի վանքի այժմյան գրադարանում (Ան. № 3, էջ 1ա—50բ) տե՛ս Լ. Ս. Մինեսյան, Հայկական մասնակցություն, Կ—ԺԸ զգ., հ. 1, Երևան, 1955, էջ 46—47:

Այսպիսով, XVIII դ. վերջին Գևորգ Գոյիք Տեր-Հովհաննեսյաներ ըստ էության սկիզբ է դնում հայ նոր իրանագիտությունը, որ անօրինակ զարգացում ապրեց հաջորդ XIX դարում: Նշված զարաչրչանում, հրք եվրոպական արևելագիտությունը, այդ թվում նաև իրանագիտությունը, ազրում էր աննախընթաց վերելք, հայ իրանագիտությունը այդ ընդհանուր վերելքին համահնչյուն, նախկինում կուտակված հարուստ փաստերի հիման վրա հրապարակ հանեց մի շարք մեծարժեք գործեր, որոնք զգալի ավանդ հանդիսացան Իրանի պատմության, գրականության և մշակույթի ուսումնասիրության բնագավառում:

Հայ իրանագիտության զարգացման համար խթան հանդիսացավ նաև հայագիտության մինչ այդ շտեմեկված զարգացումը: Այդ պայմանավորված էր նրանով, որ հայ ժողովրդի պատմությունը սերտորեն կապված էր Հայաստանի դարավոր հարևան Իրանի պատմության հետ և հետևաբար այս երկու երկրների պատմական կյանքի տարբեր փուլերը ուսումնասիրելիս, զրանք անհրաժեշտ էր վերցնել իրենց փոխկապակցության մեջ: Պատահական չէ, որ XIX դ. համաշխարհային արևելագիտության զարգացման հետեվանքով մեծացավ նաև եվրոպական արևելագիտների հետաքրքրությունը ինչպես հայ ժողովրդի պատմության, այնպես էլ հայկական օղբյուրների նկատմամբ: Այդ առթիվ Վ. Բարտոլդը գրում է. «XIX դ. սկզբին եվրոպական գիտնականները հետաքրքրվում էին զլիսավորապես հայկական պատմական գրականությամբ, որտեղ հույս ունեին գտնել նոր նյութ Առաջավոր Ասիայի պատմության վերաբերյալ»<sup>20</sup>:

Հայաստանի հարևան երկրների պատմության և մշակույթի գիտական ուսումնասիրությամբ առաջինը զրազվեցին հայ լուսավորիչները: Խ. Արսևյանը՝ իր «Դորպատյան օրագրերում» և մի շարք այլ աշխատություններում հետաքրքիր դիտողություններ է անում Իրանի պատմության մի շարք հարցերի մասին:

XIX դ. առաջին հայ իրանագիտներից է վաստակաշատ գիտնական, լուսավորիչ Մեսրոպ Քաղիադյանը (1803—1858 թթ.), որի թողած արևելագիտական ժառանգությունը կարևոր տեղ է զրավում XIX դ. առաջին կեսի հայ գիտական, հասարակական մտքի և ազգային մշակույթի զարգացման մեջ: Որպես արևելագետ Մ. Քաղիադյանին առավելապես հետաքրքրել է Իրանի և Հնդկաստանի պատմությունը և մշակույթը: Նրա «Պատմություն պարսից»

<sup>20</sup> В. В. Бартольд, История культуры..., стр. 291.



աշխատութիւնը՝ հայ իրականութեան մեջ Իրանի պատմութեան քննական ուսումնասիրութեան առաջին գործն է: Այս ժամաշուն աշխատութիւնը ընդգրկում է Իրանի պատմութեան առասպելական շրջանից մինչև նոր ժամանակներն ընկած հատվածը: Հեղինակը յայնորեն սգտադործում է հունական պատմիչների, նախնի պատմագիրների ու նախապարհորդների տեղեկությունները, ինչպես նաև հայ պատմիչներին, նվրոպական պատմագիրներին, նախապարհորդներին, միսոններներին և այլն: Լինելով պարսկերեն լեզվի քաջ գիտակ, Մ. Քաղիազյանը սգտադործել է նաև պարսկական աղբյուրներ, հատկապես Քարարիի «Պատմութիւնը» և «Զիննաթուլ-Քավարիի»: Բացի իր ներքի տակ հղած աղբյուրներից, նա իր աշխատութիւնում շրջանառութեան մեջ է դնում նաև իր անկնական գիտումները, որոնք շատ հաճախ վալլում են խորը ընդհանրացումներով: Ամենայն հավանականութեամբ, հեղինակը մտադիր է եղել շարունակել իր երկը և հրատարակել Բ հատորը ևս, սակայն նրա մտադրութիւնը անկատար է մնացել:

Մի այլ գործում՝ «Պարսկական Էնապարհորդութեան հուշագրերում»՝ Մ. Քաղիազյանը վերին աստիճանի ինքնատիպ ու ուշագրավ գիտողութիւններ է անում պարսկական դիցաբանութեան մասին, գործում է խորամուխ լինել Իրանի հասարակական, քաղաքական, ազգագրական և մշակութային մի շարք հարցերի մեջ:

Մ. Քաղիազյանին հավատարապես հետաքրքրել է նաև Իրանի մշակույթը, հատկապես ժողովրդական բանահյուսութիւնը: Նա հավաքել է հայերեն լեզվով հրատարակել է պարսկական ժողովրդական առածները և սասցվածքները՝:

Նուաժորական դարաշրջանի գաղափարների և 1847—1848 թթ. Նվրոպայում բարձրացող հեղափոխական շարժումների ազդեցութեան տակ Մ. Քաղիազյանը իր արևելագիտական ուսումնասիրութիւններում աշխատում է խորամուխ լինել իր ժամանակի պատմական կյանքի նոր երևույթների մեջ: Նա քննադատութեան

<sup>64</sup> Մեսոպ Քաղիազյան, Պատմութիւն Պարսից, Հ. Ա, Կալիֆա, 1846:

<sup>65</sup> «Մանապարհորդութիւն Մ. Գ. Քաղիազյանց ի Պարսկաստան, Հա. Բ, Կալիֆա, 1848:

<sup>66</sup> «Ջուրբախու առակ Պարսից: Քարգմանուլ հուլիսը յունիւսմա՞ք. Քարգմ. Մ. Գ. Քաղիազյանց, Կալիֆա, 1846: Այս աշխատութեան լրիվ տեքստը ակ՛ս նաև Մ. Քաղիազյան, Գեղարվեստական երկեր, էջ 324—422: Սույն ժողովածուի երկրորդ հատորը մտադիր վիճակում պահվում է նոր Լույսի վանքում: ակ՛ս Գ. Միրզաբեկյան, Մ. Քաղիազյանի ժառանգութեան արձիվ (Անանեասիպ, 2002 ԳԱ «Տեղեկագրից» 1987, № 8, էջ 26):

է ինքնարկում եվրոպական պետությունների, մասնավորապես Անգլիայի գաղութային քաղաքականությունը Մերնալդոր և Միչին Արևելքում և ի վերջո հանգում է այն եզրակացության, որ «Կենսագործ նորոգության պէտս ունի աշխարհն գրեթե յամենայն ուրեք»<sup>67</sup>։

XIX դ. հայ իրանագիտության զարգացման համար կարևորագույն կենտրոն էր Ռուսաստանը։ Ռուս արևելագիտությունը արդեն դարի առաջին կեսին գտնվում էր համաշխարհային արևելագիտության առաջին շարքերում։ Ռուսական արևելագիտության առավել էական և նշանակալից գիծն էր հարցերի ընդգրկման խորությունը, որը ի դեպ բնորոշ չէր նրան ժամանակակից արևմտաեվրոպական բուրժուական արևելագիտությանը։

Գարի սկզբին, երբ ցարիզմը անօրինակ կերպով ակտիվացրեց իր արևելյան քաղաքականությունը, Արևելքի և արևելագիտության նկատմամբ ռուսական հասարակության տարրերը շրջանների հետաքրքրությունը անզուսպ կերպով մեծանում էր<sup>68</sup>։ Այդ շարժումը չէր կարող չհամակել նաև Ռուսաստանի կուլտուրական-գիտական կենտրոններում գործող հայ մտավորականությանը։ Հայագիտությունը իրենց գործունեության քննադատա զարհրած բազմաթիվ դեմքեր միաժամանակ սկսում են ավել կամ պակաս չափով զբաղվել նաև իրանագիտությամբ, թուրքագիտությամբ և այլն։ Միաժամանակ երևան են զայնս մարդիկ, որոնք բացառապես զբաղվում են արևելագիտության տարրեր հարցերով։

Պետք է նշել, որ հայ իրանագիտությունը հենց սկզբից ժառանգեց սուսական արևելագիտության լավագույն ավանդույթները<sup>69</sup>։

Հայ արևելագիտության զարգացման գործում բացառիկ կարիվոր դեր է սկսում խաղալ 1815 թ. Մոսկվայում բացված Լազարյան Ճեմարանը, որի կառարած դերը անգնահատելի է նաև ռուս արևելագիտության զարգացման գործում։ Հիբրավի, այս գիտական և ուսումնական հաստատությունը հանդիսացել է alma mater հայ արևելագետների մի քանի սերնդի համար։

Ռուսական արևելագիտության հետ հայ գիտնականների կապերի սերնդացմանը մեծապես նպաստեց 1828 թ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին։ Հայ ժողովրդի պատմական

<sup>67</sup> «Ազգայնի Արարտեան», 1850, հ. 9, էջ 424։

<sup>68</sup> А. Базилянц, Н. Кузнецова, Л. Кулашова, Азиатский музей—Институт востоковедения АН СССР, 1918—1968, М., 1969, стр. 15.

ճակատագրում այդ իրադարձությունը ունեցավ քաղաքական-կուլ-տուրական խոշոր նշանակություն: Քաջի այն, որ հայ ժողովրդի համար բացվեց խաղաղ առաջադիմության մի նոր դարաշրջան, նա այսուհետև հնարավորություն էր ստանում անմիջական շփման մեջ մտնել ուստի առաջավոր դիմումության ու մշակույթի և նրա միջոցով նաև համաշխարհային կուլտուրական արժեքների հետ:

XIX դ. ազնից հայ իրանագիտության այնպիսի կարիառուս գեմքեր, ինչպիսիք են՝ Ստեփանոս Նազարյանը, Փերսիքե Պատկանյանը, Կարապետ Սզյանը, Գրիգոր Խալաթյանը, Մկրտիչ Էմի-նը և ուրիշներ, որոնց գործերը արդեն կրում էին ոչ թե նկարա-գրական, այլ քննական բնույթ:

Այստեղ ազնիւրդ չէ համառոտակի կանգ առնել նրանց իրա-նագիտական ժառանգության վրա:

XIX դ. 40-ական թվականներին Ստեփանոս Նազարյանը (1814—1879) զիխավորում էր ուստի արևելագիտության խոշորագույն կենտրոններից մեկի՝ Կազանի համալսարանի արևելագիտու-թյան ամբիոնը: Այստեղ և Մոսկվայի (ազարյան մեմարանի արե-վելյան լեզուների պրոֆեսորի պաշտոնում պաշտոնավարելիս Ս. Նազարյանը մեծ աշխատանք է կատարում ուստի արևելագիտու-թյան համար կազմել պատրաստելու գործում:

Իր բազմամյա գործունեության ընթացքում նա ուսումնասի-րում և հրատարակում է մի շարք իրանագիտական գործեր, որոն-ցից հիշատակության արժանի են հայ-պարսկական զգրությունների մագիստրոսի սատիճան ստանալու համար նրա դիտարկումները<sup>66</sup>, Ֆիրդուսու ԵՄահմադիև Եվրոպա գրողական դիտարկումները<sup>67</sup>, Սադիկի ԵՊոլսիթանիա վերաբերյալ աշխատությունը և այլն<sup>68</sup>:

<sup>66</sup> «Обозрение истории Гайканской письменности в новейшие време-ня». Рассуждение, писанное для приобретения степени магистра армяно-персидской словесности кандидатом философии Степаном Назарянцем, Казань, 1846.

<sup>67</sup> «Абуль-Касем Фердуси Тусский, творец книги царей, известной под названием Шах-нама. С присовокуплением краткого обзора истории персидской поэзии до исхода XV столетия по Р. Х.», сочинение доктора Восточной словесности Степана Назарянца, кн. I, Казань, 1849; кн. II, М., 1851.

<sup>68</sup> «Розовый кустарник шейха Муслехеддина Савди Ширазского, славный под названием Гулистана», Пер. с персидского С. Назарянца, доктора Восточной словесности, М., 1857.

Իրանագիտությունը բնագավառում Ս. Նազարյանի տեսական-  
ները աչքի են ընկնում իրենց առաջագիմական դադարներում և  
գիտական խորը ընդհանրացումներով: Հակադրվելով հվրո-  
պացիներին տական բուրժուական տեսականներին Ս. Նազարյանը  
գտնում է, որ համաշխարհային պատմությունը չի կարող անտե-  
սել հվրոպական աշխարհից դուրս գտնվող ազգերը:

Ֆիրզուաու «Շահնամներն» նվիրված իր ուսումնասիրությունը  
Ս. Նազարյանը հիմք դրեց հայ գիտական ֆիրզուաուգիտությունը:  
Այդ աշխատությունը խոշոր ազանց էր նաև ուսական իրանագի-  
տության բնագավառում: Հետ էություն, այդ առաջին գործն էր,  
որը ուսական գիտական շրջաններին ծանոթացնում էր Ֆիրզուաու  
ստեղծագործությունը հետ և հրկար ժամանակ այն մնում էր որպես  
պարսիկ բանաստեղծի ստեղծագործության մասին լավագույն ու-  
սումնասիրությունը<sup>72</sup>:

Ս. Նազարյանը ուսական իրականություն մեջ հղել է պարսից  
դասական պոեզիայի առաջին պրոպագանդիստը: Բավական է  
ասել, որ Սաադիի «Գուլեսթանի» առաջին ուսերին թարգմանու-  
թյունը ևս պատկանում է Ս. Նազարյանին: Այս գործի վրա հեղի-  
նակը աշխատել է հրկար, ուսումնասիրելով պարսկերեն բնագիրը  
և նրան վերաբերող բացատրությունները թուրքերեն լեզվով: Բու-  
լոսը ձեռագրերից նա ընտրել է լավագույնը, այսպես կոչված «Քավ-  
րիզի քոլլիթաթը», որը և հնարավորություն է ափել նրան հարազատ  
ու ժողով մեալ բուն տեքստին:

Իր հրատարակած «Հյուսիսագիտություն» ևս Ս. Նազարյանը  
պարբերաբար հրատարակում էր հոդվածներ պարսից դասական  
բանաստեղծներ Ջամիի, Սաադիի, Ռումիի և այլոց ստեղծագոր-  
ծություններից:

Հայ իրանագիտության բնագավառում որոշակի ծառայու-  
թյուններ ունի անվանի հայագետ-արևելագետ Մկրտիչ էմինը  
(1815—1890): Նվիրելով իրեն գլխավորապես հայագիտության  
զարգացմանը, նա իր մի շարք պատմա-բանասիրական աշխա-  
տություններում, առավելապես հայ գրականության ու պատմու-

<sup>72</sup> Այդ աշխատության մասին իր ժամանակի ուսական գիտական հան-  
գեսներում եղան մի շարք կոլլեկցի, որոնցում բարձր գնահատական էր արվում  
Ս. Նազարյանի ուսումնասիրությունը: Տե՛ս որինակ՝ «Московитянин», т. VI,  
1861, стр. 169—174; «Журнал министерства народного просвещения»,  
1862, т. 73, стр. 148—153; «Отечественные записки», 1861, т. 76, отд. VI,  
стр. 24—25; «Современник», 1861, т. 80, стр. 48—51 և այլն:

թյան հին շրջանին նվիրված գործերում, քննություն է ենթարկել բազմաթիվ հարցեր, որոնք առնչվում են նաև Իրանի հին շրջանի պատմության և մշակույթի խնդիրներին: Այսպես, «Վէպք Վնույն Հայաստանի»<sup>73</sup> ուսումնասիրության մեջ Մ. էմինը լեզվա-համեմատական խորը վերլուծության է ենթարկել Մ. Խորենացու «Հայոց պատմության», «Ի պարսից առասպելաց» և Ֆիրդուսու «Շահնամին», «Ջահակ» բաժինները: Ջուզահոններ անցկացնելով նրանց միջև, հեղինակը հանգել է գիտական մի շարք լուրջ եզրակացություններին<sup>74</sup>:

70—90-ական թվականներին Մ. էմինի հրատարակած հայագիտական գործերում<sup>75</sup> ևս հանդիպում ենք նրբմեծ շատ հակիրճ, բայց և վերին աստիճանի հետաքրքիր գիտաբանությունների հին Իրանի պատմության և մշակույթի հարցերի մասին: Դրանցում Մ. էմինը պատմա-համեմատական լայն զուգահեռներ է անցկացնում նրկու հարևան ժողովուրդների պատմական կյանքի տարրեր գրվածքների միջև:

Իրանագիտական կարևոր արժեք է ներկայացնում հատկապես Մ. էմինի «Մեծպայք հին Հայաստանում» հոդվածը<sup>76</sup>: Այստեղ նա հատկապես կանգ առնելով ֆրանսիացի արևելագետ Ժյուլ Թյպերտի «Ամզահակ» բառի մեկնարանության վրա, վերլուծության է ենթարկում մեծաքանակի հետ հաշիտի ունեցած առնչությունները և հոգևոր-մշակութային փոխազդեցությունները: Հեղինակը քննության է ենթարկում նաև Հայաստանում մարերի զաղութի պատմությունը և ցույց է տալիս, որ մարերի մասին Մ. Խորենացու հազարյան տեղեկությունները միանգամայն արժանահավատ են և ունեն պատմական հիմք:

XIX դ. հայ իրանագիտության խոշոր երախտավորներից է նաև ականավոր հայագետ-արևելագետ Քերովրե Պատկանյանը (1833—1889), որի «Փորձ սասանյան հարստության պատմության»

<sup>73</sup> Մ. էմին, Վէպք Վնույն Հայաստանի, Մոսկվա, 1850:

<sup>74</sup> Մանրամասն տե՛ս Ավ. Կանուկյան, Շահնամն և Հայկական աղբյուրները, Երևան, 1887, էջ 5:

<sup>75</sup> Տե՛ս «Вахуги-Византиках армянской мифологии есть Индра Вридряхи Ригведы», М., 1873; «Монсей Хоренац и древний эпос армянский», М., 1881; «Династический слухок Хайхадова», М., 1884; «Исследования и статьи по армянской мифологии, археологии, истории и истории мифологии», М., 1895:

<sup>76</sup> Մ. էմին, Մեծպայք Հին Հայաստանում Ժյուլ Թյպերտի ավան նոր մեկնությունը «Ամզահակ» բառի («Փորձ», 1881, № 5—6, 189—210):

քստ հայկական աղբյուրների աշխատությունը<sup>77</sup> մեծ ընդունելություն գտավ Ռուսաստանի արևելագիտական շրջաններում և նրա հեղինակը ձեռք բերեց անվանի արևելագիտ-իրանագետի անունը։ Նրա աշխատությունը անմիջապես իր վրա բեռեց նաև եվրոպական արևելագիտության ուշագրությունը և այն հետագայում լույս տեսավ նաև ֆրանսերեն լեզվով՝ Փատկանյանը եվրոպական արևելագիտությանն էր ներկայացնում ոչ միայն քննական մի ուսումնասիրություն Սասանյան իրանի պատմության մասին, այլ նրանց առջև բաց էր անում Սասանյանների պատմության վերաբերյալ հետաքրքիր ու եվրոպացիների համար մինչ այդ անհայտ աղբյուրների մի հարուստ զանձ՝ միջնադարի հայկական սկզբնաղբյուրները։

Դեռևս մինչ այդ աշխատության հրատարակումը (որը, ի դեպ, Ք. Փատկանյանի մագիստրոսական դիսերտացիան էր), հեղինակը եվրոպական իրանագիտներին արգին ծանոթ էր որպես հայկական աղբյուրների քաջ գիտակ ու հմուտ մասնագետ։ Նա 1860 թ. շրջագայել էր եվրոպայում, մասնավորապես եղել էր Վեննաիկում, Մյունխենում, Փարիզում և Վիեննայում, որտեղ հաջոթել էր մեծ քանակությամբ հայերեն ձեռագրեր և ծանոթացել Արևմուտքի անվանի հայագիտների ու արևելագետների հետ։ Գիտական այդ ուղևորության արդյունքը հանդիսացավ ֆրանսերեն լեզվով նրա հրատարակած հայկական աղբյուրների կատալոգը<sup>78</sup>, որով Ք. Փատկանյանը գիտական աշխարհին ծանոթացնում էր հայ հին գրականության հետ։ Հետագայում ևս շարունակելով այս ուղղությամբ իր աշխատանքները, նա հրատարակում է մի շարք գործեր<sup>79</sup>, որոնք եվրոպական արևելագիտությանը և հայագիտությանը արամադրում էին նոր և խիստ ուշագրավ ու արժեքավոր նյութեր։ Առհասարակ պետք է նշել, որ Ք. Փատկանյանի պատմագիտական աշխատանքների մեջ կարևոր տեղ է գրավում հայկական սկզբնաղբյուրների հրատարակումը և գրանց աուսերեն թարգմանությունը։

1870 թ. մեծածախառակ իրանագետը ուսուներեն լեզվով հրատարակում է Պետրոս դի Սարգիս Գիլանենցի օրագրերը<sup>80</sup>, որը, ինչպես արգեն նշվել է վերևում, կարելի է համարել 1722 թ. աֆղան-

<sup>77</sup> «Опыт истории древности Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями», СПб., 1863.

<sup>78</sup> «Catalogue de la Littérature Arménienne depuis le commencement du II siècle jusque vers le milieu du XIII.», 1860.

<sup>79</sup> Տե՛ս «Նյութք մասնագրության հայոց» Մ. Պետերբուրգ, 1864:

<sup>80</sup> «Дневник осады Испгани Афганими...».

ների կողմից սեֆերների մայրաքաղաք Սպահանի պաշարման և նրա անկման վերաբերյալ ամենալավագույն սկզբնաղբյուրը:

Իրանի պատմությունը նվիրված Ք. Պատկանյանի աշխատություններից հարցերի ընդդրվածան խորությամբ և փաստերի հարստությամբ հատկապես աչքի է ընկնում «Ընդհանուր ակնարկ Պարսկաստանի պատմության մինչև արարների ներխուժումը» ևսումնասիրությունը<sup>51</sup>։ Գտնվելով բուրժուական պատմագրության գիրքերի վրա, հեղինակը չի կարողանում բացահայտել Սասանյանների տիրապետության շրջանում Իրանում գոյություն ունեցող սոցիալ-դասակարգային հարաբերությունները և մի շարք հարցերի մեկնարանություն ընդգավառում հանդում է ոչ ճիշտ եզրակացությունների, սակայն նրա աշխատության փաստական հարուստ նյութը այսօր էլ շահեկան ու օգտավետ է դարձնում նրա գործը:

Արժեքավորելով Ք. Պատկանյանի իրանագիտության բնագավառում ունեցած ծառայությունները, պետք է նշել, որ նա դրեց հայ նոր կամ գիտական արևելագիտության և հատկապես իրանագիտության կայուն հիմքերը<sup>52</sup>։ Անվերապահորեն նրան կարելի է համարել նաև XIX դ. հայ ամենախոշոր իրանագետը:

1884 թ. վաստակաշատ Հայագետ-արևելագետը ընտրվել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, որի կազմում ցարական Ռուսաստանի պայմաններում տեղ ունեին ազգային փոքրամասնություններից լնչին թվով ներկայացուցիչներ:

Չափազանց մեծ է եղել Ք. Պատկանյանի երախտիքը նաև Ռուսաստանում արևելագետ-իրանագետ կադրերի պատրաստման գործում։ Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում տարիներ շարունակ նա կարգացել է Իրանի պատմության դասընթացը, որը չափազանց բարձր են գնահատել իր ժամանակի արևելագետները։ Վ. Բարսուլզը այդ առթիվ գրում է. «Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետում Պատկանյանի մահից հետո բաժնիկանին տեղական ժամանակ Պարսկաստանի պատմության դասընթացի ընթերցումը զազարեց»<sup>53</sup>։ Միայն 1901 թ. Վ.

<sup>51</sup> К. Патканов, Общий обзор истории Персии до вторжения арабов, СПб., 1883—1884.

<sup>52</sup> См. Н. О. Эмиль, Профессор Патканов как ориенталист, Вена, 1874.

<sup>53</sup> Б. М. Данцаг, Изучение Ближнего Востока в России (XIX—начало XX вв.), М., 1968, стр. 112.

Քարտուղին հանձնարարվում է կարգալ սիրանի պատմա-աշխարհագրական տեսությունն զատելթացը<sup>84</sup>։

Իրանագիտության բնագավառում նշանակալից նրանցից էր Կարապետ Եղյանի (էղով 1835—1905) «Պետրոս Մեծի հարաբերությունները հայ ժողովրդի հետ»<sup>85</sup> մեծածավալ աշխատության հրատարակումը, որը ոչ միայն կարևոր ներդրում էր հայ-ուսական հարաբերությունները ուսումնասիրելու, այլև XVII—XVIII դարերի ուսու-պարսկական քաղաքական հարաբերությունները բացահայտելու տեսակետից։ Այս հետազոտության կարևոր արժանիքներից մեկը այն է, որ նա զբված է ուսական և արևմտանկարողական արխիվային հարուստ նյութերի և զբաղանքության հիման վրա և հետևարար քննարկվող հարցի մասին ուսիս է բազմարդվանգակ և հարուստ նյութ։ Իրանագիտական առումով այստեղ արժեքավորն ու զեահահային այն է, որ հեղինակը հանգամանորեն կանգ է առնում Մեֆէյան պետության ներքին և արտաքին քաղաքականության հարցերի վրա (շահ Արքաա I-ից սկսած մինչև սեֆէյան վերջին շահ Մուլթան Հուսեյինի տիրապետությունը), մանրամասնորեն խոսում է XVII դ. թուրք-իրանական պատերազմների մասին և հասուկ կանգ է առնում Մերձավոր և Միջին Արևելքում, հասկապես Իրանում, արևմտանկարողական պետությունների քաղաքականության վրա։ Սակայն առավել բազմակողմանիորեն և խորը բացահայտվում են Պետրոս I-ի արևելյան քաղաքականությունը և ուսու-պարսկական հարաբերությունները։ Նշված հարցերի քննության տեսակետից Կ. Եղյանի գիրքը խոշոր ավանդ էր ոչ միայն ուս արևելագիտության, այլև համաշխարհային իրանագիտության բնագավառում։ Պատահական չէ, որ նրա հրատարակումից հետո այն մտավ գիտական լայն շրջանառության մեջ և երկար ժամանակ օգտագործվում էր որպես ուսու-պարսկական հարաբերությունների վերաբերյալ ամենալավագույն գործերից մեկը։ Չնայած, որ այս աշխատությունը առաապում է րուր-ժուական պատմագրությանը բնորոշ թերություններով, սակայն այն իր արժեքը չի կորցրել նաև մեր օրերում։

Երկար տարիներ պաշտոնավարելով Ռուսական կայսրության հանրային կրթության մինիստրությունում և վարելով զեկավար աշխատանքներ, Կ. Եղյանը մեծապես նպաստել է ուսական բարձ-

<sup>84</sup> Եսյն տեղում։

<sup>85</sup> К. Эвог, Сношение Петра Великого с восточным народом, СПб., 1896.



րագույն ուսումնական հաստատութիւններում արեւելագիտութեան զարգացմանը<sup>85</sup>։ Միաժամանակ նա ակտիվ մասնակցութիւն է ունեցել Ռուսաստանի արեւելագիտական կյանքին։ Մի շարք միջազգային արեւելագիտական համաժողովներում Կ. Նոյանը ներկայացրել է ռուսական կառավարութեանը՝ տալով արժեքավոր գնահատումներ։

Անձանի հայագիտ-արեւելագիտ Գրիգոր Խալաթյանը (1858—1912), որն անցել էր լազարյան ճեմարանի դարբնոցով և ապա ավարտել Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը, իր հայագիտական աշխատութիւններում մեծ տեղ է հատկացնում նաև Իրանի պատմութեան և հայ-իրանական հարաբերութիւններին մի շարք հարցերին։ Այսպես, «Իրանի ճեմարանը հայ ժողովրդի մեջ»<sup>86</sup> աշխատութիւնում Գ. Խալաթյանը համակողմանի քննութեան է ենթարկում այն հարցը, թե որքանով են Իրանի դաստիարակական ավանդութիւնները՝ ազգեցութեան գործել հայ ժողովրդական վեպի վրա և որքանով են հայերը փոխառել իրանական գրույցները։ Այդ նպատակով նա վերցնում է հայկական մի շարք զամպոնների բանահյուսութիւնը (Ապարան, Կոզը, Վան) և գիտական ուշագրավ վերլուծութեան շնորհիվ ցույց է տալիս իրանական էպոսի ազգեցութիւնը վերոհիշյալ շրջանների բանահյուսութեան վրա։

Խոսելով հայ-իրանական գրական մշակութային կապերի և փոխազգեցութիւնների մասին Գ. Խալաթյանը գրում է. «...Պարսից գարավոր հարեանութիւնն ավելի ևս խորը գրոշմվից հայ ազգի կյանքի վրա. նա զգալի է նախ լեզվում, թե՛ գրաբարում և, թե՛ առավել ևս աշխարհաբարում։ Մյուս կողմից, Արևելքն՝ Պարսից շնորհիվ՝ բաց էր անում հայերի առջև իր խորհրդավոր պարտեզի գոտերը և ներս հրավիրում էնքիաթների աշխարհն, ուր մարդկային երևակայութիւնն այնպես հրաշալի կերպով ծաղկեց արևելյան ճոխ բնութեան գրկում։ Իրանի հուշակավոր ճեմարանների ավանդութիւններն... հեշտիվ կարող էին հրապուրել հայերին՝ Պարսից ասկենամատ դրացիների երևակայութեանը»<sup>87</sup>։

Գ. Խալաթյանի գրչին է պատկանում նաև հայ պատմիչ Գրիգոր Մագիստրոսի գործերում իրանական գրույցների և ավանդու-

<sup>85</sup> Ե. Մ. Даниел, № 4. աշխ., էջ 111.

<sup>86</sup> Գ. Խալաթյանը, Իրանի ճեմարանը հայ ժողովրդի մեջ (Կտեալ, Պոլսոյ, Ապարան) բարբառներով, Պարս., 1901.

<sup>87</sup> Նույն աեղում։

թյունների բացահայտմանը նվիրված ուշագրավ ուսումնասիրությունը<sup>89</sup>, Իրանագիտական առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև նրա բնկնարկ Հայաստանի պատմության՝ Առաջավոր Ասիայում իրագործությունների ընդհանուր ընթացքի կապակցությունը<sup>90</sup> հետազոտությունը<sup>91</sup>։

Խոսելով ուսական գիտական կենտրոններում, ինչպես նաև Արևմտյան եվրոպայում, հետազոտական աշխատանք տանող հայ արևելագետների մասին, անհրաժեշտ է նշել, որ նրանք զուտ էին այսպես կոչված բաղադրարկական ուղիով, այսինքն նրանց հետաքրքրությունների առարկան զուտ գիտական կամ տեսական արեւելագիտությունն էր, որի զարգացման համար անմիջական խթան էր առավել խորք և բազմակողմանի հետաքրքրությունը Արևելքի նկատմամբ և որը հեռու էր գործնական կամ քաղաքական նպատակներ հետապնդող պրակտիկ արևելագիտությունից։ Եվ այդ միանգամայն հասկանալի է, որովհետև հիմն մեծ պետությունները և նրանց պատվերները կատարող արևելագետ-գիտնականների շղարխ մասը ձեռնամուխ էին լինում Արևելքի ուսումնասիրությունը այդ երկրները ներթափանցելու, զաղութացնելու կամ տնտեսական ու քաղաքական ազդեցություն ձեռք բերելու նպատակով, ապա հայ արևելագետները լինելով պետականություն լուծեցող և փոքր ազգի ներկայացուցիչներ, բնականաբար հեռու էին այդ բյուրոկրատիկ և հետևաբար իրենց ուշագրությունը կենտրոնացնելու էին արևելագիտական այն հարցերի վրա, որոնք առնչվում էին սեփական ժողովրդի պատմության և մշակույթի հետ և կամ իրենցից ներկայացնում էին զուտ գիտական հետաքրքրություն։ Իհարկե, միանգամայն այլ հարց է, որ ցարական կառավարությունը և Արևմտյան եվրոպայի կառավարող շրջանները հավասարապես կարող էին սգովել հայ արևելագետների մատուցած անուղղակի ծառայություններից իրենց զաղութակալական նպատակների համար։

<sup>89</sup> G. Chahafkian, Fragmente Irantischer Sagen bei Grigor Magistros WZKM Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1896. X Band, ss. 217—224. В. Ф. Миллер, Г. А. Халатъянц, Fragmente Iranischer Sagen bei Grigor Magistros. \*Протоколы заседаний Восточной комиссии Императорского Московского археологического общества за 1895—1900 гг. (Особая пагинация), \*Древности восточные., 1901, т. II, вып. II.

<sup>90</sup> Г. А. Халатъянц, Очерк истории Армении в связи с общим ходом событий в Передней Азии, М., 1910.

Այսպիսով, ուսական գիտական օջախներում աշխատող հայ արևելագիտները ոչ միայն կայատուն էին հայրենի արևելագիտության զարգացմանը, այլև ուս-արևելագիտական մտքի առաջընթացին: Ընդհանուր գիտությունը,—գրում է Վ. Բարտուլդը,— հայկական ու վրացական ժողովուրդ գիտնականներին է պարտական ինչպես Ռուսաստանում գիտական հայացքների տարածման, այնպես էլ հետագայում եվրոպական գիտության մեթոդների հիման վրա գրանց Էշտման համար<sup>51</sup>:

XIX դ. և XX դ. սկզբներին Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի գիտական օջախներում հրատարակվում էին հայ հեղինակների բազմաթիվ գործեր (այդ թվում նաև թարգմանական), որոնք կամ ուղղակի նվիրված են Իրանին, նրա պատմությանը, մշակույթին և այլն, կամ անուղղակի կերպով լուսարանում են իրականացնող հարցեր: Թվարկներ այդ կարգի աշխատություններից մի քանիսը: Նաղդի շահի տիրապետության շրջանում Իրանի ներքին կյանքի և արտաքին հարաբերությունների քննության են նվիրված Ս. Քիչմիշևի<sup>52</sup>, Սեյլան խան Միրանի<sup>53</sup> և այլոց ուսումնասիրությունները: Իրանց հետազոտություններում Իրանի պատմության, աշխարհագրության և մշակույթի հարցերին անդրադառնում են նաև Գադիթ Մելիք Շահնազարյանը<sup>54</sup>, Լ. Գաթրճյանը<sup>55</sup>, Ե. Սեթյանը<sup>56</sup>, Լ. Տեր-Նովնայանը<sup>57</sup>, Գ. Լավսեփյանը<sup>58</sup>, Ղ. Ինճիճյանը, Ղ. Ալիշանը, և ուրիշներ: Սկսում են հրատարակվել նաև պարսկերեն լեզվի վերաբերյալ առաջին ուսումնասիրություններ

<sup>51</sup> В. В. Бартольд, История изучения..., стр. 293.

<sup>52</sup> С. Кашмишев, Походы Надир шаха в Герат, Канджгар, Индию в события в Персии после его смерти, Тифлис, 1899.

<sup>53</sup> Սեյլան խան Միրան, Քանազ շահի Վասալրահանի այլո՞վներից, Քիշև, 1887:

<sup>54</sup> Սիլի Եսենազարյան Գադիք, Մեհան-Քրեյմեան Յակեր, Կանդե լուղիկը, Տեղեկությունք ի վերայ այժմեան կայսրութեան թագադրութեան Պարսիք, Փարիզ, 1817—1818:

<sup>55</sup> Լ. Գաթրճյան, Տեղեկութեան պատմութիւն ի սկզբանէ աշխարհի քննի մտնակ, Վիեննա:

<sup>56</sup> Ե. Սեթյան, Պատմութիւն շորից ինքեպալութեանց, Վենետիկ, 1837 (մաս Բ, ուղարկից ինքեպալութեանը):

<sup>57</sup> Լ. Տեր-Նովնայանց, Պատմութիւն նոս Զուլայու որ յԱսպահան, նոր Զուլայու, հտ. 1, 1880, հտ. 2, 1881:

<sup>58</sup> Գ. Լավսեփյան, Ռուսամ Ջալ, ժողովրդական վեպ (Մոկաց բարբառով) Քիշև, 1905:

և գառազրքեր<sup>100</sup>, Թարգմանվում և հրատարակվում են հիբրուպական արևելագիտական ուսումնասիրությունները<sup>101</sup> և այլն:

XIX դ. սկսած հայ իրանագետները սկսում են լրջորեն զբաղվել իրանի հնագույն պատմության և մշակույթի հարցերով և հրատարակում են մի շարք ուշագրավ ուսումնասիրություններ: Միաժամանակ հիմք է դրվում հայ գիտական պահպանագիտությունը: Հայ պահպանագետները սկսում են զբաղվել ինչպես պահպանական գրական հուշարձանների Թարգմանություններ, այնպես էլ նրանց ուսումնասիրություններ՝ գլխավորապես կապված հայկական պատմական-գրական հուշարձանների հետ: Մասնավորապես հայ ուսումնասիրողները աշխատում են վեր բարձրացնել հայ-պարսկական փոխհարաբերությունների հարցը, որը մինչ այդ հասույն հետազոտության առարկա չէր հանդիսացել հիբրուպական իրանագետների կողմից: Վերահիշյալ պրոբլեմների գծով հրատարակվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնցից այստեղ կարելի է հիշատակել հատկապես մի քանիսը<sup>102</sup>:

XIX դ. հայ գիտական միտքը մեծ հետաքրքրություն սկսեց գրանորել նաև իրանական դասական գրականության նկատմամբ: Այդ աշխատանքները հետաքրքրության մի մասն էր, որ հիբրուպական արևելագիտությունը սկսել էր տածել դեպի պարսից միջնա-

<sup>100</sup> Տե՛ս Մ. Բեչկյան, թերականոթին բազմալեզու ծորով բազմազան սկզբունք Արարացի, Պարսիկ, ամանեան և Թաթար բարբառաց հանգրեմ անթաթաթեթթ ալի և ալլ լեզուաց, Վենետիկ, 1844: Востокъ Исламическій, Учебник персидскаго языка, М., 1856.

<sup>101</sup> Եսեմ Եսեմիյան, Լույսատան, Թրգոտան, Արևմտյան Պարսկաստան, Վենետիկ, 1894 (Թարգմ. Բ. Պիլեպիյանի):

<sup>102</sup> Տե՛ս Ս. Վ. Մանասյան, Ասորեստանի և պարսիկ արևելագիտությունը կամ եզրի քաղաք, որևէ նախընթացում ոչ խաղիկն պատմության կը վերաբերի, Վենետիկ, 1901: Ն. Քարամանչ, Պարսկաները Պարսկաստանում և նրանց հարաբերությունները հայոց հետ (250 Քրիստ. առաջ — 226 Քրիստ. Ա. Վ.), Վազարապատ, 1897: Բ. Մարգարյան, Նրև Թագավոր Մարգարյանը իր ժամանակներից (1900): Կ. Քարամանչ, Պարսիկի արշավանքն ի Լոյս (սրբանոցեր հանգրեմ, Պարսիկ, 1899, Կ. 1, գիրք Ա, էջ 8—46): Եսեմ Եսեմիյանի Տրգոտ Թագավոր հայոց և Պարսկանց (սրբանոցեր, 1903, Մ 1, էջ 8—12): Ս. Սեյիդյան, Պարսկագետ սեյիդյանը (սեյիդյան ամսագրաց, Ա. տարի, էջ 8, 20, 22, 31, 142, 162, Բ. տարի, էջ 151, 220, Գ. տարի, էջ 46): Ա. Արախտեյանց, Արևմտյան սեյիդյանի հին պատմությունը (Սեյիդյան, Փյունիկյան, Միջագետք, Երան) Թիֆլիս, 1901:

Ա. Պալիպյան, Լույսատան պատմության հին սկզբունք ծորով բազմազան պատմությունը Նրևց, Ասորեստանաց, Բարսիացաց, Սեյիդյանաց, Մարաց, Պարսից, Պարսկանց, Կարգեղեցաց, Տուսեր, Ասորաց, Վենետիկ, 1848—1851:

Սակայն ինչպես նորագույն շրջանում, այնպես էլ Իրանում հայկական գաղութի գոյության ողջ ժամանակամիջոցում հայերի սոցիալ-տնտեսական դրուժյունը որոշ չափով տարբերվել է երկրի հիմնական բնակչության սոցիալ-տնտեսական պայմաններից: Իրանը լիակատար համապատասխանության մեջ չեն եսել երկայումս:

\* \* \*

XX դ. 20—30-ական թվականներին Իրանում, առավելապես արդյունաբերության բնաշավառում, հասակորեն գրեթե բոլորում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման տեղեղնը: Սակայն գյուղատնտեսության մեջ գնուև ուժեղ էր ֆեոդալական մեացուններին տիրապետությունը: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման այդ առանձնահատկությունը անդրադարձել է Իրանական հասարակության սոցիալական կազմի վրա, որը վերին աստիճանի խայտարղետ է:

\* 1992 ՆԳՊՆ, Գ. 4(114), Կ. 2, գ. 30, Բ. 45:



Վերահիշյալ շերտավորումը այս կամ այն համաձայնություններ հասուն է նաև տեղի հայ գաղութին: Իրանահայերի սոցիալ-արև-տեսական կյանքի այս երևույթը իր պատմությունն ունի: Այն կապված է գաղութի գոյություն իրավահան նորմերի, տեղի հայ բնակչության կյանքի պատմական ու քաղաքական պայմանների հետ:

Հայտնի է, որ բնդուպ մինչև XIX դ. վերջը Իրանում տիրապետող էր հողատիրության պետական ներքին նախնականներում թիչ քիչ շատ խոշոր հողատիրներ ունեին միայն մի քանի հայեր: Երանք գլխավորապես հայ հողատիրական ներկայացուցիչներ էին, որոնց Իրանի շահերն ու կառավարիչները օգտագործում էին գաղութի բնակչության վրա իրենց իշխանությունը ամրապնդելու համար: Առաջին Գալիբեկյան և Հարություն Տեր-Հովհանյանցի մտա տեղեկություններ կան, որ Շահ Աբաս Ա-ն իր տիրապետության հողերից կտրեր էր հատկացնում քանակական առաջնորդներին ու նոր Ջուզայի մյուս բարեբախտական հողատիրականներին: Այդ մասին նշում է նաև Ի. Պ. Պետրոշևսկին<sup>7</sup>:

Շահ Աբաս Ա-ն և իր հետնորդները հովանավորող քաղաքականության էին վարում նաև հայ եսիվի իշխան-Ֆեոդալների նկատմամբ, որոնք Իրան էին փոխադրվել XVII դ. սկզբին, գյուղացիների հետ Քեպես քաղաք չէին վերադառնում իրենց եսիվի իրավունքները, քանի որ զուրկ էին հողերից, սակայն նոր պայմաններում հաճախ շահերի կողմից նշանակվում էին քաղաքացիական գյուղական ավագի պաշտոնում<sup>8</sup>:

Անֆյունների հարստության անկումից հետո Իրանում ուժեղացան կենտրոնախույս ձգումները: Փերիա, Չհարմհայ, Բուրվաթ, Գյաֆյա շրջաններ, ինչպես նաև Հյուսիսային նահանգների հայ գյուղացիությունը XVIII—XIX դդ. սկզբներին գարձավ կենտրոնական իշխանության և տեղական Ֆեոդալների միջև: Այսպես, երկարատև պայքարից հետո Չհարմհայը 1878 թ. միացվեց Բախարի խաների տիրույթներին<sup>9</sup>:

XIX դ. վերջին օտարերկրյա կապիտալի ներթափանցումը Իրան, տարանքա-գրամային հարարությունների աճը և երկրի ներքաշումը միջազգային ազրանքափոխանակության ոլորտի մեջ

<sup>7</sup> И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVII—начале XIX вв., Л., 1949, стр. 111.

<sup>8</sup> Այլ. Ազգային, Իրանի Չհարմհայ գաղաքը, էջ 17—25:

<sup>9</sup> С. М. Аване, К национальному вопросу в современном Иране, «Критические сообщения из-за рубежом Азж», М., 1964, № 77, стр. 50.

Հանգնեցրին այն բանին, որ Հողը սկսեց կենտրոնանալ խոշոր կալվածատերերի, վաճառականների, ազգեցիկ խաների և ցեղային առաջնորդների մեղքերում, որի հետևանքով Հայ գյուղացիների մեծամասնությունը զրկվեց Հողից:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին տեղական կալվածատերերը (մուլքագարները) զարման Հայ գյուղացիների լիբշխան անընդունելի նրանք Հողերի մի մասը գնեցին, իսկ մյուսը՝ զավթեցին ուժով: Այդպես եղավ, օրինակ, Չհարմհայում<sup>10</sup>, ինչպես նաև հյուսիսային եահանգներում, Այսպես, Մալմաստում՝ տեղի կալվածատերերը յուրացրին տասնյակ գյուղեր, այդ թվում նաև ամբողջովին հայաբնակ այնպիսի գյուղեր, ինչպիսիք են Փայաջուկը, Մազրան, Մայլամբ և այլն<sup>11</sup>:

Երանում Հայ ունեւոր խավերը, հիմնականում առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչները, ձգտում էին Հողեր մեղք բերել, Մակայն նրանց Հաշտովեց ցիլ թե շատ խոշոր Հողատերերի տեղ դառնալու: Այս ուղղությամբ հատկապես նախնական փորձեր արեցին ազգեցիկ Քումանյան առևտրական տան ներկայացուցիչները: Մինչև առաջին համաշխարհային պատերազմը նրանք սկսեցին Հողատերեր գնել Ղարազազի շրջանում: Բայց պատերազմը և առևտրական տան՝ դրան հաջորդած, սնանկացումը ի դերն հանեցին այդ փորձերը<sup>12</sup>:

Շեղհույ մինչև մեր դարի 60-ական թվականները Երանի Հողատարածությունների մեշոզ մեծամասնությունը գտնվում էր խոշոր կալվածատերերի մեղքում: Միայն Հողային ռեֆորմի իրականացման ընթացքում իրանական իշխանությունները բանեցին կալվածատիրական խոշոր Հողատիրությունը որոշ չափով սահմանափակելու ուղին: Մակայն այդ ռեֆորմը գեղես չի իրագործվել Հայ գյուղացիներով բնակեցված շրջանների մեծ մասում: Հնարավոր է, որ այն ընդհանրապես չանդրադառնա այդ շրջաններից շատերին, քանի որ դրանք (օրինակ՝ Չհարմհայը, Փերիան, Բուրվանին, Գյափլան և ուրիշներ) գտնվում կամ հարում են ցեղերի (բախտիարներ, լուրիք և այլն) բնակության գոտան, որի վրա Հողային ռեֆորմը աննշան չափով է տարածվում<sup>13</sup>:

<sup>10</sup> Ամ. Նպաստյան, Երանի Բնարմուտի գաղափար, էջ 22—23:

<sup>11</sup> А. Султан-заде, Персия, М., 1924, стр. 66:

<sup>12</sup> «Վերածնունդ», 1922, հուլիսի 11:

<sup>13</sup> А. Н. Дежин, Аграрные преобразования в современном Иране, сб. «Иран», М., 1963, стр. 117:

Այսպիսով, Իրանում հայ գյուղական բնակչության միջավայրում գոյություն ունի և ներկայումս էլ ունի շահագործվող գյուղացիության բավականին ստվար զանգված. սակայն շահագործողների կալվածատիրական գասակարգ գոյություն չուր։

Մակայն կալվածատիրական դասի բացակայությունը և նրանակում, թե այն զուրկ է գասակարգային շերտավորումից։ Հայ գյուղացիների միջև գոյություն ունեն գասակարգային մի քանի ենթաբաժանումներ՝ ազգատներից ու միշակներից մինչև հարուստ գյուղացիները։ Միաժամանակ գասակարգային շերտավորումներ կան վարձակալ-գյուղացիների ու սեփականատեր գյուղացիների միջև։

Իրանի գյուղական բնակչության գասակարգային գոյության չափանիշը գյուղացու՝ սեփականության նկատմամբ (հող, քարշում, գյուղատնտեսական գործիքներ և այլն) ունեցած հարաբերությունն է։ Հայ գյուղացիների՝ հողային սեփականության նկատմամբ ունեցած հարաբերությունները պարզելու համար դիմենք Չհարմհայ, Փերիա, Քեարվանդ և Բուրվանի շրջանների վերաբերյալ սՊարսկահայ տարեցույցումս 1927 թ. հրատարակված տրվյալներին։

Ա գ յ ո ս ա կ 1  
 Լոգատերի և խոյնչիներին<sup>14</sup> թիվը երեք շրջաններում

	Տների թիվը	Էդուպործ.	Սոյննչիները
Չհարմհայ	767	487	380
Փերիա և Քեարվանդ	1891	1268	623
Բուրվանի	650	460	211
	3308	3204	1214

Մույզես երևում է բերված աղյուսակից, այդ շրջանների հայ գյուղացիական ընտանիքների մեկ երրորդից ավելին հող չունի և այն չէր էլ վարձում։ Իսկ գյուղացիների այն մասը, որ զբաղված էր Լքկրագործությամբ, սՊարսկահայ տարեցույցի<sup>15</sup> տվյալներից պարզվում է, որ հողագործներից Փերիայի շրջանում սեփական հողակատրուներ ունեին 427 ընտանիք, Չհարմհայում՝ 17, իսկ Բուրվանի շրջանում գյուղացիներից և ոչ ոք հողատեր չէր։ Լոգատեր

<sup>14</sup> Խոյնչիները գյուղերի այն բնակիչներն են, որոնք հող չունեն և այն չեն վարձակալում։ Այսպես հարուստ մասը զբաղվում է առևտրով և վաշխառությամբ, իսկ ազգատները՝ քաղաքակրթյամբ և վարձու աշխատանքով։

<sup>15</sup> սՊարսկահայ տարեցույց, 1927, էջ 62։

գյուղացիների մեծամասնության հողակտորները ընդամենը մի քանի շրիք էին կազմում<sup>12</sup>, իսկ սեփականատեր-գյուղացի 444 ընտանիքներից 244-ը մշակում էին նաև արհեստներից լրացուցիչ վարձած հողակտորները։ Ըստարար միայն 200 հայ ընտանիք ունեին իրենց պաշտոնները լրացնելու շահ հող։

Վերջ բերված տվյալները ցույց են տալիս, որ 1927 թ. Իրանի երեք շրջաններում հողագույրի հայ գյուղական ընտանիքների թիվը կազմում էր մոտավորապես 87%, թիվ հող ունեցողներինը՝ 7 և ընտանիքների միայն 5%-ն էր ապահովված հողով։

Հողագույրի էր նաև կենտրոնական նահանգների այլ շրջանների, ինչպես նաև երկրի հյուսիսի գրեթե գյուղական ողջ հայ բնակչությունը։

Հաշորդ տասնամյակների հողագույրի, սակավաճող և հողատեր հայ գյուղացիների ընդհանուր փոխհարաբերությունը, ի տարբերություն ամբողջ երկրում տիրող փոխհարաբերության, փոփոխվել է. նվազել է հողագույրի և սակավաճող գյուղացիների թիվը։ 40-ական թվականներին այդ փոխհարաբերության փոփոխմանը ակրահայտարեն նպաստեց գյուղական, գլխավորապես հողագույրի և սակավաճող բնակչության, տեղափոխությունը դեպի քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները։ 1946 թ. այդ պրոցեսը գուցադրեց հայերի՝ Իրանից Հայկական ՍՍՀ հայրենազարմելուն։ Այդ ժամանակ Հայկական ՍՍՀ փոխադրվեց 15.000 գյուղացի։ Ավելի քան 10.000 գյուղացիներ, որոնք հայրենազարմության դադարեցման պատճառով չէին հասցրել մեկնել հայրենիք, բնակություն հաստատեցին Քեհրանում և, մասամբ, Քավրիզում։

Չնայած գյուղական աղքատ զանգվածների քաղաք տեղաշարժելուն, ինչպես նաև Սովետական Հայաստան ներդառնելուն, տեղի գյուղական հայ բնակչության մեջ ներկայումս էլ ենշող մեծամասնություն են կազմում հողագույրի և սակավաճող խավերը։ Սակայն հայ գյուղական բնակչության հողազրկության, հետևապես նաև դասակարգային շերտավորվածության աստիճանը ասարեր է և կախված է նրանց բնակչության շրջանի պայմաններից։ Այսպես, Փերիայի շրջանում, մի շարք պատմական ու տնտեսական հանգամանքների, մասնավորապես Իրանի շահերի վարած կենտրոնական շրջանների զարգացումը խթանող քաղաքականության շնորհիվ, մանր հողատերերի թիվը ավելի մեծ է, քան որևէ այլ հայ բնակավայրում։ Հայտնի է, որ Իրանում գյուղացիները զատորոշ-

<sup>12</sup> Երբք հավասար է 1081 քմ։

վում են արտադրամիջոցների նկատմամբ իրենց սեփականությունը, գլխավորապես ունեցած քանոց (քարշոջ) անասունների և գյուղատնտեսական գործիքների բանակով:

Վարձակալող գյուղացու ձեռքի տակ եղած բանոց անասունների թիվը կարեւոր նշանակություն ունի, քանի որ ի վերջո նաև դրանով է պայմանավորվում վարձվող հողակատրոնների մեծությունը, հետևապես, գյուղացիական ընտանիքի ապահովվածության աստիճանը:

Որպես կանոն, հայ գյուղացին աճելի քիչ թվով լծկան անասուններ ուներ, քան տեղական ալյազգի բնակիչները: Դրա պատճառն այն է, որ ի տարրերություն վերջինների, հայերը զուրկ են արտավալտրից ու ձարգազեաիններից:

Առավել դժգոհին պայմաններում է գտնվել երկրի հյուսիսային նահանգների հայ բնակչությունը: Բավական է ասել, որ նույնիսկ 50-ական թվականներին Ղարադաղի շրջանի հայ գյուղացիների մեծ մասը չուներ սեփական քարշոջ անասուններ: Ուրղություն գյուղում այդ ժամանակ 23 ընտանիքներ ունեին... միայն 22 եզ: Մտաւոր հաշվումներով գյուղացիները վարձում են մի շոֆթից<sup>17</sup> էլ պակաս հողակտրոններ, իսկ ունեւոր գյուղացիներից յուրաքանչյուրը. վարձում էր 2 շոֆթից աճելի հողակտրոն: Քանի որ հայ գյուղացիներից շատերը իրենց սեփական բանոց անասունները չունեին, երանք լին կարող քիչ թիւ շատ աճելի մեծ լափի հողակտրոններ վարձել:

Ազգատ խավերից հետո, ըստ թվաքանակի երկրորդ խումբն են կազմում հայ գյուղացիների միջակ շերտերը: Նրանք համեմատաբար աճելի շատ են Փերիայի շրջանում: Մրանք այն խորդեմայիք-գյուղացիներն են, որ ունեն միելն մեկ շոֆթ հող: Միջակների շարքն են դասվում և լրացուցիչ հողակտրոններ վարձող սակավահող գյուղացիները, ինչպես նաև զույգ եզ ունեցող և մի շոֆթ հող մշակող հողագուրկները:

Գյուղացիական միջակ տնտեսությունները Փազազ, Փամարա, Ղարադան և Թիզալն շրջաններում աճելի քիչ են, քան Փերիայի շրջանում:

Իրանի հայ գյուղական բնակչության ընդհանուր թվում ունեւոր գյուղացիները աննշան տեղոս են կազմում և ներկայումս հանդիպում են միայն Փերիայի շրջանում: Նրանք առավելապես խորդեմալիքների, վարձակալ-գյուղացիների և խոշնեշիների ունեւոր

<sup>17</sup> Շոֆթ (մի գույգ եզ)—մի որում մի գույգ եզով վարելի հողակտրոն չափ:

խաճն են ներկայացնում և զբաղված են վարկատվությամբ, անասուններ վարձու աշուղ, վաշխառությամբ և այլն<sup>18</sup>։

Հայ բնակչության ունեցվածքաւի<sup>19</sup> անհավասարության մասին են վկայում Գեորգի-ի շրջանին վերաբերող հետևյալ ավելիները։ Հարուստ աւազացիներ ունեն 50—60 ուխար, 1—2 ձի, երկու գոյգ ետ. ս—4 կով, 5—6 զբաստ, 8—10 հավ, 2—3 ջրիբ ալգի, 2—3 խարթա<sup>20</sup> վարկահող, 300—400 ծառ, 6—7 կով և այլ ունեցվածք ու եկամտի աղբյուրներ։ Իսկ աղքատ գյուղացիներ՝ սերկու կտոր փայտ ու մի քանի մերկ մանուկներ, որոնց կըր տարին կիսաքաղց էին պահումս<sup>21</sup>։

Հայ գյուղացիության մեջ ունևորների ու աղքատների հարաբերակցությունը հետևյալն է. աղքատներ՝ 55%, միշակներ՝ 35%, ունևոր գյուղացիներ՝ 10%։ Այս հարաբերակցությունը բնորոշ է Փերիայի շրջանին։ Մյուս շրջաններում այն փոխվում է՝ միջակների ու շուկերների հաշվին նվազում է ունևոր գյուղացիության տոկոսը։ Զուկերների թիվը հասկապես մեծ է Բուրվուռի և Ղարազաղ շրջանների հայկական գյուղերում։

Ինչպես նախկինում, զաղութում համեմատաբար խոշոր սեփականատերեր են հայկական եկեղեցիները, ինչպես նաև դպրոցները, բարեգործական ընկերությունները և այլն։ Զնականորեն հոգևոր ուսումնական հաստատությունների, որբանոցների, վանքերի և այլ հիմնարկների սեփականությունը համարվող հոգևոր նույնպես փաստորեն եկեղեցիներին են, և նրանց եկամուտներից տասնվեցյակն արանբաստիճան հոգևորականությունն է օգտվում։

Այդ հողակտորների մեծ մասը գտնվում է Փերիայի շրջանում և պատկանում է Ամենափրկիչ վանքին, նոր Զուղայի եկեղեցիներին, դպրոցներին, զանազան կաղմակերպությունների և հիմնարկների։ Այդ հողամասերի չափերի ու արժեքի մասին պատկերացում է տալիս ներքերյալ ցուցակը, որ կազմված է 1946 թ. հայերի այդ շրջանը հայրենադարձության անմիջապես հետո։

Ինչպես երևում է ցուցակից, նոր Զուղայի հայկական եկեղեցիներին, դպրոցներին ու մյուս հիմնարկներին են անցել հայրենադարձությունից հետո շրջանում մնացած 16 գյուղերից 9-ի հողարժեքները։ Դրանցից Բուլբուրան գյուղի հոգևոր ամբողջությամբ պատկանում են Ամենափրկիչ վանքին ու դպրոցներին։ Դրանց արժեքը կազմում է Փերիայի շրջանում նոր Զուղայի եկեղեցիներին և

<sup>18</sup> Խարթան հողային չափի միավոր է 1 խարթան հավասար է 0,06 հա.։

<sup>19</sup> Ավ. Աղաբաբյան, Իրանի Զեարեհայ գավառը, էջ 42։

Գյուղի անվանումը	Սակ է դասակարգում	Հարկ չափը	Նկատարաբ (կազմակերպիչ)	Աղյուսակը	Թույլատր
Քաղաք	Երբ ժողովրդի ուղղության գործընդերքին	5 0 ժող.	135 խորհուր	24,333	81,833
Չիգան	»	23 խորհուր	60	26,200	
Քաղաք	Վանքի հարև. սեմինարիային	1/6 ժող.	27	11,667	
Քաղաք	»	2/7	60	30,000	
Մանկիքարան	»	2 դանդ	2-1/8	1,200	
Կամուրան	»	46 խոր.	13	27,200	
Քաղաք	»	6 խոր.	6	2,000	62,267
»	»	2	6	2,000	
»	»	2	6	2,000	
Սվալոթն	Կամուր քաղաքական ընկ.	2	4	2,000	
Քաղաք	Ազգանյութների ֆակուլտետ	1	1/2	200	
Միլանիքան	»	1 ժողովրդ	2-1/2	1,200	
»	»	14 խոր.	2-1/2	1,210	
Մանկիքարան	»	23 խորհուր	25	29,000	
»	»	1/2	2	1,000	
»	»	2-1/2	4 և 1/2	2,250	
Կամուրան	»	1/2	2	1,100	
»	»	2/4	4	2,000	
»	»	2-1/2	2	1,100	
»	»	1/2	2	2,000	
»	»	2	6	2,000	
»	»	1/2	2	1,200	
				182,202	

« Հարկ. ՍՍՀ. ԳՊՊՏ, ֆ. 37, Իրան-Շարխան քննիչ աստիճանի կաթնագրի ներկայացում 7 սեպտեմբերի 1948 թ. պաշտոնական գրովյան համակարգի հարմար է կազմակերպել, որը համար է 100 թվերից ժամ (թվերից), այսինքն 200,8 (200) հա. Թվերից ի մանդ—2,229 հա

այլ հիմնարկներին պատկանող բոլոր հողատարածությունների արժեքի գրեթե մեկ երրորդը:

Մարագողի շրջանի երեք՝ Նորաշեն, Զիլակա և Հյուս գյուղերի հողերը գեղձե են հյուսիսային շրջանի բնակիչների նվիրատվություններով և Քաղսիդի բնական առաջնորդարանի անունով գրանցված են որպես վակֆային հողեր<sup>21</sup>:

Քաղաքարեակ հայերի սոցիալական կազմը Իրանում համապատասխանում է երկրում գոյություն ունեցող դասակարգային շերտավորմանը: Մակայն քաղաքային հայ բնակչության սոցիալ-տնտեսական գոյությունը ևս իր յուրահատուկ գծերն ունի: Դրանցից մեկն այն է, որ քաղաքային հայ բնակչության մեջ խոշոր ձեռնարկատերերը աննշան տոկոս են կազմում: Տեղական գործարար շրջաններում հայերը հազվագեղ են միջին ձեռնարկատերերի գիւղից ու՛ղեի վեր բարձրանում: Այդ երևույթի պատճառը ամենից առաջ երկրում առհասարակ արդյունաբերական արտադրության թույլ զարգացած լինելն է, ինչպես նաև լայն գործարար ակտիվության բացակայությունը: Մակայն այս բացատրությունը հետո է լիակատար լինելուց:

Հայերի մեջ խոշոր ձեռնարկատերեր չլինելու պատճառներից մեկն էլ տիրապետող ազգի ներկայացուցիչների համեմատությամբ նրանց իրավունքների սահմանափակումն է: Դրանցից զլիավորը պետական ապարատի ու կառավարող վերնախավի հետ բավարար կապեր չունենալն է: Նման պայմաններում հայ ձեռնարկատերերը չեն կարող օգտվել այն արտոնություններից ու իրավունքներից, որ ունեն իրանական ազգային բուրժուազիայի ներկայացուցիչները և, հետևաբար, ի վիճակի չեն քիչ թե շատ կայուն գիրք գրավել երկրի տնտեսության մեջ:

Չի կարելի ուշադրություն շարձենել նաև Իրանի քաղաքային հայ բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի մի այլ առանձնահատկության վրա: Բանն այն է, որ քաղաքարեակ իրանահայերի մեջ մանր ձեռնարկատերերը մեծ տոկոս են կազմում: Եթարսկահայ աարեցույցիս ավյալների համեմայն քաղաքարեակ աշխատող հայերի մեջ, արևակ, մինչև 30-ական թվականները, մանր ձեռնարկատերերը կազմել են 15%: Քաղաքների հայ բնակչության մանր ձեռնարկատերերի տոկոսը մոտավորապես այդպիսին է նաև ներկայումս:

<sup>21</sup> «Ամենուկ օտարները», 1958, էջ 431.



Ուշագրավ է այն հանգամանքը, որ քաղաքներում, հատկապես Քեհերանում, մանր ձեռնարկատերերի այդպիսի բարձր տոկոսը պատճառ է դարձել, որպեսզի արտասահմանյան մի քանի հեղինակներ իրենց աշխատություններում խեղաթյուրված պատկերացում ասն հայ բնակչության սոցիալական կազմի մասին: Այսպես, էլիզի Սաթթուր, Նշիուզ Քե իր քաղաքներում հայերը մեծ մասամբ զբաղված են առևտրա-ֆինանսական գործունեությամբ, ունհիմն կերպով Իրանի հասարակության մեջ հայերի դրույթունը նմանեցնում է հրեաների վիճակին՝ Ույրոպայում<sup>22</sup>:

Այդպիսի համեմատությունը վերազանումներով անգամ, քննադատության չի դիմանում: Մանր ձեռնարկատերերը երբեք չեն բնորոշել և չեն բնորոշում զաղութի սոցիալական դեմքը: Մենք այդին Նշի ենք, որ Իրանում դարեր շարունակ զաղութի բնակչության մեծամասնությունը կազմել են գյուղացիությունն ու արհեստավորները: 20-ական թվականների սկզբին զաղութի սոցիալական այս բաժանումը հիմնականում համընկնում էր ամբողջ երկրի սոցիալական բաժանմանը:

Ընդհուպ մինչև 1946 թ. երկրի հայ բնակչության մեծամասնությունը առաջվա պես կազմում էին գյուղացիներն ու արհեստավորները: Այդ ընդունում է անգամ ամերիկյան բուրժուական պատմաբան Վիլյամ Հյուզը: Հետ նրա տվյալների, 40-ական թվականներին Իրանի հայ բնակչության մեծ մասը ընդգրկված էր գյուղատնտեսության մեջ<sup>23</sup>, Ամերիկյան մի ուրիշ հետազոտող՝ Լեոնարդ Քինգբերը նշում է, որ ազգային բոլոր փոքրամասնություններից միայն հայերն են, որ զգալի թիվ են կազմում գյուղացիության և գյուղական բնակչության մեջ<sup>24</sup>:

\* \* \*

Իրանում հայերի համար զբաղմունք ընտրելու հնարավորությունները համեմատաբար սահմանափակ են: Այս առումով առավել զժվարին կացության մեջ էր հայ բնակչության կրթված մասը: Գլխավորապես նրա վրա են տարածվում պետական կառավարման հիմնարկներում, ղեկավար ապարատում հայերի մասնակցության իրավունքի սահմանափակումները: Իրանահայերի սոցիալ-տնտեսական դրության այս յուրահատկությունը մատնացույց է անում

<sup>22</sup> L. P. Etwell-Sutton, *Modern Iran*, London, 1941, p. 15.

<sup>23</sup> William S. Haas, *Iran*, New-York, 1945, p. 108—109.

<sup>24</sup> Binder Leonard, *Iran; political development in changing society* New-Jersey, p. 162.

Նույնիսկ Վիլյամ Հյուզը, նրա խոսքերով ասած, մինչև XIX դ. իրանահայերը գտնվում էին սոցիալական ստորին դրուժյան (social inferiority) մարզկանց վիճակում: Նա նշում է նաև, որ հայերի դիրքը ամրացավ միայն XIX դ., երկրում օտարերկրյա տիրությունների ազդեցության շնորհիվ: Հայերից ոմանք այդ շրջանում նույնիսկ բարձր պաշտոնների հասան<sup>15</sup>:

XIX դ. հայազգի առանձին անհատներ, իրոք, բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական և զինված մարմիններում: Հայերից ոմանք այդպիսի պաշտոններ էին զբաղում ընդհուպ մինչև մեր դարի 30-ական թվականները: Սակայն արդեն 20—30-ական թվականներից իր դիրքերն ամրապնդած իրանական ազգային բուրժուազիան և կալվածատերերը սկսեցին ավելի սահմանափակող քաղաքականություն վարել հայերի և ազգային այլ փոքրամասնությունների նկատմամբ: Իրանական իշխանությունների այդ քաղաքականության արդյունքները հասկապես զգալիորեն անդրադարձան հայ բնակչության սոցիալ-տնտեսական դրուժյան վրա: Էլզին Սոթթանը այս կապակցությամբ հավաստում է, որ «Հայերը բուրժուազիայի շատ տուժեցին... Երանց մերժում են պետական ծառայության ընդունել, և նրանք դժվարանում են որևէ տեղ աշխատանք գտնել<sup>16</sup>»: Վիլյամ Հյուզը, իր հերթին նշում է, թե «Հայերը... ամենից շատ վնաս կրեցին այդ փոփոխությունների պատճառով»: Նա այդ երևույթը բացատրում է իրանական ազգային կազմերի աճով և ազգային հակասությունների սրումով<sup>17</sup>:

Ստեղծված հանգամանքներում հայ քաղաքային բնակչության կրթված խավի ներկայացուցիչները ձգտում են ձեռք բերել այնպիսի մասնագիտություններ, որոնք հնարավորություն կտային հարմարվել երկրում ստեղծված պայմաններին և ազահոգել ապրուստի մեխանիզմում:

Գրանից ելնելով, տեղի հայ մտավորականությունը սովորաբար ձեռք է բերում այսպես կոչված քաղաք մասնագիտություններ—բժիշկ, փաստաբան, ուսուցիչ, ինժեներ և այլն:

Իրանում բազմակողմանի վիճակագրություն չի կատարվում մինչև պաշտոնական տվյալներ չունենք զտրուքի մասնագիտականության թվի մասին: Այս բացը ինչ-որ լաֆով լրացնում են տեղի հայ պարբերական մամուլից քաղված տվյալները: Այսպես, 30-ական թվականներին Քավրդի 1533 զբաղված հայերից (տղա-

<sup>15</sup> William S. Haas, p. 108—109.

<sup>16</sup> L. P. Elwell-Sutton, Modern Iran, p. 146.

<sup>17</sup> William S. Haas, Iran, p. 171—172.

ժարդ և կին) 70-ը ուսուցիչներ էին, 27-ը՝ բժիշկներ, 48-ը՝ իրավաբան, հրաժեշտ և այլ սազատ մասնագիտությունների անբնականացուցիչներ: Միասին նրանք կազմում էին աշխատող հայերի ընդհանուր թվի 10%-ը: Հայ բնակչության Քեհրանում կենտրոնանալու զուգընթաց բազա մասնագիտությունների անբնականացուցիչների թիվն այնտեղ համապատասխանաբար աճում էր: Անբնականա մայրաքաղաքում ազատ մասնագիտությունների տեղ հայ մտավորականների թիվը մտավոր ավյալներով կազմում է ոչ ավելի քան 10%:

Չնայած գոյություն ունեցող սահմանափակումներին, իրանահայերի մեջ, այնուամենայնիվ, կան որոշ թվով ժառանգներ: 20—30-ական թվականների համեմատությամբ ժառանգ հայերի թիվը անբնականա զգալիորեն նվազել է: Մական զանկառելի է զբոսավարացես իրանական գերատեսչություններում, բանկերում և այլն: Գեոևս 30-ական թվականներին և, հատկապես, 11 համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո հայերի մի մասը աշխատանքի անցավ արասասահմանյան ֆիրմաների ու բնկերությունների տեղական մասնաշուկերում<sup>28</sup>: Այ մեծ թվով իրանահայեր, գլխավորապես Քեհրանում, ժառանգում են տեղի սովետական հիմնարկներում՝ ռուս-իրանական բանկում, սովետական սկարմիր խալիչ ընկերության հիվանդանոցում և այլուր: Իրանական գերատեսչություններում հայ ժառանգները հիմնականում ցածր պաշտոններ են զբաղեցնում: Միջին պաշտոնների են միայն նավթային, ֆինանսական և այլ կարգի հիմնարկություններում աշխատող մի քանի հայ մասնագետներ:

Փաղաքաբնակ զբաղված հայերի ընդհանուր թվում ժառանգները անբնականա 10%-ից պակաս են: 20—30-ական թվականներին նրանք Քավրիզում կազմում էին 14,5, Արաքում՝ 14,22%, և այլն: Ինչ վերաբերում է Իրանի հայ բանվորների թվին, ապա նրանք զաղութի բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ նշանակալից չափով ավելի մեծ տոկոս են կազմում, քան իրանցի բանվորները՝ երկրի արմատական բնակչության ընդհանուր թվի համեմատությամբ: 1956—1957 թթ. Իրանի բանվոր դասակարգը երկրում զբաղվածների թվի համեմատությամբ կազմում էր 23%: Այնինչ 30-ական թվականներին Քավրիզում բանվորները կազմում էին զբաղված հայերի 28%-ը: Անբնականա, եթե նկատի առնենք,

<sup>28</sup> Binder, Leonard, Iran: Political development in changing society, p. 163.

որ գաղութի քաղաքարեակ հայերի թիվը երկու անգամ գերազան-  
ցում է երկրի քաղաքային բնակչության տոկոսը, ապա քաղաքնե-  
րում և արդյունաբերական կենտրոններում հայ բանվորների թիվը  
առնվազն կրկնապատկվել է: Հայ բանվորների խավը անել է զըլ-  
խավորապես ի հաշիվ հողազուրկ կամ սակավահող գյուղացիների:  
Ընդամեն, պետք է նկատի ունենալ, որ քաղաք տեղագրությամբ,  
նախկինում գյուղատնտեսության մեջ աշխատող սակավահող հայ  
գյուղացիների (առանձնապես աղքատ խոշնջիներին) մի մասը  
ըստ լուծյան միայն փոխեց իր բանվորական մասնագիտությունը:

Հայ բանվորության շրջանում վերջին տասնամյակներում  
ավելացել է գերազանցապես արդյունաբերական և շինարարական  
բանվորների թիվը: Այս տեսակետից հայ բանվորների կազմը մի  
քանի գծերով տարբերվում է իրանական բանվոր գասակարգի  
կազմից: Այսպես, հայերը ավելի շատ զբաղված են մշակող ար-  
դյունաբերության ու շինարարության մեջ, քան գյուղատնտեսու-  
թյան:

Հայերի թիվը նշանակալից է նաև նավթարդյունաբերության  
բնագավառում և ֆարրիկա-գործարանային պրոլետարիատի կազ-  
մում: Այսպես, Եկիթա թերթի ավյալներով Արագանի նավթարդյու-  
նաբերության մեջ վերջին տարիներս զբաղված էին մինչև 1.200  
հայ բանվորներ: Իսկ ըստ պաշտոնական ավյալների, 1956/1957  
թթ. Արագանի նավթազտիչ գործարանում աշխատում էր ընդամե-  
նը 24,2 հազար մարդ:

Արդյունաբերության մեջ աշխատող հայերը ձեռք են բերել  
իրենց համար մի քանի նոր մասնագիտություններ: Բնականաբար,  
այստեղ որոշակի ազդեցություն ունի նաև Իրանի արդյունաբերու-  
թյան զարգացման բնույթը, նոր հյուղերի երևան գալը: Եթե 20—  
30-ական թվականներին հայ բանվորները հիմնականում տիրա-  
պետում էին կաշնգործի, ժխախոտազործի, օճառագործի, պան-  
րագործի, երշիկազործի, զորգագործի և այլ մասնագիտություննե-  
րի, ապա վերջին տասնամյակներում նրանց միջավայրերում ար-  
գան երևան են եկել ոչ քիչ թվով մետաղազորմենը, մեխանիկներ,  
խառատներ, փականազորմենը, էլեկտրիկներ, մետամոզներ և  
այլն:

Իրանում հայերի կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները  
անհրաժեշտաբար թելադրում են ձեռք բերել բանվորական այն-  
պիսի մասնագիտություններ, որոնք կրավարարեն տեխնիկայի  
զարգացման ներկայիս պահանջները, կխթանեն նրանց որակա-

վորման բարձրացումը և այլն: Այսպես, Իրանի նավթարդյունաբերության մեջ Հայ նավթագործներից շատերը ախրապետում են զանազան մասնագիտությունների, վարպետներ են և կամ մտնում են տեխնիկական միջին անձնակազմի մեջ:

Նույնիստանում, և հատկապես, Աբաղանում արտասահմանյան մոնոպոլիաների վարած քաղաքականության հետևանքով Հայ բանվորները հաճախ ենթարկվում էին մասսայական գործազրկության: Անզու-իրանական նավթային ընկերությունը, որին հետագայում փոխարինեց Միչազգային նավթային կոնսորցիումը, հետևողականորեն անց էին կացնում արտադրության ավտոմատացման և բանվորներին աշխատանքից ազատելու կուրս: Աշխատանքից ազատում էին գլխավորապես որակավորում չունեցող բանվորներին: 50-ական թվականներին ցրեցին այն նավթագործ բանվորներին (այդ թվում և Հայերին), որոնք մասնակցել էին նավթարդյունաբերության ազգայնացման համար մղված շարժմանը: Այդ բուլոք արձակումների ժամանակ Հայ նավթագործների մեջ աճեց տրանվորական արխտոկրատիայի խավը:

Արդյունաբերական բանվորներից հետո ըստ թվի երկրորդ խումբը զաղութում կազմում են շինարար բանվորները: Նրանցից շատերը նույնպես հաղթահարել են հասարակ բանվորից մինչև բարձր որակավորում ստացած բանվորի անցած ճանապարհը: Հայ բանվորները որակավորման բարձրացմանը նպաստում է նաև աշխատանքը արտասահմանյան շինարարական ընկերություններում, որտեղ նրանք յուրացնում են արտադրության ժամանակակից մեթոդներ, հաղորդակցվում նոր տեխնիկային և այլն:

Եինարայական բանվորների խմբից հետո մեծ թիվ են կազմում արանսպորտում, հասկապես՝ ավտոտրանսպորտում, զբաղված Հայերը: Երկրում ավտոտրանսպորտի զարգացման գծուև առաջին տարիներին տեղացի Հայերից շատերը ձեռք բերեցին վարորդի, մեխանիկի, ավտովերանորոգողի և այլ մասնագիտություններ: Այսպես, 30-ական թվականներին թավրիզահայ 430 բանվորներից (տղամարդ և կին) 170-ը ունեին ավտոտրանսպորտային մասնագիտություն: Ներկայումս էլ զաղութում մեծաթիվ են վարորդները, մեխանիկները, ավտովերանորոգողները և այլն: Վարորդների ճնշող մեծամասնությունը գարածատեր-ձեռնարկատերերից մեքենաներ է վարձում:

Հայերն աշխատում են նաև որպես գյուղատնտեսության բնագավառի բանվորներ: Հայ գյուղական բնակչության վարձով աշ-

խատող Հիմնական մասը խոշնեշինների ազգատ խավերն են: Երանք որպես ժամանակավոր կամ սեզոնային բանվորներ գյուղերում վարձվում են տարբեր տեսակի աշխատանքների համար:

Հայերի մեշ նշանակալից թիվ են կազմում նաև արհեստավոր բանվորները, որոնց Հիմնական մասը վարձով աշխատում է կարի, մորթու և կոշիկի արհեստանոցներում, սոկերշահան խանութներում, փոխում, հրուշակատներում և այլն: Կանայք զբաղված են տնայնագործությամբ, քաղաքներում՝ ձեռագործով, իսկ գյուղերում՝ գորգագործությամբ:

Սպասարկման ու անևորի ասպարեզում զբաղված են համեմատաբար ոչ մեծ թվով հայ բանվորներ (քիմիաքրման արհեստանոցներում աշխատողներ, խանութների բնօնակիրներ, զանազան մանր գործեր կատարող բանվորներ և այլն):

Ոչ մեծ թվով հայ բանվորներ են զբաղված նաև լեռնարդյուհարերության մեշ (կթի հաշվի շանենք նավթահանքերը): Այս բնագավառում երանց սակավ զբաղվածություն պատճառն աշն է, որ հանքերի ու հանքահորերի մոտակայքում ընկած շրշաններում գրեթե թուրքովին հայեր չեն բնակվում:

Իրանահայ գյուղացիների Հիմնական զբաղմունքը դարեր շարունակ եղել են հողագործությունն ու անասնապահությունը: Նայած բնակլիմայական պայմաններին, երանք զբաղված են եղել այգեգործությամբ, խաղողագործությամբ, բանշարա-քոստանային կուլտուրաների մշակությամբ, մեղվաբուծությամբ և այլն: Բուրք աշս էյուղերում Իրանի հայ գյուղացիությունը զբաղված է նաև ներկայումս:

Գաղութում անասնապահությամբ են զբաղվում Հիմնականում Փերիա, Քաղազ, Քամարա և Բուրվաոի շրշանների, ավելի պակաս՝ Հյուսիսային նահանգների գյուղացիները: Սակայն հայերը ընդհանրապես ավելի քիչ են զբաղվում անասնապահությամբ, քան տեղի գյուղացիները: Մելպես արգեն նշեցինք, զբա պատճառք արտատեղիներ և մեծաշին արտավայրեր շունենալն է:

Գաղութի թուրք շրշաններում հողը մշակվում է պարզունակ ձևով: Գյուղատնտեսական Հիմնական գործիքները փայտե արորն ու փոցխն են: Բերքահավաքը կատարվում է ձեռքով, մանգաղի և գերանզու օգնությամբ: Կալատեղերում մասամբ օգտագործվում են եղները, զբաստներն ու շորիները, բայց բերքի կալսման աշխատանքի նշանակալից մասը, մասնավորապես ցորենի և այլ

միջոցները մաքրումը և շորացումը, նույնպես ձեռքով է կատարվում: Նարենը մազում են սովորական մազի օգնությամբ:

Գյուղատնտեսական աշխատանքներում զբաղված են տնավիշայես սղամարդիկ: Գյուղացիները ունի աշխատանքի բաժանում ըստ տարիքային առանձնահատկությունների: Կանայք հիմնականում զբաղված են տնային տնտեսության մեջ: Նրանց մասնակցությունը գաշտային աշխատանքներին սահմանափակվում է միայն կալասեղիներում ցորեն մաքրելով:

Կանանց հիմնական զբաղմունքը գորգագործությունն է, որը տարածված է գրեթե բոլոր հայ գյուղերում: Սակայն այն հատկապես զարգացած է Քաղազ, Քամարա, Գյուփլա և Բուրվազի, ինչպես նաև Փերիա և Չհարմհայ շրջաններում: Արդյունաբերվում են հիմնականում ընտիր՝ սիսալիս կոչված գորգեր, որոնց պատվիրատուները վաճառականներն ու գործարանատերերն են: Էժանագին գորգերը (սկարպետներ), տարրեր ժամկոցները, փախթեն ու այլ իրերը գործածվում են տնային կարիքների համար:

Հայ կանանց ու աղջիկների հյուսած գորգերն ու գորգագործական այլ իրերը մեծ պահանջարկ ունեն և բարձր են գնահատվում տեղական շուկայում: Գրանք Իրանում կոչում են Եմրմաներաֆա, որ նշանակում է Ելալիական գործվածք<sup>30</sup>:

Հայկական գյուղերում համեմատաբար քիչ են հողի ու գյուղատնտեսական արտադրության հետ չկապված այլ զբաղմունքները: Հյուսիսային շրջաններում այդպիսի զբաղմունքներ գրեթե չկան: Կան աննշան թվով վարպետ-արհեստագործներ, որոնք, որպես կանոն, բավարարում են իրենց գյուղերի պահանջները: Մյուս շրջաններում հայ բնակչության մեջ կան փոքր թվով առևտրականներ, որոնց գործունեությունը հիմնականում սահմանափակվում է այս կամ այն գյուղի շրջանակներով:

Հայարնակ գյուղերում արհեստավորներն ու վարպետները բաժանվում են մի քանի մասնագիտությունների, որոնցից զխավորը գարրինները, հյուսները, քարտաշները, չրազացպանները, կոշիկակարներն ու վարսավորներն են:

\* \* \*

Հայ ձեռնարկատերերը զգալի տեղ էին զբաղում Իրանի տնտեսության զարգացման մեջ:

<sup>30</sup> «Պարսկահայ տարեցույց», 1827, էջ 103, Ավ. Նզդեսյան, Իրանի Զեյթուն հայ գավառը, էջ 42:

Նպաստակ շունենալով ցույց տալ երկրի անսահման կապիտալիստական զարգացման գործում հայերի ժառանգությունների և անտիճանը (քանի որ այդ հարցը հատուկ ուսումնասիրության անարկա է), համառոտակի նկարագրենք Իրանի հայ ձեռնարկատերերի գործունեությունը 20—30-ական և, ըստ ունեցած նյութերի, հետագա տարիներին:

Իրանի հայ ձեռնարկատերերից շատերը պատահորժում էին ուսուսական շուկայի հետ ունեցած վաղեմի կապերի միջոցով կուտակած իրենց փորձն ու գիտելիքները: Սազումով ուսաստանցի կամ ժամանակին այնտեղ աշխատած անմիջ սկզբում կազմեցին ձեռնարկատերերի այդ խմբի կորիզը: Պատահական չէ, որ հայերին պատկանող գործարանների ու ֆաբրիկաների մեծ մասը առաջ նկավ Քավրիզում և Իրանի հյուսիսի այլ կենտրոններում:

20-ական թվականներին շրտ բաժնետերեր (հայեր և ռուսներ) Քավրիզում հիմնեցին բաժնետիրական «Պլեյա» ընկերությունը, որը գլուխ բերեց մեաաղյա մահճակալների ու սմանեղենի արտադրությունը: Հետագայում արդյունաբերության այդպիսի ճյուղ ստեղծվեց նաև Քեհրանում: Ընկերության անդամները միաժամանակ ծրարանությունների արտադրության արհեստանոց բացեցին: Արտադրության մեջ զբաղված էր 18 բանվոր: «Պլեյան» երկու մեծ խանութ ուներ. մեկը՝ Քեհրանում, մյուսը՝ Քավրիզում:

Արգի կապիտալիստական ձեռնարկություններին առավել նման էին 1925 թ. Քավրիզում ստեղծված ժխախտաի ֆաբրիկան և օճառի գործարանը, որոնց հիմնադիրներն էին «Միք» ընկերության անդամ սալմաստցի Մահգելիզյան եղբայրները. որպես հումք օգտագործվում էր Տրայիզոնից (Քուրքիա) ներմուծվող, ինչպես նաև տեղական ժխախտաու: Վերջինս աճեցվում էր մեզայն շրտների Սհաթլու գյուղում Մահգելիզյան եղբայրների ունեցած հողատարածություններում: Օճառի պատրաստման համար անհրաժեշտ պարֆյումերային յուղը բերվում էր Գերմանիայից: Ընկերության ֆաբրիկայում այն ժամանակ կար 20 բանվոր: Մխախտաիկ արտադրանքն ու սեուղը Մահգելիզյան եղբայրները իրացնում էին Քավրիզում, Քեհրանում և այլուր:

1928 թ. մտաավորապես նույն մասշտաբի մի ձեռնարկություն էին հիմնել Քավրիզում «Հիլալ» ընկերության անդամ հայերը: Նրանք բացել էին աղիքների մշակման գործարան, ուր զբաղված էին 15—20 բանվոր: Գործարանի արտադրանքը արտահանվում էր արտասահման: Այդ ժամանակ, ամեն տարի միայն Ամերիկա



էր արտահանվում 100—150 հազար ազիթ, որն Իրանի արտահանութեան արժանեղանի արդրանքներից մեկն էր:

20-ական թվականների վերջին Քավրիզում իրենց գործունեությունը ծավալեցին նաև Սահակյան եղբայրները: Նրանք հիմնեցին մի գործարան, որը 1930 թ. բաժանվեց չորս արտադրության՝ ալյուրաց, անասնաստուգային, միթճանք և չոր մրգերի պատրաստման բաժանմունք: 1935 թ. Սահակյան եղբայրները բացեցին նաև գարեջրի գործարան՝ սրական 3000 շիշ գարեջրի կարողությամբ:

30-ական թվականների սկզբին մի խումբ հայեր Քավրիզում հիմնեցին «Օմիդ» կաշեգործարանը, որտեղ ընդգրկված էր 35 բանվոր: Գործարանը ամսական մշակում էր 1200 կոճի և գոմեշի և 6 հազար ուլխարի կաշի: 1936 թ. այնտեղ արդեն աշխատում էր 70 բանվոր, իսկ նրա արտադրողական կարողությունը կազմում էր 40—50 հազար ալծի և ուլխարի, ինչպես նաև 40 հազար կոճի ու եզան կաշի:

1936 թ. տեղի հայ զաճառականներն ու մասնագետները կազմակերպեցին «Մաքսի» ընկերությունը, որը 1936 թ. հունվարին բացեց ալյուրաց գործարան:

Երկար տարիներ Իրանի հյուսիսում մի քանի հայ ընտանիքներ զբաղված էին չոր մրգերի պատրաստությամբ: Զոր մրգեր պատրաստելու համար նրանք օգտագործում էին Մարաղայի չրչանում անեցվող պտուղների ու խաղողի լավագույն տեսակները: Զոր մրգերի պատրաստությամբ և արտահանությամբ զբաղված էին Աֆթանդիլյանների, Բուլաղյանների, Հարությունյանների, Բաղդասարյանների, Պատմազրյանների ու Արզումանյանների տնտեսական տները: Ներկայումս էլ Քավրիզում և Մարաղայում հայերի ձեռքում է գտնվում չոր մրգերի արտադրության ու զաճառքի մեծ մասը:

Գեոևս XIX դ. Ռուսաստանից եկած հայերը բամբակագործ գործարաններ հիմնեցին Խորասանի նահանգի Մարգեվար քաղաքում: Այդ գործարանները գոյություն ունեին մինչև 1933 թ. և փակվեցին այն բանից հետո, երբ բամբակի առևտուրը պետական մենաշնորհ դարձավ<sup>10</sup>:

Հայերը մի շարք ձեռնարկություններ հիմնեցին նաև Արաքում: Այստեղ կար գորգագործական մի քանի ֆաբրիկա, որոնք պատկանում էին Կարակոզյանների, Քեյֆեյանների, Քավթաշյան-

<sup>10</sup> «Ամենուս տարեգրքը», 1958, էջ 387:

ների և հայ առևտրական ալլ տներին: Այդ ֆարքիկաներում վարձու աշխատանքից բացի կիրառվում էր նաև քաղաքային և գյուղական տնայնագործ-գորգագործների աշխատանքը: Այսպես, Գյափլա, Փաղազ, Փամաթա շրջանների, ինչպես նաև Արաքի գրեթե բոլոր հայ ընտանիքները իրենց գործած գորգերը հանձնում էին առևտրական ալլ տներին: Համաշխարհային տնտեսական հզամաժամի տարիներին Արաքի գորգագործական ֆարքիկաները փակվեցին, բայց շնայած դրան, տնայնագործական գորգագործական արհեստը շարունակում էր իր գոյութունը:

II Համաշխարհային պատերազմի տարիներին Ղազվիների մասնագործական ֆարքիկայի տերն էր արդյունաբերող Քյոռուզլույանը:

Քեհրանի՝ երկրի տնտեսական կենտրոն դառնալուց հետո Քազրիզի և մյուս քաղաքների դերը նշանակալից լափով նվազեց: Գնես 20-ական թվականների վերջին և 30-ական թվականներին հայ ձեռնարկատերերից շատերը սկսեցին տեղափոխվել Քեհրան: Տեղի հայ ձեռնարկատերերից տեղական մասշտաբով առավել խոշորն էր Ռոման Իսահը (Իսայան), որը 30-ական թվականներին հիմնեց առևտրական-շինարարական ընկերություններ:

Իսահը Քեհրանում 1933 թ. ստեղծված իրանական առաջին զարնչարագործարանի հիմնադիրներից մեկն էր: Միաժամանակ մինչև 60-ական թթ. նա 4 հիմնարկների և իրանական 22 ընկերությունների բաժնետեր էր և դրանցից մեծ մասի գերեկատր-կարգադրիչ:

Գաղութի մասշտաբով խոշոր ձեռնարկատերեր էին արզնե հիշատակված Սահակյանների, ինչպես նաև Սարգսյանների, Քովմասյանների, Գավթիսյանյանների և Արբահամյանների ընտանիքները: Միջին մասշտաբի ձեռնարկատերեր էին Ֆրանզյանների, Միքայելյանների և Արզումանյանների ընտանիքները:

Սահակյանների, Սարգսյանների, Քովմասյանների, Գավթիսյանյանների և Արբահամյանների ընտանիքները իրենց կապիտալները ներդրել էին մի քանի արտադրատեղիներում, որոնցից առավել մեծը գինի-օգի արդյունաբերող հիմնարկներն են, զարիչրի, լիմոնադի գործարանները և այլն: Ֆրանզյանների ընտանիքին է պատկանում Քեհրանի կաշիգործարաններից մեկը, իսկ Միքայելյաններին ու Արզումանյաններին՝ մասմթերքների ֆարքիկաները:

Քեհրանում մասնագործական ֆարքիկա է հիմնել Ղազվիներից այդտեղ փոխադրված Քյոռուզլույանը:

Հայ սեփականատերերինն էն «Մարմար», «Նազերի» հյուրանոցները, «էլիֆնի» կինոթատրոնը, «Շիրաք», «Նազերի» սրճարանները: Մի քանի հայեր տարբեր բնույթի միջին ու մանր կարգի խանութների տեր են: Իրանցից մի քանիքը ազնվի մեծ խանութների, սեստորանների և սրճարանների բաժնետերեր են: Քեհրանցի հայերը ունեն նաև ազատվերանորոգման արհեստանոցներ, գարժանի, կենցաղ-սպասարկման արհեստանոցներ և այլն:

Հայ ենոնարկատերերի մեջ, ինչպես և ամբողջ բուրժուազիայի շրջանում, վերջին սասնամյակներում որակական փոփոխություններ են կատարվել: Ծթե 20—30-ական թվականներին մասնավոր ձեռնարկատերերի շրջանում հիմնականում իշխում էին առևտրական տները, սպա ներկայումս առևտրական բուրժուազիայի տեղը դրավել է արդյունաբերական բուրժուազիան:

Հայերի աշխատավորական խավերը իրանում գտնվում են ծանր վիճակում: Այս իմաստով նրանք կիսում են նրկրի աշխատավոր բնակչության ճակատագիրը:

Իրանում կենսական միևնույնը 1936/37 թթ. պաշտոնապես որոշվեց 198,8 դրամ: 1945/46 թթ. այն հավասար էր 1753, 1952/54 թթ. 1964, 1959/60 թթ.՝ 2938, 1960/61 թթ.՝ 3350 դրամ<sup>21</sup>: Բազմակողմանի վիճակագրական տվյալների բացակայության պատճառով զժվար է որոշել իրանցի բանվորների՝ այդ թվում և տեղի հայերի աշխատավարձի չափը՝ նայած նրանց որակավորմանը և արդյունաբերության այս կամ այն բնագավառում աշխատելու հանգամանքին: Միայն արդյունաբերության հիմնական ճյուղերի բանվորների ամսական միջին զրույթների մասին կզած տվյալներն են հնարավորություն տալիս որոշ պատկերացում կազմելու իրանի բանվորների աշխատավարձի չափի մասին:

Ըստ այդ տվյալների, օրինակ, 1959/60—1960/61 թթ. արդյունահանող և մշակող արդյունաբերության բանվորների ամսական միջին աշխատավարձը (նայած բնագավառին) տատանվել է 1216—3312 և 960—2250 դրամից մինչև 1344—3817 և 1200—2250 դրամի սահմաններում: Քանի որ հայերը առավելապես ընդգրկված են մշակող արդյունաբերության մեջ, ապա նրանց աշխատավարձային զրույթները բարձր են իրանցի այն բանվորների զրույթներից, որոնք աշխատում են արդյունահանող արտադրու-

<sup>21</sup> Մ. Մ. Եսմ, Рабочий класс Ирана, стр. 61.

թյան մեջ, Այս կապակցությունը հայ բանվորների աշխատավարձի շափր սրուշելիս կտրելի է հիմք ընդունելի մշակող արդյունաբերության մեջ աշխատող բանվորների միջին աշխատավարձը, այսինքն՝ 1959—1961 թթ. վիճակով 2264—2580 ռիալ:

Չնայած սրան, թվերի պարզ համադրումն անգամ ջույց է տալիս, որ Իրանի հայ բանվորների մեծամասնությունը չի ապահովում իր ապրուստի նվազաշափր:

Հայ բանվորների, ինչպես նաև քաղաքային հայ բնակչության շունևոր խավերի վիճակը ավելի է ծանրանում նրանց աշխատանքի, կյանքի և բնակարանային ծանր պայմանների հետևանքով: Ապահովագրության սխտեմը, ութժամյա բանվորական օրն ու աշխատանքային այլ օրենքներ Իրանում սկսել են իրագործվել միայն 40—50-ական թվականներից:

20—30-ական թվականներին, իսկ մի շարք հիմնարկներում նաև պատերազմի տարիներին, աշխատանքային օրը 12—14 ժամ էր տևում: Նույնիսկ ներկայումս արդյունաբերության մի բանի էլուզերում (շինարարության, տեքստիլ, քիմիական, պարֆյումերային) բանվորները աշխատում են 9 և ավելի ժամ: Տասներկու ժամ են աշխատում տեսչազործական արհեստանոցների բանվորները: 12-ժամյա աշխատանքային օրը ընդամուլ վիճակ է համարվում նաև տաքսիների վարորդների համար<sup>22</sup>:

Մի շարք հիմնարկներում բանվորներին զրկում են հանգրստյան օրերից և արձակուրդներից: Արդյունաբերության շատ էլուզերի բանվորների վրա դեռևս չի տարածվում սոցիալական ապահովագրության օրենքը:

Հայ բանվորների մի մասը տնտեսական ծանր կացության պատճառով չի կարող սեփական բնակարան ձեռք բերել և ապրում է վարձու սենյակներում:

Հայ գյուղացիների հկամուտների մասին պատկերացում են տալիս 30-ական թվականների Չհարմհալի շրջանի վերաբերյալ Վևիքթ Թերթի հրատարակած ավյալները: Հողի անբերրիության պատճառով գյուղացին հազիվ էր կարողանում իր ցանածից 4—5 անգամ ավելի հավաքել: Բերքի առատ տարիներին նա ցանածից 6—7 անգամ ավելի էր հավաքում: Մեկ խաբբայի վրա գյուղացին տարեկան (աշնանն ու գարնանը) պիտի ցաներ 200—300 շահա-

<sup>22</sup> А. Н. Шажида, Рабочее и профсоюзное движение в Иране после второй мировой войны, 1946—1953 гг., Баку, 1965, стр. 32.

կան լիտր<sup>23</sup> սերմացու, հետևաբար հունձի ժամանակ լավագույն դեպքում նա մեկ խարբայից ստանում էր 800—900, վատթար դեպքում՝ 550—700 լիտր հացահատիկ:

Ինչպես էր բաշխում գյուղացին ստացած բերքը: Նա սերմացուի համար թողնում էր 225 լիտր, օգնող բանվորին՝ զնար՝ 100 լիտր, տավարը արածացնողին՝ 55 լիտր, ընտանիքին հացի՝ 210 լիտր, շահատեսված ծախսեր (անասնակեր)՝ 25 լիտր: Այդ բոլորը կազմում էր 835 լիտր: Այսպիսով, եույնիսկ միջակ գյուղացին միայն լավագույն բերքային տարիներին կարող էր ծախսերը հոգալ: 30-ական թվականներին Փերիայի շրջանում առավել ունեվոր գյուղացին սերմացուից ու հացահատիկից բացի ընտանիքի կերակրման համար 3—4 խարվար խնայած ցորեն ու գարի էր ունենում:

Հայ գյուղացիական ազքատ խավերի գրությունը վատթարացավ 11 համաշխարհային պատերազմի տարիներին, որի հետևանքով էլ ծայր առավ նրանց զանգվածային զազթը դեպի քաղաք: Ետպատերազմյան տարիներին եույնպես զգալի բարելավումներ տեղի չունեցան: Եույնիսկ Եկիքս բերթը, աշխատելով իր կողմը գրավել աշխատավոր զանգվածներին Ղարազաղի հայկական գյուղերի ազքատ գյուղացիության 1954 թ. վիճակի մասին գրում էր. «...քակելության կեսից ավելին միայն տարվա վեց ամիսներին հաց ունի, մյուս ամիսներին ապրում է պարտքով և կամ թե մի կերպ կարճում է իր օրը... Ամեն ամեռ որոշակի թվով աղամարդիկ աշխատանք հարելու համար գնում են Քեհրան և այլ վայրեր...»<sup>24</sup>:

Եթե գյուղացի տղամարդկանց մի մասը լրացուցիչ վաստակ է որոնում քաղաքներում, ապա մյուս մասը ձգտում է այն հարել իրենց քեակավայրում: Այդպիսի վաստակի աղբյուր են ճանապարհահայրենական աշխատանքը, անասուն արածացնելը և այլն: Ինչ վերաբերում է կանանց, ապա նրանք ընտանեկան կկամոին լրացուցիչ միջոցներ են բերում գորգագործությամբ:

Իրանի հայ գյուղացիության համար ծանր բեռ են հարկերը: Հարկերից առավելապես տարածված է վարձավճարի մասնաարական սխառմը: Վարձակալող գյուղացիները կալվածատիրոջը տալիս են վարձված հողերից ստացվող բերքի որոշակի մասը:

<sup>23</sup> Տեղի հայերը լիտր են կոչում բաթմանը (մանր): Եահական մանր հավասար է 5,539 կգ (6 կգ):

<sup>24</sup> Եկիքս, 1954, 11 փետրվարի:

Վարձավճարի շտաբ մեծ մասամբ կախված է հողի բերրությունից, այս կամ այն հողակտորի օգտագործման ձևից (չրոզի կամ անչրոզի) և այլ գործոններից: Հաճախ կալվածատերերը վարձակալվող հողակտորի վճարը որոշելիս նպատակ են հետապնդում գյուղացիներին կապել հողին:

Այդպես էին վարվում, օրինակ, բախտիարի խաները Չհարմհայում: Այդ շրջանի գյուղացիների մի մասը կալվածատիրոջն էր տալիս բերքի 1/4-ը<sup>30</sup>: Փերիայի շրջանում, որտեղ հողն ավելի բերրի է, կալվածատերերը ստանում էին և ներկայումս էլ ստանում են բերքի 1/2-ը: Վարձակալող գյուղացիների միջև կը դժվարանում է այն պատճառով, որ, ինչպես արդեն նշվեց, նրանց մեծամասնությունը զուրկ է բանող անասուններից: Նրանցից շատերը վարձած մի զույգ կզան դիմաց ստիպված են հողատիրոջը վճարել իրենց բերքի կեսը:

Անհամեմատ ավելի վատթար պայմաններում են ենթավարձակալ-գյուղացիներն ու խոշնեշինների ազքատ մասը: Նրանք կազմում են գյուղացիության ամենաբնշազուրկ այն խավը, որն զբաղվում է վարձու աշխատանքով կամ բատրակությունով:

Գնայած խորզեմայեք գյուղացիների գրությունը ավելի լավ է, քան ազքատ խավինը, այսուհանդերձ, նրանք ևս ազատ չեն կալվածատերերի, պետություն և առևտրա-կոմպրադորական տարրերի շահագործումից: Նրանց նշանակալից մասը տալիս է բերքի մեծ բաժինը կալվածատերերին կամ կուլակներին:

Որպես օրինակ բերենք Չհարմհայի շրջանի Հալիբարազ գյուղի հայ գյուղացիների 30-ական թվականին աված վարձավճարի վերաբերյալ տվյալները: Տեղի հողատեր-արքարները (հողը պատկանում էր բախտիարի 3 խաների) բերքի 1/3-ից բացի այգիների ամեն մի շրիբից ստանում էին 25 դրան (սիայ)<sup>30</sup>, 1 կովից՝ 2 դրան, 1 ձիուց՝ 2 դրան, մեկ ուլտարից ու մեկ այծից՝ 10 շահի<sup>30</sup>:

Այստեղ գյուղացին ամեն տարի անեցնում էր 36 հազար լիտր ցորեն, զարի և հացահատիկային այլ կուլտուրաներ, որը գրամական արտահայտությամբ կազմում էր 54 հազար զուան: Այգիներից ևս ստանում էր 12 հազար զուան, անասնապահությունից և այլ-

<sup>30</sup> Այլ. Եզգույան, Նրանի Չհարմհայ գավառը, էջ 40:

<sup>30</sup> Նրանք գրամական միավորի նիւ անվանում է. Հավասար է 1 սիայ և լայնորեն զորձեական է սուբյայում: 10 սիայը կազմում է 1 թուման:

<sup>30</sup> Եւրին իրանական գրամի հին անվանումներից մեկն է, Հավասար է 0,05 սիայի:

կից՝ 4500 զոան, Այդ ամենը միասին կազմում էին 70500 զոան: Հողատիրոջը գյուղացին վճարում էր 12 հազար լիտր հացահատիկ (27 հազար զոան), ալգինների համար՝ 2500 զոան, որպես հողահարկ՝ 3600 լիտր հացահատիկ (720 զոան), անասունների համար՝ 950 զոան: Ընդամենը 30870 զոան: Այսպիսով, բուրբ տեսակի վարձավճարները կազմում էին բերքի 44% -ը:

Այդ տարիներին Փերիայի շրջանում գյուղացիների վիճակը քիչ էր տարբերվում Զհարմհալի և հայկական այլ բնակավայրերի գյուղացիների վիճակից: Այդ շրջանի գյուղացիների 99% -ը պարտքեր ունեւր: Հող ունեցողներն էլ տարեցատարի վաճառում էին իրենց հողակտորները՝ պարտքերը վճարելու համար: Հաճախ 50 թուման պարտքը վճարելու համար գյուղացին վաճառում էր ունեցվածքն ու մեկնում էր քաղաք: Նույնիսկ հարուստ գյուղացին ամեն տարի շուկա կարող էր տանել ընդամենը 10—15 սլիսարից ոչ ավելի, որից ստացված գումարով հոգում էր ընտանիքի ծախսերն ու վճարում հարկերը:

Վաղուց ի վեր Իրանում գոյություն ունեին աշխատանքով վճարելու՝ պարհակի, հարկի ու տուրքի զանազան ձևեր: Գրանք այս կամ այն ձևով գոյություն ունեին նաև հայաբնակ բուրբ գյուղերում: Գյուղացին պարտավոր էր կալվածատիրոջը տալ հարգ, կանաչ և յոր խոտ, վառելիք, ձու, հավեր, սլիսարներ, հատուկ հարկ վճարել արջտանների համար: Ի լրումն այս ամենի, նա պետք է տարեկան 20—40 օր ձրի աշխատել արքարի համար՝ շինարարական վերանորոգման և այլ աշխատանքներ կատարելու:

Աշխատավճարի, պարհակի, հարկ ու տուրքի այդ տարբերը դադարեցին գոյություն ունենալ միայն հողային ակֆորմի իրագործման ընթացքում:

Վարձակալ գյուղացիները հարկ են վճարում նաև իկեղեցուն, գաղտնիքին և այն հիմնարկներին, որոնց տիրապետութան տակ է գտնվում հողը:

Պետական հարկատվութան սխտեմը արդի Իրանում ենթարկվել է մի քանի փոփոխությունների<sup>20</sup>, Գեռևս 20-ական թվականներին սկզբին, ինչպես և նախկինում, պետութունը հողային հարկը անմիջականորեն գանձում էր գյուղացիներից՝ բերքի 1/10-ի

<sup>20</sup> См. В. С. Глухогод, Начальный период развития прямого обложения в современном Иране, сборник «Иран», стр. 45—47; III. М. Бади, Аграрные отношения в современном Иране, стр. 89—94.

և ավելի մեծ շահով: Մի քանի այլ հարկերի հետ մեկտեղ հողային հարկը մտնում էր ավյալ գյուղից գանձվող մյուս հարկերի ընդհանուր գումարի մեջ: 1926 թ. գյուղերի հարկը սկսեցին վճարել իրենք կալվածատերերը: Մեծ մասամբ այդ հարկը կազմում էր կալվածատիրոջ ընդհանուր եկամտագումարի միայն մի քանի տոկոսը: Սկսած 30-ական թվականներից այն ստանում է հողի սեփականատերերից գանձվող եկամտահարկի մաս:

Եկամտահարկը տարածվում է նաև քաղաքային բնակչության վրա: Չնայած Իրանի հարկային քաղաքականության սոցիալական էությունը բացասում է տիրապետող դասակարգերի, ավյալ զեպում՝ բուրժուազիայի և քաղաքների ունեոր խավի թեկուզ փոքրին էլ զգալի ծանրարեւոնումը, սակայն քաղաքային բնակչության լայն զանգվածների աղքատությունը նարավորություն էր տալիս նրանցից ևս բարձր հարկեր գանձել: Այսպես, բնակչության պրոլետարական շերտերի եկամտաբ հաճախ ցածր է չհարկվող եվազալափից: Ինչ վերաբերում է հայ բանվորներին, ապա նրանցից հիմնականում հարկվում են նավթային-մշակող արդյունաբերության և տրանսպորտի բնագավառում աշխատող, համեմատաբար բարձր վճարվող բանվորները:

Բացի պետական հարկերից, քաղաքային հայ բնակչությունը վճարում է նաև զազութի տեղական թեմական մարմինների կողմից գրված այսպես կոչված ծխի հարկ, որը մտցված է 1947 թ.: Մրա միջոցով հայթայթված գումարները նախատեսվում են զբարոցներին և զազութի մյուս հիմնարկներին օժանդակելու համար: Մական բնակչության նշանակալից մասը դժվարոնում է վճարել ինչպես պետական հարկերը, այնպես էլ ծխահարկը: Այսպես, Թեհրանի ծխական խորհրդի ավյալների համաձայն 1955 թ. քաղաքի 8 հազար հայ ընտանիքներից 2 հազարը որպես լուսնորներ չեն վճարել այդ հարկը:

Իրանում գյուղացիների սուին ծանրացած էր նաև վաշխառուների լուծը: Ապրուստի բավարար միջոցներ չունենալու պատճառով գյուղացին հարկադրված է դիմել վաշխառուին (միևնույն կալվածատիրոջը, կուլակին, կրպակատիրոջը և այլն), որպեսզի ստացած վարկով ապրի մինչև նոր բերքը: Եկմեն զարնան պես անցյալ տարի ևս գյուղերի բնակչության մեծամասնությունը ենթակա էր այս դառն իրականության: Ընտանիքի պետքերը գահացնելու համար, նա վաճառում է իր հացի անհրաժեշտ պաշարը և գարնանը ստիպված է բարձր արժեք վճարելով մեղք բերել իր ուտելիքը: Ահա



այս ժամանակ է, որ հացահատիկը մի քանի նյութապաշտ արդյունների ներքո գտնվելով, սկսում է արժեքի գլխավորությամբ վերելքը, գարնան հացահատիկի պակասը նորույթ չէ, միշտ շոքել է խեղճ ու կրակ հողագործի առաջ, երբեմն խելով մեծ թվով զոհեր, որոնք խոս ուսելուց ու քաղցից մահվան զիրկն են տեսել:

1954 թ. հարկերի ու վաշխառության հետևանքով Ղարազաղի հայ բնակչությունը հազիվ էր քարշ տալիս իր գոյությունը: «Բնակչության կեսից ավելին, տարվա մեջ միայն վեց ամսվա հաց ունի, մնացած ամիսներին՝ ապրում է պարտքով, կամ մի կերպ քաշ է տալիս իր որը: Մուժն ընկնելուս պես քնում են, որովհետև քարշուղը ծախվում է եռապատիկ արժեքով, շատերն օչախում վառված փայտի յուշտով են բավարարվում: Թե՛լ չեն խմում, որովհետև յարաշահող ներքերը շաքարի կիլոն ծախում են 60 սիալով»<sup>20</sup>:

Այսպիսով, 20-ից 60-ական թվականների միջև ընկած շրջանում իրանահայերի սոցիալական ու տնտեսական կյանքում նշանակալից անդաշարժեր ու սրակական փոփոխություններ են տեղի ունեցել: Սոցիալ-տնտեսական զարգացման տեսակետից իրանական հասարակության համեմատ, ամբողջությամբ վերցրած, գաղտնի հասել է ավելի բարձր աստիճանի: Այդ, մասնավորապես, գրեթե բոլորովն է քաղաքային և գյուղական բնակչության թվական հարարերակցությամբ, գաղտնիքում բանվորների համեմատաբար բարձր առկառով և այլ փաստերով:

Իրանահայ գաղտնի սոցիալ-տնտեսական զարգացման յուրահատուկ պայմանների հետևանքով հայերը իրանական հասարակության սոցիալական կառուցվածքի մեջ զբաղեցնում են միջին և ստորին սզակները:

Իրանահայերի տնտեսական վիճակը ընդհանրապես և ամբողջությամբ համապատասխանում է նրանց սոցիալական դրությունը: Հայերի շրջանում գոյություն չունեն խոշոր կարողության տեր անձինք, բայց կան զգալի թվով միջին ունեցվածքի տեր մարդիկ:

<sup>20</sup> «Այլ», 1954, 11 փետրվարի:

Յնմակաւ կատարվածէ: Փաւրչօք, Իրան-Լեզիսկան և Յնուսի  
քաներ: Գազուրի քաների անբառածէ էրթածնից: Իրանուսիքի  
քնտնական-ժառանգական իրավունէ: Հայկական պարտքերի և  
իմ ինճաճարայունը: Հայերի ներկայացուցարայունը մշխում:  
Իրանուսիքի իրավունների անմանաճօկումներ:

Իրանահայերի իրավական գրութիւն հիմքը կրեա-եկեղեցա-  
կան ինքնավարութիւնն է: Ինքնավարութիւն ալ ճնը գաղութում  
գոյութիւն սեւի XI գ. ի վեր, երկրում առաջին հայկական գաղթ-  
աշտիների սկզբնավորման օրից: Գաղութն ունեցել է ինքնավա-  
րութիւն սեփական մարմինները՝ թեմական առաջնորդարանները:  
Մկսած XX գ. գրանք գործում են թեմական կամ համայնքային  
խորհուրդներ ձևով:

Իրանահայ գաղութի, ինչպես նաև հայկական մշու գաղթա-  
վարների թեմերը միշտ ենթարկվել են հայկական եկեղեցու մայր  
աթոռին՝ կաթողիկոսութիւնը XII գ. սկզբից մինչև XV գ. 40-ական  
թվականները, այսինքն մինչև Կրիկիայի հայկական պետութիւն  
անկումը, երանք ենթարկվում էին Հռոմկիային, որտեղ ալ ժա-  
մանակ գտնվում էր կաթողիկոսութիւնը: 1441 թ. երբ հայոց եկե-  
ղեցու կաթողիկոսական աթոռը կրկին հաստատվեց էջմիածնում,  
Իրանում գտնվող թեմերը ենթարկվեցին երան:

Փանի որ ալ ժամանակ էջմիածինը գտնվում էր պարսից  
տիրապետութիւն ուրտում, ալա պարսկական կառավարողների  
սզորովն և հրամանուն նստիւր կաթողիկոսն, և անարգելօրեն վա-  
րէր զիշխանութիւնն իւր յազգս Հայոց<sup>20</sup>:

Հռոմկիան, ալա և էջմիածինը, թեմերի և նվիրակութիւնների  
չըշաններն էին ուղարկում իրենց ներկայացուցիչներին՝ թեմական  
առաջնորդներին: Գաղութի իրավական գրութիւնը ամբապնդված  
էր շահական մի շարք ֆերմաններով (հրովարտականերով) և ալ  
փաստաթղթերով: Իրանական իշխանութիւններն, իհարկե, ևլ-  
նելով երկրի ներքին ու արտաքին գրութիւնից պատմական ասար-  
բեր ժամանակաշրջաններում հաշվի էին նստում գաղութի ինքնա-  
վարական մարմինների հետ, արձագանքում երանց խնդիրներին

<sup>20</sup> Սիմեոն Եւեւեցի, Համր, Հաղարչագատ, 1873, էջ 37:

ու միջնորդութիւններին: Իրանահայ գաղութի նկատմամբ պարսից պետութիւնի քաղաքականութիւնը միշտ էլ համապատասխանել է երկրի կառավարող շրջանների շահերին: Այդ իսկ պատճառով իրանահայ գաղութի իրավական դրութիւնը ոչ միշտ է եղել կայուն. պատերազմների, ֆեոդալական երկպառակութիւնների տարիներին երկրում ստեղծված հեղհեղուկ վիճակի հետևանքով սովորական երևույթ էին իրավագրկութիւնն ու կամայականութիւնները: Իրագրութիւնների այս մթնոլորտում հասկանալի էր այն համառ պայտարը, որ տեղի հայ քնակչութիւնը մղում էր իր ֆիզիկական ու հոգևոր զոյաանման համար:

Մինչև XX դ. 40-ական թվականները գաղութը պահպանում էր իր պատմական բաժանումը երկու թեմերի՝ Քավրիզի (Ատրպատականի) և Իրան-Հեղկականի: Թեմերի կենտրոնները համապատասխանաբար Քավրիզն ու Նոր Զուղան էին: 1944 թ. նախկինում Իրան-Հեղկական թեմի մեջ մտնող համայնքների մի մասից կազմվեց նոր՝ Քեհրանի թեմը, որի կենտրոնը գտնվում է Քեհրանում:

Մինչև 1900-ական թվականները թեմերի ղեկավարութիւնը շարունակում էր մնալ թեմական առաջնորդների ձեռքում: Հետագայում մշակվեցին թեմական կանոնադրութիւններ, որոնցով հաստատվեց ընտրութիւնների կարգը: Դրա հետևանքով, տեղական աշխարհիկ մարմինների գոյութիւնը որոշ լափով սահմանափակվեց թեմական առաջնորդների իշխանութիւնը:

Թեմական կանոնադրութիւնի համաձայն թեմերում ստեղծվեցին պատգամավորական ժողովներ: Ընտրովի այդ մարմինները որոշակի ժամկետներում նորոգվում էին և դարձան թեմերի յուրօրինակ գերագույն օրենսդիր մարմիններ: Նրանց վերապահվեց թեմական կամ համայնքային խորհուրդներ ընտրելու իրավունքը, իսկ այդ խորհուրդները հանդես էին գալիս որպես թեմերի գործադիր գերագույն մարմիններ:

Թեմական և համայնքային խորհուրդները կազմված էին աշխարհիկ անձանցից: Խորհրդի նախագահը թեմական առաջնորդն էր: Նա՝ ուներ իր հոգևոր տեղակալը, որի վրա էր դրված խորհրդի նիստերին մասնակցելու, իսկ թեմական առաջնորդի բացակայութիւնի դեպքում՝ նրան որպես խորհրդի նախագահի փոխարինելու պարտականութիւնը:

Թեմական իշխանութիւնները ի զմս գործակալութիւնների իրենց ներկայացուցիչներն ունեին տեղերում: Գործակալութիւն

նախագահն էր տեղի քահանան, որը ավյալ դեպքում կուզում էր գործակալ:

Քեմական առաջնորդներն ընտրվում էին թեմական կամ համայնքային խորհուրդներում և հաստատվում կաթողիկոսի կողմից: Իրանական պետությունը նաևալում էր թեմական կանոնադրությունը, սակայն թեմական առաջնորդների ընտրությունն ու նշանակումը առանց իրանական իշխանությունների գիտությունն ու համաձայնության չէր կատարվում: Քեմական կառավարման այս կարգը աննշան փոփոխություններով ուժի մեջ է մինչև այսօր: Սակայն թեմական կառուցվածքը այս կամ այն թեմում կանոնադրական ու կազմակերպչական բնույթի որոշ տարբերություններ ունի:

Քավրիզի թեմը միավորում է հյուսիսային նահանգներում ապրող հայ բնակչությանը: Մինչև 1833 թ. այն կուզում էր Ատրպատականի թեմ, որի կենտրոնն էր սուրբ Քաղևոսի վանքը՝ Մաքուի շրջանում: 1828 թ. Քուրքմենլայի պայմանագրով Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո Ատրպատականի թեմի կենտրոնը Սուրբ Քաղևոսի վանքից փոխադրվեց Քավրիզ: Այնուհետև 1833 թ. սկզբնավորվում է Քավրիզի թեմը, որը ավանգաբար անվանում են նաև Ատրպատականի թեմ:

1901 թ. թեմը մշակեց իր կանոնադրությունը<sup>40</sup>, Քավրիզի թեմական խորհրդի ընտրող առանձնահատկությունն նրանում է, որ նահանգում Վայկական բնակավայրերի (Ինզայն, Մայմաստ, Ղարադաղ, Մարաղա և այլն) ղեկավարությունից բացի նա միաժամանակ կատարում է Քավրիզի քաղաքային գործադիր ժողովի և սրան հարակից մարմինների գործառնությունները<sup>41</sup>: Քավրիզի թեմի ներկայացուցչական ժողովը ընտրվում է շոբա տարին մեկ և բաղկացած է 16 անդամից, որոնցից 8-ը գավառներից են, 6-ը՝ Քավրիզից, և 2-ը՝ հեղեղեցու կողմից: Ժողովի նախագահը, թեմական առաջնորդը կամ նրա հոգևոր տեղակալն են, որոնք ավյալ դեպքում խորհրդակցական ձևի իրավունք ունեն: Ժողովի կողմից ընտրված թեմական խորհուրդը բաղկացած է 6 անդամից: Խորհրդի յոթերորդ անդամը թեմական առաջնորդը կամ նրա հոգևոր տեղակալն են՝ վճռական ձևի իրավունքով:

1913 թ. մինչև 1948 թ. Քավրիզի թեմական առաջնորդը արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Քանդյանն էր: Նրա մահից հետո մինչև 1949 թ. ղերշը այդ պարտականությունը համատեղաբար

<sup>40</sup> ԵՊարկահայ տարեցույցը, 1928, էջ 143—150:

<sup>41</sup> 2002 հոգև. գ. 58, ք. 4, ք. 289, թ. 3:

կատարում էր Քեհրանի թեմի այն ժամանակվա առաջնորդ եպիսկոպոս Թուրեն Դրամբյանը:

1961 թ., երբ թեմը ապօրինաբար անշտաճեց Անթիլիասի (Քնյուսի-ձիբանան) Գիլիկյան կաթողիկոսության կողմից, Քավրիզի թեմական առաջնորդներն սկսեցին նշանակվել Անթիլիասից<sup>42</sup>:

XX դ. վերջից և, հատկապես, թեմական կանոնադրության ուժի մեջ մտնելուց հետո, ընդհուպ մինչև 1936 թ., Քավրիզի թեմը կարևոր դեր է խաղացել երկրի հայ բնակչության կյանքում: Սակայն ներկայումս Քավրիզը կորցրել է իր սևեցած առաջատար, որոշող դերը: 1936 թ. և հատկապես II համաշխարհային պատերազմից հետո այդ դերն անցավ նոր կենտրոնին՝ Քեհրանին:

Իրան-Հնդկական թեմ. 1605—1606 թթ. Սպահանի շրջակայքում հայերի բնակչության հաստատելու առաջին տարիներին ստեղծվեց, նոր Ջուղայի թեմը, որը կենտրոնական և Հարավային շրջաններում ապրող հայերի կենտրոնը դարձավ: Հետագայում XVII—XIX դդ. իրանահայ բնակչության մի մասի Հնդկաստան, ինչպես նաև Հարավարևելյան Ասիայի և Հնոսվոր Արևելքի երկրները սեղափոխվելու պատճառով թեմը փոխում է իր անունը և կոչվում Իրանա-Հնդկական:

1909 թ. նա մշակում է իր կանոնադրությունը<sup>43</sup>: Ստեղծված լինելով 1905—1911 թթ. իրանական հեղափոխության ժամանակ, այդ կանոնադրությունն իր վրա է կրում երկրի քաղաքական կյանքում երևան եկած նոր տրամադրությունների դրոշմը: Դրա շնորհիվ տեղական համայնքային կազմակերպությունները ավելի մեծ իրավունքներով են օժտված, քան սակեք, Հյուսիսային գավառներում:

Արզնի այն տարիներին շրջանի հայկական կյանքի վրա սկսեցին ներազդել կենտրոնախույս ուժերը, որոնք և սկիզբ դրին թեմի՝ մի շարք առանձին համայնքների բաժանվելուն: Այս երևույթն ուներ իր օբյեկտիվ պատճառները, որոնք պայմանավորված էին կենտրոնական և հարավային շրջանների ընդարձակ տարածություններում եղած հայկական հին օջախների զարգացմամբ. նորերի երևան գալով՝ 20-ական թվականներին այդ պրոցեսի խորացման ազդակ դարձավ կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և, մասնավորապես, Քեհրանի աճը, ինչպես նաև հայկական բնակավայրերի ստեղծումը երկրի հարավի նավթաերկր

<sup>42</sup> Այս մասին տե՛ս դեմի համադրատեսիս բաժնում:

<sup>43</sup> 2002 ԿԳՊԱ, ք. 57, ք. 2, գ. 1880, ք. 2—4.

չրջաններում՝ Ահմադում, Աբադանում, Մեսչեդ-Սուլեյմանում, Ազա  
Զարիում և այլուր:

Գնուկ 1912 թ. եռյեմբերին էլժիածինը թույլատրեց Իրանա-  
Հնդկական թեմը բաժանել երկու մասի: Առաջարկվում էր ինքնու-  
րույն մի թեմ ստեղծել, որի մեջ կմաններն նոր Զուլան, Փերիա,  
Զհարմհալ շրջաններն ու երկրի հարավի հայկական այլ բնակա-  
վայրերը, ինչպես նաև Հնդկաստանի և Ճավայի հայկական հա-  
մայնքները: Թեմի կենտրոնը մնում էր նոր Զուլան: Մյուս մասի  
մեջ պիտի մտնեին Քեհրանը, Ղարազազ, Քազազ, Քամարա,  
Քուրվառի և Գյափլա շրջանները, Համազանը, Ղազվինը, Ռաշտը,  
Էնզելին և Գիլանի նահանգի մյուս քաղաքներն ու շրջանները, ինչ-  
պես նաև Մազանդարանում և Խորասանում ազրոզ հայութունը<sup>44</sup>:

Սակայն այս տարիներին աշխարհիկ ու հոգևոր իշխանություն  
կողմնակիցների միջև ծագած բախումների հետևանքով թեմի բա-  
ժանումը տեղի չունեցավ, իսկ սկսված 1-ին համաշխարհային պա-  
սերազմը խեղդիչը հետաձգեց էլ ավելի երկար ժամանակով: 1912—  
1920 թթ., ընայած տեղում առաջնորդ ընտրելու մասին էլժիածնի  
աված թույլտվությունը<sup>45</sup>, Իրանա-Հնդկական թեմի առաջնորդի  
աթոռը թափուր էր մնում:

20-ական թվականներին սկզբին աշխարհիկ և հոգևոր իշխա-  
նություն կողմնակիցների հետագա բախումները հանգեցրին նրանց  
սահմանազատման: Այդ բախումների հետևանքով իր զույլությունը  
դադարեցրեց Էկոաշխարհական խորհուրդը, որը հիմնվել էր անց-  
յալ դարի 90-ական թվականներին<sup>46</sup>:

Այդ մարմինը որոշ լափով փոխարինում էր թեմական խոր-  
հրդին, քանի որ իրավասու էր քննել ոչ միայն զուտ կրոնա-եկե-  
զնցական հարցերը, այլև կարգավորել նոր Զուլայի և մերձակա  
շրջանների հայ բնակչության միջև ծագած վեճերը և դատական  
որոշումներ կայացնել: Խորհրդի անդամներին նշանակում էր թեմի  
առաջնորդը: 1922 թ. առաջնորդական խորհրդի փոխարին նոր  
Զուլայում ընտրվեց եկեղեցական խորհուրդ, որի անդամները կըր-  
կին ընտրվում էին տեղական քահանաներից<sup>47</sup>:

Եկեղեցական խորհուրդ ստեղծելուց հետո նոր Զուլայում  
1923 թ. առաջ եկավ նաև համայնքային խորհուրդ: Գրանեով իսկ  
ավարտվեց հոգևոր իշխանություն ու համայնքային կազմակեր-

<sup>44</sup> ԸՍՍԷ ԿԳՊԱ, ք. 57, ծ. 2, գ. 1945, ք. 29:

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> ԷՊարսկահայ տարեցույց, 1929, էջ 20:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 17 և 20:

պությունների լիակատար տարանջատումը: Ենչա է, իշխանութու-  
նը շարունակում էր մնալ թեմական առաջնորդների ձեռքում,  
որոնք յուրահատուկ կապող օղակ էին դարձել հեղեղեցական և հա-  
մայնքային խորհուրդների միջև: Նրանց նախաձեռնությամբ խոր-  
հուրդները վճռում էին Խնչպես նոր Զուգայի, այնպես էլ նրան հե-  
թակա գանձող շրջանների բուլսր գործերը<sup>66</sup>: Սակայն այս իրավի-  
ճակը Զուգայում հարատևեց մինչև 30-ական թվականների սկիզ-  
բը, քանի ղեռ այնտեղ թեմական առաջնորդներ կային: 1920—  
1924 թթ. թեմի առաջնորդը արքեպիսկոպոս Սահակ Ալվատյանն  
էր, որը թեմը գլխավորել էր նաև նախկինում՝ 1902—1912 թթ.:  
Նրանից հետո թեմը գլխավորեց եպիսկոպոս Մեարոպ (Մազիս-  
աբրոս) Տիր-Մոզեսյանը (1926—1930): 1930 թ. ընդհուպ մինչև  
1945 թ. նոր Զուգայի թեմական առաջնորդի տեղը թափուր էր:  
1945 թ. էլմիածինը այստեղ ուղարկեց թեմական նոր առաջնորդ,  
եպիսկոպոս Վահան Կոստանյանին: Սակայն վերջինս այդտեղ  
մնաց միայն մինչև 1949 թ.:

Թեմական առաջնորդի բացակայության ժամանակ թեմական  
խորհրդի գործառնությունները ձևականորեն կատարում էր նոր Զու-  
գայի համայնքային խորհուրդը, սակայն վերջինիս չէին հնթարկ-  
վում շրջանի համայնքներից և ոչ մեկը, նույնիսկ այնպիսի հա-  
մայնքներ, ինչպիսին Փերիայի և Զհարմհայինն են: Նոր Զու-  
գայի հետ նրանք կապ էին պահպանում սոսկ կրոնա-հեղեղեցական  
հանգամանքով՝ ի դեմս հեղեղեցական խորհրդի:

Այս երկու մարմիններից բացի նոր Զուգայում կա նաև գրու-  
քոցական հոգաբարձություն: Այս երեք մարմիններն էլ ընտրովի  
են: Համայնքային խորհուրդն ընտրվում է համայնքային ժողովի  
կողմից, իսկ հոգաբարձությունը՝ համայնքային խորհրդի: Ինչպես  
նշեցինք, հեղեղեցական խորհուրդն ընտրվում է հեղեղեցական ժո-  
ղովի կողմից:

Իրանա-Հնդկական թեմում կազմակերպչական միասնական  
կառուցվածքի բացակայությունը պատճառ է դարձել, որպեսզի  
մինչև վերջերս էլ համայնքներից յուրաքանչյուրը տեղում ինքնա-  
վարություն իր մարմինն ունենա: Եթե նոր Զուգայում այդպիսին  
են համայնքային ժողովն ու համայնքային խորհուրդը, ապա Ահ-  
վազում այդ զինը կատարում է համայնքային վարությունը, Աբա-  
ղանում և Խորեմշահում՝ սկզբում հեղեղեցիների ու գյուրջների  
միացյալ հոգաբարձությունը, իսկ հետո՝ քաղաքներից յուրաքան-

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 37:

չյուրի հոգաբարձութիւնը: Մեծնոց-Սուլեյմանում ինքեալմար մար-  
մընի գործառնութիւնն ունեք ծխական խորհուրդը<sup>19</sup>: Ռաշաում հա-  
մախքային խորհրդի գործառնութիւնն իրագործում էր «Նորդա-  
նասեյան» գաղտցի հոգաբարձութիւնը: Նույնպիսի իրավունքներով  
էին ստեղծած նաև Համազանի, Փեհլիի և այլ քաղաքների գաղտց-  
ների հոգաբարձութիւնները:

Այսպիսով, մինչ 50-ական թվականները Իրան-Հնդկական  
Քեմը, շնայած իր կոշմանք, շունք աշխարհի թեմական կառուց-  
վածք, որպիսին Թավրիզի թեմն էր: Այնտեղ թեմական մարմին-  
ներ ստեղծվեցին 50-ական թվականների վերջին:

1861 թ. Բելլուսթից նոր Ջուղա ժամանեց Անթիլիասի նշանա-  
կած թեմակալը:

Փննդումի քեմը կազմակերպվել է 1844 թ. սեպտեմբերին: Թե-  
մի ստեղծման նախադրյալներն էին Փեհրանի հայ ազգաբնակչու-  
թյան թվական աճը, զազուսթի ինքնավարության օրգանների մայ-  
րաքաղաքում գանձելը, իրանահայերի հասարակական ու մշա-  
կութային հիմնական ուժերի Փեհրանում կենտրոնանալը և այլն:

Չնայած պաշտոնապես թեմի ստեղծումը հասպաղեց, բայց  
Փեհրանի համայնքը արդեն այն ժամանակ խիստ կարևոր դեր էր  
խաղում զազուսթի կյանքում: Նա ուներ իր մարմինները, որոնք  
իրենց նշանակութամբ մոտ էին թեմական մարմիններին՝ ընդհա-  
նուր ժողով, համայնքային վարչություն (ազգային խորհուրդ) և  
վերասուզիչ հանձնաժողով: Փեհրանի համայնքի գործադիր օրգա-  
նը՝ համայնքային վարչությունը ուներ իր կանոնադրութիւնը, որն  
ընդունվել էր 1812 թ.<sup>20</sup>:

Փեհրանի համայնքային վարչությունը աստիճանաբար յու-  
րացրեց նրկրի ողջ հայ բնակչության լիիրավ մարմնի դերը: Իրա-  
նական իշխանութիւններն այն նախաշնչին որդեա զազուսթի ներ-  
կայացուցչական մարմին: 1917—1918 թթ. զազուսթի հարազային  
չքանի համայնքները սկսեցին Փեհրան ուղարկել իրենց ներկա-  
յացուցիչներին, որոնցից կազմվեց իրանահայերի խորհուրդը<sup>21</sup>:

1927 թ. ընարվեցին համայնքային վարչության նոր մարմին-  
ներ: Ինքնավարային մարմիններ դարձան ներկայացուցչական  
խորհուրդը՝ բաղկացած 12 հոգուց, համայնքի վարչությունը՝ կազ-  
մըված հինգ հիմնական և երկու փոխարինող անդամներից<sup>22</sup>:

<sup>19</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 82, 84:

<sup>20</sup> ՀՍՍՀ ԿՊՊԱ, ք. 67, ք. 2, Գ. 1862, ք. 37—44, 2Ը. Անտոյան, Կյանքիս հու-  
շորից, էջ 387:

<sup>21</sup> 2Ը. Անտոյան, Կյանքիս հուշորից, էջ 397—398:

<sup>22</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 112—113:



Քեհրանի ազգային խորհրդի օրինակով, սկսած 1917 թ. նման վարչություններ բնարգելի են Համազանում և Արարում<sup>20</sup>։

40-ական թթ. սկզբներին գաշնակցական պարագլուխները փորձեցին Քեհրանում ստեղծել թեմական խորհուրդ։ Էջմիածինը չճանաչեց այդ ապօրինի խորհուրդը<sup>21</sup>։ Քեհրանի թեմի ստեղծման նախաձեռնությունը էջմիածինը վերցրեց իր ձեռքը։ 1944 թ. ապրիլին այդ նպատակով Իրան ուղարկվեց կաթողիկոսի անձնական ներկայացուցիչը՝ պրոֆեսոր Աշոտ Արրահամյանը։ Թեմի պաշտոնական հռչակումից հետո որպես թեմական առաջնորդ Քեհրան ուղարկվեց Վահան Ժ. վարդապետ Կոստանյանը։ Թեհրանում ետ երկար շմեաց (1945 թ. հունվարից մինչև հունիս) և փոխադրվեց նոր Զուլա, որպես Իրան-Հնդկական թեմի առաջնորդ։ Թեհրանի թեմի առաջնորդի պաշտոնում նրան փոխարինեց Թուրքիա Գրամրյանը (1945 թ. հունվարից մինչև 1948 թ. դեկտեմբերը)։

Թեմական մարմինները Քեհրանում ստեղծվել են 1947—1948 թթ.։

1949 թ. հոկտեմբերին թեմի պատգամավորական ժողովը ընտրեց թեմական խորհրդի նոր կազմ։ Ժողովի ընտրած հասուկ հանձնաժողովը մշակեց թեմական կանոնադրություն, որը 1951 թ. ապրիլին արժանացավ պատգամավորական ժողովի հավանությունը և հաստատվեց կաթողիկոսի կողմից։ Այն ուժի մեջ է մնում մինչև սրա։

Կանոնադրության համաձայն պատգամավորական ժողովը հրավիրվում է երեք ասրին մեկ։ Ժողովի պատգամավորները ընտրվում են թեմի մեջ ժամող քաղաքներից ու գյուղերից։ 1949 թ. ժողովի կազմում 35 անդամ կար, այդ թվում Քեհրանից՝ 22, Վանաբից ու մերձակա գյուղերից՝ 1, Ղազվինից՝ 2, Ղարաղանից՝ 3, Համազանից՝ 2, Քերմանշահից՝ 1, Ռաշտից՝ 1, Փեհլիկից՝ 1, Խորասանից (Մեհլեզ)՝ 2։ Քեհրանում պատգամավորներին ժողով է ուղարկում քաղաքային գործադիր ժողովը, իսկ շրջաններում՝ անդական ծխական խորհուրդները։

Պատգամավորական ժողովը ընտրում է թեմական խորհուրդ, ինչպես նաև անմիջականորեն իրեն հարչվետու վերահսկիչ հանձնաժողով։ Թեմական խորհուրդը կարող է օւնենալ 9—11 անդամ։ Նրան են ենթարկվում Քեհրանի գործադիր ժողովն ու զավառների ծխական խորհուրդները։

<sup>20</sup> Ըր. Սեաւյան, Գյանջու հուշերից, էջ 228.

<sup>21</sup> ՀՍՍՀ ԿԳԳԱ, ք. 27, Գնարգ 6-րդ կաթողիկոսի 1941 թ. ապրիլի 14-ի կեղակի պատճենը.

Քեհրանի ծխական խորհուրդն ու զավանների ծխական խորհուրդները, որոնք թեմական խորհուրդների ներկայացուցիչներն են տեղերում, իրենց հերթին ընտրում են ծխահարկի իրենց նկատման վարչություն, զպրոցական հոգաբարձություններ ու եկեղեցական վարչություններ: Այդօրինակ կազմակերպությունների կենտրոնական մարմինները Քեհրանի ծխահարկի կենտրոնական հարկային վարչությունն (12 հոգուց բաղկացած կազմով) և Քեհրանի եկեղեցական խորհուրդն են (նույնաթիվ կազմով): Վերջին ժամանակներս գաղութի կյանքում առաջին անգամ Քեհրանի թեմական խորհրդին կից ընտրվեց կրթական խորհուրդ:

1960 թ. հունվարին Քեհրան թեմակալ ուղարկվեց Անթիլիասից:

\* \* \*

Հայկական դարավոր սովորույթների ու հայ եկեղեցու կանոնների համաձայն, թեմական մարմինները վաղուց ի վեր օգտվում են ընտանեկան և ժառանգական հարցերի լուծման իրավունքից, ինչպես՝ ամուսնություն, արգելադրման, ժառանգության, կռակի և այլն: Այդ իրավունքի գոյությունը պայմանավորված էր ասակ կրոնական դավանանքների տարբերությամբ: Քանի որ Իրանում տիրապետող մուսուլմանական իրավունքը անհաշակի է եղել երկրի հայ քրիստոնյա բնակչության ընտանեկան-ժառանգական իրավունքների հետ, երկրի կառավարիչներն ու շահերը աշխատել են զրանք առանձնացնել՝ որպես եկեղեցական ինքնավարության շրջանակներում իրականացվող իրավական նորմերի մի խումբ: Այդպես շարունակվեց մինչև Իրանում սահմանադրական կարգերի հաստատումը: 1905—1911 թթ. իրանական հեղափոխությունը, հռչակելով մի շարք բուրժուական իրավական նորմեր, զրանք զրանցեց երկրի սահմանադրության մեջ<sup>10</sup>:

Սակայն քանի որ հեղափոխության պտուղներից օգտվեցին բուրժուա-կալվածատիրական շրջանները, մինչև 30-ական թվականները ազգային փոքրամասնության իրավունքները, այդ թվում

<sup>10</sup> Պարսկական լիբերալ բուրժուա-կալվածատիրական արխանդախայի և հոգեորականության ներկայացուցիչները սահմանադրությունը կազմելիս «միլիթո» (ազգ. ազգութուն, ժողովուրդ) հիմնական հասկանիչը համարել են գաղտնակցը (հեյզիս մուսուլմանական միջնադարյան իրավունքներում): Տե՛ս С. М. Алиев, К национальному вопросу в современном Иране, «Критические сообщения Ин-та народов Азии», 1964, № 77, стр. 47.

և նրանց ընտանեկան-ժառանգական իրավունքները, Իրանի օրենսգրքային մեջ իրենց արտահայտությունը շարունակելով (ի դեպ, հայազգի անձանց դատական գործերի քննության կարգը բացատրվելու պարզարանման է ենթարկվել Իրանի կառավարության արձակած մի քանի հրահանգներում և հրամաններում)։ Մակայն քանի որ հայերի իրավունքները օրենսդրական կարգով սրուշված չէին, իրանական դատավորները հաճախ հրամարվում էին քննել նրանց գործերը<sup>50</sup>։ Բայց անգամ դրանք քննելու դեպքում, այդ տարիներին Իրանի կրոնական ունեցվածքային իրավունքը հավասար մասեցում չէր ցուցաբերում մահմեդականների ու քրիստոնյաների նկատմամբ։ Այդ իսկ պատճառով հայերը փաստորեն իրանական դատարաններում դատվելու հնարավորություն չունեին<sup>51</sup>։

Միայն դատավարության օրենքի բարենորոգումից հետո<sup>52</sup> հայերի, ինչպես նաև ազգային մյուս փոքրամասնությունների իրավունքները, իրենց արտահայտությունը գտան իրանական գործող օրենսդրության մեջ։ 1312 թ. թիր ամսի 31-ին (1933 թ. հունիսի 22) մեջլիսը հաստատեց ոչ շիաների (սուննիներ, քրիստոնյաներ, զրադաշտականներ, հրեաներ և այլն) ընտանեկան հարցերի վերաբերյալ օրենսդրական Խախագիծը։ Վերջինիս համառոտ, ամուսնության կամ ավտահարգանքի դեպքում, երկրի դատական մարմինները գործը պետք է քննեն ըստ ամուսնու կրոնական պատկանելության, իսկ կապի կամ ժառանգության դեպքում՝ ըստ հանգուցյալի կրոնական դավանանքի։ Որդեգրման հարցը պետք է քննարկվեր սրղեզրող հոր կամ մոր կրոնական պատկանելությանից՝ ելնելով<sup>53</sup>։

1935 թ. Իրանի արդարադատության մինիստրության առաջարկությամբ զազութի թեմական և ազգային մարմինները 74 հոդվածներից բաղկացած մի օրենսգրք կազմեցին, որը 1937 թ. մայիսի 21-ին հաստատվեց կաթոլիկոսի կողմից<sup>54</sup>։ Թարգմանվեց

<sup>50</sup> С. Аракелян, Автономные права и национальных меньшинств в Персии, «Исторический Восток», кн. 10—11, 1925—1926, стр. 278.

<sup>51</sup> 2002 ՎՊՊԱ, № 4/114, ց. 2, գ. 88, ք. 44.

<sup>52</sup> Գոտակազմության օրենքը հրատարակվել է 1928 թ.։ Կազմմանը ուսուցումները մտցված են 1936 թ.։

<sup>53</sup> 2002 ՎՊՊԱ, № 57, «Իրանահայության ընտանեկան և ժառանգական իրավունքները ըստ հայազգված առարկայական կենտրոնական կանոնների, սովորությունների և պատվան օրենքներին»։

պարսկերեն և հանձնվեց Իրանի արգարագատուժյան մինիստրոս-  
թյանը<sup>10</sup>։

Մուղ էր թելադրված 1312 թ. թիւ ամսի 31-ի օրենքի հրա-  
պարակման և զազութի համար օրենսգրքի ստեղծման անհրաժեշ-  
տությունը։ Հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերը-  
տին անգրագատնալ զազութի իրավական վիճակին, որը հիմնված  
էր կրոնա-եկեղեցական ինքնավարության վրա։ Ինչպես թիմական  
կառուցվածքը, այնպես էլ ընտանեկան-ժառանգական բնույթի  
հարցերը Իրանում պատկանում են կրոնական մարզին։ Այդպեղից  
էլ թիւում է գեոնա իսլամի ազգեցության տակ գտնվող իրանական  
օրենսդրության ձգտումը՝ այլակրոն և այլազգական ազգային փոք-  
րամասնությունների իրավունքները ինչ-որ մնով նմանեցնել տի-  
րոջ ազգի իրավունքներին։

Գազութի օրենքների ժողովածուն ուղեցույց փաստաթուղթ  
հանդեսացավ իրանահայերի դատական գործերի քննության հա-  
մար։ Գատական մարմինները այժմ գրանով են ղեկավարվում։

Սակայն ժողովածուի պատրաստումից որոշ ժամանակ անց  
գատական պրակտիկայում մի շարք հակասություններ ի հայտ  
եկան նրա և 1312 թ. թիւ ամսի 31-ի օրենքի միջև։ Բանն այն է, որ  
իրանական դատարանները հայերի գործերը քննում են օրենսգրք-  
քով սահմանված սոսկ հինգ ղեկըներում՝ ամուսնության, ապա-  
հարգանի, ժառանգության, կտակի ու որդեգրման։ Այդ որոշակի  
գովարություններ է ստեղծում ընտանեկան-ժառանգական բնույթի  
մի շարք այնպիսի հարցերի քննության անհրաժեշտության ղեկ-  
քում, որոնք լկան այդ օրենսգրքում, բայց նախատեսված են զազութի  
օրենքների ժողովածուով։ Այդ հարցերից է, օրինակ, անլափահա  
երեխաների խնամակալությունը<sup>11</sup>։ Ի թիվս ընտանեկան-ժառանգա-  
կան մյուս հարցերի, գրանք իրանական դատարաններում քննվում  
էին գեոնա նախքան Իրանում սահմանադրության ընդունելը և  
իրենց ուժը պահպանել էին մինչև դատավարական օրենքի սե-  
ֆորմը։

<sup>10</sup> ՀԱՍԸ ԳՊՊԱ, Գ. 57, «Տեղեկագիր Քեհրանի Հայոց կնիզեցական վարչու-  
թյան 16 ապրիլի 1942— 29 Հունիսի 1944 թ. գործունեության»։

<sup>11</sup> Համառայն իրանական օրենսդրության, Հարց կարգում զավակները հա-  
մարվում են խնամակալությունից զուրկ, այսինքն որը, նրանց հաստատեցած են  
համարվում 25 տարեկանից։ Այդ պարագան լուրջ խաչքեղոս է հասկանալու Հայ-  
րենազգայնության գործին և համառ հանգեցնում է Հայրենազգայնների ընտանեկ-  
ների շարքում, քանի որ որքը իրավունք չունի զուրկ զուրկ իրանազգասա-  
կությունից։

1312 թ. թիւի 31-ի օրենքի և գաղութի օրենքների միջև եղած այդ անհամապատասխանութիւնները, քնականաբար, կարող են կարգավորման: Գաղութի թեմական մարմինները վերջին ժամանակներս շահում են այդ հարցը լուծել իրանական համապատասխան իշխանութիւնների հետ բանակցելու միտքով: Այսպես, 1962 թ. Քեհրանում կայացած երեք թեմերի համագումարում ի թիվս այլ հարցերի քննարկվեց նաև իրանահայերի ընտանեկան, ժառանգական իրավունքների վերանայման ու պաշտօնական նահալման հարցը:

Հարկ է նշել, որ ի տարբերութիւն արտասահմանի հայկական շատ այլ գաղութների, իրանահայ գաղութի թեմերը ընդհուպ մինչև XX դ. 50-ական թվականները ընտանեկան-ժառանգական և ամուսնա-ապահարզանական հարցերի շուրջ տեղական եկեղեցական ու համայնքային խորհուրդների որոշումները ներկայացնում էին էջմիածին՝ կաթողիկոսի հաստատման: Այդ, անշուշտ, վկայում է իրանահայերի՝ իրենց մայր հայրենիք Հայաստանի հետ ունեցած դարավոր կապի մասին:

Այսպիսով, ընտանեկան-ժառանգական հարցերի լուծման իրավունքը Իրանում անզի հայ քնակչութիւն նկատմամբ կիրառվող իրավական նորմերի տարբերից մեկն է: Այն դարավոր վաղեմութիւն ունի և գրեթեով իսկ մարմնավորում է իրանահայ գաղութի կենսունակութիւնը, մի հանգամանք, որը պահպանվել է մինչև մեր օրերը:

\* \* \*

Իրանում հայկական ազգային զգրոցներին իրավական երաշխիք է տրված շահերի մի քանի ֆիրմաններով ու փաստաթղթերով<sup>61</sup>: Իրենց սկզբնավորման օրից (XIX դ. 30-ական թթ.) մինչև 1936 թ. ամբողջ մի դար հայկական աշխարհիկ հանրակրթական զգրոցները համաձայն այդ երաշխիքների ունեցել են ներքին

<sup>61</sup> Մեր մտքի առկ լին հայկական զգրոցներին վերաբերող շահուն ֆիրմաների ու իրանական փաստաթղթերի ցուցակը: Սակայն սուրն հշուտակվող պատմական փաստաթղթերը, կարծաք, բավարար կիթեն հայկական զգրոցներ իրավունքները հիմնավորելու համար: Անս զրտեք՝ Քաղբիղում տնրամյան զրպրոցի հիմնադրման մասին (տե՛ս Լ. Սննվյան, Պատմութիւն Արամյան ուղղային զգրոցի (Նոր Ըուզայի և Քաղբիղի թեմական ուսանողների) Նար-Էդ-զին շահին ուղղված միջնորդութիւնը) տե՛ս Ընտրքուն Յեր Ընկանչանց, Պատմութիւն Նոր Ըուզայի, հ. 2, էջ 83—85, և ԸՄՍԸ ԿԳԳԱ, ք. 57, ք. 1, գ. 224, թ. 12—15), Մոզաֆեր-Էդ-զին շահի ֆիրմանը (տե՛ս Ե. Յրանչյան, Ասրպատական, էջ 108—109):

ինքնավարութիւն։ Այդ իրավունքի արտահայտութիւնն են եղել սեփական ուսումնական ծրագրերը, Հայերն լեզվով ուսուցումը։ Գարոցները ստեղծվում և պահվում էին ծիսականների միջոցներով և ղեկավարվում էին քեմական կամ համայնքային խորհուրդների ընտրած հոգաբարձութիւնների կողմից։

Իրանի սահմանազրութիւմը, հիշտ է սահմանափակ ձևով, հրաշխավորվում էր ազգային դպրոցների գոյութիւնը։ Այսպես, հիմնական որոնքի շերտումներին 19-րդ հոգվածում խոսվում է ժողովրդական միջոցներով դպրոցների հիմնադրման մասին<sup>60</sup>։

Չնայած այս հրաշխիքին, պետութիւնը շրջանացնելու քաղաքականութիւն հետևանքով, որ 1936 թ. իրագործեց Ռզա շահը, ինչպես Հայկական, այնպես էլ ազգային այլ փոքրամասնութիւնների դպրոցները կառավարութիւն կարգադրութիւմը փակվեցին։ Հայերին ըստ կրօնական հասկանիչի սիրանացնելու համար հիմքեր լուսննալով (ինչ արվում էր ազրբեշանցիների, քրդերի ու մուսուլմանական այլ ազգերի նկատմամբ) իրանական իշխանութիւնները ընտրեցին զազութը ազգային դպրոցներ սեննալու իրավունքից զրկելու ուղին։

1941 թ. Մերձավոր և Միջին Արևելքում ծախված ազգային-ազատագրական շարժման նշման տակ իրանական իշխանութիւնները հարկադրված էին վերացնել ազգային դպրոցների արգելքը։ Հայկական դպրոցների վերականգնումը ձևականորեն իրականացվեց Քազրիզի քեմական, արքեպիսկոպոս ներսես Մելիք-Քանգլանի՝ Իրանի նոր շահին հղած միջնորդութիւն շնորհիվ<sup>61</sup>։

Վերականգնելով զազութի՝ դպրոցների վերաբերյալ ունեցած իրավունքները իրանական կառավարութիւնը, միաժամանակ գրանցում պարտադիր կարգով մտցրեց Իրանի լուսավորութիւն միջնորդութիւն տարրական դպրոցների ծրագրերը։ Այդ ծրագրերը ընդունելու հետևանքով, Հայկական դպրոցներում ուսուցման հիմնական լեզուն փաստորեն պարսկերենը դարձավ։

Հայկական դպրոցներում ծրագրից դուրս թույլատրված էր միայն հայոց լեզվի և կրօնի ուսուցումը։ Այդ հրկու առարկաներն էլ մացվեցին ոչ պարտադիր առարկաների շարքը։ 1946 թ. Քեհրանի քեմական խորհրդի միջնորդութիւմը կրօնը ճանաչվեց որ-

<sup>60</sup> «Конституция государства Елжнего в Среднего Востока», М., 1936, стр. 189.

<sup>61</sup> Լ. Մեմլյան, Հիշատակարան ու պատկերացույց Քեհրանի սիրայի Մուհամմադ, գարգեհի, Քեհրան, 1981, էջ 23.

պես պարտադիր առարկա<sup>60</sup>։ Սակայն հայոց լեզուն դեռևս այդպիսի համարում չի ստացել, թեև զազութի թեմական մարմինների ար այս ուղղությամբ չեն զազարեցրել իրենց շանքերը<sup>61</sup>։

Հայկական գոյրոցների հարցում Իրանի լուսավորության միևնիստությունը բնականաբար կողմնակից է պետական ծրագրի իրականացմանը, իսկ զազութի թեմական մարմինների վրա են ընկնում գոյրոցների էությունական բազայի պահպանման ու ամրապլանդման, գոյրոցական շենքերի կառուցման և այլ հոգսերը։ Սեփականության իրավունքների անսակեռից այդ գոյրոցները զազութի սեփականությունն են։

\* \* \*

Պատվամեծում իր ներկայացուցիչներն ունենալու իրավունքը իրանահայերը ստացել են 1905—1911 թթ. իրանական հեղափոխության ժամանակ։ Այդ իրավունքը էլնում է ընտրական իրավունքի համապատասխան հոդվածից, որ ընդունել է նրկորոգ գումարման մեղլիսը, 1908 թ. (ըստ դրա յուրաքանչյուր 50.000 մարդուց ընտրվում է մեկ պատգամավոր)։ Տվյալ դեպքում ազգային փոքրամասնությունները զազում են հատուկ կուրիաներում (ընտրախավերում) և կազմում են յուրորինակ, ըստ ազգային ու կրոնական հատկանիշի առանձնացված ընտրական օկրուգներ<sup>62</sup>։

Այս իրավունքը սահմանափակվում է զազութի շրջանակներով։ Դրանում համոզվելու համար բավական է քննել մեղլիսում հայերի պատգամավորների գործունեությունը։ Նրանց, ինչպես և ազգային մյուս փոքրամասնությունների պատգամավորների գործունեությունը մեղլիսի մյուս պատգամավորների համեմատությամբ սահմանափակված է զազութին վերաբերող հարցերի շրջանակով։ Մյուս հարցերում հայերի պատգամավորների գերը իրանական մեղլիսում լուկ ձեական է։

Հետևարար, այլյալ դեպքում էլ մենք բախվում ենք իրանական օրենսդրությանը բնորոշ մի երևույթի՝ ազգային փոքրամասնու-

<sup>60</sup> Եվկրանուկո, 1947, 12—13 նոյեմբերի

<sup>61</sup> Իրանի Հայկական գոյրոցների մասին տե՛ս «Մշակույթ» գլխի համապատասխան յոմբեր։

<sup>62</sup> Ազգային փոքրամասնություններին այդ իրավունքը տրվել էր դեռևս 1907—1908 թթ.։ Սակայն նապոմական հոգևորականության շանքերի հեռանքով հայերի ու Երևանից համար, այդ իրավունքը մեղլիսի ընտրությունների ժամանակ է չի արթնց (տե՛ս С. М. Азнав, К национальному вопросу в современном Иране. «Критические сообщения Ин-та народов Азии», 1964, № 77, стр. 48.

թյունների, մասնավորապես հայերի իրավունքները արոհելու, գրանց իրավական հարցերի տառնեմին խմբի մեջ գասելու նպատակը:

Հնարական իրավունքն ընդունելու տարին Իրանում գոյութուն ունեցող հայ բնակչության թիվը իրավունք էր տալիս մեջլիսում ունենալ երկու պատգամավոր, թեև իրանահայ գաղութը քաղկացած էր 80.000 հայութունից և պատմականորեն բաժանված էր երկու հատվածների, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր թեմական առանձին հաստատությունները, սակայն բուրժուա-կալվածատիրական շրջանները հեղափոխության տարիներին անտեսվեցին հայերի մեջլիսում երկու պատգամավոր ունենալու իրավունքը<sup>22</sup>:

Այդ հարցը կրկին քննության առարկա դարձավ 1915 թ., որից հետո գաղութի հայ բնակչությանը իրավունք արվեց մեջլիսում ունենալ նաև երկրորդ պատգամավորը:

Այս կարգը, որն արդեն ավանդույթ է դարձել, պահպանվում է մինչև օրս: Սակայն գրանցից որոշ շեղումներ երբեմն լինում են. օրինակ, հարավային նահանգներից հայերի պատգամավորը ընտրվում է նաև կենտրոնական նահանգների հայերի կողմից, թեև 1944 թ. այդ բնակչությունը ինքնուրույն թեմ է կազմել:

Չնայած մեջլիսում հայերի ունեցած ներկայացուցչության ձևական ընույթին, այդ իրավունքը նրանց որոշ հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում այնտեղ պաշտպանել իրենց շահերը: Օրինակ, հայերի պատգամավորները օգտվում են հայ բնակչության դիմումները և բողոքները քննարկելու, պետական ու զենկավար մարմիններին միջնորդություններ հարուցելու և այլ իրավունքներից:

<sup>22</sup> Մեջլիսում հայերի երկու պատգամավոր ունենալու հարցը 1908—1910 թթ. բուրժուա-կալվածատիրական լիբերալ շրջանների ու գաղութի թեմական մարմինների միջև բանավեճի առարկա դարձավ: Այն քննարկվել էր զեռես առաջին գումարման մեջլիսում (տե՛ս սՄՇակ, 1908, 8 և 25 Հունիսի) և նորից լույս աշխարհ և՛ավ ընտրված օրների կազմման ու երկրորդ գումարման մեջլիսի մասնակի նշանակույթից է, որ հայերը մերժեցին իրենց հակառակորդների այն թեզը, թե իբր իրենց այդ պահանջը պիտի որպես սովետապետական շարժմանը ունեցած նրանց մասնակցության հասուցում դիմվի (տե՛ս ս՛վերածնունդ, 1922, 28 Հոկտեմբերի): Հայ պատգամավորները մեջլիսում ներկայացում էին նաև առարի բնակչությունը, որը հիմնականում բնակվում էր Հյուսիսային նահանգներում: Ակամ 20-րդ գումարումից մեջլիսում առարիների ներկայացուցչին մի տեղ է հասկացված:



Գազուֆի թեմական մարմինները երկրի մինիստրությունների ու գերատեսչությունների, ինչպես նաև շահական պալատի հետ շփվում են այդ պատգամավորների միջոցով:

Հայերի, առորինների, գրադաշտականների ու հրեաների գազուֆներին մեղիքում ներկայացուցչություն ունենալու իրավունքը կրկին վերապահվեց 1960 թ.<sup>99</sup>:

Տարբեր ցենզերի գոյության հետևանքով (գրագիտության, նստակեցության, ունեցվածքի և այլն) իրանահայ աշխատավորների մեծ մասը զրկված է մեղիքի պատգամավորների ընտրություններին մասնակցելու իրավունքից: Այսպես, ընտրություններին մասնակցելու իրավունք ունեն միայն 20 տարին լրացած, ավյայ ընտրական շրջանում ոչ պակաս, քան 6 ամիս բնակվող ու հարկերը վճարած քաղաքացիները:

. . .

Ինչպես պարզվում է վերը ասածից, Իրանում տեղի հայ բնակչությանը արված իրավունքները սահմանափակվում են գազուֆի շրջանակներում: Իրանում իր արտահայտությունն է գտնում իրանական օրենսդրության առանձնահատկությունը: Այս առանձնահատկությունը պետք է նկատի առնել ամեն անգամ, երբ խոսքը վերաբերում է Իրանի հայ բնակչության իրավական վիճակին, քանի որ իրավական երաշխիքների կողքին այն իրանահայերի իրավունքների որոշակի սահմանափակումներ է ծնում:

Այդ սահմանափակումներից մի քանիսի մասին մենք արգեն առիթ ենք ունեցել խոսել:

Իրանում սահմանափակված են նաև հայերի միությունների, մոզուների ու մամուլի իրավունքները<sup>100</sup>: Այդ սահմանափակումներն, անշուշտ, զուտ ազգային բնույթ չեն կրում, այլ անչլում են քաղաքական մտախնդրի: Այսպես թե այնպես, 20-ական, ինչպես նաև 40 և 50-ական թվականներին արգելվեց մի քանի հայկական թերթերի, ամսագրերի ու այլ պարբերականների հրատարակությունը<sup>101</sup>: Այս խնդիր պատճառով պարբերականների թիվը իրա-

<sup>99</sup> Avery, Peter, Modern Iran, p. 490.

<sup>100</sup> նկատի ունենք «Հիմնական օրենքի լրացումների» 20 և 21 հոդվածները:

<sup>101</sup> Հայերեն թերթերի հետ միասնական արգելվեցին պարբերականներն, զրգերն ու ասորերեն թերթերը (տե՛ս С. М. Агаев, к национальному вопросу в современном Иране, «Критические сообщения Ин-та народов Азии», 1964, № 77, стр. 54).

նահայ գաղութում ի տարբերութիւն արտասահմանի մյուս գաղութների, խիստ սահմանափակ է:

20—30-ական թվականներին Իրանում իրենց գոյութիւնը պահպանողին հայկական գրեթէ բոլոր կուսակցութիւններն ու խրատավորումները: Ներկայումս Իրանում գործում է միայն դաշակցական կուսակցութիւնը:

Պետութեան գործերում կրոնի ազդեցութեան թուլացումից և, հատկապես, Ռզա շահի անցկացրած բարենորոգումներից հետո, իրանահայերի ու ազգային մյուս փոքրամասնութիւնների նկատմամբ նախկինում գոյութիւն ունեցող կրոնական հալածանքների մեղացումները զգալիորեն նվազել են:

30-ական թվականներին երկրորդ կեսին, Իրանի իշխող շրջանները որոշակիորեն փոխեցին ազգային փոքրամասնութիւնների իրավական վիճակի նկատմամբ իրենց ունեցած վերաբերմունքը՝ հրաժարվելով բիրանացեկուս քաղաքականութեան բացահայտ անկրից: Այսպես, ընդառաջելով գաղութի լայն հասարակութեան ցանկութիւններին, իրանական կառավարութիւնը Սպահանի համալսարանում բաց արեց հայագիտական բաժանմունք: Քիչ ավելի ուշ, 1964 թ. Թեհրանի համալսարանի բանասիրական ֆակուլտետում ևս բացվեց այդպիսի բաժանմունք:

\* \* \*

Ո՞րն է իրանահայ գաղութի այժմյան իրավական վիճակի առանձնահատկութիւնը: Իհարկէ, գաղութը շարունակում է իր գոյութիւնը կրոնա-եկեղեցական ինքնավարութեան շրջանակներում: Գաղութի իրավական դրութեան վրա, նախկինի պես շարունակում է ազդել Իրանի օրենսդրութիւնը, որն ի վիճակի չէ հայ քնակչութեանը լիարժեք երաշխիքներ տալ: այն է՝ հավասարութիւն օրենքի առջև առանց սեռի, տարիքի, ազգութեան ու կրոնի խտրութեան:

Այդպիսի պայմաններում կրոնա-եկեղեցական ինքնավարութիւնը ազանդարար շարունակում է գաղութի իրավական դրութեան հիմքը լինել: Ինքնավարութեան այդ ևնի շրջանակներում են գործում օրենսդրական ու գործադիր մարմինները, ինչպես նաև զանազան կազմակերպութիւններ: Այսպիսով, հայկական եկեղեցին կարևոր դեր է խաղում իրանահայ, ինչպես և ամբողջ սփյուռքահայութեան կյանքում, ընձեռնելով աշխարհիկ վարչական կառուցվածքի տարրեր: Միաժամանակ կրոնա-եկեղեցական ինքնավարութիւնը տեղի հայ քնակչութեան պահպանման ու համախմբման միջոց ու ձև է: Կրոնա-եկեղեցական ինքնավարութեան

չրջանակներում հայ րնակչութիւնն սզազում է մայրենի լեզվի, կենցաղի, ավանդութիւնների ու մշակույթի հիման վրա գոյատևելու հնարագորութիւնից:

### ԻՐԱՆԱՀԱՏՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Գզրոցներ: Գրականութիւն: Աղարւթիւն: Արածաւարչիւն: Քառան: Տպարաններ և ժամույ: Հարստապահաւարչիւն: Աղօմբներ: Գաղտեսներ: Նոր Զեւայի մասնագործներ ու բանգործներ:

Իրանահայ գաղութում մշակույթի օջախները ստեղծվել են դեռևս մինչև XVII դ.: Առաջին օջախներից մեկը, ամենայն հաճանականութիւնով, Ս. Քարէնսի վանքն էր, որը Արարատականի թեմի կենտրոնն էր: Արդեա թեմի աթոռանիստի նրա մասին հիշատակութիւններ կան Կիրակոս Գանձակեցու և Միքայել Զամչյանի մտու: Իրանում հայերի մշակութային կարևոր օջախներից էին նաև Սուլթանիի և Քավրիզի քաղաքները: Վկայութիւն է պատկանում մինչև 1600 թ. Քավրիզում հայկական դպրոցների գոյութիւն մասին:

XVII դ. սկզբին իրանահայերի մշակութային հիմնական օջախը գարձավ նոր Զուզան: 1633 թ. նոր Զուզայի թեմի առաջնորդ Գրիգոր Կեսարացին Ամենափրկիչ վանքին կից հիմնեց դպրոց, որը պատմական մի քանի փաստաթղթերում հիշատակվում է որպէս «համալսարան»: Գրիգոր Կեսարացին իր աշակերտների հետ միասին 1640 թ. հիմնեց նաև ապարան: Նոր Զուզան գարձավ նաև հայ կնոսպրոտների կարևոր կենտրոններից մեկը: Նորընդայնցիներին միջազարից ծնվեցին մի խումբ նշանավոր նկարիչներ, ծագկոզներ, երգիչ-գոսաններ:

XVIII դ. և XIX դ. սկզբին, պատերազմների և ֆեոդալական երկպառակութիւնների շրջանում մշակութային կյանքը գաղութում անկում ապրեց: XIX դ. կեսերից իրանահայ մշակույթը սկսեց վերածնվել:

\* \* \*

Իրանահայ գաղութում, ինչպէս և արտասահմանի մյուս հայ գաղթօջախներում, հատուկ դեր ունի ազգային դպրոցը: Արտասահմանի հայերի համար դպրոցը ոչ միայն լուսավորութիւնն ու կրթութիւնն օջախ է, այլև հոգևոր գոյատևման կարևորագոյն միջոց:

Դպրոցական կրթութիւնի պատմութիւնը, ամենայն հավանականութեամբ, սկզբում է հայ գաղթօրէինների ժազման առաջին իսկ օրերից: Պատմական տվյալները վկայում են, որ հայկական եկեղեցիներին ու վանքերին կից դպրոցներ են գոյութիւն ունեցել դեռևս XII—XIII դարերում: Սակայն զրանք բացառապէս հոգևոր դպրոցներ էին: Աշխարհիկ դպրոցները գաղութում երևան են զայնս միայն XIX դ. առաջին կեսին: Առաջին այդպիսի դպրոցները ստեղծվում են Քաղթիզում և Նոր Զուլայում՝ Կովկասի, Ռուսաստանի, Հնդկաստանի և այլ երկրների հայ մշակութային օջախների բարերար ազդեցութեամբ:

Նոր Զուլայում առաջին դպրոցը բացվեց 1833 թ., սուրբ Ստեփանոս եկեղեցուն կից: Մազրասցի բարեգործ Գ. Սամյանի գումարներով կառուցված այդ դպրոցը միջոցների սղութիւն պատճառով 3—4 տարի հետո փակվեց<sup>73</sup>, 1843 թ., Աստվածամայր եկեղեցու բակում կազմաթացի բարեգործ Ա. Արզարյանի միջոցներով բացվեց մի նոր դպրոց, որը կրում էր «Հայկական հայրենասիրական» անունը: 1853 թ. Համանման դպրոցներ հիմնվեցին սուրբ Մինաս և սուրբ Ստեփանոս եկեղեցիներին կից<sup>74</sup>:

1854 թ. Նոր Զուլայում բացվեց գաղութում առաջին իգական դպրոցը, որն ի դեպ Իրանում ևս առաջին իգական դպրոցն էր: Այն կառուցված էր կանանց Կատարիսյան վանքին կից, ճալացի Մ. Հորդանանյանի ծախքով<sup>75</sup>:

Նյութական զծվարութիւնների, ինչպէս նաև բավարար թվով ուսուցիչներ լինելու պատճառով այդ դպրոցները 1880 թ. միավորվեցին և կազմեցին Ազգային կենտրոնական դպրոցը, որի շենքը կառուցվեց Եսովայի, Բիրմայի և Հնդկաստանի հայերից հավաքած նվիրատվութիւններով<sup>76</sup>:

Արդեն XX դ. սկզբին՝ 1901—1905 թթ. Ռ. Պատկանյանի դպրոցական ընկեր, մոսկվացի Գևորգ Քանանյանի կողմած միջոցներով Նոր Զուլայում բացվեցին «Գևորգ Քանանյան» իգական դպրոցն ու մանկապարտեզը, որոնք սեղավորված էին բարեկարգ երկհարկանի շենքում<sup>77</sup>:

<sup>73</sup> Լ. Տեր-Նովնայեց, Պատմութիւն Նոր Զուլայի, հ. 2, էջ 255—259.

<sup>74</sup> «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 31—32.

<sup>75</sup> ՀՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 58, ց. 3, գ. 617, թ. 160: «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 32.

<sup>76</sup> Նույն տեղում:

<sup>77</sup> «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 32.

1835 թ. Քավրիզում հիմնվեց «Արամյան» դպրոցը, որի հար-  
յուրամյակը նշվեց 1935 թ.<sup>77</sup> Սկզբում այն տեղափոխված էր Քավ-  
րիզի թեմի առաջնորդարանի շենքում, Ղալա թաղում: Այնուհետև  
առանձին շինք կառուցվեց թեմակալ Սահակ Սաթուխյանի (առաջ-  
նորդ էր 1851—57 թթ. —Ն. Մ.) որոշքով «Արամյան» դպրոցի առա-  
ջին ուսուցիչներից մեկը Մեսրոպ Քաղիազյանն էր<sup>78</sup>:

1875—1877 թթ. «Արամյան» դպրոցում դասավանդել է  
Բաֆֆին: Նա մտադիր էր Քավրիզում հիմնել նաև կանանց դպրոց,  
ինչպես նաև տղարան: Սակայն հարկադրական մեկնումը Քավ-  
րիզից ի դերն հանեց նրա այդ ծրագրերը:

Քավրիզում իգական դպրոց հիմնելու գաղափարը ի վիճակի  
եղավ իրագործել «Ավարայրյան» ընկերությունը, 1879 թ.: 1883 թ.  
Քումանյան եղբայրների (Քումանյան առևտրական տան անդամ-  
ներ—Ն. Մ.) միջոցներով ստեղծվեց «Աննայան» դպրոցը, որը  
1905 թ. միացավ «Արամյան» դպրոցին: 1882 թ. Քավրիզի լիա-  
վա թաղում բացվեց «Շալվազյան», իսկ 1895 թ. «Քամարյան»  
դպրոցը:

Իրանական Հեղափոխության տարիներին, 1909 թ. Քավրի-  
զում հիմնադրվեց ևս մի դպրոց՝ թեմական կենտրոնական միջնա-  
կարգ ուսումնարանը:

Քեհրանում հայկական դպրոցները հիմնվել են շատ ավելի  
ուշ, քան նոր Զուլայում և Քավրիզում: Դրա պատճառը այդ ժա-  
մանակներում Քեհրանի հայ բնակչության փոքրաթիվ լինելն է:  
Հանրակրթական առաջին՝ «Շալվազյան» դպրոցը Քեհրանում բաց-  
վեց 1870 թ., Դարվազի Ղազվին թաղում: Կանանց կազմակեր-  
պությունների՝ աղջիկների համար դպրոց հիմնելու ջանքերը քսան  
տարի մնում էին անարդյունք: Միայն 1891—1892 թթ. Քեհրանում  
հիմնվեց առաջին իգական դպրոցը: 1891 թ. Ազգային դպրոց բաց-  
վեց Դարվազի Ղազվին թաղում, իսկ 1903 թ.՝ դպրոց Դարվազի  
Դովլաթի թաղում:

1910 թ. Հասանարազ թաղամասում, որտեղ այդ ժամանակ  
ապրում էր Քեհրանի հայ բնակչության մեծամասնությունը, կա-  
ռուցվեց «Շալվազյան» նոր դպրոցը:

Դավառներում հայկական դպրոցներ սկսեցին երևան դալ  
XIX դ. վերջին և XX դ. սկզբին: Անցյալ դարի 70-ական թվական-

<sup>77</sup> «Վերածնունդ», 1935, 8 զվածներին:

<sup>78</sup> Ն. Աննայան, Քումանյան «Արամյան» ազգային դպրոցի, Քավրիզ, 1928,  
էջ 12—13 և 26—28:

ներին գաղտնեի կային Սալմաստի Հաֆթվան, Փայաշուկ, Ղալա-  
սար գյուղերում: Ավելի ուշ գաղտնեի բացվեցին նաև Մարնա,  
Ախթախանա, Սալբա և այլ գյուղերում: XX դ. սկզբին գաղտնեի  
կային Սալմաստի գավառի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերում:  
1903 թ. Փայաշուկ գյուղում տեղական գաղտնեի համար կառուցվեց  
երկհարկանի շենք: 1904—1905 թթ. ուսումնական տարում Սալ-  
մաստի 11 գաղտնեիում 800 աշակերտ էր սովորում:

1885 թ. տեղի հեղեղեցուն կից գաղտնեի հիմնվեց Մարաղայում:  
1898—1900 թթ. Քազրիզի հայ կանանց բարեգործական ընկերու-  
թյան ջանքերով գաղտնեի բացվեցին Ուրմիայի, Մաքուի, Ղարա-  
գաղի և Քարանդուզի մի քանի գյուղերում և քաղաքներում<sup>79</sup>:

XX դ. սկզբին հայկական գաղտնեի բացվեցին երկրի Հնաս-  
վոր շրջաններում: 1904 թ. Համազանում, իսկ 1905—1909 թթ.<sup>80</sup>  
Ղազվինում, Մեչհնում, Սուլթանաբազում, Ռաշտում և Էնզելիում:

Այդ տարիներին գաղտնեի կային Զհարհայի շրջանի 8 գյու-  
ղերից լորում<sup>81</sup> Լիվասիան, Վերին Քոնարք, Մամուզա և Սիրաք:  
Փերիայի շրջանում գաղտնեի համեմատաբար քիչ էին. 27 գյու-  
ղերից գաղտնեի ունեին 10-ը, իսկ Բուրվառի, Քազազ, Գյափուա  
և Քամարա շրջաններում գործում էր ընդամենը մի քանի գաղտնեի:

Իրանի հայկական գաղտնեիի վրա հատկապես ուժեղ էր Կով-  
կասի մշակութային կենտրոնների ազդեցությունը: Մասնավորա-  
պես Քիֆլիսից Իրան էին գալիս ուսուցիչներ, ստացվում էր ուսում-  
նական ու մեթոդական գրականություն, Կովկասի հայկական գաղ-  
տնեիի ծրագրերը:

Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած տարի-  
ներին իրանահայ գաղտնեի վրա սկսեց զգացվել Իրանի կառավա-  
րության անցկացրած բարեփոխումների ազդեցությունը: 1927 թ.  
մեյլիսի ընդունած օրենքներով, ինչպես նաև 1932 և 1933 թթ. որո-  
շումներով երկրում մտցվեց պարտադիր տարրական (վեցամյա)  
կրթություն, վերանայվեցին ուսումնական ծրագրերը, ավելացվե-  
ցին բնագիտական առարկաներին հատկացվող դասաժամերը<sup>82</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմը մեծ վնաս հասցրեց  
երկրի հյուսիսային շրջանների գաղտնեիին, որտեղ, ինչպես նշ-  
վեց, ժամանակին ստեղծվել էին գաղտնեի առաջին կրթական օ-  
չախները: Սալմաստի երրեմնի 11 գաղտնեիից գործում էին միայն

<sup>79</sup> Քարակահայ տարեցույց, 1923, էջ 31:

<sup>80</sup> E. A. Дорощенко, Система просвещения в Иране, М., 1959, стр. 23—25.

Հավթվան, Փայաշուկ և Մայլամ գյուղերի գաղթյունները: Ղարազաղի հայկական 21 գյուղեր ունենին 10 գաղթոց, իսկ Ուրմիայի շրջանի 33 գյուղերից ու մեկը գաղթոց չունեն<sup>81</sup>:

20—30-ական թվականներին գաղթոցական կրթութիւնը ավելի մեծ թափով էր զարգանում հարավային և կենտրոնական զավառների հայ գաղթաշխուհներում: 1920—1921 թթ. գաղթոցներ հիմնվեցին Ահմադում, Սուլթանարազում, 1922—1927 թթ. արդեն գաղթոցներ կային Չհարմհայի բոլոր գյուղերում<sup>82</sup>, Փերիայի շրջանում դրանց թիվը հասավ 17-ի, Բուրվազի գյուղերում՝ 6-ի<sup>83</sup>:

Հայ երեխաները այդ տարիներին ազգային գաղթյուններից բացի սովորում էին ամերիկյան, անգլիական և ֆրանսիական միսիոններական գաղթյուններում<sup>84</sup>, որոնց հիմնական խնդիրն էր երիտասարդութիւն շրջանում տարածել Արևմուտքի ազդեցութիւնը: Եգզովչով ազգային գաղթյունների սակավութիւնից, երանք կարողացան զնայի իրենց հրատարակել հայ երիտասարդութիւն մի նշանակալից մասին: Այսպէս, 1926 թ. Քեհրանի «Հայկազայան» գաղթոցում սովորում էին 228, իսկ մանկապարտեզում՝ 64 երեխաներ, այնինչ ամերիկյան գաղթոց էին հաճախում 350, ֆրանսիական գաղթյունները (արական «Սան Լուի», իգական «Ժաննա դը Արկ», «Սան Ժոզեֆ») 155 երեխաներ<sup>85</sup>, Ամերիկյան միսիոններական գաղթյուններում էր սովորում Քերմանշահի և Ուրմիայի մարզի հայ երեխաների մեծ մասը: Համազանի ամերիկյան երկու գաղթյուններում (արական և իգական) 1925—1926 ուսումնական տարում սովորում էին տեղի հայերի 100 երեխա:

Միսիոններական գաղթյուններում հայոց լեզվի, պատմութիւն և գրականութիւն ժամերը սահմանափակ էին, իսկ մի շարք զնայքերում գործնական ընթացք էր ստացել ուժացման միտումը: Համազանի ամերիկյան գաղթյուններում, օրինակ, հայոց լեզուն ծրագրից հանված էր: Չնայած տեղի հայ բողոքական համայնքի դիմումներին ու բողոքներին, այդ գաղթյունները շարունակում էին իրենց նման վարվելակերպը<sup>86</sup>:

Ժողովրդական լուսավորութիւն ունեցող և, մասնավորապէս, գաղթյունները հոգևորականութիւն վարույթից անշատելը իրանում

<sup>81</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 52—53:

<sup>82</sup> Ավ. Նյգարյան, «Երանի Չհարմհայ գաղթոց», էջ 66—72:

<sup>83</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 63:

<sup>84</sup> Grasseclose, Elgin, Introduction to Iran, New-York, 1947, p. 113.

<sup>85</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 114—116:

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 81—82:

Քուլացրին միսիոներների ազդեցությունը: 30-ական թվականների սկզբին միսիոներական գրեթե բոլոր դպրոցները փակվեցին:

Այս հանգամանքը նպաստեց զաղութում դպրոցաշինության դործի զարգացմանը: 1932—1933 թթ. Հնդկաստանի բարերար Գալիթ Գալթյանի միջոցներով Քեհրանում բացվեց «Փուշիշ-Գալթի» դպրոցը: Այդ իսկ տարիներին դպրոց Հիմնվեց նաև Մեհրեզն-Սուլեյմանում:

30-ական թվականների սկզբին Քեհրանի, Քավրիզի, Նոր Զուլայի և այլ քաղաքների Հայկական դպրոցներում ուսումնական նոր ծրագրեր մտցվեցին: Ավելի մեծ ուշադրություն դարձվեց բնագիտական առարկաներին, ավելացավ պարսկերեն և անգլերեն լեզուներին հատկացվող դասաժամերի թիվը<sup>80</sup>:

1936 թ. շրջադարձային եղավ իրանահայ դպրոցի համար:

Գեոնս 20-ական թվականներին Ռզա շահի կիրառած քաղաքականությունը, որի նպատակն էր «իրանացնել» երկրի բոլոր ժողովուրդներին, շուտով շոշափեց նաև անդի հայ քնակչության շահերը:

Այն բանից հետո, երբ Ռզա շահի քուրժուա-կալվածատիրական բլոկի կառավարությունը սկսեց հակվել ֆաշիստական Գերմանիայի կողմը և երկրում իրագործել շովինիստական քաղաքականություն, մեկը մյուսի ետևից Հայկական դպրոցները սկսեցին փակվել:

Սակայն իրանահայ զաղութը չհաշտվեց զրա հետ: Հայկական բնակավայրերում սկսեցին կազմակերպվել հայոց լեզվի դասընթացներ, գրադարաններ, հայոց պատմությունն ու գրականությունն ուսումնասիրող խմբակներ, միջոցառումներ, որոնք կոչված էին փոխարինելու Հայկական դպրոցին: Այս գործում առանձնահատուկ դեր խաղացին Քեհրանի, Քավրիզի, Նոր Զուլայի և մի շարք այլ քաղաքների հայ կանանց կազմակերպությունները:

Գաղութն առանց դպրոցների մեաց ընդհուպ մինչև 1941 թ. Ռզա շահի հրաժարումից հետո Հայկական դպրոցները վերստին Հնարավորություն ստացան շարունակել իրենց գոյությունը:

Հայկական դպրոցների վերականգնման պրոցեսը ըստ ժամանակի ամենուրեք միասնակ էլի: Այսպես, Քեհրանի դպրոցները վերականգնվեցին 1941—1944 թթ., Արագանի «Ազատ» դպրոցը իր գործունեությունը վերսկսեց 1942 թ., իսկ Քավրիզի «Արամյան» դպրոցը՝ 1944 թ.<sup>81</sup>: Գաղութի դպրոցների մեծ մասը կրկին կյանքի

<sup>80</sup> «Կիրանեհա», 1930, 28 նոյեմբերի:

<sup>81</sup> «Կիրանեհա», 1945, 18 մայիսի:



կուզեց միայն 50-ական թվականներին կեսերին, որի հիմնական պատճառը երկրի քաղաքական անկայուն վիճակն էր:

Այդ նույն տարիներին սկսեցին գործել ոչ միայն քաղաքների, այլև գյուղական վայրերի՝ Փերիայի, Զհարմհայի, Ռեզայի, իսկ ավելի ուշ՝ նաև Ղարազաղի գյուղոցները:

Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին և ետպատերազմյան շրջանում գյուղացական շինարարությունը հասկացելու մեծ թափ ստացավ Քեհրանում, որի հայ բնակչությունն արագ աճում էր: 1941 թ. Քեհրանի Հյուսիսային արվարձաններում՝ Բեշարաղում, Ֆիշերարաղում և Համչեղիեում բնակություն հաստատեցին գյուղերից անդափոխված մի քանի հազար հայ գյուղացիներ: Նրանց համար մի խումբ Քեհրանարևակ հայերի միջոցներով 1942 թ. Բեշարաղում կառուցվեց «Դանայի» գյուղոցը:

1946 թ. հետո Քեհրանի Հյուսիսային ծայրամասում հիմնվեցին նաև «Արամ» («Արտվյան»), «Ե՛հ» Աղիզ» (Հեշմաթին թաղում) և «Հախնազարյան» (Յուսուֆարաղում) գյուղոցները:

Հետագա տարիներին Յուսուֆարաղ թաղում րացվեց «Արաքա» գյուղոցը, Բահար թաղում՝ «Անի» («Առառամ»), իսկ Սեյնդ թաղում՝ «Ե՛հ Արաք» գյուղոցները:

1954 թ. Քեհրանցի Մ. Սարգսյանի միջոցներով կազմակերպվեց «Մարիամյան» գյուղոցը: Վերջինիս նուազանի շենքում տեղավորվեցին նաև «Քուշեշ-Դավթյան» գյուղոցի աղբիկների դասարանները: 1957—1958 թթ. նոր շենքում սկսեց պարապմունքները նաև «Քուշեշ-Դավթյան» գյուղոցը: Քառահարկ այդ կառույցի շինարարության համար միջոցները հանդանակվել էին Քեհրանի հայ բնակչությունից: 1958 թ. Մ. Սահակյանի միջոցներով գյուղոցի նահանգի շենք կառուցվեց Հեշմաթին թաղամասում: Նույն թվականին Մաշիդին թաղում հիմնադրվեց «Արարաք» գյուղոցը: 50—60-ական թվականներին Քեհրանում րացվեցին «Հուր», «Նաիրի» և «Քունյան» գյուղոցները: 1960 թ. բարեգործ Ալդինյանի նվիրած թաղամասում գրվեց «Արաք» գյուղոցի նոր շենքի հիմքը, որը րացվեց 1969 թ.:

Նուպատերազմյան տարիներին գաղութի մշակութային կենտրոններից մեկն էր Արազան քաղաքը: 1949 թ. այնտեղ կառուցվեց «Աղար» գյուղոցի նոր շենքը:

Այդ տարիներին գյուղացական նոր շենքեր երևան եկան նաև Մեշեղում, Ռաշտում և այլ քաղաքներում:

Աշակերաների կողմից մայրենի լեզվի, պատմության և գրականության յուրացումն ապահովելու անհրաժեշտությունից զրգոված

40—50-ական թվականներին տարրական դպրոցների մի մասը վերածվեց միջնակարգի։ Ուսումնական պրոցեսի երկարակամ շնորհիվ հնարավոր դարձավ ընդգրկել Հայագիտական առարկաների ծրագրի լրիվ շրջանակը։ Այդ ժամանակ միջնակարգ դպրոցներ դարձան Քեհրանի «Քուչեշ-Գավթյան», «Մարիամյան» և «Սահակյան», Արազանի «Ազար», Քավրիզի «Արամյան-Հայկազյան», Նոր Զուղայի «Կատարինյան» և «Փանանյան» դպրոցները։

Տեղի թեմական մարմինների իրավասությունը նեֆակա գրոցոցներից բացի, Քեհրանում կան նաև մասնավոր դպրոցներ։ Դրանք պետական ծրագրերին համաձայն երիտասարդությունը ուսուցանում են հայոց պատմություն, գրականություն և այլ առարկաներ։ Այդ դպրոցներից մի քանիսն ունեն նաև անդերեն կամ ֆրանսերեն լեզվի դասընթացներ։

Այգորինակ մասնավոր դպրոցներից ամենահինը «Րոսթան» է։ Ներկայումս այն ունի նախապատրաստական բաժանմունքներ (աղբիկների և տղաների համար՝ առանձին), ինչպես նաև միջնակարգ իզական բաժին՝ աստիճանային անոթությունով։

1946—1947 ուսումնական տարում բացվեց «Սանգուիտ», իսկ 1955 թ.՝ «Նուրար» դպրոցը։ Վերջինս հիմնադրված է «Քեհրանի հայ կանանց բարեգործական ընկերություն» միջոցներով։ Վերջին տաս տարում Քեհրանում ստեղծվել է ևս վեց մասնավոր դպրոց՝ «Բերսարե», «Քարան», «Մաֆֆի», «Սթանչ», «Փարթովի», ինչպես նաև «Այրիան» դպրոցը՝ Վանաջում։

Բացի «Փարթովի»-ից, որը միջնակարգ է, մյուս դպրոցներում ուսման անոթությունը վեց տարի է։ Հիշված դպրոցներից միայն «Բերսարեն» է իրական։

Այսպիսով, Քեհրանի ազգային 14 դպրոցներից թեմական մարմինների սեփականությունն են «Քուչեշ-Գավթյան», «Մարիամյան», «Սահակյան» և «Արաքս-Այգինյան» դպրոցների շենքերը։ Մյուս դպրոցները տեղավորված են վարձու շենքերում։ Տեղական թեմական մարմինների սեփականությունն են նաև Ահվազ, Ռեզայի, Համազան, Մեսչեդ-Սուլեյմանի, Դավթին, Մեշեդ, Փեշինի, Ռաշտ, Քերմանշահ, ինչպես նաև Նոր Զուղա, Քավրիզ և Արազան քաղաքների դպրոցական շենքերը։

Ներկայումս Քեհրանում 22 (ներառյալ մասնավորները) հայկական դպրոց կա։ Դրանցից 5-ը միջնակարգ են, 17-ը՝ տարրական։ Եթե նկատի առնենք, որ դպրոցներից մի քանիսը քաղկացած են արական և իզական առանձին բաժանմունքներից, ապա քաղա-

յում տարրական դպրոցների թիվը փաստորեն 20-ից ավելի է՝ Ամբոջ գաղութում գործում է 40 քաղաքային դպրոց:

Իրանահայ գաղութի դպրոցական կրթության համակարգին անմիջապես հարում են նաև մանկապարտեզները, որոնք, որպես կանոն, ունեն դպրոցական նախապատրաստական խմբեր: Գեոևս 1899 թ. Քաղթիզի բարեգործական ընկերությունը կիսովա թաղում բացել էր մանկապարտեզ, որն առաջինն էր նրկրում: 1907 թ. այդպիսի մանկապարտեզ բացվեց նաև Ղալա թաղամասում<sup>50</sup>: Ինչպես արգեն նշվեց, նոր Ջուղայում «Գևորգ Քանայան» մանկապարտեզը հիմնվել է 1902—1905 թթ.: Մտաավորապես նույն տարիներին Քեհրանում ստեղծվեց մանկապարտեզ, որը կրում էր «Մանկական պալատ» անունը<sup>51</sup>:

Փամանակակից բնույթի էին Քեհրանում բացված «Քերասրես» (1931)<sup>52</sup> և «Քումանյան» (1944) մանկապարտեզները: Մեր հիշատակած բարերար Այգինյանի նվիրած հողակտորի վրա 1963 թ. Քեհրանում կառուցվեց «Փուշեշ» մանկապարտեզի շենքը:

1944 թ. նույնատիպ մանկապարտեզ հիմնադրվեց նաև Արազանում<sup>53</sup>:

Գաղութում դպրոցական կրթությունը կազմակերպված է եռաստիճան կարգով. միամյա, նախապատրաստական բաժանմունք, վեցամյա ժամկետով տարրական դպրոց և միջնակարգ դպրոց մինչև 12 (Արազանում՝ 11) դասարանը: Իրանի հայկական դպրոցներում ուսուցումը տարվում է արևելահայ լեզվով: 30-ական թվականներին Քեհրանի դպրոցների վերջին երկու դասարաններում անցնում էին նաև արևմտահայերեն, իսկ նոր Ջուղայի զբարոցներում՝ գրաբար:

Հայկական դպրոցների համար դասագրքերն ու ուսումնական մեռնարկները կազմվում են տեղում: Դրանց համար օգտագործվում են սփյուռքահայ ալլ գաղութներում, ինչպես նաև Հայկական ՍՍՀ-ում հրատարակված դասագրքերը:

Գաղութի դպրոցները պահվում են միայն իրանահայ բնակչության միջոցներով: Համեմատաբար ավելի բարեկարգ են քաղաքների դպրոցական շենքերը: Գյուղական դպրոցները ավելի պակաս բարեկարգ պայմաններում են. ձվարած են փոքրիկ, հա-

<sup>50</sup> «Վերածնունդ», 1951, 5 մայիսի:

<sup>51</sup> «Վերածնունդ», 7 ապրիլի:

<sup>52</sup> «Վերածնունդ», 1931, 22 հոկտեմբերի:

<sup>53</sup> «Վերածնունդ», 1944, 12 ապրիլի:

Հախ խաղար, կիսաքանդ, ձմռանը՝ խոնավ, իսկ ամռանը՝ փոշոտ անակներում: Դրանց մեծ մասում ուսման տեղափոխումը 2-ից 4 տարի է: Դպրոցական միջոցների կարգավորման հարցը շարունակական ցածր խնդիր է դարձել գաղութի համար: Դպրոցների միջոցները կազմվում են հարուստ անձանց կտակներից, նվիրատվություններից, եկեղեցիների նպաստներից ու բարեգործական ընկերությունների անդամավճարներից: Այդ միջոցների նշանակալից մասը գոյանում է ուսման վարձից:

Իրանական իշխանությունները դրամական բավարար օգնություն չեն ցուցաբերում դպրոցներին: Պետական նպաստ են ստանում միայն մի քանի դպրոցներ: Լուսավորության մինիստրությունը աշխատավարձ է վճարում միայն պարսից լեզվի և պետական ծրագրի մեջ մտնող մյուս առարկաների ուսուցիչներին:

Վճարովի ուսումը Ժանր բոս է հայ աշխատավոր խավերի համար: Չնայած բարեգործական ընկերությունների հոսանքան շանցերին, լուսնոր ժնոզների երեխաներից շատերը հարկադրված են հաճախել պետական դպրոցներ, ուր ուսման վարձը համեմատաբար ցածր է:

Մտավոր հաշվումներով դազութում սովորող աշակերանների թիվը հասնում է 15 հազարի: Սովորող երիտասարդության 95% -ը ազգային դպրոցներն է հաճախում, Ըստ սոցիալական դրության՝ նրանք հիմնականում հայ բնակչության հարուստ և ունեոր խավի երեխաներն են: Այդ դպրոցներում ավելի փոքր թիվ են կազմում արհեստավորների, բանվորների ու գյուղացիների երեխաները:

\* \* \*

Իրանահայ գրականության ակունքը աշուղական պոեզիան է, որ XII դ. մեծ զարգացում էր ապրում Նոր Զուլայում, ինչպես նաև Փերիալի, Գհարմհալի և այլ շրջաններում: Հայ գուսանական արվեստը Իրանում շարունակում էր զարգանալ նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև XX դ.<sup>30</sup> Սակայն տեղի հայ գրականությունը ստեղծվում էր անբարենպաստ ժամանակաշրջանում (XVI—XIX) դդ.), երբ անկում էր ապրում առհասարակ պարսկական ամբողջ գրականությունը: Դրա հետևանքով, նույնիսկ XVII դ., երբ դազու-

<sup>30</sup> Տե՛ս Լ. Մեմյան, Արուզ Լուհանես, Վենետիկ, 1929, Այուզ Ամիր օղլի, Վենետիկ, 1930, Հայ բանաստեղծութան մտքուկները Նոր Զուլայում և Լընգ-կաստանում, Վրենս, 1930, Արուզ Լուրուֆյան օղլի, Փեհլան, 1948, Իրանի երգություն հայ աշուղներ, Վրենս, 1925 և այլն:

թում ծաղկում էր մշակույթը, հալ գրականությունը, մասնավորապես բանասանդղությունը, շկարագացած բարեբանալ գուսանական քնարերգության մակարդակից: Գաղութում արձակ ու չափածո գրականությունն սկզբնավորվեց XIX դ., երբ երկրի գրականությունը վերածննդի առաջին նշաններն էր ցույց տալիս: Իրանահալ գրականության զարգացման վրա զգալի ազդեցություն են ունեցել XIX դ. երկրորդ կեսին առաջ եկած գրական այն հոսանքները, որոնք արտահայտում էին իրանական երիտասարդ բուրժուազիայի շահերը: Իրանահալ գրական պոեզիայը նշանակալից չափով ձևավորվել է նաև Կովկասի և Մուսաստանի, ինչպես նաև արտասահմանի հայկական մյուս գաղութների գրականությունների ներազդմամբ:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրանահալ գրականության զարգացման բնորոշ առանձնահատկությունը նոր ձևերի որոնումներն են, որոնումներ, որոնց արդյունքը թարգմանական մի շարք ստեղծագործությունների երևան գալն էր: Գրական կյանքի այս ժամանակաշրջանը նշանավորվում է հանրահայտ թարգմանիչներ Լոմֆանենու Մառհչյանի և Լոմսիսի Միրզայանի առպարեզ գալով:

Մասնհյան-թարգմանչի գրական գործունեությունը սկսվել է դեռևս նասրեղյին շահի պալատում: Նա շահի համար թարգմանել է մի քանի ստեղծագործություններ, այդ թվում Ալեքսանդր Դյումայի, Պյոն Լոթի և Զարլզ Դիկկենսի մի քանի երկերը: Այդ տարիներին նա թարգմանել է նաև Մուլիերի մի քանի թատերգությունները:

Լոմֆանենու Մասնհյանի թարգմանությունների ոսկե բաժինը կազմում են Շեքսպիրի ստեղծագործությունները՝ «Համլետ», «Լիր», «Տիտոս», «Մակբեթ», «Ամառային գիշերվա երազը», «Ոչնչից շատ ազմուկ», «Լուսինս Կեսար», «Ինչպես կամենաք», «Անտոնիոս և Կլեոպատրա», «Կարիոլան», «Փոթորիկը»:

Լոմֆանենու Մասնհյանը Շեքսպիրի ստեղծագործությունների անզուգական թարգմանիչ լինելուց բացի, եղել է անվանի շեքսպիրագետ: Նա, բացի այդ, հայոց լեզվի ճանաչված նորարարներից մեկն էր:

Նեղուների անթերի իմացությունը (նա տիրապետում էր անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, արաբերենին, պարսկերենին և հայերենին), բարձր կրթվածությունն ու թարգմանչի բնատուր ձիրքը Լոմֆանենու Մասնհյանին դարձրին հայ թարգմանա-

կան գրականութիւնի դարաւոր ավանդների արժանաւոր ժառանգորդը:

Անցյալ դարի 90-ական թվականներին է սկսել իր թարգմանական գործունեութիւնը նաև Լոսանի Միրզայանը: Նրա գրչի առաջին փորձերից է Վալտեր Սկոտի «Էլնաի լեզին» ստեղծագործութիւնը<sup>94</sup>: 1894 թ. նա սկսում է նույն հեղինակի այլ գործի՝ «Վոլգիա»-ի լորդի թարգմանութիւնը: Այն տպագրեց ժամանակին Քիֆլիսում գործող հրատարակչական ընկերութիւնը: Քիֆլիսում եղած ժամանակ Լ. Միրզայանը թարգմանել է Լեոնտոսովի «Գնդ» պոեմը: Այդ, ինչպես նաև Քենդրանից նրա ուղարկած՝ Բ. Լիստոնի «Պոստիլի վերջին օրը» վեպի թարգմանութիւնը հետագայում լույս տեսան Քիֆլիսում:

Վերագտնաւորվ Քենդրան Լ. Միրզայանը թարգմանում է Մոլիերի «Շլաշ»<sup>95</sup> և Բայրոնի «Վորաբրա»: Երկու թարգմանութիւններն էլ հրատարակվեցին Քենդրանում: Հետագա տարիներին նա իր թարգմանած բանաստեղծութիւնները ամփոփեց «Մաղկաքաղ» ժողովածուի մեջ (ավելի քան 70 զանազան ռուսաւորներ—700 քառատող): 1910 թ. Լոսանի Միրզայանը թարգմանեց էջ. Ռոստանի «Միրանո» դր Քիրժերակա թատերգութիւնը:

Սկսած 1913 թ. Լոսանի Միրզայանը ձեռնամուխ է լինում պարսից գրականութիւնի լավագույն ստեղծագործութիւնների թարգմանութիւնը: Այդ տարիներին նա հատկապէս է թարգմանում Մադուց, Հաֆեզից, Բարա Քահեր Օրիանիից, Օմար Խայամից նրա կատարած թարգմանութիւնները, որ մինչ այսօր մնում են լիարժեք լույս տեսնող քնարերգութիւնի սիրահար Մանուկ Մարտինի հրատարակութիւնը: Դրանց հետ մեկտեղ տպագրվեցին Բարա Քահերից և պարսիկ այլ բանաստեղծներից կատարված մի քանի թարգմանութիւններ: 30-ական թվականներին Լոսանի Միրզայանը թարգմանում է երեք հատված Ֆիրդուսի «Շահնամ»-ից: Լ. Միրզայանը մի քանի բանաստեղծութիւն է

<sup>94</sup> Լոսանի Միրզայանը ոչնչ է այդ ստեղծագործութիւնները գրաւոր թարգմանել, սակայն Լոսանի Մանուկի խորհրդով հրատարակեց այդ գործերից: Աշխարհորդին տիրապետելու նպատակով, նա 1892 թ. ձեռնամուխ եղավ Մեկնիի «Էլթով» և «Սոլա» վեպի, ինչպես նաև Էնեսի «Մասնաւոր» գրքի փորձական թարգմանութիւնը:

<sup>95</sup> Հայ յիսուսները այդ թատերգութիւնը բնագործն է պաշտօնաւոր, որին ներկա է լինում Մուգա ֆերդինանդը:

Քարգմանն էր նաև Ռարինդրանաթ Տազորից, որի հետ նա հաստատել էր բարեկամական կապեր:

1905—1911 թթ. իրանական հեղափոխության ազդեցությամբ գաղութում սկսում է ձևավորվել բանաստեղծների ու գրողների նոր սերունդ, երևան են գալիս ստեղծագործություններ, որոնք և կազմում են իրանի արդի հայ գրականության հիմքը: 20-ական թվականներին Քավրիզում, Քեհրանում և մյուս քաղաքներում կազմվում են գրական զանազան միավորումներ: 1924 թ. Քեհրանում սկսեց լույս տեսնել գրական-գեղարվեստական «նոր պատգամ» ամսագիրը: Այս ուղղությամբ կատարված հետազոտ քայլերի արդյունքը եղավ «նոր էջ»<sup>56</sup> գրական միավորման ստեղծումը (1932 թ.), որը գործում է ցայսօր:

40—50-ական թվականներին առաջ եկան գրական այլ միավորումներ, որոնք, սակայն, երկար կյանք չունեցան: Տեղացի բանաստեղծների և գրողների՝ գրականության զարգացման գործին նպաստելու ձգտման ու ջանքերի արդյունքն էր 1961 թ. «Երանի հայ գրողների միություն» կազմակերպումը<sup>57</sup>:

Գաղութում գրական կենտրոնի ստեղծման հապաղումը բացատրվում է տեղացի գրողների՝ հայ ազգային գրականության հետ ունեցած ավանդական կապերի գոյությունը:

Գաղութի շատ բանաստեղծներ ու գրողներ կրել են լոկալանենս Քումանյանի, Ողիշի Գարենցի, Ավետիք Իսահակյանի, Միաման-Քոչի, Վարուժանի, Միսաք Մեծարենցի՝ հատկապես Վահան Տերյանի ստեղծագործության ազդեցությունը<sup>58</sup>: Իրանահայ բանաստեղծների ու գրողների խումբը իր արվեստը զարգացնում է հայ ազգային գրականության հունով:

Այս ուղղության հայտնի դեմքերից են Արամ Գառնեն, Գևորգ Գարֆին և Մարգար Ղարաբեկյանը (Գն):

Արամ Գառնենի<sup>59</sup> ստեղծագործությունների մեջ զգալի տեղ են գրավում հայրենիքի կարոտի ու թախծի տրամադրությունները, սակայն հին մտայնության բեռին հնազանդ բանաստեղծը ասես

<sup>56</sup> Նոր միավորման սեղանները զեկության համար դիմեցին «Վերստենդե» խմբագիր Հայկ Գարադաշին, նա հայտնեց, թե նրանց համար նոր էջ կրոցի իր թերթում: Այստեղից էլ միավորման սեղանումը:

<sup>57</sup> «Երանահայ արդի գրողներ», Քեհրան, 1964, էջ 7:

<sup>58</sup> Ա. Տոնոյան, Անդառառ իրանահայ բանաստեղծություն, Բեյրութ, 1963:

<sup>59</sup> Արամ Գառնեն (Արամ Տեր-Բողոքասարյան) մեզից է 1908 թ. Քավրիզում: Նախնական և միջնակարգ կրթությունը ստացել է տեղի «Արամյան» և «Գն»-ընտանիքում: Թեմական զարգանքներում:

Հեռանում է իրականությունից, արվում անցյալի հիշողություններին ու հուշերին, նա չի ուզում նկատել Սովետական Հայաստանի գոյությունը և զովեբզում է հայերի վերացական, ոչ երկրային հայրենիքը:

1924 թ. Քավրիզում լույս են տեսել նրա «Հրաժեշտի պոեմ», «Բանաստեղծություններ», գրքերը, 1926 թ.<sup>100</sup> «Արա և Շամիրամ» գրքույկը: Արամ Գառոնեի «Թրեթի երգեր» ժողովածուն հրատարակվել է Կոնստանդուպոլիսում, 1930 թ.: 40—60-ական թվականներին լույս են տեսել Ա. Գառոնեի մի քանի այլ բանաստեղծական ժողովածուները, ինչպես նաև «Արգարուսիան Հանապարհով» վիպակը: Գառոնեին բանաստեղծություններ է գրում նաև մանուկների համար<sup>101</sup>:

Գևորգ Գարֆին<sup>102</sup> իրանահայ գրականության այն փոքրաթիվ ներկայացուցիչներից է, որոնք իրենց նվիրել են թատերագրությանը: Առանձին գրքով հրատարակվել են նրա «Միավուշ և Սուզարև», «Արգարուսիան Հանապարհով», «Ողբույն քեզ, Միլանո», «Մեհարայ Մաշտոց» և այլ թատերագրություններ: «Մեհարայ Մաշտոցը» 1962 թ. արժանացավ «Փեքիյան մշակութային ընկերության» (Քիյրուսի) մրցանակին: 1964 թ. լույս տեսան նրա «Վահան և Ռազմ-դուխտ», «Անքավիյին» և «Արյունոտ թաղը» թատերագրությունները, իսկ 1967 թ.<sup>103</sup> «Հարազատ էշեր» բանաստեղծությունների ժողովածու:

Գարֆին հայտնի է նաև իր կատարած թարգմանություններով «Ռիչարդ երրորդ», «Տրիստան և Իզոլդա», «Կոնի փոստաւարը», «Զահարիբումի գիշեր», «Աննա Քրիսթին», «Միզը և այլն»<sup>104</sup>:

Բանաստեղծ Դևր<sup>105</sup>, շնայած ընտր էչ գրական միավորման հիմնադիր անդամներից մեկն է, վերջին ժամանակներս ստեղծագործական նկատառումներով հեռացել է միավորումից ու անկախ դիրք է գրավում: Դևր ստեղծագործության վրա նկատելի է Տերյանի պոեզիայի ուժեղ ազդեցությունը: Նրա բանաստեղծությունների տեքստերով երգահան Նիկոլ Գալանտերյանը գրել է մի քանի երգեր ու սոմանսներ:

<sup>100</sup> «Իրանահայ արդի գրողներ», էջ 161:

<sup>101</sup> Գևորգ Գարֆին (Գևորգ Լավանեթյան-Նուբարյան) ծնվել է 1907 թ., Նուբարյան շրջանի Սուլամիթի գյուղում: Մովսիս է Քիլիսում, ապա Քավրիզի ֆրանսիացի լազարիստների զորքում: Մահացել է 1964 թ. Քեհրանում:

<sup>102</sup> «Իրանահայ արդի գրողներ», էջ 171:

<sup>103</sup> Դևր ծնվել է 1901 թ. Քեհրանում, նրբությունը ստացել է Քեհրանի ու Նուբարյանի հուլիական զորքից:



«Իմ երգերը» խորագրով բանաստեղծությունների իր առաջին ժողովածուն Գեղ Հրատարակել է 1947 թ., նրա երկրորդ «Այս երկար Համփանս ժողովածուն՝ լույս ընծայեց Հայպետհրատը, 1963 թ.<sup>104</sup>։

Գրական «նոր էջ» միավորման անդամները, ինչպես նաև գրողների և բանաստեղծների երիտասարդ սերնդի մի քանի ներկայացուցիչներ փորձում են իրենց ստեղծագործության մեջ կիրառել գրական ժամանակակից ձևեր և գեղարվեստական արտահայտչամիջոցներ։ Այդ գրողները մտերիկից և լավ ծանոթ են Համաշխարհային արվեստի լավագույն նմուշներին։

Նոր, արդի սեռական յուրացման ուղղությամբ առաջին քայլերն անելու պատիվը, «նոր էջ» կազմակերպությունը նախաձեռնողներից մեկին՝ Հրանտ Ֆալյանին է<sup>105</sup>։

Նրա առաջին «Քշնամիներ» պատմվածքը տպագրվել է 1908 թ., Բաքվում։ Իր անգրանիկ «նոր աշխր» վերնագրով ժողովածուն Հ. Ֆալյանը հրատարակել է Քեհրանում, 1961 թ.։ Նրա բազմաթիվ պատմվածքները գեղևս անտիպ են մնում։

«Նոր էջ» միավորման մեջ սրպես նրա հիմնադիր-անդամներ, Ֆալյանից բացի մտնում են Գեղ, Աշոտ Ասլանը, Արան (Արա Տեր-Հովհաննիսյան), Գալուստ Խանենցը, Արշավիր Մկրտիչը, Արմեն Գիսը, Ավելի ուշ, միավորման անդամ դարձան Զորայր Միրզայանն ու Ռ. Բենը (Ռուբեն Հովհաննիսյանը)։ Միավորման անդամները ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս մեծ աշխատանք են տանում հայ ընթերցողին համաշխարհային գրականության նվաճումներին ծանոթացնելու, ինչպես նաև իրանական ընթերցողին հայ և սովետահայ գրականության նվաճումներին հաղորդակից դարձնելու ուղղությամբ։

«Նոր էջ» միավորման մասնակիցների ներկայացուցիչներից հիշատակման արժանի է Զորայր (Զորիկ) Միրզայանի անունը<sup>106</sup>, Զ. Միրզայանը բանաստեղծի, արձակագրի քանքարը զուգակցում էր թարգմանչական, գրականագիտական միջոցի հետ։ Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն էր «Քաց մայիլը»։ Նա հա-

<sup>104</sup> «Երանահայ արգի գրողներ», էջ 137։

<sup>105</sup> Հրանտ Ֆալյանը ծնվել է 1884 թ., Թեյումի Սովորել է Ճեղաղալում, ապա՝ Քեհրանում։ Ազգի է նոր Զուլայում, Քիջիսում, Քեհրանում, ուր և մահացել է 1960 թ.։

<sup>106</sup> Զորայր Միրզայանը ծնվել է 1916 թ. Քեհրանում։ Նախնական կրթությունը ստացել է տեղի ուղղալին դպրոցում, ապա ավարտել է ավերիկյան քոլեջը Մահաբել է 1964 թ., Քեհրանում։

յնքն է թարգմանել Բարա Քահերի քառյակները, Օմար Խայամից նրա թարգմանած 30 քառյակները մասն էն իր հոր՝ Լոգանի Միրզայանի շեմար Խայամ թարգմանական ժողովածուի մեջ, Զ. Միրզայանի գրքին էն պատկանում Ծ. Դսատուակու «Հեզիկը» վիպակի, Մարկ Տվենի «Պատմվածքների» թարգմանությունը, նրա մի քանի թարգմանություններ զնուս պահվում էն Կոնստանտնուպոլիսում, Դրանցից էն Դսատուակու «Նեհոուշկա Նեզվանոֆան», Գարաիա Լորկայի «Բանաստեղծությունները», Կոկաոյի «Տարբրիակ ընտանիքը», Կարլ Վիթլինգերի «Ճանաչում էք դուք Միրկաթինը», էրոքին Փուլգուելի «Պատմվածքների ժողովածու» և այլն<sup>107</sup>։

Զ. Միրզայանը և նրա Ալի Իրն Մինայի կյանքը և շարքից գրականության պատմության ուսումնասիրությունների հեղինակն է, Իրանահայ գրականության քննորոշ առանձնահատկությունը արձակագիրների (արդեն շնչ խոսում թատերագրություն մասին) փոքրաթիվ լինելն է, քննորոշ է նաև վեպի ժանրի բացակայությունը, նրնությունը, որոնք նկատելի են նաև արդի պարսից գրականության մեջ։

\* \* \*

Իրանահայ գեղանկարչության առաջին նմուշները վերաբերում են XIX դ.<sup>108</sup>, Սակայն գաղութում գեղանկարչությունը իր ծաղկմանն հասավ XVII դ., նոր Զուլայում։ Տեղացի վարպետները, հենվելով հայ գեղանկարչության ավանդների վրա, յուրացրին սևիյան շքրչանի Իրանի գեղանկարչության լավագույն նվաճումները և ստեղծեցին մի նոր, բուրբուղին ինքնատիպ արվեստ։ Հայտնի են այդ ժամանակի՝ գորային մանրանկարչության, որմնանկարի և այլ ժանրերի վարպետներ, մանրանկարիչ Հակոբ Զուլայեցու<sup>109</sup>, նկարիչ-

<sup>107</sup> Իրանահայ արդի գրողներ, էջ 301, շնք էջ, Փնկան, 1965, № 14, էջ 7—8։

<sup>108</sup> Հայաստանի պատկերասրահում պահվում է մանրանկարի Խմբիտու Անջու (1256 թ., Սուվյամիթում) ծաղկած առվածաշունչը (տե՛ս Ա. Արնոս, Жюппись Ирана, стр. 61—62)։

<sup>109</sup> Հակոբ Զուլայեցու վրենին էն պատկանում «Ալիքանեղ Մակնուսու պատմություն» և այլ հայտնու գեղանկարներ, որոնք պահվում են Մ. Մալադի անվան Մոսկուագրասում (տե՛ս Ա. Ա. Լյուբոս, Машината Армена, Ереван, 1952, стр. 59—60)։

ներ Մինասի<sup>110</sup>, Լովհաննես Մրցուզի<sup>111</sup>, Բողոս Սալթանովի<sup>112</sup> ա-  
նունները:

XVII դ. վերջերից սկսած հայ գեղանկարչությունը, ինչպես և  
ամբողջ իրանական նկարչական արվեստը, խոր լճացում ապրեց:

Ժամանակակից իրանահայ գեղանկարչությունը սկզբնավոր-  
վեց ու սկսեց ձևավորվել XIX դ. երկրորդ կեսին:

«Այդ շրջանի արվեստը.—նշում է Դեյնեկեն,—հիմնականում  
մնայով որպես տիրող վերնախավի արվեստ... սկսում է արտացո-  
լել ֆեոդալական հասարակության բնօրրոցում ծնվող բուրժուա-  
զիայի գաղափարախոսությունը: Արևմտանկարչական գեղանկար-  
չությանը հաղորդակից լինելու շնորհիվ նկարչությունը ընդունում է  
նոր մեներ<sup>113</sup>: Այդ ժամանակաշրջանի հայկական արվեստի ներ-  
կայացուցիչը Իրանում Հակոբ Լովնաթանյանն էր (1806—1881),  
որը նասրեդդին շահից ստացել էր «նազարշահխ» տիտղոսը<sup>114</sup>:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին իրանահայ նկարչությունը կրեց  
նաև Հայաստանի, Կովկասի ու Ռուսաստանի հայ նկարիչների ար-  
վեստի ազդեցությունը: 1905—1911 թթ. իրանական հեղափոխու-  
թյան և գրան հաշորդած շրջանում այդ ազդեցությունն էլ ավելի  
ուժեղացավ:

Այդ տարիներին և, հատկապես 20-ական թվականներին,  
Քավրեզում, Քեհրանում, նոր Զուլայում և մի քանի այլ քաղաք-  
ներում հիմնվեցին նկարիչների միություններ և ընկերություններ,  
բացվեցին սրահներ: Տեղացի հայ նկարիչներից մի քանիսը սկսե-  
ցին սովորել նկարչություն պարսկական, ինչպես նաև եվգոր օտար-  
երկրացի նկարիչների պայրոցներում: 1924 թ. Քեհրանում հրատա-  
րակված «Նոր պատգամ» գրական-գեղարվեստական ամսագիրը  
բանաստեղծներից ու գրողներից բացի իր շուրջը համախմբեց նաև  
նկարիչներին:

<sup>110</sup> Նկարիչ Մինասը նոր Զուլայում որմանկարներով զարգարել է Տա՛ Աբաս  
Ա-ի պալատը, եկեղեցիները, վաճառականների տները (տե՛ս Առաքյլ Գալբրեյի,  
«Պատմություն», էջ 405—412; Ա. Սեմյան, նոր Զուլայի ժէ դարու որմանկար-  
չական հուշարձանը, Նյու-Յորք, 1962 թ., էջ 28, 30—31):

<sup>111</sup> Լովհաննես Մրցուզին և՛ Ամենափրկիչ վանքի որմանկարները (տե՛ս  
Պ. Առևյան, «Լովհաննես Վ. Մրցուզ», «Էջմիածին», 1964, № 1, էջ 20—34):

<sup>112</sup> Բողոս Սալթանովի անկախություններից մեկը «Նորհավուր շնթ-  
րիչը», որ կատարված է պղնձ տարրուկի վրա, հայ վաճառական Զոքարիան  
1650 թ. նվիրել էր Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Բողոս Սալթանովը հետագա-  
յում Մոսկվայի Զինապալատի ակադեմիա նկարիչներից մեկը դարձավ:

<sup>113</sup> Д. Дейнека, Живопись Ирана, М., 1938, стр. 152.

<sup>114</sup> Նազարշահի—նկարչագետ, մեծ նկարիչ:

Մական 20-ական, ինչպես նաև 30-ական թվականներին արվեստի զարգացման նոր ուղիների որոնելիս նկարիչները հաճախ նախապատվությունը տալիս էին անցյալի ավանդույթներին, փորձելով գրանց մեղ գտնել արդի իրականությունն արտահայտելու միջոցներու Ամենայն հավանականությամբ զրանով պիտք է քացասարել նկարիչների այդ շրջանում զրևեկորած ձգտումը՝ հարել գասական ուղղությունը, իսկ իրենց համար ստեղծագործական ապարթզ դարձնել որմնակարային արվեստն ու զրքային մանրանկարչությունը:

Իրենց ընտրած այս ճանապարհին հայ նկարիչները, որպես կանոն, ընկնում էին իրանական գեղանկարչության, հատկապես նրա հին ուղղությունների ազդեցության տակ:

Գաղութում գեղանկարչության զարգացման այդ շրջանի ներկայացուցիչներից է Անդրե Սևրյուզինը (Գարվիշ)<sup>115</sup>, նա գեղանկարչությամբ սկսել է զրազվել վաղ հասակից: Արվեստի տարբեր ուղղություններին մտտիկից ժանոթանալու նպատակով նա 1912 թ. այցելել է Նվրուպա, Եղել ժննում, Փարիզում: Առաջին համաշխարհային պատերազմն սկսելուն պես նկարիչը վերագտնում է Իրան և պատերազմի ավարտից հետո ստեղծում է զործեր, որոնց վրա ակնհայտ է Արևմուտքի արվեստի վարպետների ազդեցությունը: 1922 թ. Անդրե Սևրյուզինը դառնում է այդ ժամանակ Թիֆլիսում զործող հայկական արվեստի տան անդամ:

Մական հիշյալ տարիներին Սևրյուզինը ստեղծագործական որոնումների շրջան էր ապրում: 1925 թ. նա մտազրվում է Ֆրեդուսու ԵՄահեմեհի թնմաներով նկարների շարք ստեղծելու: Այդ նպատակին նա նվիրարերից իր կյանքի տասը տարիները: Սևրյուզինի այդ նկարները ցուցադրվեցին 1934 թ. Թեհրանում քացված ցուցահանդեսում, իսկ հաջորդ տարին՝ Հնդկաստանի Բումբել և Կալկաթա քաղաքներում, 1936 թ. սկզբին՝ Վիննայում<sup>116</sup>:

Ինչպես վկայում են արվեստաբանները, այդ նկարներում զրևեկորվել է գույների քազմազանությունն ու հարստությունն զգա-

<sup>115</sup> Իր ստեղծագործությունները Սևրյուզինը ստորագրում էր ԵՄարվիշ Փարվուզին Իրանու նա թնվել է Թեհրանում, 1926 թ., յուսակարիչ-գեղանկարիչ Անթուան Սևրյուզինի ընտանիքում: Ամուսնի է անդի ԵՄան Լուիս ֆրանսիական զրուրջում:

<sup>116</sup> ԵՄարվահայ տարեցույցը, 1929, էջ 278—279, ԵՄիքո, 1930, 8 մարտ. ԵՄրանուեղ, 1934, 10 փետրվարի:



Իրանահայ արդի գեղանկարչության գեմքը բնորոշում է ես-պատերազմյան շրջանում ձևավորված, առավելապես երիտասարդ նկարիչների արվեստը, որն այժմ է զարնվում բազմազանությունով։ Եւր աշխարհայեցողությունով և վառ անհատականությամբ։ Հավատարիմ XVII դ. ի վեր գաղութում ստեղծված ավանդույթին, երանք իրենց ստեղծագործություններում յուրացնում են նաև այն նորը, ինչով հարուստ է ժամանակակից արվեստը։

Այդ նկարիչների շարքում իր ինքնատիպ արվեստով հատուկ տեղ է գրավում Ավագ Հայրապետյանը։ Բնանկարներում և կենցաղային ուրվանկարներում նա ձգտում է յուրօրինակ ձևով արտահայտել բնության ու կյանքի նկատմամբ իր վերաբերմունքը։ Դրան հեղինակը հասնում է գույների, երանգների ու նրբերանգների բազմազան զուգակցումներով։ Նրա բնանկարներից առանձնազետ ուշագրավ են տժառերով բնանկարն և Փարոկական բնանկարն կտավները։ Կենցաղային գեղանկարչության ժանրին նկարիչը գիծել է դեռևս 50-ական թվականներին, ստեղծելով Խաղաղության թեմային նվիրված մի շարք գործեր։ Դրանցից է մԱտրագրությունների հավաքումը Ստոկհոլմյան կոչի տակ։ նկարը։ Հայրապետյանի կենցաղային ժանրի լավագույն ստեղծագործություններից մեկն է Քեհերանի շուկայումս կտավը<sup>109</sup>։

Նոր Զուգայի նկարիչներ Երվանդ Նահապետյանի և Ամրատ Կյուրեղյանի գործերում արտացոլված է հեղինակների ձգտումը պատմիկ հասարակ մարդկանց, նրանց անմխիթար կյանքի մասին։ Երվանդ Նահապետյանը այդ տեսում է գույների (ՓՓոզոց Իսֆահանում), իսկ Ամրատ Կյուրեղյանը՝ գյուղացիների կոպտացած, մտասույզ գեմքերը լույսով ողողուն շրջակա բնությանը հակադրելու միջոցով։ Թավրիզաբնակ նկարիչ Աշոտ Կույանը ստեղծել է յուրակերպ գիմանկարների մի շարք։ Նա միաժամանակ իր ուժերը փորձում է գորգային ուրվանկարների ստեղծման ասպարեզում։ Դրանցում նկարիչը առավելապես էլնում է հայկական գորգագործության վաղեմի ավանգներից, որոնք այժմ են ընկնում նախշերի, երանգաշարի ինքնատիպությամբ<sup>110</sup>։

Նկարիչ Միքայել Շահբաղյանին հրատարում են հայկական գյուղերի բնապատկերները, ճարտարապետական կիսավեր հուշարձանների տեսքը։ Զրանկարային իր նուրբ գործերում նկարիչը այդ

<sup>109</sup> Մ. Նազարյան, Իրանի ժամանակակից հայ նկարիչները, «Մոզեսական Հայաստան», 1988, № 3, էջ 22։

<sup>110</sup> Նույն տեղում։

ամենք պատկերում է բանաստեղծական ոգեշնչմամբ: Եկարիչների վերահիշյալ խմբից են նաև Տրդրան Բազիլը և ուրիշներ:

Սփռույթական գեղարվեստական ուսումնարաններում ուսած կամ Արևմուտքի ազդեցութեան տակ ընկած հայ եկարիչների մի ու մեծաթիվ խումբ արդի իրանահայ գեղանկարչության մեջ հետևում է մոդեռնիստական հոսանքին: Վեռչինիս ևն հարում կուրիզմի հետևորդ Մարգո Գրիգորյանը, արատրակցիոնիստ Հարություն Մրնայանը, ինչպես նաև էդվարդ Ալվազյանը, Սեդրակ Ղազարյանը և Սիրակ Մելքունյանը: Նրանցից շատերը զուրկ չեն տաղանդից: Այդ խմբի եկարիչների հաշտված եկարներից են Մարգո Գրիգորյանի «Բանվորուհի» և Սեդրակ Ղազարյանի «Կայարանում» կապնները<sup>101</sup>:

\* \* \*

Գաղութում երաժշտական արվեստը սկսել է զարգանալ դեռևս XV Դ. և հետո XVI Դ. և XVII Դ. այն գոյություն ունեի գուսանական երգի ձևով:

Մահայն ժամանակակից հասկացողությամբ երաժշտություն իրանահայ գաղութում սկսել է երևան գալ XIX Դ. և XX Դ. սահմանագծում: Իրանահայերի արվեստի այս էությունը ձևավորման գործում նպաստել է Կովկասի երաժշտական մշակույթը: Մահայն հայ երաժիշտներն ու երգահանները չկարողացան հասնել գաղութում երաժշտական բարձր մակարդակի մշակույթի ստեղծման: Նրանցից միայն քչերին հաջողվեց մի քանի ուշագրավ գործեր ստեղծել:

Իրանահայ երաժշտական արվեստի զարգացման մեջ նշանավոր դեր ունի երաժիշտ և խմբավար Առն Գրիգորյանը<sup>102</sup>: Պատանեկան տարիներին նա շուրթակի դասեր էր առնում ինքնուրույն երաժիշտ Աբուաշիս Տեր-Ղովհաննիսյանի մոտ, որը XIX Դ. վերջին Քավրիզում կազմակերպեց «Երաժշտասիրաց միություն»: 1904 թ. Առն Գրիգորյանը երաժշտություն էր դասավանդում Ռաշտի հայկական դպրոցում, իսկ 1905 թ.՝ Քավրիզի Հայկազյան-Քամարյան դպրոցում:

Երաժշտական կրթությունը լրացնելու անհրաժեշտությունը Առն Գրիգորյանին բերում է Քիֆլիս, ուր նա շորս ամիս շարունակ

<sup>101</sup> Մ. Ղազարյան, նշվ. աշխ.:

<sup>102</sup> Առն Գրիգորյանը ծնվել է 1888 թ., Քավրիզում: Արթուրյանը, այդ թվում և երաժշտական նախնական կրթությունը, ստացել է սեզի «Հայկազյան» դպրոցում:

սովորում է ծամանակի հայտնի չութակահար Վասիլիի մոտ: Սակայն լուրջ գիտելիքներ մեզ բերելու նրազը հանգիստ չէր առիտ նրան: 1910 թ. սեպտեմբերին Գրիգորյանին հաղղվում է գնալ Քելզիա, ուր եւս սկսում է գասեր վերջնել բրյուսելիցի նշանավոր չութակահար Քումսոնի գոբոցում:

1912 թ. Լեոն Գրիգորյանը գասավանդում է Քավրիզի թեմական գոբոցում: Այս շրջանում էլ եւս ծավալում է խմբավարական գործունեութունը: 1915—1916 թթ. Քավրիզում եւս հիմնում է «Մալուխ» նվագախումբը, որն ընդհուպ մինչև 1946 թ. մեծ ճաստայականութուն էր վայելում քաղաքում: Այնուհետև Քեհերան փոխադրվելով, Լեոն Գրիգորյանը կազմակերպում է «Գուսան» երգախումբը, որը, սակայն, միայն մի քանի համերգ տվեց 1950 և 1951 թվականներին:

Լեոն Գրիգորյանի գրչին են պատկանում հայկական ժողովրդական մի շարք երգերի մշակումները եւս ձայնագրել է Ավետիք Իսահակյանի մի քանի բանաստեղծութունները: Լեոն Գրիգորյանը եւս պարսկերեն երգերի մշակումների հեղինակ է:

Իրանահայ գաղութի հետ է կապված հայ ակնանավոր երգահան Նիկոլ Գալանտերյանի կյանքի ու ստեղծագործության նշանակալից մասը<sup>101</sup>:

Այն սկսվել է 1911 թ., երբ բնակադասն գոբոցի հոգաբարձության հրավերով եւս որպես երաժշտության ուսուցիչ փոխադրվում է Քեհերան: Այստեղ եւս մնում է մինչ իր մահը՝ 1944 թ. մարտի 2-ը:

Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործական ուղին սկսվում է Սուխումիի (Արխաղիա) մոտ գտնվող Ցեքելիզո գյուղից, որի հայկական գոբոցում 1910—1911 թթ. եւս երաժշտութուն էր գասավանդում: Այստեղ Գալանտերյանը գրում է իր առաջին երգը՝ Ավետիք Իսահակյանի խոսքի հիման վրա: Ապա Քիֆլիսում Վահան Տերյանի, Հովհաննես Քումսեյանի և Ավետիք Իսահակյանի տեքստերով մի քանի նոր երգ է գրում: Քեհերանում բնակվելու առաջին տարիներին եւս Վահան Տերյանի բանաստեղծութունների

<sup>101</sup> Նիկոլ Գալանտերյանը մեկն է 1881 թ. սեպտեմբերի 7-ին Ան (Արևմտյան Հայաստան) քաղաքում: 1897 թ. բնանկնջով տեղափոխվել է Վանա (Բուլղարիա): 1900—1903 թթ. սովորել է Գևորգյան կնարանում, մինչև 1910 թ. ապրիլ ու աշխատել է Բուլղարիայում, ապա Քիֆլիսում: Այստեղից եւս անցել է Իրան (երա մասին ժանրամատե տե՛ղ Ա. Նեմեյան, նրբաւտ Նիկոլ Գալանտերյան, Քեհերան, 1947):



Հիման վրա գրում է նա երկու երգ, ինչպես նաև «Զարի վերջը» մանկական օպերան<sup>105</sup>,

1924 թ. սկսվում է Նիկոլ Գալանտերյանի ստեղծագործության ամենաբեկուն շրջանը: 1925 թ. բարեկամների և իր առաջնգի երկրպագուների օգնությամբ նա հանգես է գալիս հասարակական առաջին համերգով: Այդպիսի համերգներն հետագայում կազմակերպվում էին պարբերաբար: 1927 թ. Նիկոլ Գալանտերյանը գրում է իր առաջին լայն կտավի երաժշտական ստեղծագործությունը, Վահան Միրաքյանի «Լալվարի սրբու» պոեմի մոտիվներով օպերան: Չնայած մի շարք զմայրությունների, Քեհրանի երկեսն զրպրոցի շրջանավարտների միություն շանքերով «Լայկադյան» զրպրոցի զահրինում բեմադրվում են օպերայի նախերգանքն ու երկրորդ գործողությունը: Այնուհետև օպերան բեմադրվում է զրադաշտականների ամառային թատրոնում: 1931—1932 թթ. Նիկոլ Գալանտերյանը Լովհաննես Քումանյանի «Փարզանա» պոեմի թեմաներով գրում է համանուն օպերան, իսկ 1932 թ. նրա գրած «Ընդիվ» օպերայի համար հիմք է ծառայում Վրթանես Փափազյանի «Լուրդա-լուր»<sup>106</sup> պոեմը:

Կյանքի վերջին տարիներին Նիկոլ Գալանտերյանը աշխատում էր «Լևուշ» օպերայի վրա: Նա գրել էր օպերայի նախերգանքն ու մի քանի հատվածներ, սակայն մահվան պատճառով մնաց անկատար: Երգահանի թաղումը կատարվեց իր այս անավարտ օպերայի նախերգանքի մեղեդիների հնչյունների ներքո:

Նիկոլ Գալանտերյանի առաջնորդ լայն ճանաչում գտավ միայն նրա մահից հետո, և գրանում իր լուսման ունի Սովետական Հայաստանի հասարակայնությունը: 1946—1947 թթ. երգահանի բարեկամների խնդրանքով Գալանտերյանի դուստր Սեդա Գալանտերյանը Երևան ուղարկեց նրա ստեղծագործությունների ձեռագրերը:

Հասկացվեց սիրված են Նիկոլ Գալանտերյանի քնարական երգերն ու ոտմանները: Դրանց մի մասը, զրգած Վահան Տերյանի, ինչպես նաև Մարգար Ղաբարեկյանի (Դն) և Արամ Երեմյանի տեքստերով, տեղ է գտել վերջերս Երևանում հրատարակված «Երգարանում»<sup>107</sup>, նրա ստեղծագործություններից շատերը լույս են տեսել Վահիրիում տպագրված «Գանձարան» երգարանի 5-րդ և 6-րդ

<sup>105</sup> Ա. Եսեմյան, Երգահան Նիկոլ Գալանտերյան, Արա Տեղ-Նովեմբերյան, Լուրեր երգահան Նիկոլ Գալանտերյանի մասին:

<sup>106</sup> Եսեմյան:

<sup>107</sup> «Երգարան», կազմ. Եսեմյան և Վաղինակ Եսեմյան, Երևան, 1989:

զրքերում: Քալանտերյանի մտնկական Ց երգերը ապագրված են Մ. Սարգսրյանի «Նոր հասկերում»: Իրանում Ն. Քալանտերյանի երգերը հրատարակվել են Քեհրանում և Նոր Զուղայում, իսկ պարսկական 4 երգերի նրա մշակումները հրատարակված են Քեհրանի «Ռահնեմայե զենեզեգի» թերթում<sup>100</sup>:

Սակայն Նիկոլ Քալանտերյանի ստեղծագործական ժառանգությունը որտեղ չի սահմանափակվում: Նրա շուրջ 1000 ստեղծագործությունները՝ սպերաներ, խմբերգեր, արիաներ և այլն, որոնք պահպանվում են Լույսատանի կոմպոզիտորների միությունում, մշակման ու հրատարակման են սպասում:

Ներկայումս գաղտնիում ապրող և ստեղծագործող կոմպոզիտորներից հիշատակության է արժանի Համբարձում Գրիգորյանի անունը<sup>101</sup>, իր գործունեությունը նա սկսել է 1914—1915 թթ., որպես Ղազվիխի հայկական զպրոցի հրաժշտության ուսուցիչ, ապա նույն պաշտոնով աշխատել է Ռաշտում (1917—1918 թթ.): 1923 թ. Զեխուլտովսկյան կառավարության թուշակով Համբարձում Գրիգորյանը սովորելու է մեկնել Պրագա, որտեղից նա 1924 թ. անցնում է Փարիզ: Այստեղ Հ. Գրիգորյանը սովորում է մոս 4 տարի: Իրան վերադառնալուց հետո սկզբում զասավանդում է Ռաշտում, ապա փոխադրվում Քեհրան, որտեղ երկար տարիներ վարում էր «Քուշեշ-Դավթյան» զպրոցի հրաժշտության դասերը:

Ուսուցչական գործունեությունից բացի Համբարձում Գրիգորյանը իր կազմակերպած «Կոմիտաս» հրաչախմարի միջոցով (հիմն. 1929 թ.) լայն աշխատանք է ծավալում հայ հրաժշտության մասսայականացման ուղղությամբ:

Կոմպոզիտոր Գրիգորյանի ստեղծագործությունը լափազանց բազմակողմանի է: Նրա գրչի արդասիքն են 100 և ավելի ստեղծագործություններ (խմբերգեր, մեներգեր, ժողովրդական ու զուսուկական երգերի մշակումներ, քնարական երգեր և ոտանաներ): Նա երգեր է գրել Ավետիք Իսահակյանի, Հովհաննես Շիրազի և սովետահայ մի քանի այլ բանաստեղծների տեքստերով: Քիչ չեն նաև տեղի հայ բանաստեղծների խոսքերով Հ. Գրիգորյանի գրած երգերը: Նա գրել է նաև ուսումնասիրություն Կոմիտասի կյանքի և գործունեության մասին<sup>102</sup>:

<sup>100</sup> Ա. Նեմյան, Երգան նիկոլ Քալանտերյան:

<sup>101</sup> Համբարձում Գրիգորյանը ծնվել է Քազրեղում, միջնակարգ կրթությունը ստացել է անգլիան «Վենարուկտե» թեմական զպրոցում, որտեղ և ստացել է նաև հրաժշտական նախնական կրթությունը:

<sup>102</sup> Ավանտի տարեգիրքը, 1958, էջ 406—407:

Գաղութի կյանքում նշանակալից է երգչախմբերի գերը: Եթե զպրոցները տեղի հայերի համար մայրենի լեզուն, պատմությունն ու գրականությունը պահպանելու միջոց են, ապա միևնույն լափով երգչախմբերը ծառայում են ազգային երգն ու երաժշտությունը պահպանելու գործին:

Գաղութում հայ երաժշտության շանսեր տարածողներից է ԵՆՄԻԽԱՍԱՆ Երգչախումբը, որը անընդմեջ գոյություն ունի 41 տարի: Նրա երգացանկը կազմված է սփյուռքահայ, ինչպես նաև սովետահայ կոմպոզիտորների երգերից ու երգչախմբային ստեղծագործություններից:

Երգչախումբը բաղկացած է 80 հոգուց, մասամբ երիտասարդությունից, որը նրա աշխատանքներին մասնակցում է ներքին մղումով, երաժշտության նկատմամբ ունեցած իր սիրո թելադրանքով: Երգչախմբի կազմում են տաղանդավոր շատ երգիչներ ու կատարողներ: Երինակ, ԵՆՄԻԽԱՍԱՆ ժամանակին երգել է Հովհաննես Բաղալյանը: Համաձայն ստեղծված ավանդույթի երգչախումբը տարեկան համերգներով հանդես է գալիս Քեհրանի հայ հասարակայնության առաջ: Նա հյուրախաղեր է ունենում նաև երկրի այլ հայ բնակավայրերում:

ԵՆՄԻԽԱՍԱՆԻց բացի Քեհրանում գոյություն ունի ևս երեք երգչախումբ՝ «Արմեն», «Հայերգ» և «Գողթան»<sup>131</sup>:

1948 թ. կազմակերպվեց Աբաղանի «Գուսան» երգչախումբը: Ինչպես ԵՆՄԻԽԱՍԱՆը, «Գուսանը» ևս սիրողական երգչախումբ է: Նրա կազմը հասնում է 100—120 հոգու «Գուսանը» գործում է Աբաղանի «Հայկական մշակութային միությունը» կից:

40-ական թվականներին Քավրիզում մի քանի երգեցիկ խմբեր կային, որոնք հիմնականում գործում էին զպրոցներին կից: Պատերազմի ժամանակ գրանք ցրվեցին: 50-ական թվականներին քաղաքում նոր երգչախումբ կազմակերպվեց, որը կրում է «Մելիք-Քանդյան» անունը:

\* \* \*

Իրանահայ իրականության մեջ թաքունը սաղմնավորվել սկսեց XIX դ. վերջին: 70—80-ական թվականներին Քավրիզում, Քեհրանում և նոր Զուլայում սկսեցին կազմակերպվել զպրոցա-

<sup>131</sup> «Գողթան» երգչախումբը ղեկն 30-ական թվականներին հիմնել է Նիկոլ Գալանթյանը: 40-ական թվ. վերջին այն ժամանակավորապես զաղաթեց իր գոյությունը բայց Հետո վերականգնվեց:

կան բեմադրություններ, երևան եկան տնային թատերական առաջին ներկայացումներ<sup>128</sup>։

Շուտով այդ բեմադրությունները սկսեցին դուրս գալ դպրոցական ու տնային ներկայացումների շրջանակներից։ Ստեղծվեցին թատերասերական ընկերություններ ու միություններ 1881 թ. Քեհրանում հիմնվեց «Հայ թատերասիրաց ընկերությունը»։ Թաշատում, Քաղբիզում և այլ վայրերում առաջ եկան սիրողական խմբեր։ Դրանց մասնակցում էին Կովկասից ժամանած հայ գերասաններ<sup>129</sup>։ Գարասկզբին այդ խմբերի թատերացանկում երևացին հայ թատերգուհի Գ. Սունդուկյանի, Ա. Երզվանզադեի և ուրիշների ստեղծագործությունները։ Միամասնակ բեմադրվում էին եվրոպական հեղինակների, հատկապես Մոլիերի թատերգությունները։

1910 թ. հետո, ընդունւյ մինչև 30-ական թվականները, ասարբեր ժամանակներում Երան Հյուրախազերի էին գալիս հայ բեմի նշանավոր վարպետներ Արելյանը, Մանվելյանը, Ոսկանյանը, Սիրանույշը, Արմենյան-Գուրյանը, Արուս Ոսկանյանը, Ժամանը և ուրիշներ։ Երանց էլույթները մեծ հետաքրքրություն էին դարձնում թատրոնի նկատմամբ։

Սակայն իրանահայ թատրոնը այդպես էլ չբարձրացավ սիրողական աստիճանից։ Լեռնագա տարիներին Քեհրանի «Հայ թատերասիրաց ընկերությունը» ջրվեց։ Առանձին անձանց՝ նոր ընկերություններ ստեղծելու համար ջանքերը հաջողությամբ չպսակվեցին։ Ժամանակ առ ժամանակ շահագրտական նկատառումներով կազմակերպվում են ներկայացումներ։ Սակայն առանձին կազմակերպություններ, նույնիսկ դպրոցների հոգաբարձույունը, թատերական ներկայացումները համարում են դպրոցական բյուջեները հավասարակշռելու միջոց<sup>130</sup>։

Ծաղապետրազմյան տարիներին գաղութի թատերական կյանքը նոր հունի մեջ դնելու փորձերը կրկին ձախողվեցին։ Այսպես, 50-ական թվականներին Քեհրանի թատերական ուժերը որոշեցին միավորվել։ Սակայն 2 տարի անց Երանք նորից ջրվեցին ու սկսեցին առանձին խմբեր կազմել։ Սկզբում կազմակերպվեց «Բ.Ս.Ա. Ք.» և «Ազամյան» ընկերությունները, 1954 թ.՝ «Շանթ», իսկ 1955 թ.՝ «Քեհրանի հայկական դրամատիկական խումբը (Երա-

<sup>128</sup> «Գարսկահայ տարեցույց», 1925, էջ 255—257։

<sup>129</sup> «Современный Иран» (сравнительно), М., 1957, стр. 493։

<sup>130</sup> «Գարսկահայ տարեցույց», 1977, էջ 117—118։ «Կերտնունգ», 1983, 19

մատիկայ: Այդ թատերախմբերը հանգես եկան ընդամենը մեկա-  
զան ներկայացումով:

Իրանահայ գաղութի թատերական կյանքի աշխուժացմանը  
տկնահայտորեն նպաստեց պրոֆեսիոնալ, հիմնականում եկվոր դե-  
րասաններ Մկրտիչ Քաշչյանի, Մանվել Մարուքյանի և Կոստան-  
յան ամուսինների փոքրաթիվ խումբը:

Մկրտիչ Քաշչյանը<sup>105</sup>, հայ բեմի նշանավոր վարպետներից մե-  
կը Իրան էր եկել 1917 թ.: Մինչև 40-ական թվականները նա հան-  
գես էր գալիս Քավրիդի, ապա Քեհրանի, նոր Զուզայի և Արազանի  
բեմերում: Սակայն ինչպես վկայում են ժամանակակիցները, Քաշ-  
չյանը Հանայում գտավ միայն թատրոնի գիտակների փոքրաթիվ  
խմբի շրջանում: Դրանից Մ. Քաշչյանը շէր վհատվում և չէր խոր-  
շում գտնառական բեմից: Ճամփորդելով երկրում, նա աշխատում  
էր գտնառացի հանդիսատեսների մեջ Հաշակ զարգացնել թատրոնի  
նկատմամբ, բարձրացնել նրան մինչև արդի թատերական արվես-  
տին ընկալելու մակարդակը:

Մանվել Մարուքյանը նրիտասարգական տարիներին ձգտում  
էր մարմնավորել զասական կերպարներ: Համեմատաբար հաջող-  
վում էին Շեքսպիրի հերոսների նրա դերակատարումները: Սակայն  
Մ. Մարուքյանը սրանից այն կողմ չանցավ, շատեղծեց ժամանա-  
կակիցների կերպարներ: Վերջին տարիներին նա հեռացել է բե-  
մից:

30-ական թվականներին գավառի հանդիսատեսների շրջանում  
մասսայականություն էին վայելում Կոստանյան ամուսինները:

Իրանահայ գաղութի թատերական կյանքի զարգացման գոր-  
ծում մեծ նրախտիք ունի «Վերածնունդ» թերթի խմբագիր Հայկ  
Գարսագաշը: Զիրքաշատ դերասանը նաև Իրանում իսկական բարձ-  
րարվեստ թատրոնի ստեղծման շատագուժ էր:

\* \* \*

Իրանահայ գաղութում առաջին հրատարակությունը եղել է «Սաղ-  
մոսարանը», որը լույս է տեսել 1638 թ. նոր Զուզայում<sup>106</sup>: 1641 թ.  
նույն սուլթանում ինքնահնար և ինքնաշին տպագրական մեքենա-

<sup>105</sup> Մկրտիչ Քաշչյանը ինչի է 1885 թ., Արեւոյան Հայաստանում: XIX դ.  
վերջին անցել է Կովկաս: Նրա թատերական տպագրող բաջահայտվել է Քիթի-  
վերջին անցել է Կովկաս: Նրա թատերական տպագրող բաջահայտվել է Քիթի-  
տան, 1970, N 7, էջ 12—13): Մկրտիչ Քաշչյանը մահացավ Արազանում,  
1956 թ.:

<sup>106</sup> Տե՛ս «Նախնիների մայր», 1963, 2 զննանմաների:

յով լույս տեսավ «Հարանց վարքը», որը տպագիր առաջին գիրքն է Իրանում:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին զաղուփում սկսեցին Իրան գալ ժամանակակից տպարաններ: 1844 թ. Ամենափրկիչ վանքին Եվրոպայից ուղարկեցին տպագրական մեքենա և տառատեսակներ: Մակայն տպագրական մեքենան ի վերջո կարգի գցվեց միայն 1887 թ. վերջին: 1892 թ. Կովկասից նոր տառատեսակներ ստացվեցին: Փոքր-ինչ անց Քեհրանում լույս տեսնող «Շավիզ» թերթի խմբագրի Եղևիթյամբ աշխարհարարով տպագրվեցին Ղ. Ազալյանի «Մայրենի լեզու» դասագրքի առաջին և երկրորդ հատորները: 1904 թ. տպարանը Բաքվից Քումանյանների առևտրական տեղից նվեր ստացավ արագատիպ մի մեքենա: Դրա բազայի վրա 1904—1909 թթ. հրատարակվում էր «Նոր Զուլայի լրաբեր» թերթը<sup>100</sup>, որն առաջինն ու միակն էր քաղաքում:

Իրանահայ առաջին թերթերը հրատարակվել են Ռաշտում, Քեհրանում և Քավրիզում: Անցյալ դարի 80-ական թվականներին Ռաշտում լույս է տեսնում «Համայնք» թերթը, 1894—1897 թթ. Քեհրանում՝ «Շավիզ» և «Շարժում» թերթերը, իսկ 1896 թ.՝ «Ասող արևելյան» թերթը: Տեղական թիմական առաջնորդարանի 1889 թ. հիմնած տպարանի բազայի վրա Քավրիզում հրատարակվեցին «Գործ» (1903 թ.) և «Ազգարար առաջնորդարանի» (1904 թ.) թերթերը:

Ինչպես զաղուփում, այնպես էլ ողջ Իրանում պարբերական մամուլը զարգացում ապրեց 1905—1911 թթ.-ի Ընդհանուր միելն 20-ական թվականները զաղուփի թերթերի ու ամսագրերի մեծ մասը հրատարակվում էր Քավրիզում: Դրանց «Անուզում» (գաշնակների օրգան 1909—1912 թթ.), «Ջանգ» (հնչակյանների՝ 1910—1922 թթ.), «Քավրիզի հայտարարություններ» (1910—1912 թթ.), «Ղալազան» (1912—1913 թթ.), իսկ 1913 թ. 5 համարներից հետո: միելն 1914 թ., «Ղարաղազ», «Այգ» (գաշնակների 1912—1922 թթ.), «Միտք» (1912—1917 թթ.), գրական «Խոսք» ամսագիրը (1913 թ. լույս են տեսել 1-ին և 2-րդ գրքերը), «Կահան» (1918 թ.), «Գայթաբ» (հնչակյանների 1918—1919 թթ.), «Արշալույս» (1918—1919 թթ.), «Գեղատեր» (1919 թ.) և «Մինարեթ» (գաշնակների օրգանն էր (1919—1921 թթ.) պարբերականները:

<sup>100</sup> Գ. Առևյան, Հայոց պարբերական մամուլը, էջ 188, «Գարսիահայ տարեցույց», 1923, էջ 21, 149, «Այլք», 1936, 22 Հարսի, 1958, 17 Հունվարի, 21 օգոստոսի:

Հայերեն թերթերը Քննչանում սկսեցին լույս տեսնել իրանական Հեղափոխությունից հետո: Դրանք հիմնականում հրատարակվում էին «Փարոս» ազարանի բազայի վրա (հիմնվել էր 1902 թ.)<sup>126</sup>, 1912 թ. այսանդ ազգագրվում էր «Արշալույս» թերթը, 1919—1920 թթ.՝ «Առավոտ», 1919 թ.՝ «Իրանի առավոտ» թերթերը, 1920 թ. սկսեցին լույս տեսնել նաև «Այգ», «Շորիզոն», «Իրանի աշխատավոր», «Բորոխ», «Եմանդար Իրանի» և որ թերթերը: Բացի «Բորոխից», այդ թերթերը 1—4 տարի հրատարակվելուց հետո փակվեցին: Նրանց փոխարինեցին «Նոր կյանք», «Բանվոր» (1923—1925 թթ.) պարբերականները, դրական-գեղարվեստական «Նոր պատգամ» ամսագիրն ու «Կազափար» թերթը (1925—1927 թթ.), Այդ թերթի խմբագրությունը 1927 թ. հրատարակեց իր հավելվածի «Նոր կազափար» ամսագրի միակ համարը:

Իրանի կառավարության արգելքով 20-ական թվականներին զազութի գրեթե բոլոր թերթերը փակվեցին<sup>127</sup>:

20-ական թվականների վերջին զազութում լույս էր տեսնում միայն մի թերթ: Այդ «Բորոխ» երգիծական պարբերականն էր, որը 1930 թ. վերակազմվելով վերածվեց «Վերածնունդ» թերթի: «Բորոխը» գոյություն ունեցավ մինչև 1936 թ., որպես «Վերածնունդի» ենթգիր: «Բորոխի» («Վերածնունդի») խմբագրությունը լույս ընծայեց նաև «Պարսկահայ տարեցույցի» երեք տարեթվեր (1927, 1929 և 1930 թ.), 1931 թ. հրատարակեց կնիքով զաշխակցականների օրգան «Ալիք» թերթը: Ինչպես նշվեց, II համաշխարհային պատերազմի տարիներին Քավրիզում հրատարակվեց «Հակաֆաշիստ» («Արևիչք») թերթը: Ներկայումս իրանահայ զազութում հրատարակվող հայերեն միակ թերթը զաշխակցական «Ալիքն» է:

\* \* \*

Իրանում մինչև այժմ պահպանվել են մի շարք շինություններ (գլխավորապես եկեղեցական), որոնք հայկական հարտարապետության հուշարձաններ հանդիսանալու հետ մեկտեղ վկայում են այդ երկրում հայկական օջախների հնադարյան գոյությունը:

Դրանցից ամենահինը, ուրբ Քաղնոսի վանքը, Հայաստանում քրիստոնեության տարածման ժամանակաշրջանին վերաբերող հարտարապետական մի հուշարձան է: Վանքը գտնվում է Մաքուի գավառում: Վանքի հիմնագրման ճշգրիտ թվականի վերաբերյալ

<sup>126</sup> «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 116:

<sup>127</sup> «Պարսկահայ տարեցույց», 1929, էջ 151:

ժիւանական կարծիք դեռևս գոյութիւն չունի<sup>100</sup>, Պատմաբանները այն կարծիքին են, թե այն պետք է հիմնված լինի Ճ. Թ. IV—VI դարերում: Վանքի մասին գրազոր առաջին հիշատակութիւնը վերաբերում է 10-րդ դ.<sup>101</sup>: Նրա առաջին շինութիւնը հեթանոսական տաճարի հիմքերի վրա բարձրացրած եկեղեցին է: Սև քարով կառուցված լինելու պատճառով այնտեղի մասնեղական բնակչութիւնը անվանել է Ղարա Քիլիսա (Սև եկեղեցի): 1319 թ. կրկնաշարժի հեռանձրով այն քանդվել է վերականգնվել է 1329 թ.: Այդ մասին վկայում է վանքի պատին եղած մակագրութիւնը<sup>102</sup>:

Վանքի հետագա շինարարութիւնը իրագործվել է 1811—1822 թթ. և կապված է եղել ռուս-պարսկական պատերազմների դիվանագիտական նախապատրաստման հետ: Ատրպատականում թեմի այն ժամանակվա առաջնորդ և վանահայր, արքեպիսկոպոս Սիմոն Բզնունին, որը պարսկական կողմնորոշման մարդ էր, ոչ առանց Թաղաթառանգ Աբրահա Միրզայի բարոյական ու նյութական օժանդակութեան, վանքի սահմաններում սկսեց նոր տաճար կառուցել: Այդ նախաձեռնութեան քաղաքական նպատակը... ընդ իրաժեշտ կառուցումն էր, ուրեմն և նոր կաթողիկոսի նշանակումը, որի արդյունքը կլինէր հայ եկեղեցին ռուսական, ինչպես նաև Թուրքական ազդեցութիւնից դուրս բերելը:

Սակայն այդ փորձը շատ արագաց հանդիպեց նորակառույց եկեղեցին շատ նման գարնով էշմիածնին: Ուշագրավ է այն, որ էշմիածինը հետագայում արգելեց ավարտել սուրբ Քաղնոսի վանքի քարն զանգակատան կառուցումը, քանի որ այլապես երա նմանութիւնը Մայր աթոռի վանքին ավելի նկատելի կգտնւար<sup>103</sup>,

Վանքի վերջին շինութիւնները կառուցված են սպիտակ մարմարաքարով: Սպիտակի և սևի զուգակցումը վանքին առանձնահատուկ գրավութիւն է հաղորդում: Ենթադրաբար բարձրանում է քարն հաստաքեստ, լորս սյուների վրա, որոնք միանում են միջակա

<sup>100</sup> Պատմաբանները մի խումբ զանազան է. որ վանքը սկսել են կառուցել 17 դ. վերջին, գիտնականների մի ուրիշ խումբ այդ տեսակետը հերքում է այն դատաւանով, որ նշվածը գրքում, Ատրաշի Էպիսկոպոսի նկարագրութեան մեջ վանքը չի հիշատակվում (Ատրաշի գաղաք զանգում է վանքի ոչ կոնս): Ի հաստատումն իրենց կարծիքի նրանք վկայակոչում են վանքի գմբէթներից մեկի կառուցման տարեթիւնը (628 թ.):

<sup>101</sup> Է. Անեմյան, Մուրթ Քաղնի վանքը, Քաղնիք, 1959, մաս 1, էջ 22:

<sup>102</sup> Նայն տեղում, էջ 26:

<sup>103</sup> Է. Անեմյան, Մուրթ Քաղնի վանքը, 2-րդ մաս, 1960, էջ 8—11, սկզբունքաբար, 1958, էջ 444—448:



կամարներով: Այն ունի երեք մուտք, երկու բնակ և 11 կամարակապ յուսամուտ: Ինչպես և իր հին մասը, վանքի նոր կառույցը պահպանված է կամարակապ 8 յուսամուտներ ունեցող գմբեթով<sup>145</sup>:

Վանքի արտաքին պատերը զարդարված են քանդակներով ու փորագրություններով: Գրանք երկու շարքով գտնուելով են շինքը: Առաջին շարքում հիմնականում պատկերված են առաքյալներն ու սրբերը, ինչպես նաև կենցաղային թեմաներով կատարված զարդանկարները: Գլխավոր մուտքի սյուներից տեղագրված են ամբողջական քարից քանդակած առյուծների ֆիգուրները: Մասնագետների կարծիքով, վանքի քանդակագործական աշխատանքներում զգացվում է Աթթամարի սուրբ Խաչ եկեղեցու քանդակագործության ազդեցությունը:

Վանքի նոր տաճարը կառուցել են քարտաշ, փորագրող հմուտ վարպետները, քանդակագործները, ինչպես նաև մեյմարները (ճարտարապետներ), նրանց մեջ հիշատակվում է Գալուստ անունը<sup>146</sup>:

Մեր դարի 50-ական թվականներին, տեղական թեմերի՝ էջմիածնից անշտովելու կամպանիայի ժամանակ դաշնակցական պարագլուխները Քավրիզի թեմական մարմինների աշակցության միջոցներ չին ձեռնարկում վանքը իրանահայերի ուխտատեղի դարձնելու ուղղությամբ: Այդ պատճառով վանքը վերանորոգվեց:

XVII դ. ճարտարապետական հուշարձան է Ամենափրկիչ վանքը: Նրա կառուցումը սկսվել է 1608 թ.: Վանքի առաջին կառույցը եղել է Ամենափրկիչ եկեղեցին, որն այդպես է կոչվել Հին Ջուղայում գոյություն ունեցած վանքի անունով: Պատմական ավայելները վկայում են, որ Շահ Աբրահամ I-ը մեծ շահագրգռվածություն է ցուցաբերել վանքի կառուցման գործում: 1654 թ. նոր Ջուղան ընդարձակվեց, Ամենափրկիչ եկեղեցին քանդակեց, իսկ նրա տեղում 8 տարում բարձրացավ սուրբ Հովսեփի եկեղեցին, որը Ամենափրկիչ վանքի հիմնական կառույցն է: Այս կառույցվեց թեմական առաջնորդարանի երկհարկանի շինքը: 1905—1906 թթ. այստեղ կառուցվեց նաև թանգարան-մատենադարանի շինքը:

Ամենափրկիչ վանքը, ինչպես և նոր Ջուղան, մինչև այժմ էլ պահպանել է միջնադարյան հատուկ գծերը: Վանքը պատասպարվել

<sup>145</sup> Վանքի թագալուսիների ժառն ավայելից կան 2002 ԳԳՊԱ-ում, ք. 58, ք. 2, գ. 417, ք. 151, տե՛ս նաև Հ. Աճեմյան, Սուրբ Քաղծի վանքը, մաս 1, էջ 18—19:

<sup>146</sup> Հ. Աճեմյան, Սուրբ Քաղծի վանքը, մաս 1, էջ 18—19:

է բարձր պարսպի ետև, զորս հետ հազարգանջովում է միակ կամարակապ մուտքով: Ուշադրութիւնն է գրազում գմբեթը, որը ավելի շատ մզկիթի գմբեթ է հիշեցնում: Անթաղում են, որ շինարարները գմբեթն ալոպիսին են կառուցել տեղի մասնեղականների զգուհութիւնը շնորհիւ համար:

Տաճարի հիմնական շենքը ամբողջապես կառուցված է հայկական նարտարապետութիւնն ունի, այն ունի բարձրակամար երկու դահլիճներ: Գահլիճների ներքին պատերն ու առաստաղը զարդարված են աստվածաշնչային պատումների քանդակներով կատարված յուզանկարներով: Այդ նկարազարդումների գույները մինչև այժմ էլ պահպանել են իրենց թարմութիւնը:

Վանքի պատերի ու առաստաղի որմնանկարները, ինչպես նշեցինք, կատարել է Հովհաննէս Մրցուզը: Սակայն ենթադրում են, որ զործի մեծ մասը սեփական մեղքով իրականացնելով հանդերձ, Մրցուզը հրավիրել է ետև հալանդական և իտալական վարպետների: Ամեն զեպում, տաճարի որմնանկարներում ժամանակի հուշանդական ու իտալական գեղանկարչական դպրոցների ազդեցութիւնը զգալի է:

Նոր Զուղայում կա հիշատակութիւնն արժանի ևս մի հարտարապետական շինութիւն՝ Բնթղեհնմի եկեղեցին: Այն կառուցված է 1627—1635 թթ., քաղաքի կենտրոնական թաղամաս Մեծ Մեյդանում, նազարի փողոցի վրա: Եկեղեցին աչքի է ընկնում խոշոր գմբեթով: Գմբեթը հենված է եկեղեցու հյուսիսային և հարավային պարսպից բարձրացող սյուների վրա: Եկեղեցի ներսում հենասյուներ չկան:

Եկեղեցու շենքը ամբողջութիւնը զարդարված է որմնանկարներով: Ինչպես և Ամենափրկիչ վանքում, յուզաներկով կատարված այդ նկարազարդումները իրենց նրբութիւնը գերազանցում են Ամենափրկիչ վանքի որմնանկարները: Ըստ արվեստագիտների ենթադրութիւն, դրանք պատկանում են նկարիչ Մինասի վրինին: Նրա դիմանկարներում զգացվում են հայկական ազգային գեղանկարչութիւնն ընդդէմ առանձնահատկութիւնները:

Եփրազի հայկական եկեղեցին կառուցվել է 1602 թ., իսկ 1816 թ.՝ վերակառուցվել է: Արտաքուստ այն անշուք է և ծեփապատ, միջնադարյան շինութիւնների նման պատած բարձր պարիսպով: Սակայն ինչպես և Ամենափրկիչ վանքն ու Բնթղեհնմի եկեղեցին, Եփրազի եկեղեցին զրավիչ է իր առաստաղի որմնանկարներով, որոնք գեղարվեստական մեծ արժեք ունեն: Գորգանախշերը կատարված են այնպիսի վարպետութիւնը, որ իսկա-

կան գորգ են հիշեցնում: Փամանակակիցները վկայում են, որ այդ նախշերն իրոք ընդորինակված են այն գորգերից, որոնցով ժամանակին ծածկված է եղել նկեղեցու հասակը:

Ոկեղեցու մուտքի կամարի տակ զետեղված է Մեսրոպ Քաղաղյանին նվիրված հուշատախտակը<sup>146</sup>:

Հայկական ևարտարապետութիւնն աչքի ընկնող հուշարձաններ են նաև Հին Զուլալի մտա, Արաքսի աչ ափին գտնվող սուրբ Ստեփանոսի վանքը, ինչպես նաև Դերիկ և սուրբ Քաղծի վանքերը՝ Մայմասաում:



Առաջին տկումրներն Իրանում սկսեցին հիմնադրվել 1905—1911 թթ. իրանական հեղափոխութիւնն տարիներին:

Այդ տարիներին տկումրներ երևան են նաև Իրանի հայկական պաղտութիւն՝ նոր Զուլալում, Քեհրանում, Քաղթիզում, իսկ հեաազայում՝ նաև Ռաշաում, Ահվազում, Արաքում, Արաղանում, Մեսդեղ-Սուլեյմանիում և այլ վայրերում: 30-ական թվականներին, երբ Իրանում սկսեցին ստեղծվել ազգային սկզբունքով տկումրներ, պաղտութիւն դրանք կոչվեցին «Հայկական տկումրներ»:

Քեհրանի «Հայկական տկումրը» հիմնվել է 1931 թ.<sup>147</sup>, Այն գտնվում է քաղաքի կենտրոնական մասում, ունի համերգային դահլիճ, հանգստի սենյակներ, խաղատրահներ և այլ հարմարություններ: Ինչպես նշվեց, 1943 թ. տկումրին կից բացվել է նաև զրադարան: Սակայն տկումրում զրական-գեղարվեստական երեկոներ, համերգներ ու զրույցներ կազմակերպվում են դիպվածությամբ:

1932 թ. «Հայկական տկումր» բացվեց նաև նոր Զուլալում, որն ունի հանգստի սենյակներ, ինչպես նաև 600 տեղանոց համերգային դահլիճ: Այստեղ կազմակերպվում են թատերական երեկոներ, ցուցադրվում կինոնկարներ և այլն: Նրա միջոցները հիմնականում գոյանում են անդամավճարներից, ինչպես նաև մշակութային միջոցառումներից ստացվող հասույթներից:

Քաղթիզահայերը ևս ունեն իրենց տեղական տկումրը, որը կազմակերպված է Քեհրանի և նոր Զուլալի տկումրների սկզբունքներով:

<sup>146</sup> Երազցի հայերը հուշատախտակ տրամադրել են այն բանից հետո, երբ քաղաքի հայկական գերեզմանոցը, ուր Քաղված էր Մեսրոպ Քաղաղյանը, գրեհորական կառույցի համար հարթեցվեց և որտեղ գերեզմանը հետազոտ լեղավ գտնել:

<sup>147</sup> «Հերթականագ», 1938, էջ 402—403.

1957 թ. մայիսին Քեհրանում հիմնվեց նոր՝ «Գարուն» ակումբը, որը հիմնել են մի խումբ հայ երիտասարդներ: Այն մշակութային կենտրոնի բնույթ ունի: Այստեղ ժամանակ առ ժամանակ կազմակերպվում են ընթերցողների հավաքներ, դասախոսություններ, ժողովներ, գրական-գեղարվեստական երկնուններ: Ակումբը կազմակերպում է նաև կինոդիտումներ, թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ: Ունի սրահ, սեստորան, հանգստի սենյակ և այլ հարմարություններ: Ակումբն ունի ավելի քան 60 անգամ, աշխատանքները ղեկավարում է 7 հոգուց բաղկացած վարչությունը:

Ահվազի, Արագանի և Մեւշեղ-Սուլեյմանիի ակումբներն ունեն մարզական թաքում, որի պատճառով Արագանի հայերը իրենց ակումբը հաճախ անվանում են սպորտկլուբ: Ահվազի «Հայկական ակումբը» մարզական աշխատանքից բացի, կազմակերպում է նաև թատերական ներկայացումներ, գրական-գեղարվեստական երկնուններ ու նման այլ միջոցառումներ:

\* \* \*

Ժամանակակից բնույթի գրադարանային ցանցը իրանահայ գաղութում ստեղծվել է XIX դ. կեսերին, հայկական աշխարհիկ գաղտնյաների ստեղծմանը զուգահեռ: Հայկական առաջին գրադարանները հիմնվել են Քավրիզում, Նոր Զուլայում, Ռաշտում և Քեհրանում: Որոշ ժամանակ անց գրադարաններ ստեղծվեցին նաև գաղութի մյուս քաղաքներում, ինչպես նաև մի շարք գյուղերում:

Գրադարանները առաջ եկան գաղտնյաներին կից, ուր կենտրոնացած էր ժամանակի ընթերցող հիմնական հասարակայնությունը: Սակայն սկզբնական շրջանում գիրք կարգացողները ինչպես և գրքերը նույնքան փոքրաթիվ էին, որքան գաղտնյաների աշակերտությունը:

Հանրային առաջին գրադարանը (բառի լիակատար իմաստով) կազմակերպվեց Քավրիզի Ղալա թաղում, 1877 թ.: Նրա ստեղծման համար միատեղվեցին այդ տարիներին գոյություն ունեցող «Գրադարանային ընկերություն» և թեմական առաջնորդարանի գրքային «Ֆոնդերը»: Հետագայում գրքերի թիվը գրադարանում զգալիորեն աճեց: Օրինակ, 1902 թ. այստեղ արդեն 1850 կտոր գիրք կար, որից 1350-ը՝ հայերեն:

1889 թ. գրադարան հիմնվեց նաև Քավրիզի Լիւււա թաղում: Գրադարանը, որին շնորհվել էր հաշատուր Աբովյանի անունը, 1902 թ. ուներ 1377 գիրք:

XX դ. սկզբին Քավրիզում իր գրադարանն ունեւր նաև տեղի կանանց բարեգործական ընկերութիւնը: Այն նախատեսված էր «Տատկապան կանանց ու աղջիկներին համար», քանի որ իզական սեռի ներկայացուցիչներին այդ ժամանակ եզատշանա չէր հաւանել հանրային գրադարանները:

XX դ. առաջին տասնամյակին «ե. Արսւյան» գրադարանը միացավ «Արամյան» դպրոցի գրադարանին: Իսկ երբ «Գրադարանային ընկերութիւնը» ցրվեց, գրադարանի ֆոնդը հանձնվեց թեմական իշխանութիւններին: Հետագայում մի քանի հարյուր ձեռագիր և հնատիպ գրքեր արվեցին Սովետական Հայաստանին, իսկ մնացածները (8.200 կտոր) կազմեցին այն ժամանակ Քավրիզում գործող «Մշակութային միութիւն» գրադարանի հիմքը: Այդ գրադարանը ներկայումս գոյութիւն չունի: Դրա փոխարեն գրադարաններ են բացված «Հայկազյան-Քամարյան» և «Արամյան» դպրոցներում: «Արամյան» դպրոցի գրադարանն ունի զբոսների առաջի հին հավաքածու: Քավրիզում կա ևս մեկ գրադարան, որը կազմակերպված է «Ռոստոմ» և թեմական առաջնորդարանի «Գասպար» գրադարանների ֆոնդերի հիման վրա: Այդ միավորումը կրում է «Ռոստոմ-Գասպար» մատենադարան անունը, ունի 6 հազարից ավելի գիրք:

XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայկական գրադարաններ ստեղծվեցին նոր Զուղայում: «Րաֆֆի» գրադարանը հիմնվել է 1886 թ.: Մյուս՝ «Երկունք» գրադարանը կազմակերպվել է 1910 թ.: Ի տարբերութիւն Քավրիզի, նոր Զուղայի գրադարանները գործում են մինչև օրս: Դրանցից առաջինը պատկանում է տեղի հայկական ակումբին, իսկ երկրորդը՝ «Հայ կանանց գիւթիւն» ընկերութիւնը:

Ռաշտի հայ բնակչութիւնը գրադարան կազմակերպեց XVIII դ. 60-ական թվականներին: Այդ «Մեհրոպոլիտան» գրադարանն է, որ գոյութիւն ունի մինչև օրս: Այն ունի ավելի քան 4 հազար գիրք և XIX դ. չույս տեսած պարբերական շատ հրատարակութիւններ:

Ընդհուպ մինչև 30-ական թվականները Քեհրանում հայկական գրադարանները գոյութիւն ունեին տեղի հայկական դպրոցին կից: Ինչպես նշվեց, մեծ գրադարան ստեղծվեց 1936 թ., երբ տեղի հայ կանանց բարեգործական ընկերութիւնը ի մի հավաքեց այդ ժամանակ փակված դպրոցների գրքային ֆոնդերը: Հետագայում Քեհրանի թեմական խորհրդի որոշմամբ այդ գրքերը (3—4 հազար կտոր) հանձնվեցին հայկական ակումբի տնօրինմանը<sup>142</sup>, Ակում-

<sup>142</sup> «Համառոտ պատմութիւն...», էջ 33:

քի գրադարանը ներկայումս ունի 12 հազարից ավելի գիրք: Գրանց մեծ մասը հայերեն է, մնացածը՝ պարսկերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլ լեզուներով:

Գաղափի կենտրոններում (Ռաշտից բացի) հայկական գրադարաններ ստեղծվեցին մեծ մասամբ XIX դ. սկզբներին: Գրանց կազմակերպման նախաձեռնողները տեղական մշակութային միություններն էին: Այդ միություններին կից մինչև որս էլ գրադարաններ են գործում Ղազվինում, Համազանում, Մեշհեզում և այլ քաղաքներում: 20-ական թվականներին գրադարաններ կազմակերպվեցին նաև Ահմազում և Արաքում<sup>100</sup>:

Խոսելով Կոստանդնուպոլիս ժամանած հայ վաճառականների մասին, Գալբրիժեցին շեշտում է ժամապարապես շուղայիցիներին և զոգթնեցիներին (հավանարար եկատի ունի ազուլեցիներին)<sup>71</sup>։ Վերջիններին մասին առաջ ավյալներ է պարունակում Զուարթա Ազուլեցու օրագրությունը, որը հարուստ աղբյուր է Մեֆյան Իրանի առևտրական հարաբերությունների վերաբերյալ և արժեքավոր ավյալներ է ընդգրկում XVI—XVII դդ. հայ վաճառականների, նրանց առևտրական գործարքների, աղբյուրների գների, առևտրի հիմնական երթուղիների մասին և այլն։ Հայ վաճառականները հաճախ էին լինում Ստամբուլում, Իզմիրում, Էրզրումում, Քարսայում, որտեղի վաճառականների հետ առևտրական սերտ կապեր ունեին<sup>72</sup>։ Գալբրիժեցին պատմում է հայ մեծահարուստ վաճառական Անտոն Զուլապու մասին, որը հիշյալ քաղաքներում գնում էր Իրանից կլած հայ վաճառականների, հաճախ մի ամբողջ քարավանի աղբյուրներ<sup>73</sup>։

Մետաքսից բացի (հումք և պատրաստի) Իրանից արտահանվում էր կերպաս, թավիշ ու այլ կտորեղեն, գորգեր, սեկ (սաֆյան), բուրգ, ժխախոտ, շոր միրգ և այլն։ Ավրոպացիներն Իրան էին բերում ձիթապտուղ, պղինձ, շաքար, տարբեր տեսակի մաշուղ։

Աշխույժ էր և թանկարժեք քարերի առևտուրը, որով զբաղվում էին զխապարապես հրեաները<sup>74</sup>։ «Պատմությունս մեզ ընդարձակ տեղեկություններ կան թանկարժեք քարերի, նրանց հատկությունների, արտահանման ու վաճառքի վայրերի և նրանց գների վերաբերյալ<sup>75</sup>։

Իրանն առևտրական ու դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել նաև Ռուսաստանի հետ։ Գալբրիժեցու հավաստմամբ, Շահ Արաա Ա-ի օրոք Մեֆյանները Ռուսաստանի հետ զեպանություններ էին փոխանակում. «Ե՛նչ եղև զի... Լկին զհուպան ի Ռուսաց թագաւորէն վասն սիրոյ և բազում գործոց»,—գրում է

<sup>70</sup> Олсариус Адам, Подробное описание путешествия Голштинского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах, М., 1870, стр. 791.

<sup>71</sup> Գալբրիժեցի, էջ 267.

<sup>72</sup> Նույն տեղում, հմմտ. Զ. Ազուլեցի, Օրագրություն, էջ 41, 59, 160 և այլն։

<sup>73</sup> Գալբրիժեցի, էջ 228—229.

<sup>74</sup> Նույն տեղում, էջ 478, հմմտ. «آحمد قاجاقچش» قاریخ روایط ایران و

رومیة، در نیمه اول قرن نوزدهم، تبریز، ۱۳۰۷ ص ۸

<sup>75</sup> Նույն տեղում, էջ 528—503.

Գազրիմեցին, այնուհետև պատմելով Շա: Արաւ Ա-ի հետ նրանց հանդիպման մասին<sup>75</sup>, «Պատմութիւն» մէջ նման փաստեր ենք տեսնում և Արաւ Ա-ի հաջորդի՝ շա: Սեֆու (1642—1666) շրջանի գերարեքայտը. «եւ կէն զի թագաւորն Ռուսաց սիրոյ ազազաւ հրեշտակ խաղաղութեան անարեաց առ Շահնեֆի Պարսից թագաւորն...»<sup>76</sup>: Դեպքանութիւնն Իրանի արքունիքը էր բերել թաշմաթիվ ընկաներ, որոնց թվում և՛ ավանդական թաղն<sup>77</sup>: Անշուշտ այդ քարեկամական այցելութիւնների ժամանակ անտարի հարցք դրափում էր կարենք տեղերից մեկը: Դեռևս 1604 թ. Ռուսաստանն իրափույն էր և՛նոց բերում Իրանում անտարք անել ասանց մարտի<sup>78</sup>. Ռուսական աղբանքները, մասնավորապէս մորթեղենը, լայն ընդունելութիւն էին գտնում Իրանում, հաճախ տեղ գտնում պարսից շահերի կողմից այլ երկրների թագաւորներին մատուցվող ընծաների մէջ<sup>79</sup>: Իրենց հերթին, Իրանից ներմուծվող աղբանքները դա՛նումսկութեամբ էին ընդունվում Ռուսաստանում, որտեղ ընդհանրապէս Իրանից եկող վանապականների եկատմամբ բարյացակամ գերարեքայտը էր ջուշք տրվում<sup>80</sup>:

Իրանի ներքին առևտուրը ևս XVII դ. սկզբից զարգացում է ապրում: Երկրում միջոցներ են մեծանարկվում առևտրական Հանապարհների անվտանգութիւնն ապահովելու, ետր ճանապարհների անցկացնելու և հենքը նորոգելու ուղղութեամբ, կառուցվում են կամուրջներ և մեծ քանակութեամբ քարաձանաթներ:

Ներքին շուկայում վաճառքի էր հանվում երկրի արհեստագործական արտադրանքը (կտորեղեն, կաշվե իրեր, գորգեր և այլն), որը հաճախ նաև արտահանվում էր Իրանից դուրս:

XVII դ. սկզբին ներքին առևտրի և արհեստների զարգացումը հասկանշական էր Իրանի քաղաքների համար:

Գազրիմեցին հիշատակում է Իրանի շատ քաղաքների՝ Սպահանի, Քազրիզի, Արզաբիլի, Ղազվինի, Շիրազի, Լառի, Համազասի, Սզգի, Քերմանի, Քաշանի, Ղումի մասին:

<sup>75</sup> Գազրիմեցի, էջ 140—141:

<sup>77</sup> Նայե տեղում, էջ 411:

<sup>78</sup> Նայե տեղում, հմտ. Գ- յո 17 ք ... استند منشی:

<sup>78</sup> II. РИТТЛ, Политико-статистический очерк Персия, СПб., 1896, стр. 210.

<sup>80</sup> Զէ՛ն 70: յո 17 ք ... استند منشی:

<sup>80</sup> Վ. Յակոբյան, Հայ-ուստիան արարեքայտները XVII դ. (ՀՈՍԷ 98 «Տեղեկագիր», Նոս. դիւ., 1948, № 1):

Առաջին ժանրամասն տեղեկություններ է տալիս Գավրիթեցին ժայռաքաղաքի՝ Սպահանի<sup>80</sup> վերաբերյալ: Պատմագրի վկայակոչած հիշատակարանի (գրված 1461 թ.) հաջորդմամբ, XV դ. կենտրոն Սպահանը բաժնուր և բազմամարզս բայց և «նողաշին» քաղաք էր<sup>81</sup>: XVII դարում Սեֆևիդների ժայռաքաղաքը լինելով (1598 թ.), Սպահանն աննախընթաց ծաղկում է ապրում և դառնում ժամանակի աչքի ընկնող քաղաքներից մեկը: Ոմանք նույնիսկ այն համարել են Ասիայի լավագույն քաղաքը<sup>82</sup>: Սպահանը, որը հորջորջվել է բաշխարհի կեսս ժակդիրով, բազմամարզ է կոչվել<sup>83</sup> և գրավել ափնի քան 37 կմ պարագծով տերիտորիա<sup>84</sup>:

Նկարագրելով քաղաքի դիրքը, պատմիչը նշում է, որ այն արևմուտքից արևելք հասնում է մեծ գետով (Ջայհնդհուուդ), որի հյուսիսային կողմում տեղավորված են շահի պալատը, մահմեդականների տները, վաճառանոցները և այլն, իսկ հարավային կողմում շուգայիցիներն են<sup>85</sup>: 1655—1656 և 1659 թթ. հայերը, հրեաները, գերբերը, որոնք բնակվում էին գետի հյուսիսային կողմում, վերաբնակեցվում են նրա մյուս ափը<sup>86</sup>:

Սպահանի բարեկարգման ու բարգավաճման ուղղությամբ առանձնապես մեծ շանքեր է զործադրել Շահ Աբաս Ա-ն, որի որսք քաղաքն առանձին չուր է ստանում և ընդարձակվում, մեծ հույսք է ձեռք բերում, բորոշ ժամանակ դառնում Արևելքի առևտրի կենտրոնը<sup>87</sup>: Ականատեսները XVII դ. Սպահանի մասին միայն հիացական խոսքեր են թողել: Գավրիթեցին այն անվանում է «մեծահանդես քաղաք»: Զուգայիցու արտահայտությամբ՝ Սպահանը «ի ձեռս առաջնու Շահարասին յուժ հրաշալի յորինուածուք և վա-

<sup>80</sup> Սպահանն անվանվել է նաև Շոշ կամ Սաս:

<sup>81</sup> Գավրիթեցի, էջ 420:

<sup>82</sup> Յե՛ս. В. Бартолод, Место Пржекаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1926, стр. 758.

<sup>83</sup> Հուս Քիկ Բույաթ Օրուքի, XVII դ. Սպահանի բնակչությունը կազմել է 80 հազար բնակիչ (59 տ. 1308 «تهران ایرانی» «تهران» 500 հազար): Ընդունված է, որ սպահանաբնակների թիվը եղել է ափնի քան 500 հազար:

<sup>84</sup> ԱՆ-Ըավտեհանն ձե այս հարցում Աբու Ղասեմ Մառաթի ավանդիչը, ըստ որևէ Սպահանն արևմուտքից արևելք ձգվել է 60 ֆարսանգ (տե՛ս «سحاب ابروئاسم» «تاريخ زندگانی شاه عباس کبیر» «تهران» 1172: (ֆարսանգը կամ ֆարսանջը ավազար է 0—8 կմ):

<sup>85</sup> Գավրիթեցի, էջ 452—453:

<sup>86</sup> Այդ փաստի նկարագրությանը Գավրիթեցին մի անբողջ գլուխ է նվիրել (տե՛ս գլ. 19., էջ 442—455), նաև՝ էջ 457—461, ՀՀՃ. Ա. Տեր-Շափեղանյան, Պատմութիւն նոր Զուգայու, որ յնպատան, Հ. 1, նոր Զուգա, 1850, էջ 84—85:

<sup>87</sup> «احمد شاه بخشي» «ایران» 1172—1173:



ինչպեզարդ աեսությամբ յանա շքեղայրչես պայծառացաւ, ըստ որում և յայտ ի տեսողաց այժմ իսկ էս<sup>26</sup>։

Շահ Արաւ Ա-ի նախաձեռնութեամբ Սպահանք զարդարվեց շարաարապետական պնայիսի կոթողներով, ինչպիսիք են Ալի-Ղափուս և Չեհիսթուսը (ապարանքներ)<sup>27</sup>, Մասազե-Շահը և Մասազե-Լաթիուլան (ձգկիթներ), Ալլահվերդի իւանի և Խաչուի կամուրջները և այլն։ Ստեղծվեցին հրապարակներ, շուկաներ, այդրներ և այլն։

Սպահանի շինարարութեան ու բարեկարգման գործում մեծ յարմով մասնակցութեան են ունեցել նաև նոր Զուլան կառուցող հաշիբը, որոնք հաստատվելով Սպահանում, շինեցին յարկս և բնակութիւնս ինքեանց՝ հրաշայի յորինուածովք, կամարակապ փոքոցոք, քնուար տպարանք... բարձրարերձ և արքայակերպ շինուածք...<sup>28</sup>։

Քաղաքը սակազարուր է եղել։ Այդ ուղղութեամբ Շահ Արաւ Ա-ի ձեռնարկած միջոցառումներից էր Արիբուրան գեաթ<sup>29</sup> հունը փոխելու և այն Զալինդիսուղին միացնելու փորձը, որի նպատակն էր մայրաքաղաքն տպահովել ջրով<sup>30</sup>։ Սակայն այս զժժարին գործը, սրի առաջին փորձը կատարել էր շահ Քահմասուլը, տեղանքի աներզատա պայմանների պատճառով կրկին անհաջող վախճան է ունենում<sup>31</sup>։

Սպահանը, ինչպես ողջ իրանը բազմազգ է եղել։ Յ. Կառովը նշում է սպահանարնակ հաշիբին, հրեաներին, ազրերեյանցիներին, արաբներին, հնդկներին<sup>32</sup>։ Զարթրիա Մարկազադի հազորգամար Սպահանում ապրում էին նաև հույներ, ասորիներ, վրացիներ, սիւրեկներ, քրդեր, ինչպես նաև իրանական զանազան ցեղեր<sup>33</sup>։

<sup>26</sup> Կ. Զուլայեջի, Պատմութեան Պարսից, Վաղարշապոտ, 1905, էջ 88։

<sup>27</sup> Էրաւիմ Չէլզանը գրանց կառուցումը սխալմամբ վերագրում է Արաւ Բ-ին

(ظاهر وحيد، ساسانیان، ص 5)

<sup>28</sup> Պավրիժեյի, էջ 62, 464։

<sup>29</sup> Արի-Քուրանկ (آب كوهرنگ) (շեռազույն ջուր) կամ Արի-Քուրանկ (آب كوهرنگ), այժմ՝ Քարան։

<sup>30</sup> Պավրիժեյի, էջ 140—141։

<sup>31</sup> ԳԲ-ՂԾ-ՍՄ Ե... اسکنند متشی... Կ. Զուլայեջի, Պատմութեան Պարսից, էջ 126—128։ Արի-Քուրան ցրանքի ու համանուն հարկի մասին տե՛ս Ք. Ավգարյնկյանի հոգւմար. (սէլալագրութեան հետազոտութեանը, Երևան, 1969, էջ 457—461)։

<sup>32</sup> Хождение купца Ф. Котова в Персию, М., 1908, стр. 82, 91.

<sup>33</sup> Զ. Սաբկավազ, Պատմագրութեան, Ե. 1, էջ 58, Հժժ. Զուլայեջի, Պատմութեան Պարսից, էջ 137։

Դավրիժեցիին հիշատակում է «Ֆրանկներին» մասին, այդպես անվանելով բուր իզրուպացիներին: Պատմագրի ավյալները վկայում են վերջիններիս վայելած լայն արտոնությունների, մասնավորապես կրոնական ազատություն մասին<sup>98</sup>:

Իրանի թագաբաններում այդ շրջանում լայն թափ է ստանում արհեստների զարգացումը: Գոյություն ունեին մեծ թվով արհեստանոցներ՝ ինչպես մասնավոր, այնպես էլ պետական կամ շահին պատկանող, որոնք կազմում էին սրարխանե: Դավրիժեցու տեղեկությունները վկայում են, որ հմուտ արհեստագործներն առանձնապես վայելում էին իշխանության հովանավորությունը<sup>99</sup>:

Այսպիսին է Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ Դավրիժեցու աված տեղեկությունների պատկերը: Քեկ պատմագիրն առանձին չի անդրադարձել պատմության այդ կողմին, սակայն, երբ ավյալները կարող են օգտակար լրացում լինել Իրանի պատմության ուսումնասիրման համար:

Л. Г. ДАНЕГЯН

## ВОПРОСЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ЖИЗНИ ИРАНА В «ИСТОРИИ» АРАКЕЛА ДАВРИЖЕЦИ

### Резюме

Труд армянского историкографа XVII в. Аракела Даврижеци является достоверным источником для изучения истории Ирана.

Статья посвящена анализу данных Даврижеци о социально-экономической жизни Ирана, в частности—об аграрных отношениях, положении крестьян, налогах, сефевидской администрации, о торговле, ремеслах, городах и т. п.

Особенно ценны сведения Даврижеци о своеобразных формах земельных пожалований, таких налогов и повинностей, как чобанбеки, джизья, гоналга, сурсат и т. п.—и методах их взимания, о злоупотреблениях и произволе в налоговой системе. Интерес представляют данные «Истории», свидетельствующие и о политико-экономических отношениях между Сефевидским Ираном и Россией, об обстановке при шахском дворе, компетенции различных должностных лиц, как—э'темад-эд-доуле, садр, диванбеки, даруга, калантар, хокмневис и т. п.

<sup>98</sup> Միայն Սպարտանում երանք ունեին երեք վանք, որանցից մեկը Հուսիսյան տեղան էր կրում (Դավրիժեցի, էջ 184, 185):

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 101:

Все эти сведения отражают две основные тенденции жизни Сефевидского Ирана: с одной стороны укрепление всего того, что составляет «стоаны государства», с другой— разногласия, центробежные тенденции, дворцовые интриги, продажа должностей, волокита, взяточничество.

В статье данные Даврижеи рассматриваются в сопоставлении их с данными других источников.

## Լ. Լ. ՄՈՎՍՍՅԱՆ

### ՀԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԻ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Հայ և պարսիկ ժողովուրդների մշակութային և գրական կապերը դարերի պատմություն ունեն։

Անմիջական առնչություն ունենալով պարսիկ ժողովրդի և նրա երկրի հետ, հայ մտավորականները սկսած ուշ միջնադարից մեծ հակում են հանդես բերել զեպի հարևան ժողովրդի պատմության, լեզվի, գրականության նկատմամբ։ Նրանք ընդարձակ հետազոտություններ և գիտական արժեքներ են թառանգություն թողել, որոնք այսօր մեայուն զանձեք լինելուց բացի, նաև նշգրիտ ազդեցություն են նրկու ժողովուրդների անցյալը ուսումնասիրելու գործում։

Հենց այդ բերումով էլ պարսիկ շատ պատմաբաններ ուսումնասիրության առարկա դարձնելով Իրանի պատմությունը զմեզ են հայ պատմագիրներին ու հայկական ազդեցություններին Պատահական չէ, որ դեռևս մեր դարի 30-ական թվականների սկզբին Հանրաժանութ պարսիկ գիտնական Սաիգ Նաֆիսին (1892—1966), խորը գիտակցելով հայ պատմագրության կարևոր նշանակությունը, «Շարդ» (սևրևելք) ամսագրի էջերում «Նախախալամական Իրանի պատմության ազդեցությունը և հայ պատմիչները» խորագրից կրող ընդարձակ հոդվածում, անդրադառնալով նախախալամական շրջանի պատմությանը, որն դարերի անցյալ է ընդգրկում, ամենայն անկեղծությամբ խոստովանում է, որ Իրանի հիշյալ ժամանակահատվածի պատմության մասին գրքեր կամ գրավոր փաստեր համարյա գոյություն չունեն։ Իսկ պահպանված լեզվով մնացած ազգային փաստերը կրոնական տեքստեր են, որոնք հիմնականում շարադրվել են հետխալամական շրջանում և շատ լնչին ու կցկտուր պատմական փաստեր կարելի է քաղել նրանցից։

«Սեկանյն Հայ ժողովուրդը, — գրում է Մաիզ Նաֆիսին, — ավելի քան 1500 տարի առաջ, Արշակունիների թագավորության շրջանից սկսած ունեցել է հարուստ պատմագրություն, որը արժեքավոր աղբյուր է Իրանի Արշակունիների և Սասանյանների թագավորության պատմությունը լուսարանելու համար»:

Այնուհետև գիտնականը կանգ է առնում միջնադարի Հայ մատենագրության կոթողների վրա, մեկ առ մեկ թվարկում է Հայ պատմիչներին և անկաշառ ակնածանցով է խոսում խոշոր պատմաճայր Մոզես Խորենացու մասին:

Ահհրածեղա է նշել, որ ակադեմիկոս Մաիզ Նաֆիսին իր ողջ կյանքի ընթացքում բազմիցս հրապարակավ հայտնել է Հայ պատմության և Հայ Հին և նոր լեզվի ուսումնասիրության հույժ կարևորության մասին:

Դեռ երիտասարդ տարիներից նա ուսումնասիրում է Հայ պատմությունն ու գրականությունը, տեսնելով Երանց սերտ առնչությունը պարսիկ ժողովրդի անցյալի հետ: Հայկական մատենագրությունն, լեզուն ու գրականությունը նա համարում էր ոչ միայն Հայ ժողովրդի, այլև պարսիկ ժողովրդի պատմական հավաստի աղբյուրներ:

1948 թ. Հուլիսի 15-ին, Քենդանում Հայկ Գարագաշի խմբագրությամբ հրատարակվող «Վերածնունդ» և «Բորթու» թերթերի 2000-րդ համարի լույս ընծայման առիթով, Մաիզ Նաֆիսին, բարձր գնահատելով թերթի կատարած հասարակական դերի նշանակությունը պարսիկ և Հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում գրում է.

«Իմ երիտասարդության օրից մինչև այժմ, միշտ էլ Քենդանի բուր պարսիկներից ավելի եմ ծանոթ եղել Հայկական գրական և գիտական շրջաններին և շեմ կարծում որն է մեկը իմ լավ Հայ մտավորականության հետ մերձեցում ու շփում ունեցած լինի և Հայ Հին ու նոր գրականությանը իմ լավ ծանոթ: Ես դա իմ կյանքի պարժանցներից մեկն եմ համարում, որովհետև այդ միջոցով նկատել եմ հայերի շաղկապումը այս երկրի պատմության և գրականության հետ»:

Իսկ 1961 թ. մարտի 13-ին Քենդանի համալսարանի ուսանողական միության ակումբում խոսելով պարսից պատմությունը լիովին վերականգնելու համար Հայ պատմագիրների և նրանց

1 \* منابع تاریخ ایران پیش از اسلام و مغزین ارمنی، مجله، شرق، شماره ۲، تهران، ۱۳۰۰، ص ۱۷.

2 \* «Վերածնունդ», թիվ 2000, Քենդան, Հուլիս 15, 1948:

հաղորդած տեղեկությունների կարևորությունն յայնչապէս չհարկն ասել է:

«...Արշակունյաց հարստությունից մինչև Սեֆնիկները մենք շունենք արժանահաճատ մի աղբյուր, որից կարողանանք ուղղել պարսից պատմությունը գրելու համար: Պետք է ասել, որ հայ հեղինակներից շատերի գործերը թարգմանված են ասար լեզուներով, սակայն նրանց մեջ տեղանունները և անձնանունները փոխարինված են իրենց լեզվին հասուցի անուններով, որի պատճառով այդ գրքերը անօգտագործելի են դարձել:»

Հայ պատմիչներից շատերի անունները նշելուց հետո Մաիզ Նաֆիսին նրանց երկերի պարսկերեն թարգմանությունը համարում է հրամայական պահանջ:

«Ենչամից հետո,—ասում է նա,—Մեր աղբյուրները միայն արարական են, որոնց չենք կարող վստահել և հիմնվելով նրանց վրա ճշգրտորեն գրի առնել հետխլամական պարսից պատմությունը: Ուրեմն դարձյալ հայ պատմագիրները գալիս են լրացնելու այդ բացը: Ակնհայտ փաստ է, որ պարսիկ պատմագիրները մոնղոլ իշխաններին զուր զայու համար, նրանց մասին խոսելիս լավ սրահումներ են արել, տուրք տալով շոգոսորթությունը: Սակայն ճշգրիտ պատմությունը պետք է փնտրել Սահիֆանես Օրբելյանի «Պատմություն Եսահանգին Միսական» գրքի մեջ:»

Քվելով Հովհաննես Մամիկոնյանի, Սերնոս Եպիսկոպոսի, Քոճմաս Արծրունու, Սահիֆանես Ասողկի, Կիրակոս Գանձակեցու, Գրիգոր Նյաֆեցու, Առաքել Դավթիժեցու անունները, Մաիզ Նաֆիսին կրկին անգամ առաջարկում է թարգմանել նրանց գործերը և իր եզրափակիչ խոսքում ասում է. «Շուտով եմ, որ կզգաց հայագիտական ամբիոնի կարևորությունը Քեհրանի համալսարանում և միջոցներ կընձևենք զեթ համալսարանի պատմագիտության բարձրագույն դասընթացներում ներմուծել հայերեն լեզվի դասավանդումը, քանի որ այն սանկրիտերենից և օրգու լեզվից ավելի կարևոր է»<sup>1</sup>:

Հայ պատմագրության հետազոտությունը է զբաղվել պարսիկ պատմարան, հնագիտական պատմագիր Մահմադ-Քադի Մոսթաֆավին: Նա երկար տարիներ ուսումնասիրել է Իրանի հայոց հնագույն վանքերն ու եկեղեցիները, հայ նարտարագիտությունը և հանգես է եկել ուշագրավ հրապարակային դասախոսություններով:

Հայ ժողովրդի հին պատմությունը հետաքրքրել է նաև պրոֆեսոր Արաս Մեհրիբին (Շուշթարի), որը հայկական աղբյուրները

<sup>1</sup> Նույն տեղում

լայնորեն սպառազորեցի և «Իսլամական Իրանի» մեծածախալ աշխատությունը գրելիս<sup>1</sup>։

Այդ կազմակերպչամբ «Ֆերզուսի» շարաֆաթերթի խմբագրությանը դիմելով, անվանի պարսիկ պատմաբան-քանասանց պրոֆեսոր էրբահիմ Փուր-Մաֆուզին հարցում է կատարում այն կարևոր ազդուրենների մասին, որոնք իրոք անհրաժեշտ են Իրանի հին պատմությունը նշմարացրորին՝ վերականգնելու համար։

էրբահիմ Փուր-Մաֆուզը հանգամանորեն պատասխանելով խմբագրությանը, Իրանի պատմությունը գրելու համար անհրաժեշտ ազդուրենները թվարկելով, հատկապես հիշել է հայկական ազդուրենների մասին, որոնք համարել է մեծարժեք և կարևոր։ «Հունական, հռոմեական ազդուրեններից ավելի մեծարժեք են հայկական ազդուրենները, — նշել է պրոֆեսորը, — նրանցից զատ մյուս ազդուրենները այդքան բնկնող արժեք չեն ներկայացնում։ Պետք է սպասել այդ ազդուրեններից և գրել Իրանի ժողովրդի պատմությունը, քանի որ մեր ունեցածը լուի թագավորների, զորաշարժների, հաղթարշավների և նման զեպքերի շարագրանքներն են, իսկ զա պատմություն չէ»<sup>2</sup>։

Ակադեմիկոս Սաիդ Նաֆիսու և այլ պատմագիրների հրատարակած հոգեմաներն ու հրատարակած ելույթները մեծ հետաքրքրություն են առաջ բերում Իրանի մտավորականության մեջ։ Միտած 50-ական թվականներից պարսիկ հեղինակները փորձեր են կատարել թարգմանելու ևորենացու «Հայոց պատմությունից»<sup>3</sup> Հայկի և Բելի կոմից մինչև Արտաշեսի և նրա որդի՝ Արտավազդի վախճանը հատվածը։ Այդ գործը նախաձեռում է պատմաբան էրբահիմ Գեհանը։

1952 թ. այն թարգմանվում է պարսկերեն և լույս է տեսնում Արաք քաղաքում<sup>4</sup>։ Անհրաժեշտ է նշել, որ մինչև առանձին գրքով լույս տեսնելը հիշյալ թարգմանությունը ամբողջապես հրատարակվել էր նույն Արաք քաղաքում «պազրոֆուզ սեֆուզ» («Հորիզոն») պարբերական թերթի էջերում<sup>5</sup>։

<sup>1</sup> 10 ր. «تهران ۱۹۷۷» شماره ۲۶، مجله فردوسی، «Ֆերզուսի» ամսագիր, թիվ 24, թվական 1997, էջ 10.

<sup>2</sup> «Ֆերզուսի», շարաֆաթերթ, թիվ 1, թվական 1967 թ. էջ 9.

شماره ۱، تهران ۱۹۷۷، ۹ ր.

<sup>3</sup> تاریخ ارمنستان، تأليف موسی خسرو، مورخ شهیر ارمنستان، باهتنام ابراهیم دهگان اراك، ۱۹۵۲.

<sup>4</sup> روزنامه افق، شماره‌های ۱-۴۸، اراك ۱۹۵۲.

«Մովսէս ետրննացու պատմութիւնը,—գրքի առաջարանում գրում է Գե՛զանը,—հարուստ էյութ և փաստեր է պարունակում Իրանի մասին: Նրա մեջ գրի են առնված I դ. ողջ պատմութիւնն ու առասպելները»<sup>2</sup>:

Գրքի առաջարանն ավարտելուց հետո Գե՛զանը մանրամասր շարադրել է հայ պատմահոյր կենսագրութիւնը:

Այս ուղղութիւնը կատարված երկրորդ, սակայն, անհամեմատ ավելի խոշոր քայլ էր աշխարհահռչակ «Շահնամ»-ին: Համահամար, հայ ժողովրդի հերոսական ակտիւնների ու ազատասեր տենչերի արտահայտիչ «Մասնա ժանր» դրուցաղեկութիւնն հաննարի պարակերնն թարգմանութիւնը:

Ձեռքի տակ ունենալով Գարեգին Մրվանձայանի, ակադեմիկոսներ Մանուկ Արեղյանի և Կարապետ Մելիք-Յանջուանյանի, Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Անն Սուրմելյանի աշխատութիւնները, պրոֆ. Ֆրեդերիկ Ֆելդի (Ֆրանսերեն) ածքաւը, ինչպէս նաև Սովետական Հայաստանում հրատարակված «Մասնա փաշիկանները», «Մասունցի Գովիթ», «Ջոշննց տուն», «Մանասար և Բաղդասար» պատումները, թարգմանիչներ Գեորգիս Աղասին և Ալեքսանդր Պատմագրյանը պարակերնն հատորը կազմել են հետևյալ բովանդակութիւնը.

1. «Մանասար և Բաղդասար», 2. «Մանասարի և Բաղդասարի ամուսնութիւնը», 3. «Ջոշ Մհեր—Առյուծածն», 4. «Մասնա Գովիթ», 5. «Գովիթը վերաշինում է Մասնա վանքը», 6. «Գովիթը և Մարա Մելիքը», 7. «Գովիթը և ետնդութ խաթունը», 8. «Գովիթի մահը», 9. «Փոքր Մհեր—Աղոսվաքառ»:

Գրքի առաջարանում թարգմանիչ Գ. Աղասին համառոտակի անդրադարձել է հայ ժողովրդի բանահյուսութիւնն աղբյուրներին, դրուցաղեկութիւնը գրողուց հայ բանահավաքների կատարած անգնահատելի աշխատանքներին և վեր հանելով «Մասնա Մահր» ժողովրդագիտի ստեղծագործական ուժը, անվանում է այն հայերի «Շահնամ»<sup>3</sup>:

Հայ պատմագրութիւնն եկամամբ ցուցաբերած խորը ակնածանքից բացի, վերջին 50-ամյակի ընթացքում պարսիկ լեզվաբանները արտակարգ հետաքրքրութիւն են հանդես բերել նաև դեպի հայոց լեզուն, հատկապէս գրարարը: Եվ պատահական չլիցաք է համարել, որ համալսարանական ժողովներում, մամուլի էջերում,

<sup>2</sup> «Հայաստանի պատմութիւն», պարսկ. թարգմ. (Առաջարան):

<sup>3</sup> «لا يزال ساسان» ترجمه گشورگيسي آقاسی، تهران ۱۹۷۰ «Մասնա Մահր», պարսկ. (Առաջարան):



Հանախ են արժարժեցում Հայոց Հին և Նոր լեզվի Հնապատուհան  
Հետ կապված հարցերը:

Փարսկերեն-հայերեն լեզուների կայծերի փոխազդեցություն-  
ների հարցին անդադառանալով, Քեհրանի Համալսարանի դասա-  
խոս, բանասեր ղեկավար Ռեզա-զադե Եաֆազը 1967 թ. հայտարա-  
րում է.

«Այն ինչ ուզում եմ համառոտակի ներկայացնել, դա հայերեն  
լեզվի կարևորությունն ու արժեքն է պարսկերեն լեզվի ուսումնա-  
սիրության անսակեախից: Բացի այն, որ հայերենն ու պարսկերենը  
երկուսն էլ միևնույն ծագումն ունեն և արիական լեզուների մեկ  
նյութն են կազմում ժամանակի ընթացքում և Հասկապետ Մասան-  
յան թագավորության օրոք բազմաթիվ պարսկերեն բառեր մուտք  
են գործել հայերեն լեզվի մեջ: Մեզ մեռ.— շարունակում է պարսիկ  
գիտնականը.— Մայրոմ-խանի, Հովսեփ Միրզայանի, պրոֆեսոր  
Ռուրեն Աբրահամյանի, Հրաչյա Աճառյանի նման դեմքերը գործ-  
նականապես ազդեցություն են մատուցել պարսկերեն լեզվին  
և գրականությանը:

Իսկ 1968 թ. մարտի 1-ին, Քեհրանի Համալսարանի հայ ու-  
սանողների համար կազմակերպված հայ-պարսկական լեզվական  
փոխհարաբերությունների մասին դասախոսության մեջ ղեկավար  
Ռեզա-զադե Եաֆազը հասկապետ շեշտել է, որ բոլոր Հնչյունները  
ունեցող կատարյալ այբուբեն Հանդիսացող հայ առանցի շնորհիվ  
է, որ տաճիկ ու վերականգնվել են անցյալի պատմական վայրե-  
րի, անկանց անունները, բառերի Հնչյունները և Հնարավոր դարձել  
նրանց ստուգաբանությունը: Նա նույնպես բարձր է գնահատել հայ  
մասնագետությունը, որից լայնորեն ռզմվել են թե՛ պարսիկ, և թե՛  
այլազգի ուրիշ պատմաբաններն ու գիտնականները, պատմական  
դեպքերը հշակույտ և իրողությունները վերականգնելու համար:

Իրանի կրթական նախկին նախարար, խոշոր լեզվաբան-գրա-  
կանագետ ղեկավար-պրոֆեսոր Փարվիզ Նաթել Խանյարին կարևոր  
նշանակություն տալով հայագիտությանը, ասել է. «Հայերեն լե-  
զուն հնդեվրոպական լեզվախմբի կարևոր անդամներից մեկն է  
և բուրրովին անկախ և ինքնուրույն գիրք ունի հիշյալ լեզվախմբի  
մեջ: Հայանում եմ Հաստաա համոզմունքով, որ եթե որևէ մեկը  
ցանկանում է կատարելապես տիրապետել պարսից լեզվին, նրա  
համար անհրաժեշտ և շատ կարևոր է քաջ ծանոթ լինել նաև հա-  
յոց լեզվին»:

Ելնելով այս համոզմունքից պատմարան ԱՆՃազ Փասրազին մեծ երախտադիտութիամբ էր սովորում հայոց լեզուն և Փասրազին,—գրում է Զեքոստի շարաքաթիքը,—իր պատմարանասիրական պրագմատիկների մեջ նկատեց, որ հայերեն լեզուն անհրաժեշտ է պարսից պատմության և լեզվի ուսումնասիրության համար: Լեռնաբար, մի քանի տարի անընդհատ հետևելով հայերենին, նա սովորեց հայոց լեզուն և պատմությունը<sup>20</sup>:

\* \* \*

Քարձր գնահատելով հայ միջնադարյան պատմագրությունը, ինչպես նաև հայոց լեզվի հարստությունը, պարսիկ առաջնոր միտքը տեսավ ու գիտակցեց հայ ժողովրդի պատմական մեծ անցյալը և հետզհետե օկանց նաև հիանալի հայ ժողովրդի բանաստեղծական հանճարով, նրա հոգու հարստությամբ, մաքր մեծ թուրքեներով:

Լատիապես սկսած 40-ական թվականներից հայ պարսկական գրական առնչությունների ուսումնասիրումը թևակոխում է պատմական նոր փուլ:

Պնաս է առել, որ ազգային գրականությունների փոխազդեցության շնուց զոյություն ունեցող պրոցեսում միշտ առանձնապես մեծ, ազտիվ ու ազնիվ է եղել այն գրականությունների, այն գրողների ու երկերի գերը, որոնք գեղարվեստական կատարյալ կերպարներով արտացոլել են իրականության առաջադիմական երկվույթները, նպատակ են իրենց ժողովրդի դեպի հասարակական հարարերությունների բարձր մեները կատարած առաջընթացին և մարդկությանը հարստացրել դաստիարակչական վերափոխող հզոր գաղափարներով:

Ահա թե ինչու, ելնելով ժամանակի պահանջից, համաշխարհային գրական դեմքերի հանճարեղ ստեղծագործությունների ոլորտում պարսիկ գրական-հասարակական միտքը սիրեց ու բարձր գնահատեց հայ դասական, արևմտահայ և սովետական շրջանի գրականության հարստությունը:

Հայ դասական գրականությունից կատարված առաջին թարգմանությունից հետո (Գր. Ղոհրայի 17 նորագույնը), Քեհրանում հրատարակվող «Փենյամե նովին» (սնոր պատգամ) ամսագիրը «Ստացված գրքեր» վերատառության տակ գրում է. «Իրեց հարյուր տարի է, որ հայերն ապրում են Իրանում, սակայն, գծրախառբար, մինչև այժմ լուրջ նպատակագրում չի եղել՝ պարսիկ ժողո-

<sup>20</sup> «Զեքոստի շարաքաթիք», թիվ 4, (Աքան), Քեհրան, 1987 թ.:

գրողին ծանոթացնելու հայ պատմությանը, մշակույթին, լեզվին ու գրականությանը: Երբք, շատ արագալի է, որ մի խումբ պարսիկ և հայ մատվորականների ձեռնամուխ են եղել այդ գործին: Մի գործ, որը աստիճանաբար պարսիկ ժողովրդին ներազդելու համար կազմվելու հայ գրականության մասին<sup>11</sup>:

Հայ գրականության և, գլխավորապես, պոեզիայի հետ ծանոթանալով, պարսիկ նշանավոր գրողներն ու հրատարակատուները մտախիչց նանաչիցին հայ հեղինակներին հումանիզմը, նրանց ազատասենչ սցին և խորը սեպիզմը: Համեմատելով Արևմուտքի գրականության հետ, նրանք մի շարք առավելություններ են տեսնում հայ գրականության մեջ՝ և հանգես դառնով մամուլում ընդգծում են հասկապես նրա գաղափարացանկի կազմն ու սկզբունքայնությունը: Գրականագետ Հալ-Սեիդ Ջավադին, Գրիգոր Զոհրապի ետյն հատորի պարսիկերեն թարգմանության նախաբանում գրում է.

«Արևմտանկերպական գրականության հետ սարքները շարունակ ծանոթությունը մի տեսակ միապաղաղություն է ստեղծել մեր մտածելակերպի մեջ, մարդկային կյանքի հանգուցային խնդիրները շոշափելիս: Մյուս կողմից այդ արթմանությունը խանգարել է մեզ ծանոթանալու մեր հարևան երկրների գրականության հետ: Եվ այսօր հասարակական կյանքի, իրենց ժողովրդի իղծերի, մարդկային ապրումների նկատմամբ տենցած նրանց տեսակետները, նրանց աշխարհայացքը մեզ հայտնի չէ: Այս առումով Գ. Զոհրապի պատմվածքները յուրօրինակ ընտիր նմուշներ են՝ վերցված մեր հարևան այն ժողովրդի կյանքից, որը մի ժամանակ ապրել է միևնույն սոցիալական պայմաններում, ինչպիսին ներկայումս շարունակվում է մեզ մաս»<sup>12</sup>:

Հայ գասական պոեզիայից կատարված առաջին պարսիկերեն թարգմանությունը պիտք է համարել հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը: Այդ թարգմանությունը իր հերթին սերտորեն կապվում է իրանական տղզային թատրոնի գարդացման առաջին խկ քայլերի հետ:

1922 թ. անվանի դերասան, դրամատուրգ Ռեզա Փամայ Եահրրզադը մի քանի հայ թատերասերների մասնակցությամբ թարգմանում է «Ալեյի և Մեհնուն» և «Յուսուֆ ու Զուլեյխա» սիրավեպ-

<sup>11</sup> Ա. Մ. «تہران ۱۹۲۴» ۸ شماره، «چند پیام نوین» «Փայամե նովին»  
№ 8, Թեհրան, 1904, էջ 80.

<sup>12</sup> Գրիգոր Զոհրապ, «17 պատմվածքներ», թարգմ. Ալեքսա Ռեևադյի,

کریکوز سهراب، هفتاد داستان، ترجمه البرت یزنازی،

تہران ۱۹۲۳» ۷

բը Հիշեցնող ԷՒնուշը», որը և ետյն թվականներին ներկայացվում է պարսկական բնմիջ: Հեռագայում 1924—25 թթ. Մահրազար ԷՒնուշ պոետի ազդեցություն տակ գրում է իր «Փարիզէնը զա Փարիզազ գրաման (սպերայի վերածված), որտեղ աղբիկների սխրմբական նրգա Հատվածում եույնությամբ տեղագրում է «Համբարման առավոտը» գլխի «Ջան-գուլումբը»:

Հեռագայում, ինչպես նշվեց, սկսած 40-ական թվականներին Իրանում սկիզբ առած սոցիալ-քաղաքական տեղաշարժերի Հեռվանքով նոր շրջափուլ մտավ պարսկական առաջադիմական գրականութունը: Ժամանակաշրջանի գրական միացք իր Հերթին բարկը զնահատեղով թարգմանական գրականության զերը Հասարակական կյանքում, ոգևորությամբ ընդունեց Հայ գրականությունից կատարված թարգմանությունները: Կարճ ժամանակամիջոցում պարսիկ գրականագետներն ու գրողները սկսեցին մասնակցել արժեքավոր այդ գործին և, որ կարևորն է, Հայ դասական, ինչպես նաև սովետահայ պոեզիան զարմավ որոշ Հեղինակների ուսումնասիրության առարկան:

Նվ իրոք, 40-ական թվականներին Իրանում, գլխավորապես Քեհրանում հրատարակվող մի շարք թերթեր, ինչպես «Սաաղաթի բաշար», «Էթուշ», «Մարդոմ», «Մուղանդ», «Մեթարեյե Սուհ» և այլն, մեծ սիրով ու պատրաստակամությամբ են տպագրում Հայ դասական և սովետահայ պոեզիայի և մասամբ արձակի նմուշները<sup>12</sup>:

Հենց այդ տարիներին էր, որ պարսկական մամուլի էջերում իրանական Հասարակայնությունը ծանոթացավ Միքայել Նայրանդյանի «Էզատություն», Մուշանիկ Կուրդիսյանի «Էլյո մենք ենք դուխ», «Բանվորներ», Հակոբ Հակոբյանի «Մեռան շիրան» շափածո ստեղծագործություններին<sup>13</sup>:

Հայ շափածո խոսքը պարսիկ ընթերցողներին մեջ ավելի տարածում գտավ 50-ական թվականներին Մայրաքաղաքի թերթերում տպագրվեցին սովետահայ բանաստեղծ Գեղամ Սարյանի «Գուլ-

<sup>12</sup> Բացի այդ դասական պեզիայի նմուշներից, որոնք շարունակաբար տպագրվել են իրանական մամուլի էջերում, սկսած 1945 թ. մինչև որ Իրանում պարսիկներն լեզվով հրատարակվել է Հայ դասական, արժատույն և սովետահայ պոեզիայի և արձակագրության շուրջ յոթը սավաթ անթուղթեր: Իրանում շեղումի թարգմանիչներից են Եկարի-բանաստեղծ Մարգար Կարաբեկյանը, Արա Լովաներսյանը, Ալրեքո Քերեթյանը, Այն Կուրդիսյանը, Հրանտ Կուրսյանը և ուրիշներ, որոնք Համազումիսիցիով պարսիկ լեզուով և Հայրենակներ գրչակիցների Հեռ խոսքը ծանոթություն են մատուցել երկու ժողովուրդների գրականությանն ու մշակույթին:

ևարան», «Պայքար լավ սրերի համար», «Լուսանկար», «Երեք կոմ-  
բայնաժար» և այլ երկերը:

50-ական թվականների սկզբներին պարսիկ հասարակայնության  
կողմից շերտ բնդունելություն գտավ Ավետիք Իսահակյանի «Արու-  
նայա-Մահարի» պոեմի թարգմանությունը: Այդ բնդունելության  
լավագույն ապացույցն էր այն, որ պոեմը երեք անգամ վերա-  
հրատարակվեց և 1967 թ. սեուշե (սեպտեմբեր) ամսագրի խմբագիր,  
բանաստեղծ Ահմադ Շամլուն այն լույս բնծայեց առանկին զբոսով:

Ավ. Իսահակյանը պարսիկ ընթերցողի համար դարձավ այն  
հայելին, որ բնդունելով արնեյյան վառ արևի շողերը անզրա-  
գարեթեց այն ավելի գունեղ, ավելի երանգավորված:

Այդ երանգավորումները լուրջի ճամակրանք առաջ բերե-  
ցին պարսիկ գրական մտքի ներկայացուցիչների մնչ, որոնք ան-  
կարող էին իրենց գեահաստականի խոսքը շատի հայ բանաս-  
տեղծության վարպետի և առհասարակ հայ պոեզիայի մասին:  
«Ավետիք Իսահակյանը»,—գրում է գրականագետ Արզույա թավաթ-  
րոյին,—իբ մարդկային հուսախարությունները պատկերել ու դըր-  
սեորել է «Արու-նայա-Մահարի» պոեմի մեջ, որը գեղարվեստա-  
կան դուրսդուրծոց է, և թարգմանվել է բազմաթիվ օտար լեզուներ-  
ում, ամրագրվել բանաստեղծի միջազգային հռչակը: Մական  
Իսահակյանի իսկական ոգին ու սիրտը «Արու-նայա-Մահարի»  
մեջ լպետք է որոնել: Հայ մեծ բանաստեղծի ոգու մեջ ամուր նստած  
են իբ մոզովսուրդն ու երկիրը: Նրա սրտի մեջ երկու հակա կոթոզ-  
ներ կան: Մասին ու Արագածը: Իսահակյանը,—շարունակում է  
Ա. Թավաթրոյին,—ամենից առաջ մոզովյոզական բանաստեղծ է:  
Նա հարազատ մոզովյոզի արցունքն ու քրտինքն է խոսնել իբ եր-  
զերին: Նա մեծ մարդասեր է, ու նաև ըմբոստ ու խրոխտ հոգի:  
Մեր այս համոզմունքը հաստատում են նրա «Ազատության զան-  
գր», «Թագավոր», «Մեծ հաղթանակի օրը» և հայրենասիրու-  
թյանն ու ազատությանը նվիրված բազմաթիվ բանաստեղծություն-  
ներ, որոնք կարելի է համարել հայ գրականության գահարները:

Պոեմի թարգմանությունը արձագանք գտավ նաև «Էթեբիլա-  
աթն Հավանան», «Մեհրիգ-օ-Միյահ» ամսագրերում և այլ թերթի-  
րում<sup>11</sup>:

Այս կապակցությամբ ուշագրավ է նաև «Արմազան» գրական-  
գիտական ամսագրի խմբագիր Մահմուդ-Վահիդ զադն Դասթգար-  
գիի (Նասիմ) գրած ժանթագրությունը Ավետիք Իսահակյանի

<sup>11</sup> 14 ص ۱۹۶۱ سال تهران ۱۷ شمس جوانان، اطلاعات فرهنگی، ۱۹۶۵، էջ ۱۶.



Հայ դասական պոեզիան ներգործող ազդեցություն է ունեցել ժամանակակից բանաստեղծ Արզուհուսիյն Ջալալյանի (Ջալալի) վրա: Ծագելով իրանահայ Քարզանիի Հրանտ Ղուկասյանի՝ պարսկերեն արձակ բանաստեղծությունների վերածած հայ պոեզիայի նմուշներից, Ա. Ջալալյանը խոր ներշնչանքով ու մեծ վարպետությամբ է գրանք վերածել շափածոյի, հասցնելով այն ստեղծագործական Քարզանուսիյան բարձր մակարդակին: Անկասկած, Ա. Ջալալյանը հայ պոեզիայի տողերի մեջ զգացել է նոր, խորագույն հուզիչ ու նորագեղ, հմայիչ խոսքի մեծ վարպետներին:

Կարելի է նշել նաև Ավ. Իսահայիյանի «Յաթր ամալի ճամփեքի վրա», Վահան Տերյանի «Լուսիյունը», «Իմ գերեզմանին զուրմի մտացեք», Հովհաննես Հովհաննիսյանի «Կուզի լինի», Վահան Քեքելյանի «Կարավանը», Սիդնի Չարեցի «Ըս իմ անուշ Հայաստանի...», Վահագն Դավթյանի «Ու ներս սլացա՛մ», «Էկեքիսք», «Փինով է լցվում» բանաստեղծությունների արժեքավոր Քարզանուսիյունները, որոնցով նա իսկապես հարստացրել է պարսիկ Քարզանուսիյան զրականությունը<sup>15</sup>:

Արդ պարսիկ զրական միտքը հիացմունքով ու բուրն ոգևորությամբ է խոսել հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Քումանյանի մասին: Ինչպես նշեցինք, պարսիկ ընթերցողները Քումանյանի ստեղծագործություններին ծանոթացել են մեր դարի 20-ական թվականներից սկսած:

Համամարդկային հարցեր ու գաղափարներ արծարծող հայ բանաստեղծի զրական գոհարները անմիջապես գրավեցին պարսիկ առաջագնծ գրողների ու զրականագետների ուշադրությունը: Կարգայով Քումանյանին, նրանք զգացին բանաստեղծի մեծությունը և ամեն կերպ աշխատեցին ավելի մտաթևից ծանոթանալ հեղինակի հարուստ ստեղծագործությանը:

Հորեյլանական օրերին Քեհրանում առանձին զրքով յույս տեսան «Անուշ» պոեմը, «Ախիթամար», «Փարվանա» լեզենդները, Սպահանում՝ «Անուշ» խորագրով հայ բանաստեղծությունների

Հնու նրանք միասին Քարզանի են Այնթապը Երզնկայից «Փառվ համար» գրաման, որը և բազմիցս անգամներ պարսկերեն լեզվով ներկայացվել է Քեհրանի և այլ քաղաքների բնակարարներում: (Տե՛ս «Վերածնունդ», թիվ 2000, հուլիս 15, 1948 թ.):

<sup>15</sup> Նշված Քարզանուսիյունները հասարակվել են Քեհրանում յույս տեսող «Քաղվ Սանք» խորագիրը կրող ամսագրում: Տե՛ս 1927 թ. արձիվտ հատորի էջ 202, 271, 457, 538, 590, և 1938 թ. արձիվտ հատորի էջ 145, 268, 329, 400, 658:

ազգար անթուղիան: Պարսկական մամուլի էջերում հրատարակվելիք բանաստեղծի մասին բազմաթիվ հոդվածներ ու կենսագրություններ:

Հայ-գուսական գրական կապերի մերձեցման վսեմ գործում ուշադրազ կրկնույթ էր ժամանակակից անվանի երիտասարդ բանաստեղծներ Նազեր-Նադիրփուրի և Հուշանգ Էրթենաչի (Սայն) նախանկեծությունը: Հայ բանաստեղծներ Ռ. Քենի և Գալուստ Խունկիցի ժամանկցությամբ նրանք պատասխանատվության բարձր զգացումով հրատարակեցին (պատկերազարդ) Լ. Քումանյանի «Քմբիկարերգի առումը» և մի շարք այլ բանաստեղծություններ ընդգրկող հատորը:

Հայ բանաստեղծի նկատմամբ նրանց ազած խոր հարգանքը ակնհեր է դառնում թարգմանության մասին արված նրանց բացատրության առգերում:

«Այն, ինչ կարգում ենք Քումանյանի հիշատակին նվիրված այս գրքում,— գրում են թարգմանիչները,— ազատ թարգմանության նմուշ չէ, և ոչ էլ լիզվական հասկացությունների մոտազոր փոխարինումն մի այլ լիզվուզ: Սա նուրբ ու մանրազնին մի թարգմանություն է, որի յուրաքանչյուր բռուի և զարեվածքի էջըրաության համար մի քանի անգամ դիմել ենք բնագրին: Եթե որոշ բանաստեղծությունների ընկալում կան պարզ, երբեմն էլ ժողովրդական արտահայտություններ, իսկ պարսկերենում դրանք ստացել են քիչ թե շատ գրական ազիլի պերճ նրանզավորում, ապա դա նրանից է, որ մեր բանաստեղծական լիզվից ազիլին պահանջել հնարավոր չէր»<sup>20</sup>:

«Քումանյանի հուշամատյան» այս ժողովածուի լույս բնծայման ասթիվ «Սոխան» («Խոսք») գրական ամսագրում Ծարհոզ Մեհրաբըր գրում է. «Չնայած հեամենի հայ ժողովուրդը գարիբ շարունակ եղել է մեր հարեանը և պատմական սերս կապեր է ունեցել մեր երկրի հետ, սակայն պատշաճ կերպով չի կարողացել իր երկուհազարամյա անցյալ ունեցող գրականության հետ ժանթացնել մեզ: Ինչ էլ որ լինի պատեանը, իրականությունն այն է, որ այդ ուղղությամբ կատարված քայլերը զուտև աննշան և լիչին են, և մեր ժողովուրդը լիակատար ծանոթ չէ, այնպիսի մի ասա-

<sup>20</sup> «چاپود نامه هوانسی قجالیان» ترجمه نادر زانچووز، هوشنگ ایتهاج، مقدمات، تهران، ۱۳۴۸، Լիզվ. Քումանյան, Հուշամատյան (Մատարան), թղթ. Ն. Նադիրփուր, Լ. Էրթենաչ, Քենբան, 1959:



չափոր, ազնիվ մշակույթի և գրականության հետ, որոնց սեփականություններ կարող է հպարտանալ հայ ժողովուրդը»<sup>21</sup>։

Նույն առիթով «Ցաղմա» ամսագիրը իր հերթին բարձր գանձյով հայ պոետի ստեղծագործությունները երկու ժողովուրդներին մերձեցման գործում, գրում է.

«Երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար, ոչ մի զործոն այնքան կարևոր չէ, որքան գրական փոխուղարձ անչլությունների փաստը»<sup>22</sup>։

Հորեղյանական տերերն «էթթելաթա» թերթի գրական աշխատակից Քիթոն էմամին անդրադասանալով հայ բանաստեղծի կյանքի և գրական գործունեությունը այսպես է գրվատում Քումանյանի մեծությունը։

Համարելով նրան հայ ժողովրդի վշտի երգիչ Բ. էմամին ասում է. «Քումանյանի քառյակները իրենց խորը փոխափայլական խոհերով կարելի է համեմատել պարսիկ դասական բանաստեղծներ՝ Օմար Խայամի, Խաքանու և Հաֆեզի քառյակների հետ։ «Անուշի» և «Մարտի» նվիրական սերը,—չարունակում է հոգվածագիրը,—կարելի է նմանեցնել «Լեյլի և Մեջնուն» և «Յուսեֆ և Հուլյիսա» պոեմներին։ Եզրափակելով խոսքը, Բ. էմամին գնահատանքի յուրովի իր տեսակետն է արտահայտում հայ բանաստեղծի ստեղծագործական ուժի հետ զուգակցված կյանքի հարաբերությունների մասին. «Էնովհանեհ» Քումանյանի ստեղծագործություններն,—գրում է հեղինակը,—վերածվեցին կյանքի և կրակի կյանքի վերածվեցին, ու այդքան հազիայան, կրակի վերածվեցին, որպեսզի այրեն հասարակության մեջ բուն զրած մակարություններին»<sup>23</sup>։

Խորիմաստ, սակայն անաղարտ ու պարզ առկերով է գրսեորել իր ուղափորությունը ժամանակակից անվանի գրականագետ Քիմուր Գորգինը։ «Անուշ» պոեմը քննիրցելուց հետո,—գրում է նա.—«Անուշը» հորինող Քումանյանը, հայ բանաստեղծության մի հարուստ շտեմարան է։ Նա ստեղծագործում է հստակ և ճշմարիտ ծարաքանչյուր երկ ստեղծելիս, նրա ոգին ճախրում է ամպերից էլ վեր, ծիածանից էլ բարձր, որպեսզի կյանքը դարձնի ավելի անաղարտ, ավելի անբեմ...»<sup>24</sup>։

<sup>21</sup> «سازمان» شماره ۱۸، تهران ۱۳۴۸ هـ، № 8، ۲۶۷-۲۶۸، ۱۹۶۹، ۲۲ ۲۲۲.

<sup>22</sup> «سازمان» شماره ۲۵۵، تهران ۱۳۴۸ هـ، № 255، ۲۶۷-۲۶۸، ۱۹۶۹.

<sup>23</sup> «سازمان» شماره ۱۸، تهران ۱۳۴۸ هـ، № 18030، ۲۶۷-۲۶۸، ۱۹۶۹.

<sup>24</sup> «سازمان» شماره ۱۸، تهران ۱۳۴۸ هـ، «ترجمه اشعار از منی» - «سازمان» شماره ۱۸، تهران ۱۳۴۸ هـ، «سازمان» شماره ۱۸، تهران ۱۳۴۸ هـ، «سازمان» شماره ۱۸، تهران ۱۳۴۸ هـ.

Պարսիկ հասարակական, գրական ու գիտական լայն շրջաններում հասնալով դրսեւ երստ արժանւոյն զեահատմած հայ պոեզիան, մի նոր աշխարհ՝ բաց արեց պարսիկ գրողներին ու գրքենագրատեղիքի առաջ: Հայ պոեզիան իր հոգեբանական հայտնագործութիւններով, համաժողովրդական, ազգայն-պատմական գաղափարների բնագրկումով առիթ ծառայեց, որպէսզի պարսիկ գրական միտքը լարէ հետեւութիւններ կատարի համեմատելով այն ժամանակակից պարսիկական պոեզիայում միայն քանակ կազմող բանագործութիւններին հետ: Եման խեղիքը հուզեց և անհանգստացրեց առաջադեմ ու հայրենասիր գրիչ շատ մարդկանց: Այդ իսկ նկատառումով տեսք վա Խունա թերթի էջերում, գրականագետ զոհար Պարզինը մի բնագրական հոդվածում, խոսելով Թրանսի ներկայիս արվեստագետների և բանաստեղծների մասին և ազգայնորեն վերլուծելով նրանց ստեղծագործութիւնները, համեմատութիւն է գնում հայ բանաստեղծների հետ և հանգում է հետևյալ եզրակացութիւններ:

«Հայ բանաստեղծների համեմատութիւնը,—գրում է զոհար Պարզինը,—մեր վերջին հիանալիների բանաստեղծների հետ զարմանահրաշ տարբերութիւն է հայտնաբերում: Հայ բանաստեղծները, որոնք ծնվել են մեկ տարարախա ազգի ժողովում, թեկուզ դարեր շարունակ ապրել են գերութիւն մեղ, այնուամենայնիվ չեն գաղաբել պայքարելուց: Եթե որևէ այլքի ընկնող հայ բանաստեղծի կյանքն ու գործը ուսումնասիրվի,—ավելացնում է հեղինակը,—կարգվի, որ դա հայ ժողովրդի հերոսական պայքարի մեկ զրվագն է հանուն ազատութիւն: Մենք, ոչ մեկ ճանաչված հայ բանաստեղծ չգիտենք, որի սիրտը չի արտփել իր հայրենիքի վնասութիւն և իր ազգի առաջադիմութիւն սիրույն...»<sup>25</sup>:

Այս զոհար Պարզինը քննադատում է ներկայիս պարսիկական բանաստեղծութիւնն ու բանաստեղծներին, նրանց ապազգային և ազաքաղաքական մտույ վերաբերմունքի համար:

Հայ պոեզիայի պարսկերեն թարգմանութիւն առպարեզում մի նոր առաիճան նշանավորեց թարգմանիչ Ալինք Խաչատրյանի «Համամասին Անդուհ» («Վշտի գյուցազներգութիւն») վերնագիրը կրող անթոյնգրան<sup>26</sup>:

<sup>25</sup> ۱۹۷۱ سال تهران، ۲۰۰۲، «شهر و کون» و «شهر» ۲۰۰۲، № ۳۵۳، ۲۵۴-۲۵۵، ۱۹۵۷.

<sup>26</sup> «ժողովանում թարգմանված է նաև Հովհաննէս Երջողի «Թրքիական» «Վշտի գյուցազներգութիւն» պարսկերեն վերադրանմամբ: Այդ նույն խորագրով էլ թարգմանիչ Լադաակ-Նարմար է գտել հրատարակել անթոյնգրան:

Այդ ետխանդեմութիւնը հայ բանաստեղծութեան եկամտամբ ունեցած հրախառնութեան բարձր-զգացումով մասնակցներն պարսիկ շնորհալի պոետ Ահմադ Շամլուն և բանասեր-գրականագետ Քիմուր Գորգինը:

Մազկաբազը ընդգրկում է ինչպէս հայ գասական, արեւասահայ, ետլիպեան և սովետահայ շրջանի բանաստեղծների ստեղծագործութիւնները՝ Ավետիք Իսահայանի «Գարգը սրտիս», «Արու-լայա-Մահարի», Լովհաննես Քումանյանի «Ախթամարը», Դանիէլ Վարուժանի «Կակաշները», «Կալիբրո գիշերը», Շուշանիկ Կար-գինյանի «Արծիճը», «Աղջիկը», Սիամանթոյի «Պարը», Պետրոս Դուրյանի «Էնկեր», Ողիշ Զարենցի «Ամբոխները խելագարված», Լովհաննես Երեւոյի «Բիրլիակներ», «Գշտաքը», «Գարգա արի ի-վերին», «Երբ մտնուի էի», Գեղամ Սարյանի «Երգ կառուցման», «Մանուշակը», Սիլվա Կապուտիկյանի «Մայրիկիս», «Քե աշխոս քնդ որոնեն», «Մի փոքրիկ աղջկա», «Կուզի չեռու, չեռու երկրն-քում», «Երբորցի մտա», Պարույր Սեակի «Առաջագրանք համայն աշխարհի հաշիվի ձեռնաներին և ճշգրիտ սայրերին», «Բարի իրիկուն», Վահագն Դավթյանի «Անքնութեան պահերին», «Գար-նանային», «Ու ներս սլացավ...», «Սա հյուր չէ», Լամո Սահյանի

Ուշագրով է այն հանգամանքը, որ մինչև ժողովածուում հրատարակելը Ահմադ Շամլուն իր շնույն շարքից հանգեցում պարբերաբար յուր իր ըն-ծայի Ողիշ Զարենցի «Ամբոխները խելագարված», Պարույր Սեակի «Առաջ-գրանք համայն աշխարհի հաշիվի ձեռնաներին և ճշգրիտ սայրերին», ինչպէս նաև Լովհաննես Երեւոյի «Բիրլիակներ» պոեմները Այս ստեղծագործութիւնները իրենց արժանի գնահատականը պատ Լալարապալատում ապագովոյ գտնույն թերթերում ու հանգեցնելով:

«Բիրլիակներ» մեծ ազգայնութեան է գործում Ահմադ Շամլուն վրա Գոնը ընթերցելուց չեաւ եւ բազմակնիս համարներով է խոսում ստեղծագործութեան մեջ պատկերված կյանքի և կենցաղի ուշագրով կողմերի մասին. գրումով իսկ բացառաշարժով իր վերաբերմունքը վերջ հայ ժողովրդի քաղաքական կյանքը, եր-գրականութեանն ու կուլտուրան:

Երկու բանաստեղծների միմյանց չգտ համակները բացի բարեկամութեան անբազմազան նշանակութեանից, ընտրել է ետլիպեան երկու պոետների խոստով-կական հայացքների անսակմայի: «Բիրլիակներ»—գրում է Ա. Շամլուն,—«ս մի անբազմ ժողովրդի խոսքը կամ բողոքի խոսք է, ընդհան այն ժողովուրդ, որեւէ երկար սարիներ գտնուողին հայտնի են մի այլ ժողովրդի: Մի ժողովրդի, որը գտնու 1800 տարի առաջ ստեղծագործում էր աշտարակ իր սկիզբան ազգա-յին գերով և անկէ Կարուս մշակութի և գրականութեան:

(«Շնույն», № 16, Քեհրան 1968 թ. էջ 11):

Բացի այդ, «Բիրլիակներ» պարսկերէն թարգմանութեանը մտնույն կող-սակցից Լովհաննես Երեւոյի և շնույն շարքից հանգեցն խմբագիր Ահմադ Շամլուն և իրանահայ թարգմանիչ Ալեք Խաչատրյանի միջի:

«Յս չեմ մեղանշի», «Ինչ անեմ մայրիկ», «Արյուն», «Կակաչը»,  
Հենրիկ Քուսմանյանի «Հացը», Արշավիր Գարբուս «Եղիշի Չարեն-  
ցին», ինչպես նաև իրանահայ հայտնի բանաստեղծներ Մարգար  
Ղարաբեկյանի (Գե) և Ջորայր Միրզայանի քնարական գործերը:

Պոեզիայի երկիրը ընթերցիչ հայ բանաստեղծներին, Հեթերո-  
ցիչ բազմադարյան հայ պոեզիայի զարգացման ուղիները: Զգաց  
ու բմբուկից հայ քնարերգության բազմերանգությունն ու սոցիա-  
լական խորմասսությունը:

Անթուրգիայի առաջին էջերում աչքի է ընկնում գրականագիտ-  
ականության Քեմուր Գորգինի բարձր գնահատականի խոսքը՝ ուղղղ-  
ված հայ ժողովրդի հաննարի կողմից ստեղծած հոգևոր հարքո-  
տությունը: Հայ գրականության լավագույն գիտակ պարսիկ մաս-  
ձողը, բնորոշը հնապատողի հմտությամբ ուսումնասիրելու ու ապ-  
րելու է հայ քնարերգության գունեղ բովանդակությունը: Ունենալով  
մեծ ընդհանրացումներ անելու նպաստավոր էլակետ, գրականա-  
գետը հուզական մեծ լիցքով ու ներշնչմամբ է բացահայտում հայ  
պոեզիայի ողու էջերի խորությունը: «Հայ բանաստեղծության  
հրաշքում ու հմայքում» Քեմուր Գորգինը հստակ տեսնում է հայ  
ժողովրդի դարավոր պատմությունը, նրա հաղթանակի ու պար-  
տության ելիչները, հալածանքների դեմ պայքարի ելած նրա  
տենեկուն ու աներեր կամքը: Այս բոլորը անընդիմ ապավորություն  
է պորձել ինչպես Քեմուր Գորգինի, այնպես էլ շատ ու շատ պար-  
սիկ առաջադեմ ու հայրենասեր մտավորականների վրա:

Այս առումով պատկերավոր են հայ բանաստեղծության մա-  
սին սոված Ք. Գորգինի խոսքերը, սրև աչքի է ընկնում իր յուրովի  
մտանցմամբ ու արտահայտչականությամբ:

Նա նշտությամբ գրել է.

«Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք,—ասում է Ք. Գոր-  
գինը,—մի պահ կանգ առեք և նախքան ընթերցելը մտովի պա-  
կերացրեք տանջանք, գերություն, կրակ, արյուն, պայքար և, վեր-  
ջուպես, գրանց հետ միաժամանակ՝ ամենահիասքանչ ազատու-  
թյուն բառերը: Որովհետև ամեն մի հայ բանաստեղծության մեջ  
գուր կզգաք նրա հորինողի կյանքի խոր և միևնույն ժամանակ  
անազարտ ու ինքնատիպ ընկալումը:

— Որտեղ հայ բանաստեղծություն տեսնեք, կանգ առեք,  
խորհրդածությամբ մասձեք, որովհետև հայ բանաստեղծությունը  
կանգնած է իր գարավոր անցյալի փառապանծ ու անսասան պա-  
վանդանի վրա:

— Որտեղ հայ բանաստեղծութիւնն առանձն, կանգ առնք, խորհրդածութիւնք մտածեք և հետո հպարտութիւնք լըզած ընթերցեք ալև Որովհետև հայ ժողովուրդը միշտ էլ մշակույթի և գիտութիւն գովերգողն է եղել և երանց զարգացման համար չի խնայել իր ուժերը:

Չէ՞ որ դարերի խորքից մեզ հասած բնագոյնը հայերեն առանձնի թարգմանութիւնը ստացել է բարգամանութիւնների թագուհու համբավը:

— Հայ բանաստեղծութիւնը, — շարունակում է Ք. Գորգինը, — ամբողջութիւնք վերցնում մարդկային խոհերի, հույզերի ու զգացմունքների գեղարվեստականորեն կախարհիչ արտահայտութիւնն է:

— Հայ բանաստեղծութիւնը երբեք կյանքի մակերեսին թըրթըռացող խոսք չէ, որովհետև հայ բանաստեղծը կյանքին խորաթափանց նայելուց զատ, ուրիշ նպատակ չունի:

— Եթե այցի ես գնում հայ բանաստեղծութեանը, ետեքան գնալը՝ հաշվի առ, զու ներս ես մտնելու ամբողջ աշխարհով մեկ սփռված հինգ միլիոնանոց հայ ժողովրդի լեզվի ու գրականութիւն տանարք: Ուրեմն զգուշ, որ հայ մշակույթի և գրականութիւն վեհութիւնն ու փառքը չզոգացնեն սիրտը և զարմանքը չպատի քեզ:

— Հայ բանաստեղծութիւնը կոսոված պողպատ է: Նա գործութիւնների մայր է: Կյանքի դասն ու քաղցրը միախառնված են նրա մեջ: Նա քո մեջ ուրախութիւն կծնի և զբանով իսկ մարդկային հառաչանքն ավելի լսելի կդարձնի քո ականջին:

— Հայ բանաստեղծութիւնը, զո տառադաս, սակայն առաջագնմ մի ժողովրդի բանաստեղծութիւնն է: Մի ժողովուրդ, որը խոհուն է և ստեղծագործ: Մի ժողովուրդ, որի նվիրական կյանքն ու արվեստը երբեք թույլ չեն տվել, որ բանակութիւնըս սոք գնի իրենց վսեմութիւն սեմինս<sup>27</sup>:

Նման գնահատականները պերճախոս վկայութիւններ են, որ համեմատարար կարճ ժամանակամիջոցում հայ գրականութիւնը իր թախծա գեղեցկութիւնք, իր մեծիմաստ խոհերով և վերսուց մղումներով որքան հարազատ ու որքան խորն է ներթափանցել պարսիկ ընթերցողի ներաշխարհի մեջ: Նման անաչառ բնութագրումը և հշմարացի արժեքավորումը, անկասկած, միշտ էլ կպահպանի իր գիտական նշանակութիւնը և պարսիկ ընթերցանք հասարակութիւնը շատ եզրու կարող է քաղել նրանից՝ հայ պոեզիայի հարստութեանը և նրա զարգացմանը ծանոթանալու համար:

<sup>27</sup> «Ելաի գլուխըներգութիւն, էջ 8—7:

НОВЫЙ ЭТАП АРМЯНО-ПЕРСИДСКИХ  
ЛИТЕРАТУРНЫХ СВЯЗЕЙ

## Резюме

Культурные и литературные связи армянского и персидского народов имеют тысячелетнюю историю. Время сохранило для нас множество поистине бесценных книг, которые являются достоверными источниками для изучения прошлого армян и персов. Именно поэтому многие исследователи истории Ирана обращались к произведениям армянских историографов.

В сороковые годы передовая персидская литература вступила в новую фазу своего развития. Литературная мысль этого времени, высоко оценная важную роль переводной литературы в общественной жизни страны, с удовлетворением приняла переводы из армянских писателей. В короткий срок произведения армянских авторов, как классиков, так и современников, стали объектом исследования ряда персидских литературоведов. В широких литературных и научных кругах Ирана армянская поэзия завоевала известность и была по достоинству оценена.

Содружество армянских и персидских литераторов в области перевода стало значительным общественно-политическим фактором в деле укрепления дружбы двух народов.

Ք Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Ք Ց Ո Ւ Ն

Հ ա զ Վ ա ճ Ն Ե ր

Բ. Գ. Բ ա լ ա յ ա ն—Հարավային Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման մի քանի ապակիսմոր	5
Հ. Մ. Ն գ ա ն յ ա ն—Իրանի XIX դարի ազգաբնակչության հարաբերությունների պատմագրությունը	36
Հ. Հ. Փ ա Վ ի ա ն յ ա ն—Միտոսոսի կոնցեռնայի զեմ շարժումը Իրանում XIX դարի վերջերին	79
Հ. Հ. Մ ե խ ա յ ա ն—XIX դ. 60-ական թվականների պարսիկ արևակազիցների երբ սերունդը և ձևում Միջ Սաղավթի սակագրությունը	91
Վ. Ա. Բ ա յ բ ա լ ք ղ յ ա ն—Ավանդներ հայ իրականության պատմության	116
Գ. Բ. Ա կ ո պ ո Վ—Անբնա սերմին հին իրանական գործառնության հարթ շարժ	165

Հ ն ա զ ա տ ու ռ յ ա ն ն Ե ր

Հ. Հ. Մ ա բ ա ի բ ա յ ա ն—Իրանում գաղութի պատմությունը (ներառյալ չրջան)	133
Ս. Ա. Ա ք ղ ս Վ ա ն յ ա ն—Հարցական նախադասությունը ժամանակակից պարսկերենում	289

Հ ա զ ա ռ զ ա ն ն Ե ր

Հ. Գ. Գ ա ն Ն ղ յ ա ն—Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի հարցերը Առաջին Գաղթիմեցու պատմությունը մեջ	253
Հ. Հ. Մ ո Վ ա ի ա ն—Հայ գրականությունը արդի պարսկական գրական մտքի գնահատմամբ	280

## СОДЕРЖАНИЕ

### Статьи

Б. П. Беляки. Некоторые аспекты развития капиталистических отношений в сельском хозяйстве на юге Ирана . . . . .	3
Г. М. Егвянц. Историкогеография аграрных отношений Ирана в XIX в. . . . .	36
О. Л. Падлевани. Движение в Иране против табачной монополии в конце XIX в. . . . .	70
Л. Г. Шехоян. Новые повеления персидских прозенков 60-х г. XX в. и творчество Джемала Мир Садека . . . . .	91
В. А. Байбуртин. Очерки истории армянской провинции . . . . .	116
Г. Б. Акопов. К вопросу об «ариях» в древнеиранском обиходе . . . . .	165

### Исследования

А. У. Мартиросян. Из истории армянской поэзии в Иране (последний период) . . . . .	193
О. А. Араумянц. Вопросительное предложение в современном персидском языке . . . . .	289

### Сообщения

Л. Г. Данегян. Вопросы социально-экономической жизни Ирана в «История» Аракеля Даврижеш . . . . .	363
Г. О. Мовсесян. Армянская литература в оценке персидской литературной мысли . . . . .	386



Տարգրվում է Հայկական ՍՍՀ ԳՆ  
Արևելադիտարյան ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբակի կողմից  
Պ. Հ. ԱՄՐԱՆՅԱՆ, Գ. Ա. ԱՐԻՍ-ՍԱՐԵՍՆ  
կազմի ճԻՐ. Հ. ԱՄՐԱՆՅԱՆ  
Տեղեկագրական խմբակի  
Ա. Կ. ՍԱՐԵՍՆ  
Արտատպիչներ  
Զ. Ա. ՇՐՄԱՆՅԱՆ, Մ. Ջ. ԳԱԼՍՅԱՆՆ

ՀՅ 04034

Պարզիր 831

Հրատ. 4058

Տարածվածի 3000

---

Հանձնված է քարվածքի 22.1.1973 թ., տարածված է տարածության 28.VII.1975 թ.:  
Տարածվածի 24,5 մանու, հրատ. 25,28 մանու, քույր ՅԵ 1, 60X90/161  
զՆՅՑ 2 ս. 31 կ.:

---

Հայկական ՍՍՀ ԳՆ հրատարակչություն, Երևան—13, Բաղնիկանոցյան 24  
Издательство АН Арм. ССР, Ереван-13, ул. Багратионовна, 24  
ՀՍՍՀ ԳՆ հրատարակչության էրիտանի տպարան

TABLE VIII. — *continued*

Fig.	Range	Rural and	Urban & City
121	13 f.	quadrangular	quadrangular
122	1 N.	square	square & long pentagonal
207	1 N.	pentagonal & hexagonal	pentagonal & long pentagonal
208	1 N.	hexagonal	hexagonal
209	20, 21 f.	square & pentagonal	square & pentagonal
210	2 f.	square	square
211	21 f.	square	square
212	1 N.	square	square
213	1 N.	square	square
214	2 N.	square	square
215	2 N.	square	square

Տարգրվում է Հայկական ՍՍՀ ԳՔ  
Արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբակներին  
Պ. Հ. ԱՄՐԱՆՅԱՆ, Գ. Ա. ԱՐԻՍ-ՍԱՐԵՍԻ  
Կաթիկ ՍՈՒ. Հ. ԱՄՍԵՆՅԱՆ  
Քերտիկական խմբակի  
Ա. Կ. ՍԱՔԱՐՅԱՆ  
Արտատպիչներ  
Զ. Ա. ՇՐՄԱՆՅԱՆ, Մ. Ց. ԳԱԼՍԱՐՅԱՆ

ՀՅ 04034

Պարզիր 831

Հրատ. 4058

Տարածվածի 3000

Հանձնված է քարվածքի 22.1.1973 թ., տարածված է տարածության 28.VII.1975 թ.:  
Տարածվածի 24,5 մանու, հրատ. 25,28 մանու, քույր ՅԶ 1, 60X90/100  
զՆՅՑ 2 ս. 31 կ:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—13, Բաղնիկանության 24  
Издательство АН Арм. ССР, Ереван-13, ул. Баранкянцка, 24  
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության էրիտանի տպարան

